Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՍԵՐԵՖ
502

1 1/110.

Ստեփաննոս Պողոսեան
ՍԵՐԵՐԸՆԿԵՆՑ
Ասբարեան

Սերմեր
502
137
9-13

ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ
ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Բարի-ի արհեստագիտական արքունի ճեմարանի իտալական գրականութեան պրոֆէսսոր

ԱՆԴՐԷԱՍ ԳԱԲՐԻԷԼԻԻ

ՅՈՅՍԵՐՆ ՈՒ ԲԱՂՁԱՆՔՆԵՐԸ

Սոյն հեղինակութիւնը արժանացած է „պատուաւոր նիշպանութեան“ Ravizza di Milano-ի 1877 թ. մրցանակաբաշխին։

Si fractus illabatur orbis
Impavidum ferient ruinæ.

Խոր կործանուի աշխարհը, ես աներ-
կիւղ կընկնեմ աւերակների տակ։

Հորացիոս

Թարգմանեց

ԳՐԻԳՈՐ ԶԱՀԲՈՒԴԱՂԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, Տ. 1|2
1889

Дозволено цензурою. Тифлисъ, 11 Марта 1888 г.

1036
41

Типог. И. Мартиросіанца, Орбел. ул., д. 1/2

№506.

ՆՈՒՔԸ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

Թարգմանչից

502-2009

18506.

Մատենադարան Ս. Էջմիածնի
Սերբերկեանց

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ravizza di Milano-ի մրցանակաբաշխ մեծարգոյ Մասնաժողովը, որ կազմում էին պ. պ. նախագահ՝ Պետրոս Բոտոնդի և անդամք՝ Ֆելիքս Մանֆրեդի, Ագոլֆ Մարկոնի, Ցէզար Կանտու, Ֆրանցիսկա Ըէստէլլի և քարտուղար Յովսէփ Սակկի, նշանակեց 12 Մայիսի 1873 թ. մրցանակ հետևեալ բնաբանով, թէ՝

«Ի՞նչ է պահանջվում իտալացիների մէջ բնաւորութիւն կրթելու համար,—իբրև հիմունք՝ քաղաքացիական արիասրտութեան, կատարեալ ուղղամտութեան և սրանց համապատասխան գործունէութեան.

«Որո՞նք են ղեկավարող սկզբունքները և գոյն նպատակին հասնելու գործնական միջոցները»։

Աշխատութիւնը պիտի ներկայացուէր ց31-ն Հոկտեմբերի 1874 թ.։

1875 թ. Յունիսի 30-ին Մասնաժողովը հրատարակեց մի տեղեկագիր, որից երևում էր, թէ առաջարկեալ աշխատութիւններից ոչ մէկը չէ արժանացած մրցանակի,—թէ և խրախոյս և գովասանք էր յայտնուած ներկայացրած մի քանի աշխատութիւնների նկատմամբ։

Մասնաժողովը, և նկատի առնելով նիւթի կարևորութիւնը, նորից մրցումն նշանակեց մի և նոյն բնաբանով մինչ 1876 թ. վերջը ժամանակ տալով. իսկ 30-ն Հոկտեմբերի 1877 թ. հրատարակեց նոր տեղեկագիր երկրորդ մրցը-

ման մասին, որից երևում էր թէ նոյն բնաբանով արդէն տասն և ութ շարադրութիւն է ներկայացուած։

Թող ներէ ինձ ընթերցողը այդ տեղեկագրից առաջ բերել մասնաժողովի կարծիքը իմ այս գրքոյկիս մասին, որ արժանացած էր «պարտուած յիշատակութեան»։

«Հեռադիրս № 7 իւր նշանաբանն ունի Հօրացիոսի խօսքերը՝—Si fractus illabatur orbis, impavidum ferient ruinæ։ Սա մի լուրջ աշխատութիւն է։ Հեղինակը պարտուածութեան նպատակը համարում է բնաւորութեան բնական հիմունք։ Սակայն խոնարհուելով կամքի ոյժի առաջ, նա բնաւորութիւն յատկացնում է նա և վատ մարդոց, չը նայելով որ ինքը որոշել է բնաւորութիւնը՝—էբրև խոհեմաբար և մեկ նպատակով գործելու ընդունակութիւն։ (*) Հեղինակը հմտութեամբ նկարագրում է այն յատկութիւնները, որոնք անբաժան են կազմակերպուած բնաւորութեանը, և ցանկութիւն է յայտնում դպրոցական դասագրեանց շարքը մի այնպիսի գիրք մտցնել, որ բացառապէս ուղղուած լինէր բնաւորութիւն կրթելուն։ Հեղինակութիւնն աւարտվում է առ աշխատանքն ուղղած մի ներբողով և երիտասարդութեանն ուղղած եռանդագին գործունէութեան հրաւէրով։ Հը նայելով սոյն հեղինակութեանը նուիրած գովեստներին, որ արժանացաւ «պարտուած յիշատակութեան», այնու ամենայնիւ Մասնաժողովս նրանում չի գտնում բնաբանի գործնական մասի լիակատար լուծումն։

(*) Յուսամ որ ստորև յիշատակեալ նկատողութեամբ արդարանամ այս առթիւ իբր երևցող կարծեցեալ տարաձայնութեան համար։

Հեղինակ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1. Ի՞նչ արաւ Իտալիան.—2. Ի՞նչ է մնում նրան անելու.—3. Հեղինակութեանս նախագիծը եւ ստորաբաժանումները։

Իտալացիք փափագում են բարելաւել իրանց, նրանք վառուած են այդ փափագով։

Մ. Լէոոշոտ։

Ի՞ՆՉ ԱՐԱԻ ԻՏԱԼԻԱՆ

Եթէ տիկին Ստայլ Հոլշտէյն (Staël Holstein) ապրում լինէր մեր ժամանակ, այլ ևս չէր ասիլ. «Իտալացիք առաւել նշանաւոր են իրենց անցեալով և ապագայով, և ոչ թէ նրանով, ինչոր իրօք են այժմ»։

Իտալիան գրաւեց այժմս քաղաքակրթեալ ազգերի արժանավայել ուշադրութիւնն ու համակրութիւնը հրաշալի գործերով, որոնք կատարուեցան նրանում ներկայ դարուս կիսից։

Նրա կատարած դերը վերջին տեղը չէ բռնում ժամանակակից քաղաքակրթութեան պատմութեան մէջ։ Զէ որ սա ոչ այլ ինչ էր՝,—եթէ ոչ յաւիտենական բողոք 1815 թ. դաշնագրի դէմ, որ ձգտում էր վերջնականապէս արմատախիլ անելու 89 թուականի յաջողութիւնները, և ստեղծելու Եւրոպայի քաղաքական կարգը թագադրեալ անձանց ժառանգական կարգադրութեանց վրայ։

Իտալիան, առանց հանգիստ առնելու, օգտվում էր ամեն մի հանգամանքով, որ յաղթութեանն հասնէր։ Երբ

որ մամուլի ազատութեանը և ուրիշ միջոցներին չէր յաջողվում իրենց մտքերն արտայայտելու օրինական կարգով, այն ժամանակ վառվռուն մարդիկ ընտրում էին վերջին ճանապարհը,—գաղտնի ընկերութիւններ, որոնք միշտ հալածանաց էին ենթարկւում, քանի որ չէին կարողանում արդարանալ պետական անձանց առաջ։

«Կարբոնարների» ընկերութիւնը, որ միացրել էր իւր մէջ բոլոր այլ ընկերական շրջանները, մուտ գործեց արքունական պալատներն անգամ և յառաջ բերեց 20-ական թուականների շարժումը, որ երևան գալուն պէս ճնշուեցաւ Աւստրիայի ուժով և Բուրբոնեան մի արքայի դաւաճանութեամբ։ Բայց ահա, երբ «Կարբոնարիան» ընկաւ, անընկճելի Գենուացու մատաղահաս Իտալիան ձեռնարկում է Իտալիոյ ազատութեան և միութեան գործին և եռանդագին աշխատում է թերակղզու վրայ և արտասահմանում բոլոր ներելի և աններելի միջոցներով։ Այդ տենդային գրգռման շրջանն էր. գաղտնի խմբերն աճում էին հարիւրներով, տարածվում էին, խառնվում էին իրար հետ, վառում էին ամբոխը, ահ ու սարսափ էին ազդում կառավարութեանց։

Ես չեմ գովաբանում և պաշտպանում գաղտնի շրջանները, բայց մատնանիշ եմ անում նրանց վրայ, իբր պատմական անհրաժեշտութեան. այլապէս բողոքի մի ուրիշ ճանապարհ ամենևին չէր մնում Իտալիային Վիեննայի դաշնագրից յետոյ։

Երբ հասաւ յայտնապէս գործելու ժամանակը, Իտալիան յապաղելու ոչինչ չունէր։ Եւ յիրաւի, երբ շրջանները գործում էին գաղտնի՝—Նիկոլինին, Ֆիոբէրտին, Բայբոն, դ'Ազելիոն, Գուալտերոն, Ֆարինին, Մոնտանէլլին, Մաձինին, Մամմիամին և ուրիշ հռչակաւոր մատենագիրներ ձեռք առին գրիչը և արծարծեցին ու կրթեցին ժողովրդի մէջ ազատութեան վեհ զգացմունքը։

Եւ՝ գաղափարների երերման այդպիսի հանգամանք-

ներում իրադրծեց յեղափոխութիւնը Պիէմոնտում վեհանձն արքայ Կարլ Ալբէրտը, որի վրայ անարդարացի կերպով ստուեր էին ձգում ծայրայեղ կարծեաց ախոյեանները։ Եւ նա սպասում էր իւր աստղին։

Աստղը ծագեց։ Փայլելուն պէս նրա մասին լուր տուեց Յունիսին 1846 թուի կարդինալ Մաստայի Ֆէրէտտին, վերջում Պիոս IX պապը *)։ Վառ ոգևորութեամբ ողջունեցին նրան իտալական թերակղզու ժողովուրդները, իսկ թերակղզու առանձին տիրապետող անձինք նախանձով էին նայում նրան։ Բայց այս աստղին հաւատում էր արքայ Կարլ Ալբէրտը։

Այդ աստղը պայծառ լուսաւորեց Գօյիտոն, Մոնցաբանոն, Վալէջիին, Պէսկիէրան, Սոմմակամպանիին **), մթնեցաւ Նովարայում, ***) հանգաւ Հռոմի և Վենետկի մօտ։ Դարձեալ վերադարձաւ Աւստրիան իբր գիշատող անգղ գիշատելու պատժոյ ժայռի վրայ նոր—Պրոմէթէոսի՝—վերըստին մնացած Իտալիոյ սիրտը։ Արքայ Վիկտոր Էմմանուիլը բարձրացրեց հայրական գահի վրայից արիւնոտ, բայց անարատ թագը. աջ ձեռքում բռնելով Իտալիոյ պատառոտած դրօշը և պատսպարելով նրան զառամեալ դիւանագիտութեան խորամանկ որոգայթներից, նա պահում էր ոյժերը յարմար րոպէին։

---

*) Պիոս IX փառաւորեց իւր պապութեան սկիզբը ազատամիտ վերանորոգութիւններով։ Մաքառելով Իտալիոյ ազգային միութեան համար, նա օրհնում էր Սարդինիոյ թագաւոր Կարլ Ալբէրտին 60 հազար զօրքի գլուխ անցած Աւստրիոյ դէմ պատերազմ գնալիս։

**) Գօյիտո, Մոնցաբանո, Վալէջիա, Պէսկիէրա, Սոմմակամպանիա, սարդինացւոց յաղթութեանց տեղերն են աւստրիացւոց դէմ 1848 թ։

***) Առաջին յաջողութիւններով գրաւուելով, սարդինական զօրքը տեղաւորուեց մեծ տարածութեան վրայ։ Աւստրիացւոց զօրապետ Բադէցկին օգուտ քաղեց այս ռազմագիտական սխալից և գլխիկոր ջարդեց սարդինացիներին Նովարրի մօտ 1849 թ.

Այն գործողութեան նախագիծը, որից կախուած էր թերակղզու բաղդը, հասունանում էր Տուրինում, ուր սահմանադրական արքայի շուրջը հաւաքւում էին ազնուատոհմ փախստականները, ազատուելով բանտից ու կախաղանից։

Ես կարծում եմ, որ շատ կարելի է, նոյն իսկ մեր բաղդից մենք անյաջողութիւն ունեցանք 1847 թ., որովհետև եթէ հասնէր անկախութեան և ազատութեան ։ՀՔԷԷԷՐՈՅԼՈՆ *)—անկասկած կանայատանար թերակղզու ազգային միութեան յոյսը։ Նախախնամութեանն հաճելի էր փորձել իտալացւոց տոկունութիւնը, որ դրանով առաւել ևս առատօրէն վարձատրէր նրանց։

Հիասթափման և թաղծութեան եօթը տարիներ անցնելուց յետոյ՝ նորից երևեցաւ Իտալիոյ աստղը Խրիմու երկնակամարի վրայ. այնտեղ տասն և հինգ հազար իտալացիք յայտնեցին աշխարհին, որ գոյութիւն ունի Իտալիան, որ ընդունակ է տալ այնպիսի զինուորներ, որոնք յաղթութեան փառք վաստակէին Սև գետի վրայ, արժանի լինէին մրցելու դէմ յանդիման ամենազօրեղագոյն զօրաց հետ։

Փարիզի վեհաժողովում կոմս Կաւուրը սկսաւ յայտնապէս պաշտպանել Իտալիոյ անկախութեան և միութեան գործը։ Աւստրիան վառուեց չարութեամբ, բայց Եւրոպան հակուեցաւ Իտալիոյ ձգտումներին և չը զլացաւ համակրելու և խրախուսելու նրան։

Աստղը վերադարձաւ մեր երկնակամարի վրայ, աւելի պայծառ փայլեց և այլ ևս չը մթնեց։

Լոմբարդական պատերազմը 59 թուին, 60 թուի յեղափոխութիւնը, 66-ի Վենետկի պատերազմը, 70 թուի

(*) ԿՈՆՔԷԷԷՐՈՅԼՈՆ՝ նշ. 1) Լէհաստանում պետական պաշտօնատարների ժողով պետական որ և է նշանաւոր գործի վերաբերութեամբ խորհրդածելու, օրինակ թագաւորի ընտրութեան։ 2) Մի քանի անկախ թագաւորութիւնների քաղաքական դաշնակցութիւն։ Ծ. Թ.

յաղթական մուտքը՝—հետևանք էին իտալացւոց միահամուռ և վառ ցանկութեան, որ իրականացաւ շնորհիւ Նախախնամութեան և լուսաւորեալ ազգերի ու պետութեանց բարեկամութեան։

Ապա ուրեմն, ճշմարիտ է, որ Իտալիայում քաղաքական կազմակերպութիւնը ձեռն բերեց ամենահաստատուն հիմունք և առաւել այստեղ, քան որ և է ուրիշ երկրում խզուեցաւ Վիեննայի դաշնադրը։ Իտալիան կազմակերպուեցաւ ոչ թէ նախագծած պատուէրով, այլ ինքը ստեղծեց իւր համար սահմանադրութիւն. նա ընդունեց թագաւորին ոչ թէ հրամայողների ձեռքից, այլ ինքն ընտրեց նրան իւր համար, և վերջ ի վերջոյ յառաջ բերեց, այդպէս ասել, ամենամեծ յեղափոխութիւն. միևնոյն ժամանակ նա փոխեց տիրապետող հարստութիւնը, երկրի սահմանները, բարձրագոյն իշխանութեան իրաւունքները, կառավարութեան ձևը և այնպէս խաղաղ վճռեց եկեղեցական խնդիրը, որ չէր կարող ամենանրբամիտ մարդոց մտքովն անգամ անցնել։ *)

89 թուի յեղափոխութիւնը ամրապնդեց մարդու իրաւունքները. իտալական յեղափոխութիւնը ամրապնդեց ազգի իրաւունքները։ Զատ կարելի է որ առանց Իտալիոյ, հանդէս չը գար նա և Գերմանիան։ Այս օրինակը նմանողներ կը գտնի և ապագայում, որովհետև ազգայնութեան սկզբունքին, որ կազմում է դարուս պատմական օրէնքը, վիճակուած է առաւել մեծ պատերազմական գործունէութիւն, որպէս զի ոչնչացնէր քաղաքական հաւասարակշռութեան հնացած համակարգութիւնը։

Ի՞ՆՉ Է ՄՆՈՒՄ ԱՆԵԼՈՒ

Աւերումն, ըստ Մակօլէյ, անկասկած ամբոխի գործն է. իսկ պետական մարդու ամենամեծ փառքը կայանում է

*) La Farina—*Scritti politici.*

կառուցանելու մէջ *)։ Այն ազգը, որ օրինական ելք չունի, ապստամբում է իւր ճնշողների դէմ և ահ ու սարսափ է ձգում նրանց վրայ։ Նա դառնում է մի հզօր կոյր ոյժ, որ օրհասական անվեհերութեամբ ձգտում է գործելու։

Այն ժամանակ գնում են ուղղակի վտանգի դէմ, չեն նայում արգելառիթներին և արհամարհում են կեանքը։

Այդպիսի բոլէներում իւրաքանչիւր մարդ՝—քաղաքացի է և իւրաքանչիւր քաղաքացի՝ կարող է հերոս դառնալ։

Տողերիս գրողը գիտէ, թէ ինչպէս հռչակուած աւազակները անձնուիրաբար գնում էին պատերազմելու հայրենեաց համար, որպէս զի սքողէին իրենց անցեալը։ Սակայն այս շատ աչքի է ընկնում, այնպէս՝ որ չեն երևում մանրամասնութիւնները։ Ազգի բնաւորութիւնը գնահատութեանն է ենթարկվում հասարակաց կազմակերպութեան ժամանակ, երբ ազգը, սառելով առաջին ոգևորութիւնից, վերադառնում է խաղաղ, սովորական գործունէութեան։

Եթէ ոգևորութիւնը փոխարկվում է հաստատուն վճռականութեան՝ յաւերժացնելու երջանիկ սկզբնաւորութիւնը, ամրապնդելու քաղաքացիական իմաստութեամբ այն՝ ինչ ստացուած է հրով և սրով. ապահովելու օրէնքներով այն, ինչ ստացուած է բռնութեամբ՝ այն ժամանակ յեղափոխութիւնը դտնում է արդարանալու պատճառ և ազգը արժանի է հանդիսանում վայելելու ազատութեան պտուղները։ Եւ՞ զ, եթէ ոգևորութեանը կը հետևի անշարժութիւն, հայրենիքի սիրոյն,—անյագելի կիրք դէպ՝ մասնաւոր շահերը, միաբանութեանը՝—անմիաբանութիւն, «ովսաննային»՝—«խաչեսցի»։ Եւ իրերի դոյնպիսի դրութիւն, կարծեմ կարելի է ասել կատարեալ վստահութեամբ, հասել է արդէն Իտալիայում մեր օրերում։ Ամեն կողմից լսվում են ձայներս՝ «Տուէք մեզ բնաւորութեան տէր մարդիկ»։

---

*) Saggio biografico sul Mirabeau.

Գրում են սոյն առարկայի մասին ինքնուրոյն հեղինակութիւններ, թարգմանում են օտար լեզուներից և ազահութեամբ կարդում։

Այս ամենը ապացուցանում է ազգի համար անհրաժեշտ կարևորութիւն՝ դաստիարակելու, որպէս զի ընդունակ դառնայ հաստատուն պահպանելու իւր կատարած գործերի վսեմութիւնը, ապահովելու նրան, պաշտպանելու և նրանցից առաւել լաւերը գործելու։

Այստեղ առաւել ի դէպ է յիշել Մասիմօ դ'Ազէլիօյի հռչակաւոր խօսքերը՝. «Իտալիոյ համար ամենայն անհրաժեշտ էր բնութիւնն է՝—նրանել հոգը և հարստանալ բնութիւնամբ իտալացիները, ապա նոր ոչ որքան գործը շատ է հանվում հանուռուկ բնէնը։ Իտալիան խիստ շատ բան ունի իւր համար, բայց չը պատրաստեց իտալացիները»։

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Այսպէս ուրեմն, այս էջերում ես ենթադրում էի, որքան ոյժերս կը ներէին, հետազօտելու բնաւորութեան վերաբերեալ դժուար խնդիրը։ Հեղինակութիւնս բաժանվում է երկու մասի։ Առաջին մասում ուսումնասիրվում է բնաւորութիւնը ինքն ըստ ինքեան (Գլ. Ա.) թէ ինչպէս բնաւորութեան գաղափարի հետ կցվում է պարտականութեան գաղափարը. (Գլ. Բ.) որպիսի գլխաւոր յատկութիւններ ունի բնաւորութեան տէր մարդը (Գլ. Գ. Դ. և Ե.) և ինչպէս բնաւորութիւնը ծառայում է իբրև հիմունք քաղաքացիական արիութեան, ուղղամտութեանց արդարասիրութեան և սրանց համապատասխան գործունէութեան (Գլ. Զ.)։

Երկրորդ մասում հանում է կարգը այն միջոցների հետազօտութեան, որոնք ղեկավարում են բնաւորութեան կրթելուն, և այդ պատճառաւ այստեղ քննվում է այն ամենը, ինչ որ ըստ բնաւորութեան կազմութեան, առար-

կային նայելով, վերաբերում է՝ Ընտանեացը (Գլ. Ա. Բ. և Գ.) Դպրոցին (Գլ. Դ. Ե. և Զ.) Օրէնքներին (Գլ. Է.)։ Ի վերջոյ (Գլ. Ը.) ցոյց է տրուած, թէ ինչպէս ճշմարիտ բնաւորութեան տէր մարդը կրթում է ինքն իրան։

Յաւակնութիւն չունենալով հռչակ ստանալու սոյն գրքով,— որոյ համար, իմ կարծիքով սաստիկ նուազ են ընդունակութիւններս՝—ես արի այն, ինչ կարող էի անել պաշտօնավարութեանս կարևոր պարտաւորութիւնները կատարելու միջոցին։ Եթէ սոյն իմ «Բաղչանոցը» կարող կը լինին յղացնել ո՛ և է զօրեղ խելքի մէջ միտք մի առաւել թանկագին արդիւնք ներկայացնելու այս ազնիւ նիւթի մասին, գրանով ես լիովին վարձատրուած կը համարեմ ինձ։ Այն ամենը, ինչ որ կարտայայտուի սրա վերաբերեալ բանաւոր կամ գրաւոր, երբէ՛ք աւելորդ չի լինիլ։ Ես կարծում եմ, որ միայն այն մարդիկն են միշտ ճշմարիտ դաստիարակներ և իսկական մատենագիրներ հանդիսանում, որոնք ուսումնասիրելով ժամանակիս կարիքները, աշխատում են, իւրաքանչիւրը ըստ չափու կարեաց, միջոցներ հայթհայթել՝—գոհացնելու այդ կարիքները, ապա թէ ո՛չ, չէ՞ որ Ֆիուստիի ասելուն պէս՝

„Գիրք շարադրելն՝—առաւել վատ է. քան ոչինչ չանելը,—եթէ այդ գիրքը չը պէտք է ուղղէ մարդոց“։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մարդը՝—հանաք բան չէ, իսկ բնաւորութիւնը՝—ամբողջ մարդ է. ապա ուրեմն զարմանալի չէ, որ թէ մէկը և թէ միւսը միակերպ դժուարութեամբ են ենթարկվում ստուգաբանութեան:

Մոնթէպոյոյ:

Բնաւորութիւնը բարոյական կարգի մարմնացումն է առանձին անհատի մէջ: Բնաւորութեան տէր մարդիկ այն հասարակութեան խիղճն են, որին պատկանում են:

Էմերսոն

1.) «ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ» ԲԱՌԻՍ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ

Սովորաբար «քարակտէր» (բնաւորութիւն) *) բառով ընդունուած է յայտնել այն ամենը, ինչոր պարունակում է իւր մէջ բացորոշման և անփոփոխութեան յատկանիշ:

Այս բառովս արտայայտում են բոլոր յատկութեանց համախմբութիւնը, որոնցով յայտնի առարկան տարբերվում

*) Այս բառս յունարէն է. caractère և նշ. յատկութիւն, յատկանիշ, և այլն:

է ուրիշներից։ «Քարակտէր» բառը գործ են ածում բնագէտները, երբ ուզում են ճանաչել բնութեան մէջ գտնուող՝—հանքային, բուսական և կենդանական թագաւորութեանց վերաբերեալ զանազանակերպ առարկաները և որոշել նրանց ըստ ցեղի, տեսակի, սեռի և այլն։ Մի և նոյն բառը գործ են դնում նաև աստուածաբանները արտայայտելու քրիստոնէական ոգու գաղտնեաց մի որ և է որոշ և անփոփոխելի յատկանիշ։ Գիտութիւնը, արուեստներն ու արդիւնագործութիւնը նոյնպէս ունին իրենց բնաւորական յատկանիշները, որոնցով և տարբերվում են միւսներից։ Գեղարուեստը, երաժշտութիւնը, նկարչութիւնը, ճարտարապետութիւնն ունին իրենց առանձին բնաւորութիւնները և այլն, և այլն։ Այս հիման վրայ մէկը չի կարող միւսի տեղն ընդունուիլ։ Վերջ ի վերջոյ ամեն ինչ ունի իւր բնաւորութիւնը (քարակտէրը) սկսած ամենամեծ աստղերից մինչ ամենամանր աւազի հատիկը. բնաւորական յատկանիշները գտնվում են նա և բոլոր իրերի մէջ, որոնց հրնարել և կատարելագործել է մարդս։

Մարդն էլ ունի իւր բնաւորութիւնը,—ուրիշ խօսքով,—իւր բոլոր ֆիզիքական և մտաւոր յատկութիւնների ընդհանուր համակարգութիւնը, որով տարբերվում է ուրիշ էակներից և գերազանցում նրանց իւր կատարելութեամբ։

Այնուհետև, պէտք է յայտնեմ, որ ոմանք զանազանում են ֆիզիքական, հոգեկան և բարոյական բնաւորութիւններ։ Ֆիզիքական բնաւորութիւն ասելով հասկացվում է բոլոր ֆիզիօլոգիական յատկանիշները, որոնցով մարդու մարմինը տարբերվում է ուրիշ, ստոր կենդանական կազմուածներից և որոնցով անհնարին է շփոթել մի մարդու պատկերը միւսի հետ։ Հոգեկան բնաւորութիւն ասելով հասկացվում են մարդուս հոգեկան բոլոր յատկութիւնները, որոնցով նա անպայման տարբերվում է միւս կենդանիներ-

րից և պայմանաւոր կերպով միւս մարդկանցից։ Ի վերջոյ բարոյական բնաւորութիւնը՝ մարդուս այն յատկութիւնն է, որով նա ձգտում է հասնել իւր վաղճանական նպատակին. սրանով մարդս տարբերվում է բոլոր միւս անբան արարածներից, որոնք իբր ճակատագրի թելադրութեամբ անգիտակցաբար ձգտում են իրենց նպատակին։

2) ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ։

Իմ հետազօտութեանց առարկան ոչ թէ հանրամարդկային բնաւորութիւնը կամ բարոյականութիւնը պէտք է լինի, այլ մարդս, իւր անհատական բնաւորութեամբ։

Ըստ երևութին, կարծես թէ այստեղ ոչինչ տարբերութիւն չը կայ, բայց լաւ մտածելով տեսնում ենք, որ տարբերութիւն կայ և այն էլ նշանաւոր. այդ ստիպում է ինձ փոքր ինչ կանգ առնել այստեղ։

Բարոյական բնաւորութիւնը մարդկային էակի յատկութիւնն է, նրա բնութեան անհրաժեշտ կարևոր մասը. բոլոր մարդիկ ունին բարոյական բնաւորութիւն, որովհետև բոլորեքեան ունին ընդունակութիւն պատկերացնելու իւրեանց մտքում և կշռադատելու իւրեանց նպատակը և ընդ նմին նրան հասնելու ոյժն ու միջոցները։ Բայց սրանով ամենեքեան չեն դառնում անհատական բնաւորութեան տէր մարդիկ, որովհետև ամենքն իրօք չեն օգտվում այս ընդունակութեամբ, ամենքն անդադար չեն ձրգտում հասնիլ մի անգամ առաջադրած նպատակին։ Մարդկային բնաւորութիւնը կամ բարոյական բնութիւնը, կարելի է ասել, ոյժ է, իսկ անհատական բնաւորութիւնը այդ ոյժի գործողութիւնը։ Առաջինն, անպայման կերպով, աստուածատուր պարգև է և մարդս ընդունում է նրան միայն կրաւորապէս, ինչպէս որ ընդունում է հոգեկան և

Գրքերեց-ՀՍ Արա. Ս.
161 502-2009
(1036 41

ֆիզիքական բնաւորութիւն. իսկ երկրորդը մասամբ Աստուծոյ շնորհն է, մասամբ էլ նոյն իսկ մարդու ձեռաց գործ։

Բարոյական բնաւորութիւնը մի յատկութիւն է, որ տրվում է Աստուածանից, իբրև ամեն բանի վաղճանական Պատճառից. իսկ անհատական բնաւորութիւնը մի յատկութիւն է, որ ինքը մարդս երևան է հանում իւր գործողութեանց մէջ, որպէս յաջորդական և ձևակերպող ոյժ։

Հետևաբար՝ անհատական բնաւորութեան տէր մարդը չի ծնվում, այլ ձևակերպվում է մի որոշ ժամանակամիջոցում։ Ապա թէ ոչ ինչին էր պէտք նա և ուսումը, եթէ մարդիկ ծնվում լինէին որոշ բնաւորութեամբ։ Ինութիւնն ու դաստիարակութիւնը բնաւորութեան համար վարպետանոց են։ Ինութիւնը տալիս է մեզ բանականութիւն նպատակին հասնելու համար, դրան օգնական են հանդիսանում՝ կամքն ու զգացմունքները՝ որպէս զի սիրէինք այդ նպատակը։ Ինութիւնն, այդպէս ասել, սկսում է մարդու ստեղծագործութիւնը, դաստիարակութիւնը լրացնում։ Ինութիւնը մեզ հնար է տալիս որոշ բնաւորութեան տէր մարդիկ դառնալու, իսկ դաստիարակութիւնը տալիս է պայմանաչափ իրօք ի կատար ածելու այդ հնարաւորութիւնը։

Լուսաբանելով, որքան պահանջվում էր, մարդուս բարոյական և անհատական բնաւորութիւնների տարբերութիւնը, ես անհրաժեշտ կարևոր եմ համարում որոնել բնաւորութեան տարրերը։

3) ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԱՐՐԵՐԸ։

Ո՞վ է, ձեր կարծիքով, բնաւորութեան տէր մարդ։— Նա, ով որ յաջորդաբար է վարվում իւր բոլոր արարքների մէջ։ Բայց ինչումն է յաջորդաբար վարվում և ինչ դիտ-

մամբ։ Ի հարկ է, նպատակն ի նկատի ունենալով։ Իրաքանչիւր արարած ընդունակ է ձգտելու դէպ՝ որ և է նպատակ, մի միայն այս տարբերութեամբ, համեմատելով մարդու հետ, որ անբան արարածները վարվում են բաղդի բերմամբ, այդ պատճառաւ էլ նրանց բնաւորութիւնն ազատ չէ. այն ինչ մարդս վարվում է իւր ազատ ընտրութեամբ։

Ասա ուրեմն կարող է արդեօք ազատութիւնը կայանալ մի որ և է ուրիշ բանում, քան թէ բանականութիւնից կախումն ունենալում։

Կարող է խոհեմաբար գործել մի ուրիշը, քան այն մարդը, որ իւր համար որոշ նպատակ է դրել։

Հետևաբար, եթէ մարդս միշտ ձգտում է դէպի նպատակը, ապա ուրեմն նախ և առաջ նա պարտաւոր է նրա մասին պարզ գաղափար ունենալ, պէտք է սիրի նրան և ուղղի դէպի նա բոլոր իւր կենսական գործունէութիւնը։

Ո՛վ աչքից ձգում է մի անգամ առաջադրած նպատակը, նա գործում է պատահաբար, գնում է խարխափելով, մոլորվում է, ձեռք է զարկում ցիմարի պէս իւր ստուերին և վայր է ընկնում։ Ո՛վ ապրում է աննպատակ, նա դատարկ գլուխ ունի, որ երբէք չէ իմացել խորհրդածել։ Մեծ մարդու կեանքը ողջ մին է, թէ մի մեծ խնդրի լուծումն, որ կազմում է նրա պատմական անհատականութիւնը։ Կեսարը և Նապոլէօնը, Կոպէրնիկոսը, Գալիլէյն և Վոյլտ, Ջէքսպիրը և Ալֆիէրին, Գուտտէնբէրգ, Ուատտ և Ստէֆէնսօն, Կոլումբոս և Վասկո-դը-Գամման, Կաուր և Բիսմարք՝—այս բոլոր մեծ հանճարները վճռեցին իւրեանց խնդիրը։ Նրանք նշանակեցին իրենց համար որոշ նպատակ և նա դարձաւ նրանց կոչումն, նրանց կենսական պահանջը, նրան նուիրեցին նրանք իրենց հոգու և մարմնու բոլոր ոյժերն ու ընդունակութիւնները և ի վերջոյ՝—հասան նպատակին։

Եւ ուրեմն, բնաւորութեան տէր մարդու առաջին որոշող յատկութիւնն է երկար և համբերութեամբ խորհրդածելու առաջադրած նպատակի մասին։

Սակայն դեռ այդ քիչ է։ Նպատակի քննելն ու լուսաբանելը դատողութեան գործ է, իսկ վերև նկատուեցաւ, որ մարդու բնաւորութիւնը բովանդակում է ոչ միայն լոկ մտաւոր, այլ և՝ բարոյական ընդունակութիւններ։ Կամենալ է հարկաւոր. կամքի օգնութեանը պէտք է դիմել բանականութեան փայլուն մտապատկերների համար։ Մինչ այն ժամանակ, քանի որ նպատակի գիտակցութիւնը սաւառնում է բանականութեան ցուրտ սահմաններում, մինչև որ նա չի զանազանել մեծ գործունէութիւնը իդէալից՝— այդ գիտակցութիւնը կը լինի զուտ վերացական։ Պահանջվում է խոնարհիլ կամքի շրջանը, որ մարմնացնում է բարոյութեան, օրինաց, պարտաւորութիւնների իդէալները։ Օրինակ՝ ես դեռ ևս բնաւորութեան տէր մարդ չեմ դառնալ, երբ միայն լաւ կը հասկանամ, դիցուք, հայրենեացս համար մեռնելու պարտաւորութիւնը։ Պէտք է, որ այստեղ կամքը օժանդակէր մտքի իւրացրած գաղափարին. այսինքն՝ որ երևար անընկճելի տրամադրութիւն մեռնելու հայրենեացս համար։ Բնաւորութիւնը զարգանում է գործերով և ուղղակի դրդում է գործելու ընդունակութիւնները, գիտութիւններից և արուեստներից զանազանուելու համար, իբրև վառ երևակայութեան և մտաւոր ընդունակութիւնների արդասիքներից։

Եւ այս էլ դեռ բոլորը չէ։ Կամքը այն ժամանակն է միայն եռանդ ստանում, երբ որ ամրապնդուած է լինում հոգեկան տրամադրութեամբ։ Դեռ ևս բաւական չէ մտքի մէջ պատկերացնել նպատակը և ցանկալ նրան հասնել ընդարձակօրէն. պէտք է սիրել այդ նպատակը, փայփայել և չը թողնել, մինչ որ լիովին չը հասնես նրան։ Հէնց այսպիսի դրութեանը բերում են մարդկային հոգուն՝ կրքերը.

հէնց նրանք, կամենալը՝ սիրոյ և չը կամենալը ատելութեան վերածելու յատկութիւնն ունենալով, և դրդում են մարդուն բարի գործել առ բարին ունեցած սիրուց և խուսափիլ չարից առ չարն ունեցած ատելութիւնից։ Ո՛վ ոչինչ չէ սիրում, նա իրօք և ոչինչ էլ չէ կամենում։ Ո՛վ դէպի ոչ մի բան ատելութիւն չէ զգում, նա իրօք դէպի ոչ մի բան զզուանք չունի։ Սէրն ու ատելութիւնը՝ երկու ծառեր են, որոնց վրայ աճում և ճիւղաւորվում են բոլոր բարի և չար կրքերը, որոնք օժանդակում են կամքին, նրան եռանդագին գործունէութեան վճռականութիւն են ներշնչում։ Եթէ որ Պրոմէթէոսը սէր չը տածէր դէպի մարդկութիւնը, երբէք չէր բացագանչիլ իւր տանջանքների մէջ.

. . . «Այս բոլորը ես գիտէի, բայց կամեցայ . . . ինչ արած . . . կամեցայ մեղք գործել»։

Երբ որ սիրտն սկսում է բաբախիլ, իսկ երևակայութիւնն օժանդակում է նրան, վարդի կամ կեղտոտ գոյներով նկարագրելով նրա առաջ նպատակը, նայելով թէ բարութեամբ է վերջանում թէ չարութեամբ՝ այն ժամանակ սիրտը դրդում է կամքին գործելու կամ ընդհակառակն, կասեցնում նրան։ Սովորաբար երևակայութիւնը համարում են իբրև մարդկային ամենաանհնշան ընդունակութիւններից մէկը։ Ասենք թէ դրան մասամբ ես էլ համաձայն եմ, բայց միայն մի դիպուածում, երբ երևակայութիւնը առողջ դատողութիւնից հեռանալով, կորցնում է իւր յենակէտը, ընկնում է անհեթեթութեանց մէջ, շփոթում է ճշմարիտ գեղեցկութիւնը կեղծութեան՝ իրականութիւնը՝ ուրուականի հետ։ Մինչդեռ առողջ դատողութեանը կցուելով, երևակայութիւնը դառնում է ոգու կարող ոյժ և դրդում կամքին դէպ՝ ազնիւ արարքներ։ Եթէ երևակայութիւնը չը նկարագրէր հերոսներին նրանց ձեռնարկութեանց փառաւոր հետևանքները, այն ժամանակ պատմութիւնն այն ձևով, ինչպէս նա այժմ է, չէր ունենալ

իւր էջերում այնքան հերոսական սխրագործութիւններ։

Ասածներից կարելի է տեսնել, որ բնաւորութիւնը ենթադրում է իւր տարրերի ներդաշնակ միաւորութիւն, այն է՝ ներդաշնակութիւն ընդունակութիւնների և նրանց գործադրութեան, նոյն իսկ ընդունակութիւնների յօժար ստորադրուիլը միմեանց, ներդաշնակութիւն ընդունակութիւնների, նպատակի, միջոցների և համապատասխան գործունէութեան. ապա ուրեմն, միայն նա կը լինի բնաւորութեան տէր, ով տոկուն է և հաստատամիտ, ով իրօք ձգտում է միանգամ առաջադրած նպատակին և գործում է ոչ ի ցոյց մարդկան։ Բնաւորութեան ամենալաւ բացատրութիւն տալիս է մեզ Վիկտոր Ալֆիէրին, որ մի հզօր բնաւորութեան տէր մարդ էր. նա այսպէս է նկարագրում իրան՝

«Ես կամենում էի, կամենում էի, կամենում էի այնքան, մինչև որ հզօր դարձայ»։

4) ԼԱՒ ԵՒ ՎԱՏ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Նայելով թէ լաւ է նպատակը թէ վատ, ուրիշ խօսքով՝ համապատասխան է նա բարոյական օրէնքին թէ ոչ՝ լինում են լաւ և վատ բնաւորութիւններ։ Ի՞նչպէս։ Մի՞թէ չարամիտ մարդիկ բնաւորութիւն ունին։ Անպատճառ, եթէ գործում են համոզմամբ, տոկունութեամբ և անվեհերութեամբ։ Ո՞վ չէ ընդունում Ջէքսպիրի Եագոյին և Գեոթէի Մէֆիստոֆէլին իբրև ամենազօրեղ բնաւորութեան տիպեր, թէպէտ և երկուսն էլ յայտնի են վատ փառքի հռչակով։ Բայց մի՞թէ չունէին կազմակերպուած բնաւորութիւն Կապանէյն *) և Սաուղը։ Ամեն մարդու մէջ լինում

*) Կապանէյն—Թեբէն պաշարող եօթը զօրապետներից մէկն էր։ Յունաց առասպելներն ասանդում են, որ նա արհա-

է Աստուած և սատանայ։ Ամեն ինչ կախուած է առաջնին տեղի տալուց և ոչ երկրորդին։ Մարդու առաջին մեղքի մէջ ընկնելուց յետոյ չարի համար որքան եռանդ և քըրտնաջան աշխատանքներ են գործ դրուել։ Բայց ինչ ի չարն չէ գործածում մարդկային բնութիւնը։ Ի՞նչը անկարող է կերպարանափոխել մարդու մտքերի եղանակը։ Մթթէ լեզուն չար կը լինի նրա համար, որ նրանով միշտ օգտվում են անուանարկելու ազնիւ մարդկանց պատիւը։ Մթթէ չարը աջ ձեռքն է մի միայն նրա համար, որ մարդասպանը, եղեռնագործը դաշոյնի օգնութեամբ անհոգ ճանապարհորդի սիրտն է ցցում այն։ Այդ դիպուածում բնաւորութիւնն ինքն ըստ ինքեան բարիք է, և նա յանցաւոր չէ, եթէ նրան ի չարն են գործ դնում *)։

մարհանքով էր վերաբերվում աստուածներին և մինչև անգամ Արամազդի դէմ ելաւ, որի համար և ընկաւ Թէբէի պարիսպների տակ։ Յունական մտքին Կապանէյն ներկայանում է հզօր հրպարտի տեսքով որ, միայն իրան է ճանաչում և իւր արժանաւորութիւնները և ոտնակոխ անում ուրիշ մարդոց համար ամեն սուրբ և թանկագին բաները։ Կապանէյին հակառակ իդէալ հանդիսանում է Դիօմէդը, Տրոյան պաշարող ազնիւ հերոսներից մէկը։ Հայրենակիցների պատուի համար Դիօմէդը՝ կը դիմադրէ ում որ կամենաք։

Իւր անվեհերութիւնը նա ծայրայեղ սահմաններով զարգացրեց. նա չը սարսեց ոչ Աստղկան, ոչ Արէսի առաջ, որոնք բռնել էին Թշնամու կողմը։

*) Այստեղ թող ների ինձ Ravizza di Milano-ի մրցանակաբաշխ մեծարգոյ Մասնաժողովը, բայց այնուամենայնիւ նա այնպէս չի հասկացել խօսքերիս իմաստը։ Լոյսի նման պարզ է, որ այստեղ ես խօսում եմ ոչ թէ լաւ, այլ վատ բնաւորութեանց մասին։ Մթթէ վատ մարդոց չի կարելի այնպէս ճանաչել, ինչպէս որ են, այսինքն այնպիսի մարդիկ, որոնց կամքի ոյժը ի չարն է դարձած։ Նրանց բնաւորութիւնը փչացրած է, բայց մթթէ այս նշանակում է, որ նա բոլորովին կորել է։

Ծ. Հեղ.

Մի ուրիշը, գուցէ կասէ, թէ ապա ուրեմն առաւելաւ է վատ բնաւորութիւն ունենալ, քան թէ ոչինչ։ Այո։ Ես աւելի հեռուն եմ գնում և հաստատում եմ, որ եթէ ընտրելու լինինք երկու պայմանից մէկը՝ լիակատար անբնաւորութիւն կամ որ և է թէկուզ էլ վատ բնաւորութիւն ունենալը,—ես կը համաձայնեմ վերջինիս։ Վատ բընաւորութեան տէր մարդուց դու կարող ես զգուշանալ, որովհետև ճանաչում ես նրան. բայց բնաւորութիւն չունեցող մարդուց դու չես զգուշանալ, որովհետև չը գիտես թէ նա ինչի մասին է մտածում և ինչ է կամենում։ Թեթեւամիտ բարեկամից ես կը նախադասեմ ոխերիմ թշնամուն։ Վատ, բայց բնաւորութիւն ունեցող մարդը ուղիղ աչերիդ է նայում և յարձակվում քեզ վրայ օրը ցերեկով. բնաւորութիւն չունեցող մարդը երեսիդ այսպէս կը լինի, իսկ ետևդ այլապէս. այսօր նա բարեկամ է, վաղը՝ թշնամի. այստեղ նա քեզ գովում է, այնտեղ անուանարկում։ Բաց յայսմանէ, վատ բնաւորութիւն ունեցող մարդը կարող է ուղղուիլ, ինչպէս այդ պատահեցաւ Promessi Sposi-ի *) մէջ հանդիսացող գործող անձին. այն ինչ բնաւորութիւն չունեցող մարդը երբէք ընդունակ չէ վճռուիլ վեհանձն գործ կատարելու, և միայն կարող է ծաղրալի դիրք ստանալ, ինչպէս դոն-Աբբոնդիոն նոյն Մանձոնիի հեղինակութեան մէջ։

5) ԿԵՂԾ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Բացի սրանից պէտք է զանազանել կեղծ բնաւորութիւնները ճշմարիտներից։ Յաճախ խօսում են անհամբեր, քմահաճ, ցնորամիտ, նենգաւոր մարդոց մասին, թէ նրանք

*) Հռչակաւոր Մանձոնիի սոյն հեղինակութիւնը թարգմանել է Հայր Եդուարդ Հիւրմիւզեանը „Խոսէյեալ“ վերնագրով։ Վենետիկ, Ս. Ղազար, 1875։

բնաւորութիւն ունին։ Այնպէս որ բնաւորութիւնը վերագրում են մի տեսակ Թերսիտէսներին Կատօնի դիմակով, որոնց ողջ ուղեղը, Հոմերոսի ասելուն պէս, լի է շաղակրատութեամբ, որ վիժում են սանձարձակ ամենքի երեսին։

Առաւել լաւ է անուանել նրանց յանդուգն, բայց ոչ բնաւորութեան տէր մարդիկ։ Նրանք երևակայում են իրենց զօրաւոր, անվեհեր մարդիկ, այն ինչ իրօք՝ չնչին արարածներ են, որոնք երբեմն հէնց այնպէս են երևում, ինչպէս իրօք են, ծիծաղ և արհամարհանք զարթեցնելով, ինչպէս Հոմերոսի Թերսիտէսը, որ լուտանք էր թափում Ագամեմնոնի և այլ հերոսների վրայ՝

Այր այր լրուիկ առին բազմոց, բոլորեցան ի հանդէս,
Միայն շաղփաղփն այն լեպեշտին բանդագուշէր Թերսիտէս.
Լի էր սորայն խելապատակ խակախորհուրդ 'ի բանից,
Եւ տարաժամ լեզուագարեալ ընդդէմ վիժէր արքայից...
Ասաց, լուտաց զհովիւն ազգին զԱգամեմնոն Թերսիտէս,
Այլ բշտապաւ խեռին ընդդէմ յարեաւ դիւցազն Ոդիւսէս։
Եկաց խոժոռ ակնակառոյց, բան ոռոտաց գոռութեան.
„Թերսիդ պանդոյր, զի քեզ ձայնել իբրև հոռոմ ճարտասան.
„Լուռ լեր՝ կարկեաց, ընդ արքայից մի՛ դար 'ի վէգ միայնակ,
„Գիտեա՛ այր դու, չիք քան ըզքեզ այր սինլրքոր անաւագ.
„Չիք, որչափ ինչ աստ յԵղիոն ընդ Ատրիդեանց են որեար,
„Ուստի զարքայս լեզուագարեալ մի՛ յատենի հոխանար...“
Ասաց, և զուս գաւազանաւն հար և զողանցն ըզսապատ,
Խծպէր Թերսիտ, և շիլ յաչացն անկան կայլակք յորդաւատ։
Իսկ 'ի հարուածէ հաստահարուստ գաւազանին ոսկեղէն,
Այտուց կապոյտ և արիւնոտ պալարացաւ քամակէն։
Քաստքանեցաւ անդ անգեղեալն, խուճապեցաւ և նստէր,
Տանջեալ ցաւո

6) ԽԱՌՆՈՒԱԾՔԻ ԵՒ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ։

Մնում է որոշել դարձեալ մի խնդիր։ Երբեմն շփոթում են բնաւորութիւնը խառնուածքի հետ։ Այդ սխալ է։ Խառնուածքն, անկասկած, ազդում է մարդուս բնական հակումների վրայ, բայց այսպիսով խառնուածքն ու բնաւորութիւնը չեն փոխարինում միմեանց։ Ֆիզիոլոգների ասելով մաղազային խառնուածք ունեցող մարդիկ տրամադրուած են զօրեղ կրքերի, ցանկութիւնների, զգայուն, աշխոյժ և վրստահ են, հակամիտ են դէպի խորունկ մտաւոր զբաղմունքներն ու մեծ սխրագործութիւնները։ Ջղային խառնուածքները ներկայացնում են սրանց բոլորովին հակառակ երեւոյթներ. ջղային մարդոց զգայականութիւնը, որ նշանաւոր է իւր աշխուժութեամբ, փոփոխական է և դիպուածական. խելքը՝ արագ և սրամիտ է, բայց ոչ տոկուն. սէրն ու բարկութիւնը սահման չունին, բայց վաղանցուկ են. երևակայութիւնը անասելի կերպով արագ է՝ բայց ցնորամտութեանն է հասնում. նրանք—կասկածոտ են, հեշտասէր, պատրաստակամ ծաղրին և արտասուքին, դիւրութեամբ են կշտամբանքից գովեստներին անցնում, գրաւվում են դատողութիւններով, լինում են վատ կառավարիչներ, հակումն չունին ուսումնականի նստակեաց պարապմունքներին, զարմանալի յառաջադիմութիւններ են անում արուեստների մէջ, բայց որովհետև երբէք գոհ չեն լինում իրենց շրջապատող կեանքով, այդ պատճառաւ սովորաբար դժբաղդ են լինում։ Արիւնային խառնուածք ունեցողների մէջ գերիշխում է տարօրինակ դրութիւնը, երևակայութիւնը, զգացումները. արիւնայինները եռանդոտ են և ընդունակ առաջին բոպէին մեծ ծայրայեղութեանց մէջ ընկնելու, բայց առաջին ժայթմունքից սառչելով, դառնում են պարզահոգի և կակուղ։ Նրանք պարզախօսներ են և ազնիւ. դիւրութեամբ ընկնում են սխա-

ղանաց մէջ, բայց և յօժարութեամբ խոստովանում իրենց սխալները. չեն հոգում անցեալի և ապագայի մասին, սիրում են բաւարարութեամբ ապրել և զարմանալի յառաջադիմութիւններ են ցոյց տալիս զինուորական և ճարտասանական արուեստի մէջ։

Ապա ուրեմն պարզ է, որ չի կարելի շփոթել խառնուածքը բնաւորութեան հետ, բայց բնաւորութիւնը կըրթելիս, ի նկատի պիտի առնել խառնուածքը. որովհետև լաւ ուղղութիւն ստացած խառնուածքը բաւականին կարող է նպաստել բնաւորութեան կատարելագործութեանը։ Վերջինիս մասին, կարծեմ, բաւականաչափ գաղափար տուինք ընթերցողներին։

ԳԼՈՒԽ Բ.

ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Պարտաւորութիւն կատարելը թող համարեն մաշուած նիւթ, բայց և այնպէս նա բովանդակում է իւր մէջ բնաւորութեան և կեանքի կատարելագործութեան ամենավսեմագոյն գաղափարը։ Ս. Սմայլս։

Միայն պարտաճանաչութեան զգացմունքն է կազմակերպում բնաւորութիւնը։
Գ. Մոռոռբի։

Մի՞թէ դուք չէք հասկանում, որ ճշմարտութեան համար տանջուիլը մեր պարտաւորութիւնն է։ Մոռչոնի։

1) ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻՆ ԿԻՑ Է ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ։

Ո՛վ չէ կատարում այն, ինչ պարտաւոր է, նա, ճիշտն ասած, չունի բնաւորութիւն։ Եւ յիրաւի, արդեօք պարտաւորութիւնը չէ՞ այն օրէնքի պահանջը, որ գրուած է նոյն իսկ մեր մէջ։

Մինչդեռ այդ օրէնքից շեղուիլը բանական ազատ արարածի համար այլապէս չի կարելի, եթէ ոչ ազատութեան և բանականութեան համար անընդունակ դառնալ, այսինքն վայր իջնել այն դիրքից, որ յատկացրել է մեզ նոյն իսկ բնութիւնը, ստորանալով մեր և մեր մերձաւոր-

ների առաջ *)։ Կարելի է թույլ տալ, որ մարդս միշտ կարծեցեալ պարտաւորութիւնը ընդունում է իրականի տեղ, բայց եթէ նա գիտակցաբար ըմբռնում է այդ և չի կատարում, ապա ուրեմն չի կարելի ասել, թէ նա բնաւորութիւն ունի։

2) ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ։

Պէտք է նկատել, որ ես չեմ շփոթում բարոյական պարտաւորութիւնը բնաւորութեան հետ, թէպէտ և համարում եմ նրանց իրար հետ փոխադարձ սերտ կապուած։ Պարտաւորութիւնն է բնական յարաբերութիւն, սկզբնական, անպայման հանրական ոյժի՝ դէպի արտադրող, յարաբերական, փոփոխական մասնաւոր ոյժը. բնաւորութիւնն է յաջորդական յարաբերութիւն բոլոր հոգևոր ընդունակութիւնների՝ որոնք ուղղուած են դէպի նպատակը։

Պարտաւորութիւնն է օրէնք և մարդկային բնութեան անպայման պահանջ։ Բնաւորութիւնն է հոգեկան յատկութիւն։ Պարտաւորութեան գաղափարը առարկայականն է, որովհետև իւր raison d'être-ը գտնում է օրէնքի, բարոյութեան, իրաւունքի մէջ. բնաւորութեան գաղափարը ենթակայական է, որովհետև մասնաւոր մարդու սահմաններից հեռու չէ գնում։ Պարտաւորութիւնը՝ կամք է, որ ազատօրէն ենթարկվում է օրէնքին. բնաւորութիւնը՝ առաքինութիւն է, որ տալիս է կամքին ոյժ և օգնում նրան հաստատուն մնալու իւր նպատակին։ Պարտաւորութեան շնորհիւ մարդս ազատօրէն ենթարկվում է բարձրագոյն պատգամին. շնորհիւ բնաւորութեան՝ նա իւր մէջ ոյժ է զգում, որ ստիպում է նրան յուսով և հաստատամտութեամբ գործելու։

Մեզ ամենիս վրայ պարտաւորութիւններ կան դը-

---

*) Adolfo Frank. Morale per tutti.

րուած, որովհետև նոյն իսկ մեր մէջ նպատակ կայ. բայց մենք ոչ բոլորեքեանս կարող ենք ասել, թէ բնաւորութիւն ունինք։ Ո՛վ չի կատարում իւր պարտաւորութիւնները, նա պատասխանատու է ոչ միայն բարոյական՝ այլ և քրէական օրինաց առաջ, եթէ խանգարած է լինում հասարակաց կարգը. բայց ով բնաւորութիւն չունի, մի միայն պատասխանատու է բարոյական օրինաց առաջ։ Վերջնոյս կողմից իբրև պատիժ ծառայում է իւր խղճի խայթը և մերձաւորների արհամարհանքը։ Ի վերջոյ, կարելի է ասել, որ բնաւորութիւնը մի որոշ աստիճան մեր պարտաւորութիւնն է, բայց երբէք պարտաւորութիւնը բնաւորութիւն չի լինում։ Բնաւորութիւնը զարգանում է պարտաւորութեան կատարելով, պարտաւորութիւնը կարող է առիթ տալ բնաւորութիւն կազմակերպելուն։

Կարելի էր, գուցէ, համեմատութիւնը աւելի հեռուն տանել, բայց ես բաւականանում եմ մի դիտողութեամբ, որ բնաւորութիւնը հիմնում եմ պարտաւորութեան կատարման և իրաւունքի իրագործելու վրայ, ընդ նմին չը շփոթելով իրաւունքի և պարտաւորութեան գաղափարը բնաւորութեան գաղափարի հետ։ Սոյն տարբերութիւնը սահմանելով, ես դարձեալ պնդում եմ, որ բնաւորութեան տէր մարդու ճշմարիտ կատարելատիպ, իմ կարծիքով, հանդիսանում է նա, ո՛վ անդողդոջ և գոնոանուանեամբ նպատակում է իւր պարտքը։

3) ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻՑ ԶԱՆՑԱՆԻԼԸ ԵՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ԶԱՆՑ ԱՌՆԵԼԸ։

Առ հայրենիս ունեցած սէրը ուղղակի մեզ այն համոզմանն է բերում, որ իւր սեփական իրաւունքների վրայ ունեցած չափազանցեցրած կարծիքից՝ կարծեօք առաւել այժմս, քան երբ և իցէ, նսեմանում և անհետանում է

պարտաւորութեանց մասին ունեցած պատկերացումը։ Ես կարծում եմ, որ եթէ մեր ժամանակ փոքր առաւել քիչ խօսուէր և գրուէր իրաւունքների, և փոքր ինչ առաւել պարտաւորութիւնների մասին, այնուհետև դաստիարակութիւնն առաւել ախորժելի պտուղներ կը բերէր և դրանից շատ կ'օգտուէր անհատների ու ազգերի բնաւորութիւնը։

Մարդկային կեանքը ծածկուած է իրաւունքների և պարտաւորութիւնների սերտ ցանցով։ Թէ մէկի և թէ միւսի մասին մարդս պէտք է միակերպ հոգ տանի, որովհետև դրանք անհրաժեշտ են իւր անձնաւորութեան զարգացման համար։ Ո՛վ մերժում է իրաւունքը՝ նախապատուութիւնը պարտաւորութեան տալով, նա խորտակում է մարդկային անձնաւորութիւնը, որովհետև զրկում է նրան եռանդից։ Նոյնը անում է և նա, ով մերժում է պարտաւորութիւնը՝ նախապատուութիւնը իրաւունքին տալով, որովհետև դրանով նա զրկում է անձնաւորութեանը իւր նպատակին հաստատ մնալու ընդունակութիւնից։ Միով բանիւ, միակերպ սուրբ են իրաւունքները և պարտաւորութիւնները. սրա մասին մենք խնդիր էլ չենք արծարծում։ Բայց ես աշխատում եմ ուշադրութիւն դարձնել մի բանի վրայ, որ երիտասարդութիւնը դաստիարակելիս հոգային այն հաստատ համոզմունքը զարգացնելու մասին, թէ իրաւունքի իրագործելն անպատճառ 'ի նկատի ունի որ և է պարտաւորութիւն։

4) ՊԱՐ ԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԷՆՔ։

Պարտաւորութիւնն է աշխարհաշինութեան ընդհանուր օրէնքը, որովհետև բոլոր իրերի շարժողութիւնը ենթարկուած է բարձրագոյն օրէնքին։ Պարտաւորութիւններ ունին բոյսերը և կատարում են անգիտակցաբար։ Սոյնպէս թռչուններն օդում, ձկները ջրերում, և բոլոր կենդանիք

երկրիս վրայ ունին իրենց պարտաւորութիւնները և բնազդմամբ ձգտում են դէպի նրանց։ Բոյսերն ու կենդանիքը կատարում են պարտաւորութիւնները ճակատագրի թելադրութեամբ, որովհետև օրէնքը ձուլուած է նրանց բնութեան հետ։ Միայն մենք, բանական արարածներս, գիտակցաբար ճանաչում ենք և զգում մեր պարտաւորութիւնները. մի միայն մենք ենք տեսնում, որ օրէնքը մեր մէջ պարունակւող իր է, իրական իւր էութեամբ և վսեմագոյն իւր բնութեամբ, որ օրէնքը իրաւունք ունի հրամայելու մեզ և հնազանդութիւն պահանջելու։ Այս հիման վրայ մի միայն մենք ազատ լինելով, որովհետև բանական ենք, կարող ենք պատասխանատու լինել մեր գործողութիւնների համար, այսինքն՝ մեզ կարող է պատիժ սահմանուիլ կամ վարձատրութիւն։

«Պարտաւորութիւնը, Ժանէյի ասելով, համաշխարհային օրէնք է. նա ծանրանում է խելքի և խղճի վրայ, նրանից ոչ ոք չի կարող խուսափիլ»։ Համաշխարհային լինելով, օրէնքն անպայման է, չի թոյլ տալիս բացառութիւններ, պայման չի կապում ոչ մի ուրիշ օրէնքի հետ, չի պահանջում առաւել, քան ինչ որ կայ նոյն իսկ իւր մէջ. ամեն ինչ պէտք է նրան հնազանդուի։ Ահա թէ ինչու Էմմանուէլ Կանտը պարտաւորութիւնն անուանում է «անպայման հրաման»։ Սոյն հիման վրայ պարտաւորութիւնը կատարվում է ոչ թէ նրա համար, կամ գլխաւորապէս՝ որ նա ընդունուած է կամ օգտակար, այլ նրա համար, որ նա՝—պարտաւորութիւն է։ Զահաւէտ բարոյականութիւնը, կամ ինչպէս երբեմն ասում են, լաւ հաշուած օգտի բարոյականութիւնը՝ կեղծ բարոյականութիւն է. նա հակառակ է վերամբարձ փիլիսոփայութեան պատկերացումներին և արդարացի կերպով մերժուած է մարդկային ցեղի հանճարով։ Բոլոր գործել բարու-ներեան համար և պարտաւորութիւնը նպատակել պարտաւորութեան համար՝—ահա այն տեսա-

կանութիւնը, որ մեր մէջ հերոսութիւն է զարգացնում։ Սոկրատէսն առաւել յօժարութեամբ խմեց թոյնը, քան թէ վճռեց չը հնազանդուել աթենացւոց օրէնքներին. քրիստոնեայ նահատակները տալիս էին իւրեանց անձը վայրենի գազանների յօշոտման, խարոյկի վրայ այրուելուն և մորթեվերծ լինելուն, գերադասելով մահը հաւատափոխութեան. և հայրենասիրութեան, գիտութեան, զինուորական պատուի, որդիական սիրոյ, բարեկամութեան և սրա նման բիւրաւոր նահատակներ՝ բարի էին գործում բարութեան համար, և մեռնում՝ պարտաւորութիւնը կատարելու համար։

5) ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ Է։

Պարտաւորութիւնն ասում են միակողմանի մարդիկ, թուլութիւն և ստրկութիւն է։ Եղկելի տարակուսանք։ Զի՞ որ մարդ այն ժամանակն առաւել եռանդ և ազատութիւն է զգում իւր մէջ, երբ որ նա առաւել խոնարհվում է պարտաւորութեան առաջ։ Եւ թող ներեն ինձ արտագրելու այստեղ մի գեղեցիկ հատուած «Գիրք-ՊԻՆ օրէնսդրութեան» գրքից։ «Մարդս չի կարող երջանիկ լինել, չը լինելով ազատ. ամենքը սրանում համոզուած են։ Մարդս չի կարող երջանիկ լինել առանց մի որ և է կառավարութեան ձևի և առանց օրէնքների, ամենքը հասկանում են այս։ Ապա ուրեմն, որպէս զի մարդս երջանիկ լինէր, պէտք է լինի ազատ և ենթակա ունենցող։ Բայց մինթէ ազատութեան միջոցին հնարաւոր է կախումն ունենալը, և կախումն ունենալու միջոցին՝ ազատութիւն։ Եթէ ազատութիւնը ենթադրում է իշխանութիւն անելու այն, ինչ որ կամենում ես, ապա ինչպէս ի մի ամփոփել նրան կախումն ունենալու հետ, որ ենթադրում է կատարելու այն պարտաւորութիւնը, ինչ որ պահանջում են։ Բայց ինչպէս միաւորել այս ծայրայեղու-

թիւնները, ինչպէս հաշտեցնել այս հակասութիւնը։ Բարեբաղդաբար՝ սրա համար միջոց կայ։ Ի՞նչպիսի։ Ո՞ւր է։ Ի՞նչպէս գործադրել այդ։ Որովհետև պարտաւորութիւնը ամենից դուրս մերժում է ազատութիւն, որովհետև պարտաւորութիւնը պարտաւորութենից դուրս մերժում է խոհեմութիւնը, ապա ուրեմն այն բանի ցանկութիւնը, ինչ որ պահանջում են, պահպանում է պարտաւորութիւնը, չը խանգարելով խոհեմութիւնը։ Հետևաբար, ցանկանալ՝ անելու այն, ինչ պահանջվում է, ծառայում է իբրև օղակ միաւորելու և հաշտեցնելու ազատութիւնը կախումն ունենալու հետ։ Երբ քաղաքացին ցանկանում է այն, ինչ որ դրսից հրամանագրվում է, երբ նա կամքով ձգտում է դէպ այնտեղ, ուր նրան կոչում են օրէնքները, այն ժամանակ նա ենթարկուած է, որովհետև ապրում է օրէնքների ներքոյ և ընդ նմին նա ազատ է, որովհետև նրան նպաստում է կամքը և նա առանց այդ էլ կը կատարէր պահանջածը, իբրև օրէնքի հրամանագրութիւն *)։

Այսպիսի պարզ ապացոյցներից յետոյ ես ապարդիւն եմ համարում դարձեալ սոյն նիւթի մասին խօսել։

6) Ե՛Կ ԳՈՐԾԵՆՔ, ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՆՔ։

Լինում են այնպիսի մարդիկ, որոնք խոստովանելով կախումն ունենալու սերտ կապը ազատութեան հետ, այն աստիճան յեղաշրջում են պարտաւորութեան ամենահասարակ իմաստը, որ զարմանալի անհեռատեսութեամբ պնդում են, թէ խրախոյսի և փառքի վրայ միմիայն նա կարող է յաւակնութիւն ունենալ, ով հերոսական սխրագործութիւններ է կատարում։

Երկիրս հերոսների հայրենիք չէ։ Հերոսներն, իբրև

*) G. Filangieri. Op. cit. cap. XXXIV. Parte 11.

բացառութիւն, հանդիսանում են իբրև զեկավար մնացեալ մարդոց համար, ինչպէս որ ծովի վրայով գիշերները ճանապարհորդելիս փարոսի ձեղնայարկը կամ բևեռային աստղը զեկավարում են հասարակ մակոյկին։ Երկիրս հայրենիք է ըստ մեծի մասին սովորական, հասարակ, և իրար նման մարդոց։ Պէտք է հոգալ մեծամասնութեան և ոչ թէ հերոսների համար. և իրօք, նրանք կարօտ էլ չեն մեր զեկավարութեան, որովհետև նրանք իրենց խելքի հարբուտութեան մէջ գտնում են իրենց ինքնակրթութեան միջոցը։ «Մարդկային կազմակերպութիւնը հերոսութեան վրայ հիմնուած, ասում է Բուրկէն, անխուսափելի կերպով կրում է թուլութեան և անկման նշաններ»։

Դէպի մեծ մարդիկն ու հերոսական սխրագործութիւնները տաճած զարմանքը՝ գեղեցիկ և սուրբ գործ է։ Բայց մենք չը պէտք է մոռանանք, որ ամենքին վիճակուած չէ մեծ մարդոց շարքը դասուիլ, որոնք այլ ևս աչքի չէին ընկնիլ միւսների հետ, եթէ որ այդպէս հազուագիւտ չը լինէին։ Սաստիկ ի չարն են գործածում Նապոլէօնի ասածը. «Իւրաքանչիւր զինուոր կրում է իւր սուի տակ մարաջախտի գայիսոնը»։ Իրաւ է, մարաջախտներ դուրս էին գալիս Նապոլէօնի զինուորներից, բայց ոչ թէ բոլորը որոնք ցանկացել են մարաջախտ դառնալ, այլ միայն նրանք, որոնք գիտցան միացնել ցանկութիւնը ձիրքերի հետ։ Ի դէպ է յիշել Հօրացիոսի խրատը մատենագիրներին. «Մատենագիրներ. ձեռնարկեցէք ձեր ոյժերին համաձայն աշխատանքի, և երկար փորձեցէք, արդեօք ձեր ոյժերին յարմար է թէ ոչ» *)։

Եւ ես կարծում եմ, որ այս խօսքերը պէտք է իւ-

---

*) „Sumite materiam vostris, quiscribitis, æquam
Viribus, et versate diu, quid ferre recusent,
Quid valeant humeri“.

բաքանչիւրը դրօշմի իւր սրտում իբրև մարդկային գործունէութեան չափ։ Այս խրատը եզրափակվում է հանրածանօթ առածով. «Գործէ՛ք ոյնչառն, ո՛րչառն է՝ որոշ է»։ Զը լինենք այն աշակերտների նման, որոնց գլուխը դպրոցից դուրս գալուց յետոյ լի է բուռն յափշտակութեամբ Հռոմի և Յունաստանի հերոսների հսկայական պատկերներով, այնպէս որ իւրաքանչիւր զինուորի նրանք համարում են իբր Կոկլէս և Մուցիոս Սցեվօլա, իւրաքանչիւր մեծաւորի՝ Արիստիդէս կամ Ֆաբիոս, իւրաքանչիւր հօրը՝ Բրուտոս, իւրաքանչիւր կնոջ Պավզանիասի մայր, Կլէլիա կամ Կօրդէլիա, իւրաքանչիւր պետական անձնաւորութիւն Լիկուրգոս, Սոլօն, Կատօն կամ Ցինցինատ, և իւրաքանչիւր ուսումնականի՝ Սոկրատէս։ Սրանք բոլորը գեղեցիկ կատարելութեան հասցրած տիպեր են, բայց շատ մանկամիտ բան կը լինէր, եթէ ամենքն սկսէին յուսալ, որ կարող էին նրանց նմանել։ Մեր բոլորիս ոյժովը չէ Պետրոս Միկկի-ի հերոսութիւնը. մեզ բոլորիս վիճակուած չէ թողնել յետագայ սերունդներին փառաւոր անուն, որպիսին Պալէստրիայի քաջ զօրապետի և զինուորների բաժին եղաւ, որոնք նախապատուեցին ոչնչանալ Լիսսայի դժբաղդ ջրերում, քան կենդանի երջանիկ յաղթողի ձեռքն ընկնել։

Մեզնից ամեն մէկը կարող է բարի անուն վաստակել, միայն թէ իւրաքանչիւրը ըստ իւր կարողութեան կատարէր իւր պարտքը։

7) ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՆ ԲՈԼՈՐ ՄԱՐԴՈՑ։

Փառքը ամենքի բաժին կը լինի, եթէ որ ամենքն, առանց հերոսութեան վրայ յաւակնութիւն ունենալու, կը հնազանդուին բոլոր մարդոց համար հաւասարապէս պարտաւորեցուցիչ օրէնքներին։

Իրրև ընտանիքի անդամներ, կատարենք ծնողների, ամուսնու, կնոջ, որդու, եղբօր պարտաւորութիւնները։ Մի-ևնոյն հայրենեաց զաւակներ, կատարեցէք բարի քաղաքացու պարտաւորութիւնները։ Աւելի մեծ հասարակութեան՝ մարդկութեան անդամները, թող կատարեն մարդու պարտաւորութիւնը։

Բոլորեքեանքս մի Աստծուց ստեղծուած լինելով մի նպատակի համար, հնազանդուինք այն պարտաւորութիւններին, որ պատուիրում է մեզ կրօնը։

Ի վերջոյ եկ կատարենք բոլորը, ինչ որ բնութիւնը դնում է մեզ վրայ առաւել լաւ կատարելագործելու հոգին ու մարմինը, ըստ առածին թէ.

«Ճատ անողին ալ շատիկ, քիչ անողին ալ շատիկ։ Ապա ուրեմն, եթէ կամենում ենք բնաւորութեան տէր մարդիկ դառնալ, եկ կրթենք մեզ պարտաւորութիւնների միջոցով։ Մի գերմանացի փիլիսոփայ ասաց հետևեալը. «Ես գիտեմ տիեզերքի մէջ մի միայն երկու գեղեցիկ բան. աստղազարդ երկինքը մեր գլխի վրայ և պարտաճանաչութեան զգացմունքը մեր սրտում»։

Երջանիկ է նա, որի շիրմի վրայ սերունդները կը գրեն. «Նա միշտ կատարում էր իւր պարտաւորութիւնը»։

ԳԼՈՒԽ Գ.

ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԷՐ ՄԱՐԴՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աւելի թանկագին է մի բուռն լաւ կեանք, քան մի բեռն իմաստութիւն:

Իսպանեան առած:

Obsequium amicos, veritas odium parit.*)

Տերենցիոս:

Մի անգամ Սիրակուզայում Արիստիպն ասաց Դիոգինէսին, երբ վերջինս ողողում էր ընդեղէնները. „Եթէ դու շողոքորթէիր Դիոնէսիոսին, ապա չէիր ուզենալ այդ ընդեղէնները“: Դիոգինէսը պատասխանեց. „Բայց եթէ դու սրանց համը տեսնէիր, ապա չէիր ուզենալ շողոքորթել Դիոնէսիոսին“:

Վալերիոս Մաքսիմոս:

1) ԱՐԴԱՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ:

Բնաւորութեան տէր մարդը թէ խօսքով և թէ գործով չի շեղուիլ ճշմարտութիւնից. կամ այն բանից, ինչ որ նա ճշմարիտ է համարում: Նա ասում է այն, ինչ զգում և մտածում է և ամօթ կը համարէր սրտում և մտքում ուրիշ բան ունենալ, և խօսքով ուրիշ ասել: Նրա խօսքերի՝ իբրև հայելու մէջ, ցոլանում է նրա հոգին:

---

*) Հաճոյականութիւնը ծնում է բարեկամներ, ճշմարտութիւնը թշնամիներ:

Ինչպէս որ ճշմարտութեան վրայ հիմնւում է բոլոր իսկական գեղեցիկն ու բարին, նոյնպէս և ուղղամտութեան վրայ հաստատվում են բոլոր մնացեալ առաքինութիւնները։

Ճշմարտասիրութիւնն ուղղամտութեան զննական արտայայտութիւնն է և լոկ միայն նա բաւական է, որ դէպի մարդը յարգանք զարթեցնէր։ Ճշմարտասէր մարդը ակամայ դէպի ինքն է դրաւում քեզ. նրանում կայ և՛ սեպհական արժանաւորութիւն և՛ տոկունութիւն և՛ վստահութիւն և՛ դրականութիւն. այդպիսով նա քեզ ակամայ տրամադրում է բանալ նրա առաջ քո սիրտը։

Ճշմարտասէր մարդու խօսքը միևնոյնն է թէ երդումը և այս պատճառաւ անկարելի է նրան ստիպել յետ առնելու իւր տուած խօսքը ոչ խորամանկութեամբ, ոչ սպառնալիքներով։

Բաւական է որ նա միայն քեզ խօսք տայ և դու կարող ես լիովին վստահ լինել նրա վրայ։

Մեր ժամանակ ազնիւ խօսքն այնպիսի աժան ապրանք է դառել, որ սկսում է բոլորովին իւր իմաստը կորցնել։ Այժմ ասել, թէ՝ «ես ձեզ ճշմարիտ, ազնիւ խօսք եմ տալիս», կամ թէ «երդվում եմ սեպհական պատուով», կամ «քո պատուովն եմ երդվում», ողջ մին է, թէ մի կերպով գլխից հեռացնել սովորական, մաշուած, հնացած խօսքերով։ Փոքր ինչ աւելի գնահատում ենք մեր, քան ուրիշի պատիւը, որովհետև այդ էլի ամենամեծ արժէքն ունի և մեր ժամանակում առաւել ու առաւել հազիւ է պատահում։

Իրեն յարգող մարդը՝ կամ երբէք չի երդվում իւր պատուով, կամ թէ խօսք տալով, այլ ևս յետ չի կանգնիլ, թէկուզ աշխարհը շուռ գար։

Սմայլսը խօսքի ոյժի հիանալի օրինակ է հաղորդում մեզ Բլիվսերի անձնաւորութիւնը։ 1-ին յուլիսի 1815 թ. Բլիվսերը, վերջին ջանքերը գործ դնելով, չը նայելով վատ

ճանապարհներին, որ ժամանակին օգնութիւն գար Վալլինգտոնին, ոգևորում էր զինուորներին շարժուածներով ու խօսքերով. «Յառաջ, որդեակք, յառաջ»։ «Ձենք կարող, ոյժ չը կայ», պատասխանում էին նրան։ Բայց Բլիւխէրը չէր դադարում սրանց շտապեցնելու, ասելով. «Որդեակք, ինչ էլ որ չասէք, բայց հասնել պէտք է։ Ես խոստացել եմ Վալլինգտոն բարեկամիս օգնել, խոստացել եմ, հասկանում էք։ Միթէ ձեր պատճառով ես պէտք է դըրժեմ խօսքս»։ Եւ խօսքը կատարուեցաւ։

Իրաւացի չէ մի քանիսների կարծիքը, գուցէ շատ քիչ բացառութեամբ, թէ աշխարհս այն անձանց ձեռքն է, որոնք գիտեն ուրիշներին խաբխբել։ Ո՛չ, մի միայն ճշմարտասիրութիւնն է նուաճում աշխարհս, և չը նայելով որ երբեմն պատահում է նրան ծեծուած, ամբաստանուած և ստորացած լինել, բայց և այնպէս ամեն անգամ յաղթող է հանդիսանում բոլոր արգելքների դէմ, քաջալերութիւն ստանալով նոյն իսկ հակառակորդներից անգամ։ Խտալերէն լեզուով գեղեցիկ առածներ կան սոյն նիւթի վերաբերեալ։ Յանկալի կը լինէր, որ իւրաքանչիւրը իւր սրտում անջնջելի դրոշմէր դրանց։ «Ճշմարտութիւնը միշտ ուխտում է հաբէը ու՝ դուլ դալ։ Ճշմարտութիւնը հայտնում է, բայց չէ նրանում։ Ճշմարտութիւնն երբէ՛ք ուեղդդ չէ լինում։ Ճշմարտութիւնը յաւիտեան ծուլում է», և ուրիշ սրանց նման շատերը։

Ճշմարտասէր մարդն այնպէս է, որ իսկոյնևեթ կանուանէք նրան բարեկիրթ, չը կասկածելով որ սխալուած լինի։ Ինչ գործի նա չը ձեռնարկէր, երբէք չի խաբիլ, նա ի՛ չարն չի գործ դնում, չի հարստահարում ուրիշների պարզամտութիւնը կամ տգիտութիւնը, նա չունի վաշխառուական հաշիւներ խղճի հետ, նա միշտ արդարութեամբ է վարվում, ամեն բանում պահպանում է ներքին ազնուութիւնը և վարմունքի ու խօսքի մէջ քաղաքավարութիւն։

Ճշմարտասիրութեանը բնականաբար կից է ազնուու-

թիւնն ու պարզասրտութիւնը։ Ճշմարտասէր մարդն ասում, գրում կամ գործում լինելիս, կանգնած է ուղիղ, նայում է ուղիղ աչքերիդ և միշտ գնում է բացայայտ ճանապարհով։

Իտալիայում, ճիշտը խոստովանած, պարզասրտութիւնը ոչ առաջին և մինչև անգամ ոչ էլ այնքան առանձնապէս տարածուած առաքինութիւններից է մասնաւոր և պետական շրջաններում։ Ես գիտեմ որ դրա մեղը ոչ թէ մեր բնաձին յատկութիւններն են, այլ վատ դաստիարակութիւնը, որ ամբողջ դարերով սիստեմատիքաբար ապականում էր իտալացիների բնաւորութիւնը, որոնց բնութեան մէջ կայ անկեղծութիւն։

Ճիզուիտութիւնը թափանցել է ամենուրեք. ապականեց գիտութիւնը, գրականութիւնը, արուեստները, քաղաքագիտութիւնը, բարոյականութիւնը և մինչև անգամ բանականութիւնը։ Նա յայտնում էր իրան հրաժարուած իւր սեպհական կամքից, պատուիրելով հլու հպատակութեամբ հետևելու իւր տիրոջ՝ աչքերը խուփ և ամենաբարձր կատարելութիւն էր համարում ուրիշներին խաբելու արուեստը։ Ճիզուիտութիւնը պետական մարդու վէրքն էր և ուսուցանում էր գողանալ պաշտօնի համեմատ։

2) ԿԵՂԾԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ։

Այժմ խօսենք կեղծաւորութեան դպրոցի մասին՝ մի դպրոցի՝ որ իւր աշակերտները հազարներով է համարում։ Բիֆրօնտէ դէլ-Բունիօնի հնարագիտութիւնը նուրբ քաղաքագիտի իդէալն է հանդիսանում և Բաբադասը օրուայ հերոսը դարձաւ։ Ճիզուիտներին նզովում են, իսկ ճիզուիտականութիւնը քարոզվում է նոր դիմակի տակ։ Արուեստ՝ ասել ուրիշ, մտածել ուրիշ, գործել այն, ինչ որ չես մտածում, ժպտալ և ատել, խորասուզուիլ սոփեստականութեանց և կանխակալ գաղափարների բաւիղում, ահա ճիզուիտակա-

նութիւն, ահա մեր ժամանակակից վէրքը։ Ձեռք զարկենք գործին, մատենագիրներ և դաստիարակներ, սկսենք բուժել ժահահոտ վէրքը։ Հեռու դիմակը և խաբուսիկ քողը։ Դուրս ուրուականներ, դուրս ներկեր։ Երկիցս ասում եմ, դուրս կեղծաւորութիւն։ Վատ է, եթէ դրոշակի վրայ գրուած է «քաղաքացիութիւն»։ Ճշմարտասիրութիւն, ազնուութիւն, ուղղամտութիւն՝ ահա ձեզ քաղաքացիութիւն, ահա ձեզ բնաւորութիւն։ «Եթէ աւստրիացի չը լինէիր, դու կը լինէիր իմ առաջին բարեկամս», ասաց Դանիել Մանինը մի ազդեցութիւն ունեցող աւստրիական Դրան դիւանագիտին։ Բարօն Բիկասօլին՝ նրա բնաւորութեան վսեմութեանը մենք ակնյայտնի կերպով համոզուեցանք, ասաց պ. Ֆ. Դալլ-Օնգարօյին, վերջնիս Ֆրանսիա ուղևորելիս. «Գնացէք, ասացէք այն պարոններին, որ ես գոյութիւն ունիմ տասներկու դար և իմ տոհմիս վերջին շառաւիղը լինելով, վերջին կաթիլ արիւնս կը թափեմ քաղաքական ծրագրիս ամբողջութիւնը պահպանելու համար» *)։

Բնաւորութեան տէր մարդն ատում է ստախօսութիւնն, իբրև ամենավերջին ստորութիւն։ Ո՛վ ատում է, նա ոչ միայն չի ընդունում ճշմարտութիւնը, այլ և հրաժարւում է իւր սեպհական խղճից։ Խմաստութեան գիրքը ձայնում է. «Ստախօսի շրթունքները սպանում են հոգին». իսկ Արիստոտէլի ասելով՝ «Խմաստունի բնութեանն յատուկ է՝ խուսափել ստից»։ Ձասել այն, ինչ որ մտածում ես, լինի դա երկիւղից, թեթևամտութեամբ կամ խաբեբայութիւնից, ոչ միայն ստորութիւն է, այլ և յանցանք. և որքան էլ այդ զերծ մնար քրէական օրէնքից, այնու ամենայնիւ չեն խուսափիլ բարոյական օրինաց դատապարտութիւնից։

Ապա ուրեմն ուսանինք արիաբար միշտ ճշմարիտը խօսելու։ Խոստովանութիւնը թէկուզ էլ յայտնէր մեր սը-

*) F. Dall'Ongaro—Vita di B.

խալանքը կամ թուլութիւնը, գոնէ դարձեալ ազնիւ ուղղախօսութեան հասարակ գործողութեամբ կարող է վերադարձնել մեզ ազնիւ մարդոց յարգանքը։ Յիշենք անմահ Պլատօնի կանոնը. «Սոկրատէսն ինձ սիրելի է, բայց առաւել ևս սիրելի է՝ ճշմարտութիւնը»։ Յիշենք երկնային Վարդապետի խրատը. «Եւ եղիցի ձեր բանն, այո՛ն այո՛, և ո՛չն ո՛չ»։ Դուրս բոլոր կիսամիջոցները. ճշմարտութիւնը չի թոյլ տալիս իրեն հետ հաշիւներ ունենալ. չը կայ կիսաստութիւն և կիսաճշմարտութիւն։ Սկսենք ասել ամեն բան, ինչպէս որ կայ, իսկ երբ անհրաժեշտութիւնը կամ խոհեմութիւնը կը պահանջէ որ ճշմարտութիւնը չը յայտնուէր, առաւել լաւ է բոլորովին լռել։

3) ՇՈՂՈՔՈՐԹՈՒԹԻՒՆ։

Ստիպ դէպի շողոքորթութիւնը՝ քայլը կարճ է։ Բնաւորութեան տէր մարդը չի շողոքորթում, որովհետև չի սկսիլ խաբել։ Շողոքորթն առաւել արհամարհելի է ստախօսից. ստախօսութեամբ հերքում են ճշմարտութիւնը, իսկ շողոքորթութեամբ աւելի մեծ բան են անում. հերքում են ճշմարտութիւնը և դնում են մարդուն երկու տեսակ կեղծ դրութեան մէջ, ստիպելով հաւատալ նրան, ինչ որ չը կայ, և մնասելով նրան, ինչ որ կայ։ «Ինչո՞ւ ես ինձ դու աչքիս առաջ գովում, հարցնում է հռովմայեցի բանաստեղծը. չը լինի՞ թէ ուզում ես ծախել ինձ նոյն իսկ ինձ վրայ»։ Զնորհ ստանալու համար շողոքորթելը՝ պախարակելի է, բայց շողոքորթել, ինչպէս յաճախ պատահում է, վատ մարդոց, յանցանք է։ Ո՛վ շողոքորթում է վատ մարդուն, նա ինքը ծածկվում է կեղտով և հրաւիրում է թշուառին հանդըստանալու աղտոտ անկողնու վրայ, որ ինքն է պատրաստել իւր կեղտոտ ձեռքերով։ Շողոքորթութիւնը ստոր մարդոց դաւաճանական ձևն է, որոնք ստի օգնութեամբ յոյս ու-

նին իւրեանց ապագան ապահովելու՝ իսկ միւսներին՝ կորուստ։

Եւ Իտալիայումն էլ դեռ շատ գործ կայ կատարելու, որպէս զի վերջ տային շողոքորթութեան պատճառած բարոյական ապականութեանը, որը չը գիտեմ, ումն է առաւել ամօթ բերում, նրան՝ ով շողոքորթում է, թէ նրան, ով ականջները կախում է շողոքորթի առաջ. բայց և այնպէս, շողոքորթութիւնը հաճելի է մարդուն, շոյում է պատուասիրութիւնը, եսականութիւնը։ Զատ անգամ ամեն բանով յարդելի անձինք շողոքորթների որոգայթն են ընկնում. ապա կրքից շարժուած իրանք էլ անում այն, ինչում որ անխնայաբար մեղադրում են ուրիշներին։ Նշանակում է, իւրաքանչիւր մարդու մէջ երևան է գալիս Ադամը և մեր կատարելագործութիւնը աշխատանք և ժամանակ է պահանջում։ Կիկերոնը պարտաւորութեանց մասին գրքի մէջ ասում է. «Զգուշացէք կախել ականջներդ շողոքորթի առաջ. այդ տեղ շատերը խաբուել են. նախ՝ սկսում են հաւատալ իրենց արժանաւորութիւններին, ապա փառասիրութիւնը փքվում է մինչև որ իրօք սխալանքների և յանցանքների մէջ ընկնիլը»։ Առաւել եռանդագին է խօսում Արիստոտէլը. «Ապականուած մարդոց բարեկամներ լինում են նրանք, որոնք սիրում են լսել շողոքորթութիւն, որին յանձնատուր չէ լինում ազատ խղճի տէր մարդը»։

Ի վերջոյ, համոզուինք գտնէ, որ շողոքորթները նախ և առաջ իրենց հաշիւներն ունին ի նկատի։ Ճանաչում էի կեանքիս մէջ այնպիսի մարդիկ, որոնք նոյնքան հեզ էին մեծ մարդոց առաջ, որքան և անտանելի փոքրիկ մարդիկների մօտ։ Նրանք հէնց որ միայն կը նկատեն, որ մէկը բարձր դիրք ստացաւ, իւր արժանաւորութիւնների շնորհիւ կամ բաղդի բերմամբ, իսկոյն կը սկսեն մերձենալ նրան այսպէս կամ այնպէս, շփվում են նրա շուրջը, ծառայութիւն են մատուցանում, սողում են նրա ոտների տակ, ուրիշնե-

րին չեն թոյլ տալիս մերձենալու, ամենի վրայ յարձակվում են կասկածելով, չը լինի թէ ուրիշները խլեն այդ իրենց ձեռքից։ Եւ այս ստոր շողոքորթները, շնականները, որոնք ծաղրում են իւրաքանչիւր համեստ մարդու, մանրակրկիտ եսամոլները, որոնք ամենափոքր հասկացողութիւն անգամ չունին վսեմի ու ազնուութեան մասին, իրօք վաղ թէ ուշ հասնում են պատուաւոր դրութեան ոչ թէ իրենց արժանաւորութեան, այլ ուրիշների ողորմութեան շնորհիւ։ Այն ժամանակն ահա, այս ով չը գիտէ, բարձրացնում են գըլուխը, լուրջ տեսք են ընդունում, ձայնը բարձրացնում են, խօսում են խրոխտ և վեհ, և իրանց մեծ հանճարների տեղ են ընդունում։ Բայց ամաչելով իրենց ծագումից, սկըսում են փոքր առ փոքր արհամարհանքով վերաբերուիլ նրանց, որոնց շնորհիւ մարդոց կարգն անցան և արժանի են։ Այն ինչ, ժամանակն իւրն է անում, դիմակն ընկնում է։ Այն ժամանակն ահա, շատ վատ է լինում և նրանց համար, որոնք շողոքորթում էին, և նրանց, որոնք թոյլ էին տալիս իրենց շողոքորթութեան յանձնատուր լինելու։

Բնաւորութեան տէր մարդը չի շողոքորթում և չի թոյլ տալիս շողոքորթել իրան։ Նա պահանջում է ոչ թէ ողորմութիւն, այլ արդարութիւն. չի դառնում տաղտկալի խնդրատու, որովհետև յարգում է սեպհական արժանաւորութիւնը և համոզմամբ գիտէ, որ միայն ճշմարիտ առաքինութիւնն է ճշմարիտ փառք արտադրում։

Անարատ վարքը, որ հիմնում է իրաւունքները պարտաւորութիւնների վրայ, քաղաքավարութիւն վարմանց մէջ, հնազանդութիւն իշխանութեան, ընդ նմին ինքնագիտակցութեան և արժանաւորութեան. պահպանել վառ երևակայութիւն պատուոյ մասին, յարգանք դէպ իւր անձնաւորութիւնը, ահա այն ծառայութիւնները, որոնք, հաւատացէք, կարող են դէպի մեզ ուրիշների յարգանքը գրաւել։ Շողոքորթից վաղ թէ ուշ արհամարհանքով երեսը

կը դարձնեն նոյն այն կուռքերը որոնց նա խունկ է ծըխում և մոմ վառում։

4) ԲԱՄԲԱՍԱՆՔ։

Այն պակասութիւններից մինը, որին պարտական է իւր ապականութեամբ իտալացու բնաւորութիւնը, հանդիսանում է կորստաբեր սովորութիւնս դէպի բամբասանք, անմիտ ցնորք կործանելու ամենայն գոյութիւն ունեցող դրութիւն։ Երբեմն, բռնակալութեան ժամանակ, լեզուն փակում էին արքայական անունով, որից և յառաջացաւ դարձուածքս. «De Deo parum, de rege nihil» *)։ Այժմ տեսարանը փոխուել է. ազատութեան վրայ նայում են իբրև անհաշիւ կամայականութեան յայտնագործութեան վրայ. լեզուն ու գրիչը, կարծես թէ կորցրել են սանձը։ Պահպանուած է արդեօք Իտալիայում ում և իցէ պատիւը։ Բոլորովին ոտնակոխ է արած ամենի բարի անունը, մանաւանդ պաշտօնական շրջաններում։ Բամբասանքը թափել է իւր թունալից մաղձը բոլորի վրայ, ում ձեռին միայն իշխանութիւն կայ։ Դառն է, բայց չի կարելի չը խոստովանել, որ բամբասանքը ամենուրեք թափանցել է և ամեն բան վարակել փոքրից սկսած մինչև մեծը, արքայական կառավարութեան բոլոր ընդարձակ և սահմանափակ մասերը։

Խօսքի և մամուլի ազատութիւնը՝ մարդուս ամենասուրբ իրաւունքն է և նրա անկախութեան գրաւականը, բայց երբ որ մարդիկ անազնուութեամբ նրան ի չարն են գործ դնում, այն ժամանակ ես հառաչելով ծունկ եմ չոքում Աստծու առաջ, որ նրանց բերանը փակէր։

Կարիք չը կայ մեղքը թաղցնել. բամբասանքը թաղաւորում է պարլամենտում, նահանգական և քաղաքային

---

*) „Աստծու մասին ամեն ինչ, արքայի մասին՝ ոչինչ“։

խորհրդարաններում, մասնաւոր ընկերութեանց մէջ, սրճանոցներում, ճանապարհին և ամենուրեք, ուր որ հաւաքուէին մարդիկ։ Հենց որ կընկնի մի կուսակցութիւնը և իշխանութիւնը միւսը ձեռք կառնի, խսկոյն յաղթուած կուսակցութիւնն արդէն սկսում է բամբասանքներ յօրինել, զանազանակերպ խորամանկութիւնների մի ամբողջ շարք հիւսել, և կամակորութեամբ փոս է փորում յաղթողներին, մինչ որ նրանք կընկնեն։ Կառավարչական կուսակցութիւնը թէկուզ իմաստութեան, հայրենասիրութեան, անձնուիրութեան հրաշքներ գործէր, նրա գործողութիւնները կը պարսաւուին հակառակ կուսակցութիւնից։ Այս պախարակելի է։ Թող գոնէ այսպէս վարուէին պաշտօնից հրաժարուածները, նրանց արածը գոնէ ի պաշտօնէ կը լինէր, երբ բամբասանքի դէմ բամբասանքով կը պաշտպանուէին։ Բայց երբ ես բամբասանք եմ լսում նաև նրա մասին, որն որ իրօք աշխատում է մեր ամենիս հայրենեաց միութեան և անկախութեան համար, այն ժամանակ սիրտս ճմլվում է և ես ամօթից ծածկում եմ երեսս։

Մինչև որ իտալացիք չեն ուսանիլ գնահատել իրանց և առ միմեանս յարգանքով չեն վերաբերուիլ, օտարներին հարկ չը կայ ուսանել յարգելու Իտալիային։

ԳԼՈՒԽ Դ.

ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԷՐ ՄԱՐԴՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բոյսը արմատից զրկուելով, թառամում է և ի վերջոյ չորանում. նոյնը պատահում է և պետութեանը, երբ ժողովրդի աչքում ընկնում է օրէնքի և կառավարութեան հեղինակութիւնը: Թոյլ կառավարութիւնը չի կարող ունենալ ոչ զօրութիւն պետութեան ներսը, ոչ էլ վարկ արտասահմանում:

Գ. Լա-Ֆարշա:

Կամքի ոյժ ունեցող փոքրաթիւ անձինքներից հազիւ թէ մէկն ու մէկին յաջողուի մեռնիլ, պահպանելով իւր անհատականութիւնը: Բանն այն է, որ շատ հազուագիւտ մարդոց հոգին երբեմն այնքան անարատ է լինում, որ իւր խղճի մէջ բաւականութիւն գտնէր: Խիղճը բաւականաչափ խաղաղ է, որ վստահանայ իւր վրայ և բաւականաչափ երկնային ձիրքեր ունի գործով արդարացնելու իւր վրայ ունեցած հաւատարմութիւնը: Ֆ. Բայլէ:

Երբէք խղճիդ հետ հաշտութիւնք մի կայացնիլ: Գ. Մանպէգոյոյ:

1) ԹՈՂ ՅԱՐԳԵՆՔ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

Հեղինակութիւնը պահանջում է յարգանք. գլխաւորապէս նրանով է պայմանաւորվում բարոյական, քաղաքա-

կան և նիւթական յարաբերութիւնների հնարաւոր յառաջադիմութիւնը. առանց նրան ազատութիւնը, հաւասարութիւնը, արդարադատութիւնը, օրէնքները մեռած տառ կը մնային։

Մենք մեր պարտաւորութիւնն ենք համարում ամենայն եռանդով պաշտպանել հեղինակութիւնը, որովհետև ներկայումս սկզբունքով տատանում են նրան։

Կարծեմ արդէն թափանցել է ամբոխի մէջ մոլար վարդապետութիւնս, որ ուղղակի հակառակն է ընթանում քրիստոնէական քաղաքացիութեան սկզբունքներին, թէ «պէտք չէ ունենալ կախումն ունենալ, մարդս ազատ է, իսկ հեղինակութիւնը բռնակալութիւն է»։

Այս վարդապետութիւնը մուտք է գործում ընտանեաց մէջ, և թուլացնում ծնողաց հեղինակութիւնը. հասարակութեան մէջ՝ և խեղաթիւրում կառավարութեան, օրէնքի, բարոյականութեան ու կրօնի հեղինակութիւնը։

Նա կարող է նոյն իսկ հիմքից կործանել հասարակութիւնը, եթէ դրա առաջ չի առնուիլ դաստիարակութեամբ և օրէնքներով։

Որովհետև արդէն ապացուցուած է, որ հեղինակութիւնը մի ոյժ է, որ ստիպում է յարգել օրէնքները, որ հեղինակութեան նպատակն է միջոցներ հայթհայթել իրագործելու մարդու մասնագիտական կոչումը, որ հեղինակութիւնն է ամենիսկական տարր պետական միութեան. ապա ուրեմն, հեղինակութեան թուլանալով, կը կործանուի հասարակութիւնը և նրա աւերակների տակից դլուխ կը բարձրացնեն երկու հսկաներ՝ բռնակալութիւնը և անիշխանութիւնը։

Հեղինակութեան վրայ յարձակվում են, համարելով նրան իբրև նիւթական ոյժ։ Այսպէս կարծելը ոչ միայն սխալ է, այլ և յանցանք։ Հեղինակութիւնը բարոյական ոյժ է։ Կարելի է թոյլ տալ, որ ֆիզիքական ոյժը ծառայում է

հեղինակութեանը իբրև նեցուկ, և ոչ թէ փոխարինում է նրան. ֆիզիքական ոյժը գտնվում է նրա կարգադրութեան ներքոյ, ինչպէս ձեռքը մարդու կարգադրութեան։

Երևելի ֆրանսիական հռետորի ասելով՝ «Ուր չը կայ հեղինակութիւն, այնտեղ անիշխանութիւն է. իսկ ուր անիշխանութիւն է, այնտեղ չը կայ ազատութիւն»։ Մարդկային հասարակութեան մէջ, ուր չարիքը չի դադարում գործելուց և միշտ պատրաստ է ծածկել բարիքը, պահապան է հարկաւոր ազատութեան պաշտպանութեան համար բոլորի և իւրաքանչիւրի ձգտումներից։ Ահա իբրև այդպիսի պահապան հանդիսանում է հեղինակութիւնը։ Նա ամենեւին վտանգաւոր չէ ազատութեան համար, այլ ընդհակառակն, ապահովում է նրան և իրականանալու հնարաւորութիւն է տալիս։

Թող ով ինչ ուզում է ասէ, բայց ժողովուրդն զգում է հեղինակութեան պահանջը, վասն զի հեղինակութիւնը բովանդակում է իւր մէջ և ժողովուրդ և նրա կազմակերպող տարերքը։

Սակայն սարսափելի պատերազմ է մղում հեղինակութեան դէմ. ի հարկ է, դա այժմ չի ծագիլ, բայց և ընդ նմին, այժմ է հասել իւր ճգնաժամին։ Այսպէս օրինակ՝ պատերազմ են յայտնում ամեն տեսակ կրօնական հեղինակութեան դէմ, որպէս զի ազատուին ամեն տեսակ կրօնից։ Պատերազմ են յայտնում իւրաքանչիւր ուսումնական հեղինակութեանը, որպէս զի ազատուին գիտութիւնից։ Ահա ինչ է նշանակում։ Այսպիսով չեն յայտնիլ արդեօք պատերազմ նա և քերականութեան, որպէս զի ազատուէին լեզուի և էստէտիքայի սրահանջներից։ Բայց այն ժամանակն արդէն անիշխանութեանն էլ պէտք է անուանենք ազատութիւն. առողջ դատողութեան և տարրական տրամաբանութեան հերքումն էլ ստիպուած կը լինինք անուանել հանճարեղութեան նշոյլ։ Կուրութիւն չէ՞ այս արդեօք։

Անսանձ անհատականութեան, անպայման անիշխանութեան պահանջը տանում է արդէն ոչ թէ դէպի քաղաքակրթութիւն, այլ դէպի բարբարոսութիւն։

Բայց և այնպէս իւրաքանչիւր քայլափոխում սկզբունքով խոխստում են հեղինակութիւնը զուարճութեան առարկայ դարձնելով թէ մասնաւոր խօսակցութեան մէջ, թէ բեմի վերայ, ուր սանձարձակ ամբոխի զուարճութեան համար հանդէս են գալիս թեթևսօլիկ մատենագիրների գրչի տակից՝ պապեր և թագաւորներ, նախարարներ և պատգամաւորներ, աստիճանաւորներ և քահանաներ. լռութեամբ անցնելով բոլոր միւս տեղերը, ես մատնանիշ կանեմ ազգային ժողովի վրայ. կարծեմ որ գտնէ, այնտեղ պէտք է հեղինակութեան սկզբունքը պահպանուէր, իբրև «սրբութիւն սրբոց»։ Այսպիսով ուր կը հասնենք, ինչ կը լինի քաղաքակրթեալ հասարակութեան վիճակը, եթէ գործերն այդպէս ընթանան։

Լոկ միայն մի միխիթարութիւն է մնում մեզ, այն է, որ ուրիշ պետութիւնների մէջ գործերն աւելի վատ են, քան Իտալիայում։ Բայց քամին փչում է և ալիքները բարձրանում։ Ամենիւ ուշգրութեան տէր մարդիկ, եկ իրար ձեռք տանք, պահպանենք ամուր նեցուկներով ընկնող շէնքը։ Յաւալի է, եթէ ալեկոծութիւնը փոթորիկ կը դառնայ. այն ժամանակ սկզբունքով կը կործանուի հեղինակութիւնը, և այն ժամանակ պամպասների վայրենի հրոսակներն ու անապատների թափառականները ոչինչ չեն ունենալ այլ ևս մեզ նախանձելու։

2) ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ, ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ, ՏՈԿՈՒՆՈՒԹԻՒՆ։

Իսկական բնաւորութեան տէր մարդը խուսափում է ծայրայեղութիւններից և գնում է չափաւորութեան և խոհեմութեան ճանապարհով։ Մեծամասնութեանը չափաւո-

րութիւնն, իբրև առաքինութիւն՝ անծանօթ է, որովհետև մեծամասնութիւնը՝ ամբոխն է։ «Մեծամասնութիւնը, գըրում է մեծն Զէզարէ Բալբօ, ընկնում է կամ մէկ, կամ միւս ծայրայեղութեան մէջ, կամ երկուսի մէջն էլ միանգամից, նայելով ժամանակին և հանգամանքներին. ինչպէս որ մետաղական փշրանքները ձգտում են մագնիսի երկու բևեռներին էլ, այն ինչ առաւել ծանր մասնիկները կամ թանկագին մետաղներից շինածները ընդդիմադրում են երկուստեք ձգտողութեան»։

Մարդկային ամեն գործ ունի ուղիղ և հակառակ կողմեր. դժուարութիւնը կայանում է միայն առաւել լաւը ընտրելու մէջ։ Հասարակ մարդիկ սովորաբար նկատում են միայն մի կողմը, միայն նրան են սիրում և իրենց բոլոր ճիգը թափում նրա պաշտպանութեան համար, արհամարհելով բոլոր մնացածները։ Զարգացած մարդիկն, ընդհակառակն, ամեն ինչ ենթարկում են անաչառ քննադատութեան, ամեն բանի մէջ իրանց հաշիւ են տալիս, հետևաբար և այն բաներում, որոնք նրանց պախարակելի են թըւում, և մի որ և է տեղ առաւել ընտիրը գտնելով, վազում են դէպի նա գրկաբաց և գործով յայտնապէս պաշտպանում։

Բայց մեզանում սովորաբար գերադասվում են ծայրայեղութիւնները։ Միջին ճանապարհը, կամ առաքինութիւնների միջնավայրը, որոց ես կոչում եմ խոհեմութիւն և չափաւորութիւն, բարձի թողի է առնվում։

Մինչդեռ նոյն իսկ չափաւորութեանն է վիճակուած յաղթանակել և կարող է պատահել, որ նրանք, որոնք այսօր արհամարհանքով են վերաբերում դէպի նա, հէնց վաղը կը լինին նրա կուսակիցներ։ Չափաւորութիւնն ինքն ըստ ինքեան նրա համար է առաքինութիւն, որ ներդաշնակւում է կեանքի օրէնքներին, որ կայանում է գործող ոյժերի կարգաւորութեան և հաւասարակշռութեան մէջ, այն ինչ աւելորդութիւնները նոյնանիշ են անկար-

գութեան և իրենցմով մահ են յառաջացնում։ Չափաւորութիւնը՝ ճշմարտութեան մարմնացումն է, իսկ աւելորդութիւնը՝ սոփեստութիւնների։

Դառնալով Իտալիային, հասուն դատողութեան վրայ հիմնուելով, տեսնումենք, որ չափաւորութիւնը՝ իտալացու բնութեանն յատուկ է. իրաւ է, կեանքի մէջ միշտ չափաւոր չեն հանդիսանում մաքուր շարժառիթներից դրդուած, երբեմն չափաւորութեան տակ թագնուում է անձնական շահը, բայց և այնպէս չափաւորութիւնն առաւել պայծառ կերպով է դրոշմուած իտալացւոց՝ ազգային բնաւորութեան վրայ՝ քան թէ այլազգիների։ Եւ աչքերիս առաջ բացվում է ոչ հեռաւոր ապագան, երբ Իտալիան կը մարմնացնէ չափաւորութիւնը ամենանարատ ձևով։

Չափաւորութեանն անբաժան կից է խոհեմութիւնը. սա ինքն ըստ ինքեան ենթադրում է բնաւորութեան տէր մարդու մէջ։ Խոհեմ մարդն, ասում են, երեք աչք ունի. նա տեսնում է անցեալը, նայում է ապագային և կարգադրութիւններ անում ներկայով. ընդ նմին նա գիտէ զանազանել լաւը վատից։ Խոհեմութիւնը, մի հին ուսումնականի ասելով, հասարակ առաքինութիւն չէ, այլ նա բոլոր առաքինութիւնների ներդաշնակ համախմբութիւն է. նա կազմակերպում է խելքը և ղեկավարում կամքը։

Խոհեմ մարդը միշտ գսպում է իրան, չափից դուրս չի բարկանալ, չի կախել ականջները անպիտան բամբասանքներ լսելու, աւելորդ խօսք բերանից չի դուրս թողնել։ Նա երկարօրէն և սառնասրտութեամբ կը խորհի, նախ քան ում և ինչ մասին կարծիք յայտնելը։ Կը պատահի նրան ում և ինչ դատապարտել, նա առանց անձնականութեան դիպչելու, իւր կարծիքը կը յայտնի չանցանքի արժանի փաստի մասին։ Միայն ճշմարտութիւնն ու արդարութիւնն են նրան վառում ու բորբոքում և նրանց համար նա մինչ վերջին կաթիլ արիւնը կը թափի։ Խոհեմ մարդը մինչ մանրա-

կրկտութեան աստիճանը ուշադիր է այլոց իրաւունքներին և յաւակնութիւններին։ Նա զգաստ է և ճիշդ, բայց առանց կասկածոտութեան և ցուցամոլութեան։ Նա չի սիրում բամբասանքներ լսել այլոց մասին և չի թոյլ տալիս բամբասելու իւր ներկայութեամբ։ Անցեալի փորձից նա խրատներ է քաղում, որ լաւ պատրաստուի ապագայի համար։ Կասսիոդորն իւր նամակների մէջ ասում է, որ «Հոգին գուշակում է ապագան, անցեալի խրատների շնորհիւ»։ Խոհեմ մարդը նախապատրաստուած է կեանքի ամեն տեսակ փոփոխութիւններին. նա գիտէ, որ նախատեսած չարիքն այնպիսի սաստիկ ցաւ չի պատճառում և մենք առաւել դիւրութեամբ կը տանենք դրան նախազգուշութեան վահանի ներքոյ։

Զգաստութիւնը, գուցէ, ոմանց համար փոքրոգութեան նշան համարուի։ Իսկ իմ կարծիքով, նա արտայայտում է բնաւորութեան եռանդը։ Մարդս, յանկարծահաս վտանգի ենթարկուելով, կորցնում է ոգու արիութիւնը։ Բայց չի տատանուիլ զգաստ մարդը, հէնց այն պատճառով, որ նա նախատեսնում է վտանգը և գիտակցաբար նրա առաջ գնում։

1856 թուին կոմս Կաուրը գրում էր կոմս Օդոֆրէդիին Փարիզ. «Երբ որ գուք առիթ կունենաք խօսելու մեր մասին, ասացէք ամենքին, որ մենք զգաստ ենք և կարելւոյն չափ զգաստ կը լինինք. որ մենք կատարեալ սառնասրտութեամբ կը սպասենք հանգամանքներին։ Բայց եթէ մեզ երբ և իցէ ի գործ կը հրաւիրեն, այն ժամանակ մենք վճռականութիւն ցոյց կը տանք ամեն ինչ զոհելու մեր երկրի պատուի և փրկութեան համար»։

Տոկունութիւնը բնաւորութեան ուրիշ յատկանիշն է, և սերտ կապուած է խոհեմութեան հետ։ Դրական մարդը նախ քան կը վճռէր որ և է գործի ձեռնարկել, մի քանի անգամ գործը ծանր ու թեթև կանի, բայց այնուհետև մի

անգամ արօրը լծուելով, արդէն այլ եւ յետ չի շուռ գալ, մինչեւ վերջը չի հասցնիլ իւր խուրձը։ Դժուարութիւնները չեն կարող նրան ճնշել, բայց կռիւը նրան ոյժ է տալիս եւ նա երբէք անձնատուր չի լինիլ։

Մի անգամ յաղթահարուելով, նա դառնում է կռուին նոր զէնքով եւ նոր շնորհքով, բայց ըստ առաջնոյն անյողդողդ վճռականութեամբ նպատակին հասնելու։ Տոսկանական առածին պէս՝ թէ «Լաւ ծովապետը կը փոխի առագաստները, բայց չի փոխիլ ընթացքը»։ Յաղթութիւնը կը պսակի տոկուն մարդուն յաղթանակողի դափնիով։ Տոկունութեան շնորհիւ, Հռոմը նուաճեց կարթագենացւոց եւ պարզեց իւր յաղթական արծուէդրօշները ամբողջ այն ժամանակուայ աշխարհի վրայ։ Պատմում են, որ երբ Հռչակաւոր Կրամպօնը արիաբար փորձում էր ստորերկրեայ հեռագրալար անցնելու Ֆրանսիայի եւ Անգլիայի միջով, մի ֆրանսիացի հարցրեց նրան. «Բայց ինչ կը լինի, եթէ չը յաջողուի»։ Դարձեալ նորից կը ձեռնարկեմ»։ «Իսկ եթէ դարձեալ ձախորդուէք»։ «Կը սկսեմ նորից»։ Բայց ինչ կանէիք, եթէ միշտ անյաջող լինէր», ասաց անհամբեր ֆրանսիացին։ Այն ժամանակ անգլօ-սաքսօնացին, շփոթելով հրաբացայտ հայեացքով իւր խօսակցին, ասաց. «Ես չեմ դադարիլ աշխատելուց, մինչեւ որ բոլորովին չը յաջողուի»։

Առանց տոկուն եւ նստակեաց աշխատանքի ոչ մի բարի գործ չէ կատարւում այս աշխարհում։ Զատ քան կարող է անել հանճարը, որովհետեւ ստեղծողական զօրութիւն ունի, բայց նրա պաշարն էլ շուտ է հատնում, եթէ մի եւ նոյն հանճարը, տոկունութիւն չունենալով, կը խարխափի հնարաւոր տարակուսութիւնների բաւիղներում։ Բոլոր մեծ հնարագէտները, եթէ տոկուն չը լինէին, ոչինչ չէին կարող անիլ. Գալիլէօ-Գալիլէյն չէր հնարիլ հեռադիտակը, Ուատտը՝ շոգին, Գուտտէնբէրգը՝ տպագրութիւնը։

3) ԽՂՃԻ ՀԵՏ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ։

Ինաւորութեան տէր մարդը երբէք իւր խղճի հետ հաշիւներ չի կայացնում. նա գիտէ, որ չնչին կենսական գործերի ժամանակն անգամ պէտք է այն անել, ինչ թելադրում է խիղճը, և ինչ պահանջում է բարոյական զգացմունքը։ Որպէս առաձգական պողովատի ձողի, նրան կարող են կոտրել, բայց ոչ թեքել։ Նա իւր արարքների անողոք դատաւորն է։ Չի ծածկում իւր աչերից իւր սեպհական թերութիւնները և իրան միշտ կը դատապարտի, թէկուզ ուրիշները գովէին և իւր փայփայողներին անգամ կարհամարհէ։

Դիցուք թէ ես պաշտօնով ուսուցիչ եմ և գիտեմ մոլորեցնել իմ վարչութեանը նրանով, որ նրա առաջ չափազանց եռանդ եմ ցոյց տալիս դէպ ուսումնարանը, սէր առ աշխատանքը, հոգացողութիւն աշակերտների մասին... միայն որ այստեղից մի օգուտ քաղեմ ինձ համար, իսկ այնտեղ թող բոլորն էլ տակն ու վրայ լինի...։

Դիցուք բոլորովին կոպէկ անգամ չունիմ, ահա ես աւելի հարուստ և առաւել բարի ընկեր կը գտնեմ ինձ համար։ Նա քաշուելով չի պահանջիլ ինձնից իւր փողերի վերադարձնելը... Իսկ այնուհետև, եթէ միջոցներս կը ներեն, կը վճարեմ, բայց թէկուզ էլ չը վճարեմ, ինչ վնաս, դրանով հօ նա չի ադքատանալ...։

Դիցուք թէ ես հոգւով արքայական եմ. կարող է պատահել, որ գործերը վատ ընթանան և հասարակապետականները յաղթանակեն...։ Մինթէ անազնիւ չեմ վարուիլ, եթէ միայն ցոյց կը տամ, թէ նրանց համակրում եմ...։

Այս կերպ է լինում խղճի հետ հաշտութիւններ կայացնելը։ ահա այդ բաները չը պէտք է թոյլ տայ ինաւորութեան տէր մարդը։ Թէկուզ ամենքն էլ աչառութեամբ վերաբերուէին նրա արարքին, նա ինքն անաչառ կը լինի դէպ իւր անձը, թողութիւն կը խնդրի իւր խղճից։

Ապա ուրեմն, դէն ձգենք ցած մարդոց բարոյական վարդապետութիւնը, վարդապետութիւն «գրգռողների», (ինչպէս ասում էր Հօրեղբայրս, որ մի լուրջ և անվեհեր բնաւորութեան տէր մարդ էր)։ «Ամենաանմեղ հաշտութիւն կայացնելը խղճի հետ, ասում է Մանտէգացցան, անպատճառ կեղծաւորութիւն է արտայայտում։ Ո՛վ մի անգամ ստել է իւր առաջ, նա դասեց իւրեան ցած մարդոց շարքը և եթէ ժամանակին՝ խելքի չի գալ, բանը կը վերջացնի սեպհական խղճի ապականութեամբ։ Ճանաչում էի ես բազմաթիւ ստոր բարոյականութեան տէր մարդիկ, որոնք խղճի հետ հաշտութիւններ կայացնելու օգնութեամբ խաբում էին իրենք իրենց իւրեանց արարքների վերաբերութեամբ և ի վերջոյ այնտեղն էին հասնում, որ իրենց իրօք ազնիւ մարդիկ էին համարում։ Ճանաչում էի և այնպիսիներին, որոնք էութեամբ լաւ լինելով, վերջ ի վերջոյ սաստիկ ապականվում էին այն պատճառաւ, որ սկսում էին խղճի հետ հաշտութիւններ կայացնել, և սրանով հասարակ բաներից խոշոր յանցանքների հասան։

ՀԷնց հազիւ թէ մի որ և է վատ բան կանենք, որ իսկոյն որ և է գաղտնի ձայն չը սկսէր փսփսալ մեր ականջին զանազան արդարացնող պատճառներ, գովեստներ, կարծես թէ մի որ և է չար ոգի ուզում է մեզ մերձենալ։ Այս ձայնը մեզ էլ նոյնն է անում, ինչ որ օձը Եւային. առաջ հրապուրել, իսկ յետոյ կորուսանել։ Ով այս ստապատիր փայփայմունքների մէջ փրկութիւն է որոնում, նա ինքն իւր համար փոս է փորում։ Երբ որ բանաստեղծ Դանտէ Ալիգիէրին անարժան միջոց էին առաջարկում աքսորանքից վերադառնալու, այն ժամանակ հետևեալ նշանաւոր տողերը գրեց իւր բարեկամին, որ նրա ազատութեան գործին մասնակից էր. «Սիրելիս, այդ ճանապարհով չը վերադառնամ հայրենիքս։ Բայց եթէ ուրիշ ճանապարհ բացուէր, որ հակառակ չը լինէր Դանտէի պատուին և անուանը, շնոր-

հիւ ձեր Հոգացողութեան կամ թէ ում և ինչ, ես այս բոպէիս ճանապարհ կընկնէի։ Եթէ այդ չի լինիլ, այն ժամանակ ես էլ չեմ լինիլ Գլօրէնցիայում...»։

Դէպք եղաւ Բօմանյօզիին Միլանում եղած ժամանակ ուրիշ ուսումնականների հետ միասին մասնակցիլ նոր օրինագիրք կազմելու աշխատութեանը։ Այս միջոցին գտնուեցան ցանկացողներ օրինագրքում այնպիսի յօդուածներ մտցնել, որոնցով նախարարին lettres de cachèt,-ի ֆրանսիական օրէնսդրութեան այս հնացեալ չարիքին համահաւասար իրաւունք տալու։ Այս անգամ ամենքը լսում էին՝ անձնական շահերից կամ թէ ուրիշ դիտաւորութեամբ, լոկ միայն Բօմանյօզին, որ երբէք խղճի հետ հաշտութիւն չէր կայացնում, չը համբերեց, և զայրացած սեղանին զարկելով, բացագանչեց. «Պարոններ, ձեր կուրծքի շքանշանները ձեզ վերայ հէնց այնպէս են ներգործում, ինչպէս Մեդուզիի գլուխը։ Այսպէս այս յօդուածները չէին ընդունուիլ և չէին մտնիլ օրինագրքի մէջ»։ Բօմանյօզիի ազնիւ ու ազատ կարծիքն այնպէս զօրեղ տպաւորութիւն գործեց բոլորեցունց վրայ, որ առաջարկեալ բոլոր յօդուածները մերժուեցան։

Ահա այսպէս է բնաւորութեան յաղթութիւնը։

ԳԼՈՒԽ Ե.

ԴԱՐՁԵԼ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԻՐ ՄԱՐԴՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ո՛վ հայհոյում է բեմը և ամուսնական սրբութիւնը, քաղաքավարութիւնն ու ազնուութիւնը և ընդ նմին աղաղակում. „հայրենիք, հայրենիք“, նրան չարժէ հաւատալ. նա շողոքորթ է և ոչ հայրենասէր և իրօք ամենաանպիտան քաղաքացի։ Ս. ՊԷԼԼԻՕ։

Մկրտում են արհամարհական բառով „շողոքորթ“ նրանց, որոնք երկնչում են զայրացնելու թագաւորներին խօսքով։ Իսկ ինչպէս վերաբերուիլ նրանց, որոնք երկնչում են թէ՛ բանիւ և թէ գրով զայրացնելու ամբոխին։ Զ. ՌՈՒՍՈ։

1) ՃՇՄԱՐԻՏ ԵՒ ԿԵՂԾ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ։

Բնաւորութեան տէր մարդը սիրում է իւր հայրենիքը և հայրենեաց սիրոյն պատրաստ է ամեն ինչ զոհել, մինչև անգամ կեանքը։ Նա սիրում է հայրենիքը, որովհետև այնտեղ են ամփոփուած նրա մանկական բոլոր յիշատակները. այնտեղ առաջինը նա ճանաչեց Աստծուն, բնու-

թիւնը, իւր անձը։ Նա սիրում է հայրենիքը իւր նախնեաց սիրոյն համար, որոնք այնտեղ են ծնուել, սնուել, դաստիարակուել, տանջուել, չարչարուել, արիւն թափել հայրենեաց համար և նրան հաւատացել իրենց ազնիւ նշխարների պահպանութիւնը։ Նա սիրում է հայրենիքը, որովհետև սա երկրորդ մայրն է, որ մեզ տալիս է կրթութիւն, բարօրութիւն, հարստութիւն, օրէնք, փառք։ Առ հայրենիս ունեցած սէրը վեհանձն մարդոց կրքոտ ոգևորութիւնն է։ «Առ գետս բաբելացւոց (բացագանչում է սաղմոսերգուն) անդ նստէաք՝ և լայաք, որպէս յիշեցաք մեք անդ զՍիօն։... Ի մէջ ուռեաց նոցա կախեցաք զկտակարանս մեր։ Անդ հարցանէին զերիչք մեր զբանս օրհնութեան. զերեվարք մեր ստիպէին զմեզ և ասէին. «Օրհնեցէք մեզ յօրհնութենէ Սիօնի»։ Իսկ զիարդ օրհնեսցուք զօրհնութիւնս Տեառն յերկիր օտար։ Եթէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռասցի զիս աջ իմ։ Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ, թէ ոչ յիշեցից զքեզ, թէ ոչ նախ նուագեցից զքեզ Երուսաղէմ՝ սկիզբն ուրախութեան իմոյ։ (Սաղմոս Դաւթի 'ի ձեռն Երեմիայի. ճլզ. համար 1—7.)

Սակայն բնաւորութեան տէր մարդը գիտէ զանազանել ճշմարիտ հայրենասիրութիւնը կեղծից։ Հայրենիք և ճշմարտութիւն նա չի համարում երկու տարբեր գաղափար, հաստատ համոզուած լինելով որ անարդարութիւնն ու անազնութիւնը այնտեղ են բուն գնում, ուր հայրենասիրութեան համար տեղ չը կայ։ Նա չի շողոքորթում իւր հայրենիքին. բայց արիաբար գտնում է նրա մէջ թոյլ կողմեր՝ և կշտամբում է նրանց. չի սիրել գովել իւր հայրենակիցներին նրա համար, ինչի համար որ արդարասիրութիւնը ստիպում է յանդիմանել օտարազգիներին և ընդհակառակն, օտարազգիներին կը գովի նրա համար, ինչի համար որ գովում է հայրենակիցներին։ Նա սիրում է հայրենիքը իբրև կենդանի առարկայ, իբրև մարմնացեալ անձնաւորութիւն,

որոյ հոգին կազմում են՝ կրօնը, օրէնքն ու բարոյականութիւնը բառիս ընդարձակ նշանակութեամբ, իսկ մարմինը՝ երկիրը սահմանափակած բնական սահմաններով։ Իւրաքանչիւր վնասակար փորձ ուղղած հայրենիքի հոգուն և մարմնոն նա համարում է իւր սեպհական անձնաւորութեան դէմ արուած։ Անիմաստ հնչիւն չէ ներկայանում նրան «հայրենիք» բառս, բայց և իւր հսկայական մեծութեամբ չի թողնում տեղ, ուր կարող լինէին թագնուիլ մասնաւոր և հասարակաց կեանքի արատները, կարծես որ և է հրսկայական արմաւենու ստուերի տակ։ Լոկ հայրենիքի մասին մտածելը մաքրում է նրան։ Նրան ոգի է ներշնչում իւրմով արդարացնելու հայրենիքի փառքը, որի մէջ տեսնում է նա իւր բոլոր երջանկութիւնը։

Այժմ հայրենիքի անունը սիրով և յարգանքով է արտասանվում ամենից և իւրաքանչիւրից և այս ապացուցանում է նրա բոլոր սրբութիւնը։ Բայց այդ է արդեօք բոլորի և իւրաքանչիւրի սրտում։ Արդեօք իւրաքանչիւր մասնաւոր կամ պաշտօնական անձն անում է իրեն ձեռքից եկածը, որպէս զի արդարացնէր իրեն հայրենեաց առաջ և դէպի նա օտար ազգերի յարգանքը գրաւէր։ Քանի՞ քանի՞սը մեզնից ձեռքը սրտին դնելով կը զգան արժանավայել յանդիմանութիւնս՝ «Հայրենեաց շողոքորթներ»։

2) ԱՆԱՁԱՌՈՒԹԻՒՆ։

Բնաւորութեան տէր մարդն անաչառ է։ Իբրև ի կոչմանէ զինուոր, նա այն է անում, ինչ պարտքը հրամայում է, չը խոնարհուելով ոչ փայփայանքների, ոչ սպառնալիքների առաջ։ Նա անշուշտ ուղիղ շաւղով կընթանայ, թէ իբրև մասնաւոր մարդ, և թէ հասարակաց պաշտօնեայ։

Եւ անաչառ մարդոց մեծ պակասութիւն ենք նշմարում Իտալիայում։ Կարծես կրկնակի չափերի ու կշիռների

կանոնը ամենուրեք թագաւորում է, և՛ մասնաւոր և՛ հասարակական կեանքում։ Սա մի ժահահոտ ախտ է, որի վարակումը ամենքն զգում են, բայց ինձ արգելվում է նրա նկարագիրը շարունակելու։

Ըստ առածիս՝ „piscisa capite foetet“ («ձուկը գլխից կը հոտի»), հակումն զէպի անմիաբանութիւնը մեզանում ի հնուց շարունակվում է։ Որ և է նոր օրէնք քննելիս շատ անգամ վարակուած են լինում անձնական աչառութեամբ։ Յաճախ մի ընտրողական գաւառի ներկայացուցիչներն ուրիշ օրէնքի հակառակ ձայն են տալիս առաւել նրա համար, որ այդ օրէնքից առաւել շատ անմիջական օգուտներ կարող է քաղել ոչ թէ իւր, այլ օտար գաւառը։ Այդպիսի մարդիկ, թող ներուի ինձ ասել, կորցրել են իտալացիներին յատուկ խիղճը։

Նախ ազգային ժողովում և ապա Հռոմում մեր խելքը զբաղուած չէ Իտալիայով. տեղական շահերը պառակտում են մեզ և կաշառում, մինչ արհամարհելի թուլութեանն են հասցնում մեր սեպհական աչքի առաջ, դրդում են մեզ կեղծ իտալացիների տեղ համարել տալ մեզ՝ աշխարհի առաջ խայտառակելու համար. միով բանիւ անմիաբանութեան ոգին այլանդակում է մեր ազգային բնաւորութիւնը։ Եթէ մենք համաձայն օրինաց վարուէինք, այսինքն արդարասէր և օգտակար լինէինք հայրենեաց, այն ժամանակ մենք ձայն կը տայինք, նախապէս չը տեղեկանալով, թէ որ շրջանին և որքան անմիջական օգուտներ կը բերի նախագծեալ օրէնքը։ Նախ և առաջ հարկաւոր է յաջորդականութիւն, իսկ այնուհետև ամենքը գոհ կը լինին։

3) ՃՇՄԱՐԻՏ ԵՒ ԿԵՂԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

Չեմ կամենում այժմ յարմար առիթը ձեռքիցս թողնել, խօսելու մի ուրիշ ախտի մասին, որով վարակուած են

քաղաքական կեանքի փոթորկալից ծովի վրայ վստահ յառաջ ընթացողներից շատերը։ Այս ասոն է՝ ժողովրդականութեան ձեռք բերելու չափազանց հետամուտ լինելը։

Ազնիւ բնաւորութեան տէր մարդն անձնատուր չի լինում քաջալերութեանց՝ արդեօք դրանք բարձր շրջաններից են լսվում՝ թէ հրապարակից։ Նա այնպէս է վարում, ինչպէս թելադրում է նրան խղճի ներքին ձայնը։

«Ժողովրդականութիւնը մեր ժամանակ, ասում է Սմայլսը, առաւել ստորացնում է, քան բարձրացնում մարդուս բարոյական վարկը։ Ըստ ռուսաց առածին, թէ. «ում մէջքը չի ճկվում, նա չի արժանանալ պատիւների»։ Բայց չէ՞ որ նրա ողնաշարը ռետինիցն է, ով հետամուտ է ժողովրդականութիւն ձեռք բերելուն. ապա ուրեմն պէտք է միթէ կերպ կերպ ճկուիլ, ոգէտ ամբոխի ծափահարութիւններին արժանանալու համար»։

Այն ժողովրդականութիւնը, որ ձեռք է բերվում ամբոխի առաջ քսութիւններ անելով, կրքոտ ճառերով ու հեղինակութիւններով ի վնաս ճշմարտութեան, կամ, որ աւելի վատն է, ատելութիւն զրգռելով դէպի հասարակութեան հարուստ դասակարգը, այդպիսի ժողովրդականութիւնը վերին աստիճանի քստմնեցուցիչ է ազնիւ մարդու աչքին։

Ռիչարդ Լուսէլ Էջուորդ, որ ծերութեան հասակում իւր դաւառի ամենաժողովրդական մարդը դարձաւ, ասաց մի անգամ իւր աղջկան. «Մարիամ, ես այժմ այնքան հաճելի եմ դարձել ամբոխին, որ, ճշմարիտ, արժէր լրջութեամբ խորհել այս մասին. ես այժմ բոլորովին ոչինչ բանի պէտք չեմ։ Դէհ, ասա, խնդրեմ, նախանձելի՞ է ժողովրդական մարդու դրութիւնը»։

Ո՛վ յանձն է առել հայրենեաց ծառայելու ծանր պարտաւորութիւնը, նա չը պէտք է երկնչի իւր միտքն արտայայտելու, թէկուզ Սցիպիոնի ծայրին։ «Համբաւը, բացա-

դանչեց Կաուրը, ամենևին չի վրդովում ինձ. ինչ որ ես ճշմարիտ եմ համարում, այն էլ ասում եմ, թող իրենց համար սուլեն կամ աղմուկ հանեն, որքան կամենում են»։

Պատմում են, որ Պարինին, մտնելով մի անգամ մի հիմնարկութիւն, ուր պաշտօնատար անձանց համար պատրաստած տեղեր կային, և նկատելով, որ ոտքի վրայ կանգնած է միայն մի ոմն Կրիստո, ասաց. «Կարծեմ Կրիստոյ քաղաքացու համար է պատրաստած այս տեղը»։ Այստեղ ենթադրրւում էր սուր հեգնութիւն. այսինքն թէ, դուք, որ ձեզ ցոյց էք տալիս իբրև եղբայրութեան ախոյեաններ, ապա ուրեմն ինչու էք մերժում ձեր միջից հաւասարութեան և եղբայրութեան առաջին զինուորին։ Մի անգամ էլ Պարինին առաջարկեցին արտասանելու սովորական բացագանչութիւնս. «Կեցցէ հասարակապետութիւնը, թող կորնչին ազնուապետականները»։ Այս առթիւ նա արհամարհանքով բացագանչեց. «Կեցցէ հասարակապետութիւնը,բայց թող ոչ ոք չը կործանուի»։ Սրանով գրգռելով ինքնակոչ հասարակապետականների անզուսպ զայրոյթը, և չը կամենալով կապել իւր անունը բաղդախնդիրների խմբի հետ, Պարինին այնքան վեհանձնութիւն և արիութիւն ունեցաւ, որ թողեց քաղաքական ասպարէզն՝ ասելով. «Ահա այժմս ես էլ՝ ազատ էմ» *)։

Մեր ժամանակ ամբոխը յանձնում է վարչութեան ղեկը զառամեալ ներքինիներին։ Այժմ գործածական է մի առանձին տեսակ շողոքորթութիւն, այն է՝ շողոքորթութիւն ամբոխի առաջ։ Վերագրվում են նրան չեղած առաքինութիւններ, լռութեան են մատնում ախտերը, երկրնչելով որ վերջիններս տեսական դրութիւնից սուր դրութեան չը հասցնեն, և հազարաւոր ջահեր են վառւում նոր կուռքի առաջ։ Ընկաւ նախնական բարձրութիւնից պետական

*) G. Giusti, Wita di G. Parini.

մարդու իդեալը։ Այժմ ստիպվում ենք զինուել արիութեամբ ոչ միայն ճշմարտութիւնն ասելու թագաւորներին և պետութիւններին, այլ և բողոքելու խաժամուժի ախտերի դէմ։

«Ազգ», «ազգի իրաւունք», «ազգային իրաւանց անձեռնմխումն», ահա բարձրահնչիւն բառեր, որոց շնորհիւ խեղճ ժողովրդին վիճակուած է գործիք դառնալ թագուկների ձեռքին, որոնց մի միայն և հարկաւոր է թուչել նրա հսկայական ուսերի վրայ, որ երևան։

«Ես անցուցել եմ այն ժամանակը (ասում է Բիսմարքը 1873 թ. յունիսի 16-ին Բայխստագի ժողովում), երբ որ ամեն մարդ, որ երազում էր իւր բաղդը կարգադրել կամ քաղաքական ազդեցութիւն վաստակել, հէնց միայն նա էր օգտւում այդ նպատակի համար ժողովրդի անունով և աշխատում էր ցոյց տալ իրան իբրև ժողովրդական պատգամաւոր։

«Պարոններ, այստեղ ներկայ եղողներից իւրաքանչիւրը հանդիսանում է իբրև ժողովրդի ներկայացուցիչ, և մենք ամենքս, ի մի առնուած, կազմում ենք նոյնպէս ժողովրդի մի մասը։ և ուրեմն ես էլ նրանց մէջ կրում եմ ժողովրդի իրաւունքները, որ ներկայացնում է ժողովուրդը և կայսրը։ Մենք ամենքս ժողովրդի ներկայացուցիչներ ենք, և ոչ միայն նրանք, որոնք աւանդութեամբ պաշտպանում են այդպէս անուանեալ ազատամիտ սկզբունքները, այլ և նրանք, որոնք և միշտ չեն լինում ազատամիտ։ Ես ինքս էլ չեմ կարող թոյլ տալ, որ մենավաճառուէր ժողովրդի անունը, և որ ինձնից խլէին այն մասը, որ ունիմ նրանում։ Այդ, ասում եմ, անպատուութիւն կը լինէր ինձ համար, որովհետև ես անկարող եմ, առանց որ և է պատճառի, ենթարկուիլ խեցեվճռով (օստրակիզմ) ժողովրդի միջից արտաքսուելուն»։

4) ԱՄԲՈՒԻ ԱԶՔԻՆ ԹՈՂ ՓԶԵԼԸ։

Ահա ինչ է ասում Ֆիուստին ժողովրդին յիմարացնե-

լու արուեստի վերաբերութեամբ. «Ստոյիկի վսեմաշուք դիմակի տակ թագնվում է մաշուած սիրտ և զառամեալ խելք իւր նախանձոտութեամբ, անպարկեշտութեամբ և անշնորհքութեամբ հանդերձ, և ահա այդպիսի դիմակով են սովորաբար հանդէս գալիս ժողովրդի մարդիկ»։ Դժբաղդաբար Իտալիայումն էլ հազուագիւտ չեն այդ տեսակ անձինք։ Նրանք ամբոխի աչքին թոզ են փչում սրբազան անուններով՝ ազատութիւն, հայրենիք, ազգ, հաւասարութիւն, ճշմարտութիւն, օրէնք, բարոյականութիւն և այլն» մի միայն, որ թնդան ժողովրդի մէջ, որ չիմարացնեն անհեռատեսներին և նրանց իրենց դատապարտելի ցանկութիւնների կոյր գործիք դարձնեն։ Ցաւալի է տեսնել, թէ ինչպէս ժողովուրդը հաւատում է այս կեղծաւոր առաքեալներին և նրանց խունկ է ծխում։ Եւ նրանք առաւել ևս անբաւական տեսք են ընդունում, նրանց խօսքերը մաղձի տիպար են կրում։ Ճարպիկութեամբ բորբոքելով կրքերը, նրանք բազմացնում են իրանց կուսակիցների թիւը, որովհետև այժ են տալիս փառասիրական ագահութեանը։ Նրանց ամեն ինչը ծախու է. նրանք խօսում են Աստուծոյ և սրբերի մասին, եթէ միայն այդ նրանց հաշուին ձեռնտու է. դառնում են անաստուածներ քամիլիոնի թեթևութեամբ, եթէ անաստուածութիւնը նրանց ճանապարհ է հարթում դէպ՝ ամբոխը, ուր նրանք ներս են պրծնում, աջ ու ձախ կոխկրտելով։ Իրենց նպատակների համար նրանք զարմանալի աներեսութեամբ փոփոխում են իւրեանց սկզբունքները քաղաքական, բարոյական և փիլիսոփայական աշխարհում։ Այնուհետև՝, արժէ նայել նրանց վրայ ընտրողութեանց տենդային օրերին։ Ներս են պրծնում այստեղ ու այնտեղ, այսպէս և այնպէս, օր ու գիշեր շրջելով ամենի տուն խնդիրքներով, խոստումներով, խաբէութեամբ, սպառնալիքներով. միով բանիւ, ամեն ինչ նպատակայարմար են համարում։

Այդպէս է, ասում են, ընտրութեանց սովորական կարգը։ Իսկ ես կասեմ, որ ոչ թէ սովորական, այլ որ դա կրում է բարոյական անկման հետքեր։

Կոիւը՝ դեղեցիկ գործ է, բայց միայն այն ժամանակ, երբ նա կատարվում է բացարձակ ազնուութեամբ, նախ և առաջ, վեհանձնութեամբ։ Բայց ով որ արհամարհուած թագնվում է թփերի տակ և ուխտ է թոթովում, նա անկասկած երկչոտ է ուղիղ ճանապարհից։ Ո՛վ զինուում է խաւարի մէջ, նա երկչոտ է լոյսից։ Այսպիսի յանցանքներ ունին Խտալիոյ գրեթէ բոլոր քաղաքական կուսակցութիւնները։ Սակայն, կրկնում եմ, բարոյականութիւնը բարձր է քաղաքականութիւնից, և ով դաւաճանում է բարոյականութեանը, ինչպէս էլ որ չը դիմակաւորուէր, նա կը լինի միշտ վատ քաղաքացի։

5) ԱԶՆԻՒ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ։

Բնաւորութեան տէր մարդն՝ իւր մէջ բարոյական ոյժ զգալով, երբէ՛ք անպատիւ հարստութիւնը ազնիւ աղքատութիւնից բարձր չի դասիլ։ Այս, ի հարկ է, մեր դարի ոգին չէ, մեզանում չէ՞ որ այնքան սարսափով ամաչում են աղքատութիւնից։ Ապա ուրեմն հարստանալ հարկաւոր է ամեն ներելի և աններելի միջոցներով։ Ապրելու համար՝ փող է հարկաւոր, փողը տալիս է պատիւ, գիտութիւն, ազնուականութիւն, փառք և ամենը՝ ինչ որ ցանկանում է։ Ո՛վ հարուստ է, նա կարող է ամեն ինչ գործել. ոչ ոքի ճանաչել անգամ չէ ուզում։ Ահա սրա համար է ասուած առածս, թէ. «Բժշկի մեղքերը թաղուած են հողով, հարստինը՝ փողով». կամ թէ. «Արծաթեայ մուրճով կը խորտակես երկաթեայ դռները», և դարձեալ թէ՝ «Ոսկի բանալիով կը բանաս բոլոր փականքները»։

Գրեթէ այսպէս է մտածում և ասում ընդհանրու-

թեան մէջ։ Եւ այս՝ մեր դարու իմաստութիւնն է։ Ես, ուղիղը խոստովանած, հետևող չեմ Serafico di Assisi փիլիսոփայութեան՝ սակայն առաւել շուտ կանգ կառնեմ նրա վրայ, քան թէ նշանաբանիս. «աշխատիր հարստանալ՝ ինչպէս էլ որ լինի»։

Ուրիշ բան է, եթէ հարստութիւնը ազնիւ աշխատանքի պտուղ կը լինի, կամ կը վիճակուի մեզ բաղդի խաղով, և առանց որ և է ստորութեան. այդ դիպուածում նա հաճելի է և պատուաբեր։ Սակայն, եթէ հարստութիւն պէտք է ճարուի սեպհական պատուարժանութեան գնով, որոնուի ստորութեանց ճանապարհով, այն ժամանակ, իմ կարծիքով, հիւանդանոցի մահիճն անգամ առաւել լաւ է ոսկեճաճանչ պալատից։ Այս բանն յայտնում են նոյնպէս առածներս. «Ազքատութիւնը չի մնասում վայելչականութեանը»։ «Հարստութեամբ գեղեցկութիւն չես ձեռք բերիլ»։ Ես գիտեմ, որ մեր շահագիտական դարում ինձ միամիտ երեխայ կանուանեն։ Խոստովանում եմ, որ առաւել դիւրին կը լինի ինձ այդ մականունը կրել, քան վստահանալ հանդէս գալ ծախու մարդու անպատկառութեամբ մասնաւոր և հասարակաց շրջանում։

Մի անգլիացի, նկատեցէք, անգլիացի, և այն էլ մեր դարում, այս առթիւ գրում է հետևեալը. «Ամօթ չէ աղքատ լինել։ Եթէ խեղճ մարդը չի ստորանում, եթէ նա իրան չի ծախում, և ոչինչ անպատիւ բան չի անում, ապա ուրեմն նրա աղքատութիւնն ըստ ամենայնի յարգանաց արժանի է»։ Այնպիսի մարդոց օրինակներով, որոնք դերադասել են ազնիւ աղքատութիւնը անազնիւ հարստութիւնից, լիքն է Իտալիոյ հին, միջին, նոր և ժամանակակից շրջանների պատմութիւնը։ Թողնում եմ ընթերցողին, որ ինքը յիշէ այդպիսիները։ Իսկ ես կաւարտեմ ասածս Վիրգիլիոսի խօսքերով. «Արդեօք որպիսի գործեր չես կարող ստիպել կատարել տալու մարդոց, դու, ով ոսկու դիւթական փայլ»։

6) ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

Այժմ, իբրև եզրակացութիւն, մի քանի խօսք ասենք բնաւորութեան իբրև անհրաժեշտ պատկանելեաց՝ գործնականութեան մասին։

Գործնական մարդը միմիայն այն գործին է ձեռնամուխ լինում, որ ոյժից վեր չէ, և չի տալիս անիրագործելի խոստումներ։ Նրա իմաստութիւնն արտայայտվում է ոչ թէ խօսքով, այլ գործով։ Կենսական փորձն ու առաքինութիւնը դասեցին նրան ամեն տեսակ դժբաղդութիւններից վեր, մշակեցին նրանում համբերատարութիւն մերձակայի կարծեաց վերաբերութեամբ, դարձրին նրան ողջամիտ քննադատ ամեն տեսակ ցնորքների և չորս պատի մէջ կազմուած իմաստակութեանց։ Առողջ միտքը յաճախ առաւել կարևոր է լինում վերացական խելքից, երբ որ խելքը անջատում է իրականութիւնից և սաւառնում ցնորական աշխարհում։

Կեանքը պահանջում է գիտակցական յարաբերութիւն դէպ ինքը, այսինքն՝ հասկանալ նրան այնպէս, ինչպէս որ նա իրօք կայ, իբրև ախտերի և առաքինութիւնների խառնուրդ։ Ես ճանաչում էի մեծ խելքի և ընդարձակ գարգացման տէր մարդիկ, բայց որոնք ընդ նմին չունէին առողջ դատողութիւն, և նրա համար նստած էին անգործ, տհաճութեամբ ձեռքերը ծալած, առ միշտ չը հասկանալով իրանց և այն աշխարհը, որի մէջ նրանք պտտվում էին։

Լա-Ֆարինան ասաց, որ իտալացու բնական խելքը պահանջում է իրականութեան պարզ և լիակատար հասկացողութիւն։ Սակայն, կարծես, ոչ մի ազգ այնպէս չի սաւառնիլ երևակայութեան թևերի վրայ։ Ոչ ոք, բացի իտալացիներից, այնքան չի ողբում պատանեկական յոյսերի կորբստեան համար և այնքան չի զայրանում իրերի ներկայ դրութեամբ։ Թողէք, ի սէրն Աստուծոյ, այդ անօգուտ հառաչանքը բանաստեղծներին։ Բնական է, որ պատանե-

կական յոյսերը մեծ պէտք է լինին, այդ մարդու բնութեան յատուկ է, և վատ կը լինէր, եթէ մենք այդ չունենային։ Բայց միայն չափահաս դառնալով, ստիպվում ենք պատանեկական հազարաւոր յոյսերից ընտրել միայն այն, ինչ որ իրագործելի է։ Ազատ են ողբալու առաջին պատանեկութեան յոյսերի կորստեան համար նրանք, որոնք ցանկանում են ոչինչ չանելով ժամանակ անցնել, ծեր ամուրիների նման, որոնք սիրոյ մասին են երազում։ Լինինք առաւել գործնական։ Եթէ արդէն չենք կարող կատարել այն ամենը, ինչ պտտւում է ուղեղում, ապա եկ անենք այն, ինչ որ հնարաւորն է։ Ինչ մեր ոյժից վեր է, ուրիշներին թողնենք անելու։ Գեօթէի ասելուն պէս՝ «Ազնիւ մարդու համար ողջ մին է, թէ ինչ տեսակ աշխատանքի ձեռք կը զարկի, որովհետև նա միշտ կը կարողանայ հնարք գտնել իւր պարտքը կատարելու»։ Մենք, իտալացիքս, դաստիարակութիւնից է այդ, թէ սաստիկ առատ բնութեան մեզ երես տալուց, մի մեղք ունինք. մենք շատ մտածում ենք, բայց քիչ գործ կատարում։ Առաջին նուագ մենք ոգեւորւում ենք, երկրորդում՝ կանգ առնում, երրորդում՝ անորոշ դրութեան մէջ ընկնում, չորրորդում՝ լիակատար մոռացութեան տալիս առաջին դրդող շարժառիթը և նորերն ենք հնարում։ Թող իրագործուէր թէկուզ կէսը, չեմ ասում աւելին, այն բոլոր բաներից, ինչ որ մտածուել է Իտալիայում, այն ժամանակ Իտալիան կը վիճէր Անգլիայի՝ այդ օգտակար գիւտերի երկրի հետ։ Անկասկած այդպէս էլ կը լինէր, երբ որ Իտալացիք նոյնքան էլ գործնականութիւն ունենային, որքան և հնարագիտութիւն։ «Արա, ինչ կարող ես. և ինչքիր հանդարտ» ահա գործնական մարդու կանոնը։ Հասարակութիւնն երախտագէտ կը լինի թէ ոչ, փոյթ չէ. միայն թէ սեպհական խղճիդ հակառակ չը գնաս, որ, ինչ ասել կուզի, գերագանց է ամեն տեսակ պարգևներից։

ԳԼՈՒԽ Զ.

ԱՐԻՈՒԹԻՒՆ

Աշտարակի պէս ամուր կաց, որ չի շարժում իւր գլուխը, ինչքան ուժգին էլ փչէին հողմերը։ Դոնոպէ։

Արիութիւնն այն շնորհներից մէկն է, որ ամենից աւելի ազատում է մեր կեանքը դժբաղդութիւններից։ Լէօպարդի։

Այն ամենաբարձր աստիճանը, որին կարող են հասնիլ մարդը և կինը, սահմանվում է բարոյական արիութեամբ. արիութիւն է պահանջւում ճշմարտութիւնը որոնելու և խօսելու. արիութիւն է պահանջւում առ միշտ ազնիւ և արդարադատ լինելու. դիմադրելու ամեն գայթակղութիւններին. կատարելու մեր պարտքը։ Սմայլս։

1) ԱՐԻՈՒԹԵԱՆ ՈՅԺԸ։

Արիութիւնը մեծ ոյժ է. նա օգնում է մեզ յաղթելու արտաքին վտանգներին, և մաքառելու նոյն իսկ մեր դէմ։ Քաջ մարդը սեպհական պատուով, իբրև վահանով զինուած, ընկնում է կռուի թունդ ժամանակը, արհամարհում է վտանգը, և յաղթանակում կամ թէ յաղթվում՝ ճշմարտութեան հետ միասին. «Իւր դիտաւորութեանց մէջ արդարադատ և տոկուն մարդն», ինչպէս ասում է Հորացիոսը, չի թոյլ տալ շեղելու իրան ուրիշ ճանապարհից ոչ

նենգամիտ և ահարկու բռնաւորին, ոչ հարաւային հողմին, որ ալեկոծում է Ադրիական ծովը, ոչ որոտընդոստ—Արամազդի ահարկու ձեռքը. «Si fractus illabatur orbis, impavidum ferient ruinæ» *)։

Արիութիւնը բնաւորութեան անհրաժեշտ պայմանն է. մինն առանց միւսի անհասկանալի է։ Ո՛վ օժտուած է բոլոր արժանաւորութիւններով, բայց զուրկ է արիութիւնից, նա լոկ սրա համար չի կարող բնաւորութեան տէր մարդ համարուիլ։ Ինչպէս որ հիւանդ մարմնու մէջ թուլացած են անդամները, այնպէս էլ երկչոտ հոգու մէջ խեղաթիւրած է աշխոյժը։ Թուլամորթի հոգին զօրեղ չէ հիւանդ մարդու զառամեալ մարմնուց։

2) ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐԻՈՒԹԻՒՆ։

Որպէս զի աստիճանաբար յառաջ ընթանանք, որոշենք նախ՝ ֆիզիքական և բարոյական արիութեան սահմանները։ Ֆիզիքական արիութիւնն առաջ է գալիս իւր մէջ ոյժերի առատութիւն զգալուց, իսկ բարոյականը՝—պարտաճանաչութեան զգացմունքից՝ անպատճառ և առանց այլ և այլութեան կատարելու այն ամենը, ինչ պատուիրում են բարոյականութիւնը, պետութիւնը, կրօնը։ Մեզ նման կարող են ֆիզիքական արիութիւն ունենալ նա և կենդանիք, մանաւանդ վայրենի կենդանիք։ Բարոյական արիութիւնը բացառապէս հոգու սեպհականութիւն է։ Առաջինը բանականութեան կողմից անդեկավար մնալով, հանդիսանում է իբրև տարերական ոյժ, երկրորդն՝ անպատճառ ներշնչուած է բանականութեամբ։ Թէ մէկը և թէ միւսը կարող են զուգընթաց չը լինել, այլ բաժան բաժան ընթա-

*) „Թող կործանուի աշխարհը, ես աներկիւղ կընկնեմ աւերակների տակ“։

նալ։ Առողջ և անձնեայ մարդը կարող է և արիութիւն չունենալ բացարձակ պաշտպանելու ճշմարտութիւնը, մինչ-գեռ, ընդհակառակն, հիւանդոտ, տկար մարդը հոգու ուժով կարող է բռնաւորի վրայ սարսափ ազդել։ Ֆիզիքական և բարոյական արիութեան ներդաշնակ միաւորութիւնը դարձնում են մարդուն մարմնացեալ զօրութիւն։ Առաստելական Հէրակլէսը և Ս. Գրքի Սամփսոնը վսեմութեան հասան ոչ միայն լոկ ֆիզիքական արիութեամբ, այլ նոյն այդ արիութեան գործածութեամբ, պահպանելու այն, ինչ որ նրանց համոզմունքով ճշմարիտ էր։ Լոկ միայն կոպիտ ոյժը երբէք չէ կարողացել զարմացնել իմաստուն մարդուն։ Լուդովիկոս Գուլչին իւր վէպը երկու հսկաների՝ Մօրգանտիի և Մարգուտտիի զարմանալի արկածների մասին աւարտում է նրանով, որ մէկը մեռնում է իւր ցիմարութեամբ ծիծաղ շարժելով, իսկ միւսը կարիճի խայթելուց։

3) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՐԻՈՒԹԻՒՆ։

Ֆիզիքական արիութեան մանրամասնութիւններն ես կը յիշեմ այն տեղ, ուր խօսք կը լինի երօք արիութիւն կրթելու միջոցների մասին, որ կը կազմի գրքիս երկրորդ մասի նիւթը. իսկ այժմ կը բաւականանամ բարոյական արիութեամբ, որ կարելի է և պէտք է երկու բաժանել. քաղաքացիական և բարոյական արիութիւն, բարոյական բառիս յատուկ իմաստով. առաջնի պարտքն է անվեհերութեամբ խոստովանել ճշմարտութիւնն այն բոլորի դէմ, ով կը սպսէր նրան հերքել և պաշտպանել ՀՆՇուաՀների իրաւունքները. երկրորդի պարտքն է համբերութեամբ ամրապնդել ճշմարտութիւնը իւր սեպհական խղճի առաջ, սեպհական կրքերի դէմ մաքառելիս և արդարասէր կեանք վարել։ Հետևաբար, քաղաքացիական արիութիւնն արդէն ի նկատի ունի բարոյական արիութիւն։ Եթէ որ չես ըզ-

գում քո մէջ իրաւունքների և պարտաւորութիւնների դրդող ոյժ, ապա որտեղից յառաջ կը գայ անվեհերութիւն մաքառելու նրանց դէմ, որոնք աշխատում են ոչնչացնել այս իրաւունքներն ու պարտաւորութիւնները։

Ոմանք չեն անում մատնանիշ արածս տարբերութիւնը և դրա համար հասնում են այն մտքին, իբր թէ քաղաքացիական արիութիւնն անհրաժեշտ է ոչ ամենին, այլ միայն ժողովրդի իրաւունքների համար մաքառողներին։

Ի հարկ է, ով նուիրում է իրան բացառապէս թոյլերի պաշտպանութեանը՝ դասվում է ճնշուածների կարգում՝ պատերազմելու ճնշողների դէմ. անկասկած է որ նրան քաղաքացիական արիութիւնը հարկաւոր է առաւել մեծ չափով, քան այդ հարկաւոր էր սովորաբար իւրաքանչիւրի համար։ Սակայն, մենք ամենքս զգում ենք քաղաքացիական արիութեան կարիքը, վասն զի մենք ամենքս կազմում ենք որոշեալ հասարակական համակարգութեան օղակը, որ հարկաւոր է պաշտպանել, և մեզնից իւրաքանչիւրիս հարկաւոր է բարոյական ոյժ, որ միշտ և ամեն բանում, կատարէինք մեր պարտաւորութիւնը։

Դոմինիկոս Կիրիլլը դաժան դահճի երեսին ասաց հետևեալ նշանաւոր խօսքերը. «Քո առաջ, ոհ թշուառ երկչոտ, ես հերոս եմ դառնում»։ Ահա՛ հերոսական բնաւորութեան տիպար։ Հերոս է հանդիսանում նոյնպէս և Նիկոլայ Ֆլորէնտացին։ Նոյն դահիճն առաջարկում էր նրան բարեկամութիւն, մատնանիշ անելով ընդ նմին ինքնակալի ողորմածութեան, հեզութեան և իրաւախոհութեան վրայ, բայց նա այսպէս պատասխանեց. «Դու պէտք է, ով արքայական ստրուկ, խօսես օրէնքների, ճշմարտութեան և հեզութեան մասին։ Այն օրէնքների՝ որոնք հրատարակուել են իրողութիւնը կատարուելուց յետոյ։ Ճշմարտութեան մասին։ Գաղտնի դատարաններում, առանց որ և է պաշտպանութեան և կամայական վճռով։ Ի՞նչ հաւատարիմ հպա-

տակութիւն։ Նրա մասին, որ ամրոցները դեռ ևս թշնամուն պայմանագրով յանձնատուր չեն եղել։ Ամայիր ապականելու քաղաքակրթութեամբ ձեռն բերած սրբազան անունները, փոխադրելով նրանց բնաւորութեան առաջ կատարուող արհամարհելի ստրկութեան շրջանը...։ Առաւել լաւ է, ասես, որ քո հրամայողներն արեան ծարաւի են և դու յագեցնում ես նրանց ծարաւը... Ի վերջոյ, եթէ դու առաջարկում ես ինձ քո բարեկամութիւնը, ապա աղերսում եմ քեզ, թող այդ դահճի և ոչ թէ դատաւորի պաշտօնը. և նոյնպէս չը մոռանաս, որ թէկուզ համաշխարհային ճշմարտութիւնն, որի վրայ յենուած է ամբողջ աշխարհը, չը պատժէր քեզ կենդանի ժամանակ գործած յանցանքներիդ համար, այնու ամենայնիւ դու քո կեղտոտ անունով կը խայտառակես որդւոցդ և կը թողնես քեզնից յետոյ յաւիտենական անէծք» *)։

Կոմս Պէլիգրինօ Բօսսին ստացաւ մի անստորագիր նամակ այս բառերով. „Gaveat consul!“ (Թող զգուշանայ հիւպատոսը։) Նոյնպէս նախազգուշացրեց նրան մի դիւանագէտ և իւր ընկերոջ կինը մի նամակով ազդային ժողովում նրան սպառնող վտանգի մասին։ Ապա մի պատուելի քահանայ պատահեցաւ նրան ճանապարհին Վատիկանից Ս. Դամաս գնալիս, և նոյնպէս յայտնեց նրան դաւաճանութեան մասին, խնդրելով չը գնալ խորհրդարան, որի համար Բօսսին շնորհակալութիւն արեց նրան, աւելացնելով. „Causam optimam assumpsi miserabitur Deus“ **)։ Եւ ահա, չը նայելով այս ամենին, նա գնաց խորհրդարան, կատարելով իւր պարտքը և ընկաւ չարագործ Իերգի դաշոյնի հարուածից։

---

*) P. Colleta. St. del Reame di Napoli.

**) „Ես ընտրեցի ամենալաւ ճանապարհ, որպիսին բացի Աստծուց, ոչ ոք չի ընտրել։

Ահա սրանք և սրանց նման բազմաթիւ անձինք որոնց տեղի սղութեան պատճառով չկանէ չանուանել չեմ յիշում, թողնելով ընթերցողին որ ինքն յիշէ նրանց, հանդիսանում են քաղաքացիական արիութեան ամենընտիր օրինակներ։

Հայրենեաց մարտիրոսների թիւն այնքան մեծ է Իտալիայում, որի հաւասարը հազիւ թէ ուրիշ որ և է երկրում գտնուէր։ Թէ և երկար է Իտալիոյ ստրկութեան պատմութիւնը, բայց և այնպէս կարճ էլ չէ և ազնիւ ու մեծ հանճարների ազնիւ պատերազմի պատմութիւնը ազդեցիկ անձանց և խաժամուժի բռնութեան դէմ։

4) ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԻՈՒԹԻՒՆ։

Քաղաքական արիութիւնից պակաս գրաւիչ չէ նա և բարոյական արիութիւնը, որը մարդուն միջոց է տալիս պաշտպանելու իւր համոզմունքները կրօնի, գիտութեան, բարոյականութեան, գրականութեան և այլն ասպարէզներում։ Ո՛վ իրօք հաւատում է կրօնին կամ գիտութեանը, նա իրան պարտաւորուած է զգում պաշտպանելու նրան իւր կեանքի գնովն անգամ։ Ո՛վ երկնչում է վտանգից և մէջքը դարձնում է, նա ստոր մարդ է։ Այն գլխաւոր պատճառներից մինը, թէ ինչու քրիստոնէութեանը վիճակուեցաւ յաղթանակել բոլոր մնացեալ կրօններին հանդիսանում է այն՝ մինչ հերոսութեանն հասցրած արիութիւնը, որ երևում է Քրիստոսի համար նահատակուող մարտիրոսների ընդարձակ և սրտաշարժ պատմութեան մէջ։

Ես կարծում եմ, որ գիտութեան համար կրած չարչարանքներն, ողջ մին է, հշմարիտ է այդ գիտութիւնը, թէ սխալ, միշտ մեծ փառքի կարժանացնեն լոկ մի միայն նրա հետևողների բարեխղճութեան և համոզմունքների անկեղծութեան համար։ Մարդուս իւրացրած գիտութիւնը

կարող է դառնալ նրա բնութիւնը։ Գաղափարի համար հալածանքներն անմահացրին շատ մարդոց, որոնց անուններն առանց այդ, չէին աւանդուիլ յաջորդներին։ Արնոլդ Բրէշիանացին, Յովհան Պաղուացին, Ֆիրօլամ Սաւանարօլան, Պլատինան, Մաքիաւելին, Սպինուզա, Բօնիֆաչիի, Կոլէնուչկի, Տիբերտ, Կարնէսէկկի, Պալէարիի, դէ Դոմինիս, Վանինի, Կոմպանելի և սրանց նմանները. ահա մարդիկ, որոնց յիշատակն յարգվում է քաղաքակրթեալ ազգերից ոչ այնքան նրանց քարոզած վարդապետութեան, որքան այն մարտիրոսութեան համար, որ անվեհերութեամբ կրեցին նոյն այդ վարդապետութեան պատճառաւ։ Առաւել մեծ գրմանք է գարթեցնում մեր մէջ բնաւորութիւնը, քան ուսումնականութիւնը։

Դոմինիկոս Բերտին Ֆիորդանո Բրունոի մասին խօսելիս ի միջի այլոց արտայայտում է հետևեալ նշանաւոր մտքերը. «Մեծ մարդիկ հասարակ մարդկանցից տարբերւում են խրճի ձայնին լսելու, վշտեր, անպատուութիւն ու անյաջողութիւններ կրելու կարողութեամբ, այն ինչ հասարակ մարդիկ բազդի առաջին հարուածից դառնում են ի խաչտառակ փախուստ։ Բրունոն եռանդի նոր պաշար էր գտնում այնտեղ, ուր ուրիշները պատուար կը գտնէին, որովհետև նրա համար առաւել թանգ էր հաստատուն հետք թողնել երկրիս վրայ, քան վայելել ժամանակաւոր բարիքները։ Նրա գործերն, ի մի առած, ներկայացնում են անհատական ոյժի պատկեր իւր անընդհատ զարգացմամբ մինչև խարոյկը։ «Բրունոին վաղուց յայտնի էր իւր դատակնիքը։ Նա արտայայտեց մաքուր հաւատ դէպ՝ իւր վարդապետութիւնը, դէպ՝ իւր անկեղծ համոզմունքները։ Նրա կեանքում գաղափարն առաջին տեղն է բռնում և նրա կեանքը ներդաշնակում է այդ գաղափարին...։ Իսկ մենք ինչ ենք, մեր դանդաղկոտութեամբ, խօսքի և գործի շարունակ աններդաշնակութեամբ։ Մենք ինչ ենք այս հե-

բոսների առաջ, որոնք խարոյկ են բարձրանում իրենց փիլիսոփայութեամբ, որոնք առաւել դիւրութեամբ կը զոհեն իրենց կեանքը, քան թէ մեղանչեն խորհրդով կամ խօսքով։

«Բրունօն չի փոխում խօսելու եղանակը, երբ խօսում է Հենրիկոս III-ի, Կաստելնուա-դի-Մօսսյէրի, Սիգնէյի, Մինդօզայի հետ...։ Նա չի ընտրում ճոխ նախադասութիւններ, որ շողոքորթէ իւր մեկենասներին. չի ծածկում իւր սկզբունքները, չի մեղմում եզրակացութիւնները, չի խաղում նրանց նշանակութեան հետ...։ Նա չէր լռում իւր փիլիսոփայական յեղափոխութեամբ, թէև նրա քարոզը հանդիպում էր միայն ապերախտութեան և հալածանքի։ Նա իւր խօսքին հաստատ էր միայնակ, առանց բարեկամների, առանց օգնութեան։ Այս պատճառաւ մենք ուրախութեամբ գովեստներով ենք փառաբանում նրան այժմ, մանաւանդ ներկայում Իտալիայում, ուր համոզման ոյժը չքանում է այնպիսի դիւրութեամբ, որպիսին առաջ երբէք չի եղել, ուր սրբազան սկզբունքները տատանւում են բոլոր չորս կողմերի ուղղութեամբ...։ Մահը իւր հաւատի, իւր վարդապետութեան համար իւր գրաւիչ կողմերն ունի, թէկուզ այդ հաւատն ու վարդապետութիւնը ձեզնից չը բըղխէին»։

Մարդիկ, որոնց մասին մենք խօսում ենք, կազմում են քաղաքակրթեալ հասարակութեան թագն ու պսակը, որոնք մի մի նախանձելի օրինակներ են, որոնց առաջնորդ պէտք է ընտրի մարդս իւր ամբողջ կենսական գործունէութեան միջոցին։

Բայց ես գրում եմ այս գիրքը ոչ թէ հայրենեաց հերոսների կամ գիտութեան համար, ես գրում եմ ամեն մարդու համար, որին վիճակուածէ կեանքի ասպարէզը մտնել և ճաշակել այնտեղ ուրախութիւն ու տրտմութիւն։

Եւ ուրեմն կրկնում եմ, արիութիւնը մեզ ամենիս հարկաւոր է։ Չը կարծէք, թէ կարող է առանց արիութեան

գործ տեսնել նա և հասարակ մշակը, թէ և նա մտքումն անգամ չունի պատերազմելու ում և իցէ հետ, այլ միայն տքնում է, որ միայն ինքն ու իւր ընտանիքը մի կտոր հալալ հաց ունենալ և նախկին դրութիւնից առաւել նուազ դժբաղդ դրութեան հասնիլ։ Ո՜հ, եթէ մենք իջնէինք արհեստանոցն ու մի առ մի ուսումնասիրէինք գունատուած դէմքերն ու կարդայինք նրանց վրայ դրոշմուած թախիծը։ Ո՜րքան ցաւ, որքան տառապանք, որքան տանջանք է թափուած այս մոռացուած ոգիների մէջ։ Նրանց ամբողջ կեանքն անփոփոխելի կուիւ է չար ճակատագրի դէմ, որ այդպէս կուրօրէն խաղում է մարդոց հետ, մէկին ժպտալով, միւսին ճնշելով։ «Կան նահատակներ նա և մեր ժամանակ, չը խօսելով այլ ևս նրանց մասին, որոնք կենդանի այրում են, չը գնահատուած ոչ ոքից, առանց ափսոսալու՝ երեսին ձգուած նահատակներ։ Կը մոռացուի այն տեղը, ուր սիրտն արիւնով լցւում էր, ուր հոգին ուխտում էր իրեն զոհելու։ Բայց եթէ նրանք անյայտութեան մէջ և համեստութեամբ կրում են իրենց խաչը կենսական աղմուկի ասպարիզում, մի՞թէ այդ նահատակներին հարկաւոր չէ՞ լրջօրէն պատրաստուիլ այդ խաչը կրելու»։ *)

Եւ այդպէս է պատկերանում ստորին դասակարգի մարդոց մասնաւոր կեանքի պատմութիւնը, որի վրայ որպէս պատուանդանի, հպարտութեամբ բարձրանում են արտօնութիւն վայելող դասակարգերը։ Ահա այստեղ է հարկաւոր աղքատութեան համապատասխան բարոյական արիութիւն։ Արիութիւն է հարկաւոր չարչարանքներ կրելու և զաւակների համար օրական պարենը հայթայթելու։ Արիութիւն է հարկաւոր սառնասրտութեամբ նայելու շքեղազարդ կառքերին, որոնց մէջ նստած զուարճանում են աղքատների նման մարդիկ, որոնք նրանց նման մսից և ոսկորից են ստեղ-

*) Ellis. Educazione del Cuore. cap. IX.

ծուած։ Արիութիւն է հարկաւոր, վեհանձնաբար գոհունակ դարձնելու իրեն արիւն քրտինքով աշխատած կոպէկներով համեստ կեանքը, մինչդեռ հարիւրաւոր մանէթներ են շռայլում որ և է հարուստ տիկնոջ զարդարանքների բոպէական քմահաճութիւնները գոհացնելու համար։

Արիութիւն է հարկաւոր համբերութիւն ունենալու տեսակ տեսակ խրատներ լսելու թէ պէտք է չափաւոր ապրել, համբերութեամբ, ժուժկալութեամբ, մինչդեռ ուրիշները խորասուզւում են զեղխութեան և շռայլութեան մէջ անզուսպ անժուժկալութեամբ։ Ո՞վ յանձն կառնի աշխատանքով ապրող մարդոց բոլոր վշտերը մի առ մի թուելու։

Ես չեմ խօսիլ մարդկային օրէնքների արդարադատութեան աստիճանի մասին, չեմ յարուցանիլ սեպհականութեան բաժանման և դրամագլխի ունեցած յարաբերութիւնն աշխատանքի հետ և այն դժուարալուծ խնդիրները։ Ի հարկ է, նոյն իսկ պատմութեան ընթացքն ակամայ դըրդում է հասարակութեանն այսպէս կամ այնպէս վճռել այս խնդիրը, որպէս զի միջոց չը տար աճելու հասարակական դասակարգերի կենցաղական պայմանների անհամապատասխանութեանը մինչ այն աստիճան, որ անողոք ճակատագրի պէս մինը ճնշէր միւսին։ Բայց ես պնդում եմ միմիայն, որ արիութիւն հարկաւոր է ամենին, որովհետև մեզնից իւրաքանչիւրը, ինչ դրութեան մէջ էլ որ լինէինք, ստիպուած ենք ում և ինչ դէմ մաքառել, կամ որ և է գործ պաշտպանել։ Կեանքը պատերազմական ծառայութիւն է և իւրաքանչիւր մարդ՝ զինուոր։ Ո՛վ արի է, նա յաղթում է և յառաջ է գնում։ Ո՛վ երկչոտ է, նա յաղթւում է և մեռնում անշուք մահով։

5) ՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԻՈՒԹԻՒՆ։

Յաճախ շփոթում են յանդգնութիւնը արիութեան

հետ. յանդուգնութիւնը նոյնպիսի է, որպէս և առաքինութեան ու արատի, խելքի և յիմարութեան. վասն զի արիութիւնն առաքինութիւն է և խելքի նշան, իսկ յանդգնութիւնն արատ է և յիմարութեան ծնունդ։

Եւ ահա մենք ապրում ենք այնպիսի մի ժամանակ, երբ յանդգնութիւնը սովորութիւն է դարձել։ Նրանով են հանդիսանում ամեն բանում, աւարտելով այլանդակ հագուստով և պճնազարդութեամբ մինչ ամենամանկահաս օրիորդներն անգամ։ Այժմ հաճելի է ծայրայեղ անպարկեշտութիւնը և նրան ծափահարում են։ Մինչդեռ յանդգնութեանն հասած յանձնապաստան արարածներն իրօք լինում են ամենաչնչին մարդիկ։ Եւ այս առանց պատճառի չէ։ Յանձնապաստանը տարբերւում է արի մարդուց գլխաւորապէս նրանով, որ գործում է բաղդի բերմամբ, անհաշիւ, գոնէ մի փոքր էլ չը մտածելով իւր նպատակի մասին և առանց կարևոր միջոցները ձեռք առնելու. մինչդեռ արի մարդը դէս ու դէն չի ընկնում, մնում է իւր գլխի կատարեալ տէրը, չէ կորցնում սառնասրտութիւնն ու լրջմտութիւնը. իւր դիտաւորութիւնը նա քննում է բազմակողմանի կերպով. կշռում է իւր ոյժերը, և իրան տկար զգալով, սպասում է յարմար րոպէի։ Նա երբէք բաղդի բերմունքին անձնատուր չի լինիլ, բայց և չի երկնչիլ երբեմն ռիսկ անել, եթէ միայն իրան զօրեղ է զգում դիմանալու բ է ն։ Ինչ և իցէ, նրա նպատակը չի լինիլ ունայն, զուր տեղը չի փչացնիլ թէ իւր և թէ ուրիշի կեանքը։

Հոմերոսի Թերսիտէսը ողորմելի դեր է խաղում. մեծ վտանգների ժամանակ ճչում է կնոջ պէս, որովհետև անամօթ մարդ է։ Փաբլիոս Մաքսիմոսը երեսանց կարծես երկընչում է, բայց յարմար րոպէի սպասելով, հերոս է երևում, որովհետև նա քաջարի է։

---

6) ՀԱՅԵԱՑՔ ՄԵՐ ԱՆՁԱՆՑ ՎՐԱՅ։

Ճշմարիտն ասելով, Իտալիայումն էլ հետզ հետէ առաւել տարածւում է յանդգնութիւնը, իսկ բարոյական և քաղաքացիական ճշմարիտ արիութիւնը փոքր առ փոքր մոռացութեան է տրւում։ Չը գիտեմ, որքան իրաւացի է այս. բայց այժմ Իտալացւոց համոզմունքները կազմւում են ամեն բանի մէջ անձնական օգուտ նշմարելով. և՛ կրօնի, և գիտութեան, և՛ բարոյականութեան և քաղաքականութեան մէջ։

Քարոզում են այնպիսի վարդապետութիւն և այնպիսի քաղաքականութիւն, որն աւելի ձեռնտու է, կատարեալ համոզուած լինելով, որ հէնց այդ է փրկութիւնը։ Իսկ խիղճը։ Բաւական է։ Այս բառս առաձգական է։ Չէ՞ որ առանց օգտի ոչ մի բան հետաքրքիր չէ. եթէ ազնւութիւնը օգտի հետ միանայ, լաւ է. եթէ որ այսպէս չէ կամ սրա նման մի բան, ապա առանց այլ և այլութեան մի կողմը թողէք ազնւութիւնը։

Ահա այն հանելուկի լուծումը, թէ ինչու Իտալիայում բարոյականութեան և քաղաքականութեան մասին դատելիս, այնպէս դիւրութեամբ են անցնում մէկ ծայրայեղութիւնից միւսը և ինչու այդպէս սխալվում են տեսութիւն քարոզողները։ Գործը հասնում է սարսափելի անհեթեթութեան։ Բանիւ և գրով աստուածասէր հանդիսացող մարդիկ իրօք լինում են շնականներ. խօսում են բարեհոգութեան մասին, իսկ ինքեանք բռնաւորներ են, խօսում են կարեկցութեան մասին, իսկ ինքեանք վաշխառուներ են։ Ի վերջոյ, պատահում է և այսպիսի խայտառակութիւն, որ հագուագիւտ չէ ազգային ժողովում. պատգամաւորը նստած աջ կողմը, ձայն է տալիս ձախի կողմից, կամ յուսադրում է ձախ կողմին, իսկ ինքը պաշտպանում աջ կողմը։ Ամբոխի մէջ եղած ժամանակ Բաբագասների նման անխտիր յարձակւում են ամեն տեսակ իշխանութեան վրայ, իսկ

«սովորաբար ըստ ողորմածութեան այլոց» ընկնելով պաշտօնական շրջաններում, կատաղաբար յարձակւում են նոյն այդ ամբոխի վրայ։ Եւ այս բոլորը նրանից է յառաջանում, որ իրենց սեպհական կարծիքն ունենալու արիութիւնը պակասում է։

Յովսէփ Պարինիի ասելով. «Ազատ և ազատութեան արժանի մարդը չի դաւաճանիլ ճշմարտութեանը ոչ ի վերուստ խոստացած գայթակղութեան՝ և ոչ հրապարակից հասնող ձայնակցութեանց առաջ։ Ինչ նա մտածում է, այն էլ ուղղակի արտայայտում է ազնուաբար, սառնասրտութեամբ։ Ինչ որ լաւ է, այն նրա կարծիքով էլ լաւ է. ինչ որ վատ է, այն նրա կարծիքով էլ վատ է. ինչ որ անմիտ է, այն նրա կարծիքով էլ անմիտ է։ Իւր համոզմունքներից նա չի հրաժարուիլ ոչ պատուանշանների ու խաչի յետևից ընկնելով, ոչ երկիւղից, թէ չը լինի որ ամբոխի չարախօսութեանն ենթարկուի։ Ճշմարտութիւնն ու արդարասիրութիւնը նրա համար առաջին տեղն են բռնում. նրանով նա դիմում է իւրաքանչիւր հանդիպողին, լինի նա բարեկամ թէ թշնամի։ Ճշմարտութեամբ և արդարութեամբ է վերաբերում նա իշխանին և ռամկին, զօրեղին և թոյլին, մեծամասնութեանը և փոքրամասնութեանը, կենդանեաց և ննջեցելոց։ Ազատ մարդու բնութեանն յատուկ չէ, այլ ստրկի՝ խեղդելու խղճի ձայնը, խաբելու ինքն իրեն կեղծ յոյսերով կամ երկիւղներով»։

Դեռ երկար կը ողբան Իտալացիք Վիւդովիկոս Սետտեմբրինի-ի մահը։ Գտնուելով բանտում իւր վիճակի վրճռուելու րոպէին, նա գրեց 8-ին փետրուարի 1851 թ. իւր սիրասուն կնոջը մի զարմանալի սրտառուչ նամակ, որ կարդացել են գրեթէ բոլոր Իտալացիք։ Այդ նամակից առաջ կը բերեմ մի հատուած. «Թէ և ինձ մահու դատապարտեն, բայց հաւատացիր ինձ յանուն մեր սիրոյ, ի սէր մեր սիրելի որդւոց, որ քո Վիւդովիկը չի դաւաճանիլ իւր բնա-

ւորութեանը։ Ես կը մեռնեմ հաւատալով, որ իմ արիւնս ի զո՞ւր չի կորչիլ հայրենեացս համար։ Ես կը մեռնեմ քաջ նահատակներին յատուկ անդորրութեամբ։ Ես կը մեռնեմ և իմ վերջին խօսքերս կը լինին իմ հայրենիքը, իմ Ֆիջիան, իմ Բաֆայէլը, իմ Իւլիան։ Իմ մահս կախաղանի վրայ անպատուութիւն չի բերիլ ո՞չ քեզ, ո՞չ սիրասուն զաւակներիս։ Կը գայ օր և ձեզ յարգանք կը շնորհեն»։

Ճշմարիտ արիութեան այսպիսի տիպար ունենալով, կարիք չը կայ Յունաստան ու Հռոմ դիմել հերոսներ որոնելու համար։

Ազգային դժբաղդութեան ներկայ օրերին, երբ Իտալիան ի սուգ է համակուած իւր թագաւորի մահուամբ, աւելորդ չի լինիլ յիշել մի պատմական դէպք Վիկտոր-Էմմանուէլի կեանքից, որ իւր երկաթէ կամքն արտայայտում էր հերոսական արիութեամբ։

Դեռ նոր էր բարձրացրել նա հայրական թագը Նովարրայի պատերազմի դաշտից, որ Բաղեցկին հպարտութեամբ առաջարկեց նրան խաղաղութիւն հետևեալ պայմաններով. «Սարդինիոյ թագաւորութեան ոչնչացումն. Իտալական ազգային դրօշակի վերացնելը. ուղղակի վերադարձ Կարլ Երջանկի կառավարութեան նախկին ժամանակներն. սերտ դաշնակցութիւն Աւստրիայի հետ»։

Ի տրիտուր այս ամենի, բոլորովին հրաժարւում էին պատերազմական ծախքերի պահանջներից, և խոստացուած էին բարի ծառայութիւններ, առաւել յարմարութեամբ իրադործել տալու առաջարկութիւնները։ Թագաւորը մերժեց այդ։ Բաղեցկին յառաջ շարժեց զօրքը պայմաններն ուժով ընդունել տալու նպատակով, որի հետևանքն եղաւ Պիեմօնտի սպառնալուն կործանումը։

Այդպիսի անել դրութեան միջոցին երիտասարդ արքայ Վիկտոր-Էմմանուէլը արիութիւն ունեցաւ արտայայտելու հետևեալ նշանաւոր խօսքերը.

«Մարաջ՛խտ, մենք առաւել շուտով կը համաձայնենք կորցնելու հարիւրաւոր թագեր, քան այդպիսի պայմաններով խաղաղութիւն ստորագրել։ Ո՛չ մի կերպով չեմ դաւաճանիլ հայրական երդմանս։ Դուք կամենում էք պատերազմ ո՛չ կեանքի, այլ մահու՝ և կը լինի։ Ես հրաւէր կը կարդամ ազգին և դուք կը տեսնէք, թէ ինչ կը յառաջանայ Պիեմոնտի կործանումից»։

Օտարականն յաղթահարուելով այդպիսի ազնիւ վրճռականութեամբ, համաձայնուեցաւ աւելի ՝ՆՇԷՆԴՈՒ պայմաններին։

ԳԼՈՒԽ Է.

ԱՄՓՈՓՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

Iustus perit in justitia sua. *Isaia.*

„Ո՛վ արդարութեան շաւղով է ընթանում և միշտ ճշմարիտն է խօսում. ով արհամարհում է բամբասանքը և իւր ձեռքով հեռացնում ամեն տեսակ պարսաւանք. ով խցում է ականջները, որ չը լսէր արիւնաներկ խօսքեր՝ փակում աչերը, որ չը տեսնէր չարիքը, նա կը բնակի երկնային օթևանում:

Էսայեայ:

Բնաւորութիւն ունեցող մարդը բազմած է այլոց մէջ, որպէս ի վերուստ իջած Աստուած: Զէֆոպէր:

1) ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՈՑԺԸ:

Այս ամեն ասածներից կարող ենք եզրակացնել, որ բնաւորութիւնն՝ ոյժ է: Տաղանդաւոր մարդու վրայ հիանում ենք, բայց բնաւորութեան տէր մարդու առաջ խոնարհւում. որովհետև տաղանդը կազմում է միայն մի մասը, իսկ բնաւորութիւնն՝ արդէն ամբողջ մարդն է հոգեբանական ներդաշնակութեան դագաթին կանգնած: Ես ճանաչում էի շատ տաղանդաւոր և ուսումնական մարդիկ,

---

*) „Արդարը կորչում է ճշմարտութեան համար“:

որոնք գործնական կեանքում ցոյց էին տալիս այնպիսի անընդունակութիւն և հասարակութիւն ճանաչելու այնպիսի անփորձութիւն, որ չիրաւի ցաւալի է։ Խօսքով նը-բանք շատ իմաստուններ են, բայց գործի ժամանակ կամ ծաղրալի են, կամ արհամարհանք են յարուցանում, կամ կղզիացած են մնում, առանց իրական ազդեցութիւն ունենալու ուրիշների վրայ։

Բնաւորութեան տէր մարդն իւր անձնաւորութեամբն արդէն յարգանք է զարթեցնում առ ինքն. կեանքի մաքրութեամբ նա նուաճում է ամենին, նա և թշնամիներին անգամ, առանց որոց, ի հարկ է, ինքն էլ չի կարող լինել։ Ամենակարող մամոնան, ստոր մարդոց քսութիւնն ու նախանձը, խաբուսիկ բաղդի սնափառութիւնն ու չարի բոլոր զօրութիւնները ծունկ են խոնարհում բնաւորութեան տէր մարդու առաջ։

Առանց մաքուր բնաւորութեան՝ խելքը գուցէ կարողանայ մի առ ժամանակ գրաւել ամբոխի հրճուանքը, և մինչև անգամ մոլորեցնել զարգացած մարդոց, բայց չէ՞ որ հրճուանքը վաղանցուկ է և միայն բարոյական յատկութիւններն են նուաճում աշխարհս։

2) ՄԻ ՇԱՐՔ ՄԵԾ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԷՐ ԻՏԱԼԱՑԻՆԵՐ։

Բնաւորութիւնն աւելի է ազդում ազգի պատմութեան վրայ, քան խելքը։ Ահա մարդիկ՝ որոնց չիշատակն յաւիտեան կը յարգուի ոչ այնքան նրանց մտաւոր կորովութեան, որքան նրանց բնաւորութեան ոյժի համար։ Մուցիոս Սցեվոլա, Կլէլիա, Բրուտոս, Կամիլլ, Ֆաբիոս Մաքսիմոս, Բէգուլ, Կատօն, և ուրիշները։ Հռովմայեցիք՝ Բօէցիոս, Արնօլդ Բրեշիանացին, Ջօվանի-դա Պրոչիդա, Վիկտոր Պիզանի, Դանտէ Ալիգիէրի, Քրիստափոր Կոլումբոս, Գրիգոր Մեծը, Ամեդէյ, V. VI և VII սավոյացիք։ Պեդրո Պաննո-

նի, Ջիրոլամ Սավանարոլա, Ջովանի-դալլէ-Բանդէներէ, Ֆրանցիսկո Ֆէրուկչի, Միքէլ-Անջելլո-Բուէնարոտտի, Անդրէյ Դորիա, Ֆրանցիսկո Բարբերիգո, Մորոզինի Պելեպոնէզացին, Պաւել Սարպի, Գալիլէօ-Գալիլէյ, Էմմանուէլ Փիլիբերտ. իշխան Եւգենիի, Յովսէփ Պարինի, Վիկտոր Ամֆիէրի, Մարիի Պագանո, Դոմինիկ Կիրիլլ, Ֆրանցիսկո Կարակչիոլո, Գաբրիէլ Մանթօնէ, Հեկտոր Կարաֆֆա, Ֆրանցիսկո Կոմֆորտի, Էլէոնորա Պիմենտէլ, Լուիզա Սանֆէլիջէ, Սանտորրէ-դի-Սանտա Ռոզա, Յովսէփ Անդրիոլի, Ֆէլիքս Ֆորեստի, Ֆրիդրիխ Կոֆալիոնների, Պիսականէ, Կիր Մէնոտտի Պաւել Մանտարանի, Վիլհէլմ Պէպէ, Բանդիէրա, Կաիրոլի, Պոէրիի և ուրիշ բազմաթիւ նշանաւոր իտալացիներ, թէ մեռած և թէ կենդանի, որոնց իւրաքանչիւրին յայտնի պատճառներով մի առ մի չեմ յիշատակում։

3) ՄԻ ՀԱՏՈՒԱԾ Դ'ԱԶԵԼԻՈՅԻՑ։

Եւ այսպիսի փառաւոր և հարուստ անցեալից յետոյ, նկատելի է ներկայիս աղքատութիւնը։ Մասսիմօ դ'Ազէլիո-ն գեղեցիկ գոյներով է նկարագրում այդ դրութիւնը հետևեալ խօսքերով. «Իտալացիք կամեցան նորոգել Իտալիան, իսկ իրանց թողին ըստ հնոյն նախկին բարոյական ախտերով, իբրև հնութեան ժառանգորդներ. և այս այն պատճառաւ, որ Իտալիոյ վերածնելութեան գաղափարով տոգորուած, ոչ ոք չէ ուզում հասկանալ, թէ նախ և առաջ ինքեանց պէտք է կերպարանափոխել։ Իտալիան, ինչպէս և ամեն ազգութիւն, մինչ այն ժամանակ չի կարող ունենալ հաստատուն կազմակերպութիւն, լաւ կառավարութեամբ, բաւականաչափ հզօր ազգութիւն ինչպէս օտարների, նոյնպէս և ներքին արգելութիւնների առաջ, մինչև որ իտալացիք չեն կատարել իրենց պարտքը խստութեամբ կամ գոնէ առանց զանազանութեան, պատկանում

են նրանք արդեօք բարձր, միջին թէ ստորին դասակարգին։ Բայց չէ՞ որ պարտքը մեծ մասամբ ներկայանում է հասարակ, անպաճոյճ, անաղմուկ դրութեամբ. սրա համար անհրաժեշտ է ունենալ կամքի ոյժ այն համոզմամբ, որ պարտաւորութիւնը պէտք է կատարել ոչ թէ նրա համար, որ նա տալիս է օգուտ կամ բաւականութիւն, այլ նրա համար, որ նա պարտաւորութիւն է։

Կամքի այս ոյժն ու այս համոզմունքը կազմում է այն թանկագին շնորհը, որ արտայայտւում է բառովս՝ «բ ն ա ւ ո ր ո ւ թ ի ւ ն»։

Դ'Ազելիո-ի խօսքը կարծեմ բաւական է ապացուցանելու այն սկզբունքը, որ մենք ընդարձակօրէն յայտնեցինք Բ. գլխում, այսինքն թէ. «Միայն նա ունի բնաւորութիւն, ով միշտ և անյողդողդ կատարում է իւր պարտքը»։

Այժմ ես դարձեալ կրկնում եմ, որ Իտալիայում խըլացրած է պարտաւորութեան զգացմունքը։ Ամեն քայլափոխին սառնութիւն, անտարբերութիւն, մեռելութիւն, շնականութիւն։ Կատարելապէս ամեն ինչ հիմնուած է ինքնասիրութեան վրայ։ Առ Աստուած ունեցած պարտաւորութիւններ կամ բոլորովին չը գիտեն, կամ շատ քիչ։ Առ հայրենիս ունեցած պարտաւորութիւնները կարծես թէ քիչ աւելի են զգացւում, բայց նրանց ամենաչնչին մասն է կատարւում, և այն էլ կորչում է փառասիրութեան և զանազան տեսակ ունայնութիւնների մէջ։ Առ իրենց անձն ունեցած պարտաւորութիւններից կատարւում են սովորաբար այնպիսիք, որոնց ներքոյ թաղնուած է նիւթական շահ, իսկ առ խիղճն ունեցած պարտաւորութիւնների մասին խօսելն անգամ չարժէ։ Իտալական ցեղը կարծես թէ զառամել է, նրան պէտք է թարմացնել դաստիարակութեամբ։

Կատօնն անընդհատ կրկնելով. «Կործանեմ Կարթա-

գէնը», ի վերջոյ հասաւ իւր նպատակին և Հռոմի մեծ թըշնամին դարձաւ աւերակների կոյտ։ Ապա ուրեմն, թող մենք էլ մերը պնդենք. «Կերպարանափոխենք բնաւորութիւնը»։ Եւ կը հասնենք նպատակին, եթէ ամենքս միաբան, մի սիրտ, մի հոգի դարձած, ով որքան կարող է, ձեռք զարկենք սուրբ գործին։

Այժմ աւարտելով տեսական սկզբունքները, որոց մասին, կարծեմ, բաւականին խօսուեցաւ, անցնում եմ խնդրի գործնական կողմին։ Եթէ ինձ յաջողուեցաւ գոնէ մի փոքր պարզել միտքս, ապա ընթերցողը դիւրութեամբ կարող է ներկայացնել իրեն բնաւորութեան տէր մարդու տիպարը, ինչպէս մենք հետազօտեցինք և որոնց Իտալիան չափազանց կարօտութիւն ունի։

Երկրորդ մասի մէջ մենք կաշխատենք հնարաւոր պարզութեամբ որոշել բնաւորութիւնը կրթելու գործնական հնարները։ Եւ կը սկսենք ընտանիքից։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

ԸՆՏԱՆԻՔ

Իտալացիք, բարելաւեցէք ձեր ընտանիքը, եթէ ուզում էք մարդ դառնալ։ Այն ազգը, որ ներկայումս զարմացնում է աշխարհս իւր անլսելի յաղթութիւններով, ոչ միայն ուրիշներից առաւել լուսաւորուած է և առաւել աշխատասէր, այլ և առաւել բարոյական է. և այստեղ առաւել, քան որ և է ուրիշ երկրում զարգացած է առ ընտանեկան կեանքն ունեցած սերտ կապը։

Մանդէգացցա։

Տունը՝ բնաւորութեան ամենաառաջին և կարևոր դպրոցն է։ Ս. Սմայլս։

1) ՏՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՄԱՐԴՈՒՆ. ԲԻՐՏ ԿՈՂՄԸ։

Տունը ստեղծում է մարդուն. այստեղ, ընտանիքումն են ստացում բարոյական և ֆիզիկական կրթութեան առաջին հիմունքները, ցանում բնաւորութեան սերմերը։ Ազգի քաղաքակրթական վիճակը, կարելի է ասել, որ ուղղակի կախումն ունի ընտանեաց քաղաքակրթական վիճակից, որ կազմում է պետութեան հիմունքը։

Ազգի ազնվանուութիւնն ու անկումը սկսում է ընտանիքից։ Հռոմը չէր ենթարկուել այնպիսի թշուառ կոր-

ծանման, եթէ որ հռովմէական ընտանիքը պահպանէր իւր նախկին անարատութիւնը։

Իսկ ինչպէս է ընտանեաց այժմեան բարոյական վիճակն Իտալիայում։

Յայտնում եմ ամենին, որ դիտաւորութիւն չունիմ ամբաստանելու հայրենի երկիրս, որի համար, գիտէ Աստուած, պատրաստ եմ կեանքս զոհելու, ինչպէս նրա ծառայութեանը զոհեցի խելքս ու սիրտս։ Բայց Տէր մի՛ արասցէ, որ ես մինչ շողոքորթութիւնը ստորանամ։

Եւ ուրեմն, ես պէտք է ասեմ, որ Իտալիոյ ընտանեաց այժմեան բարոյական վիճակը դեռ ամենևին չի կարելի բնական համարել. այստեղ պահանջւում է անյետաձգելի օգնութիւն մատենագիրների, դաստիարակների ու օրէնքների կողմից, որին վկայում են մեր շատ գեղեցիկ առածները. «Իմ տունս՝—իմ մայրս է»։ «Կապեցէք ձեռք ու ոտքս՝ և ձգեցէք մերոնց մօտ» և այլն։

Այսպէս է առածներում, այսպէս չէ գործով։ Իտալիայում (ես առ հասարակ եմ ասում) զարգացած չէ առ ընտանեական յարկն ունեցած սէրը։ Սա ընդհանուր ախտ է, բայց գլխաւորապէս յատուկ հասարակութեան ստորին դասակարգերին, վասն զի խեղճ մարդիկ սովորաբար իրենց զբաղմունքներից յօժարութեամբ թեթևութիւն են գտնում դուրսը, քան տանը։ Մեր բանուորը սիրում է զուարճանալու համար գինետներն ու պանդոկները յաճախել։ Եւ երբ կինն ու որդիքը սովից կոտորւում են խրճթում, նա խմում է, ուտում և զուարճանում, անպիտանութեամբ վատնելով շռայլութեան համար այն, ինչ որ բնութիւնը, կրօնն ու առողջ դատողութիւնը ստիպում են գործ ածել յօգուտ ընտանեաց բարօրութեան։ Այստեղից յառաջանում է աղքատութիւն և բարուց ապականութիւն, յանցանք և բանտ։ Այն բանուորը, որ կարող էր խնայողութեամբ ապնուացնել իւր ընտանիքը, անբան անասունից առաւել ստոր է ի-

նում։ Նա հայհոյում է Նախախնամութիւնը, անպատուում բնութիւնը, նզովում օրէնքներն, ու կատարեալ անգունդը գլորուելով, տանում է իւր հետ այնքան անմեղ արարածներ, որոնք լիակատար իրաւունք ունէին նրանից սնունդ և դաստիարակութիւն պահանջելու։

Յառաջ բերած խօսքերս կազմում են ընտանեաց բիրտ կողմը, ես այդ գիտեմ։ Բայց ով կը սկսի հերքել այս։ Մտածել բնաւորութեան կրթութեան մասին առանց ընտանիքը կերպարանափոխելու՝ չիմարութիւն է։ Ասում են. «Իտալիան ստեղծուած է, պատրաստենք իտալացիներ»։ Պէտք էր այսպէս ասել. ապա ուրեմն կերպարանափոխենք ընտանիքը, եթէ մենք ուզում ենք իտալացի լինել։ Թող ամեն ինչ գերազանց դրութեան մէջ լինի, և օրէնքը և կառավարութիւնը և դպրոցը, իսկ եթէ ընտանիքը կարգին չէ, յառաջադիմութեան յոյս մի՛ ունենաք։ Միայնակ սա բաւական է, որ ջլատէր օրէնքի, դպրոցի ու կրօնի զօրութիւնը։ Եթէ Անգլիայում հասարակութեան բոլոր դասակարգերն առատ են զգօն և ազնիւ մարդկանցով, այս գլխաւորապէս արդիւնք է՝ բարեկարգ, կազմակերպուած բնական ընտանիքի։

2) ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՐԵՒՈՐ ՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆՏԱՆԵԱՑ ՏԷՐ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂԻ ՀԱՄԱՐ։

Շատ են ընտանեկան անկարգութեան պատճառները, բայց նրանցից մէկն է այն թեթևամտութիւնը, որով սովորաբար ընտանիք կազմելուն են ձեռք զարկում։ Բոլոր մարդիկն ու բոլոր կանայք չեն ծնւում ամուսնական կեանքի համար։ Քիչ չեն գտնուիլ այնպիսիք, որոնք ամուրի կեանքում կը կազմէին իրենց համար երջանկութիւն և հայրենեաց փառքը. ընդհակառակն, ամուսնութեան մէջ նրանք իրենց կործանումը կը գտնէին։

Եւ ուրեմն, մարդուս առաջին պարտաւորութիւնը, որ ցանկանում է իւր սեպհական տուն ու տեղն ունենալ՝ իւր անձի բարեխիղճ փորձութիւնն է, թէ արդեօք ունի՞ դրա համար անհրաժեշտ յատկութիւններ։ Այդ յատկութիւններից օրինակի համար կարելի է յառաջ բերել հետևեալները. անձնիշխանութիւն, հեռատեսութիւն, սերտ միութեան զգացմունք, վճռականութիւն, հաւատ առ իւր անձն, սրտի ազնւութիւն, կարողութիւն ունենալ կռուելու կեանքի փոփոխութիւնների դէմ, պատրաստակամութիւն՝ առաւել շատ գործելու և առաւել քիչ խօսելու, կարողանալ արտայայտել սառնասրտութիւն և անվեհերութիւն, սէր դէպի կարգապահութիւն և աշխատանք, զգօնութիւն, ժուժկալութիւն, չափաւորութիւն, և այլն։

Երբ ինքդ քո մէջ զգում ես այս յատկութիւնները, վստահ առաջ գնա դժուար ասպարէզը։ Բայց լաւ մտածիր նոյնպէս, թէ ո՞ւմն ես կեանքիդ ընկեր ընտրում։

Դժուար է, և առաւել դժուար, քան այս սովորաբար կարծում են, լաւ կնոջ ընտրութիւնը։ Ահա այստեղ են վարւում թեթևամտաբար։ Հարսնացուից սովորաբար հարցնում են, ի՞նչ օժիտ ունի։ Գեղեցի՞կ է արդեօք։ Առողջ է։ Կրթուա՞ծ է։ Եւ փո՞ռք Աստուծոյ, եթէ այս արժանաւորութիւններն ունի։

Ընդհակառակն, այնքան շատ չեն սիրում այսպիսի հարցեր տալ. արդեօք հարսնացուն շնորհունակ մայր լինելու համար ունի՞ ընտիր յատկութիւններ։ Խելացի՞ է նա։ Բարեհոգի՞ է նա։ Ազնի՞ է արդեօք քմահաճութիւններից և հաճոյամոլութիւններից։ Բնաւորութեամբ տոկո՞ւն է արդեօք, աշխատասի՞ր է, անաչա՞ռ է, կրօնասի՞ր է, բայց ոչ մոլեռանդ, ընդունա՞կ է անկեղծ սիրոյ, ընտելացել է արդեօք կարգապահութեան, տնտեսութեան, խնայողութեան։

Ճապոնացիք, ինչպէս նկատում է իւր ճանապարհորդութեան մէջ Իմէ Հումբերտը, մարդու գնացող աղջկանից

պահանջում են՝ անարատ պատիւ, քնքոյշ և խաղաղ բարք, գեղեցիկ սեռին համապատասխան կրթութիւն և լաւ տանտիկնոջ բոլոր յատկութիւնները։

Ամօթ չէր լինիլ այս բանում մեզ էլ օրինակ առնելու ճապօնացիներից։

Եթէ ընտանիքը կազմուեցաւ երկուստեք վերոյիշեալ պայմաններն ունենալով, ապա կարելի է ասել, որ խնդրի կէսն իրագործուած է. իրենց բարձր կոչումն ու ձրգտումները գիտակցող ծնողները չեն արտադրիլ հրէշներ, հոգեմէական բանաստեղծի արդարացի նկատողութեան պէս, թէ „fortes creantur fortibus et bonis“ *)։

«Միայն ընտանեաց մէջն է ամփոփուում մարդուս ամբողջ դաստիարակութիւնը, գրում է պրոֆէսսոր Անջուլին։ Ընտանիքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ եսասիրութեան սանձահարումն, կարգապահութեան, հեղինակութեան, հաւասարութեան աղբիւր, ազնիւ, անշահասէր մտերմութեան ծընընդավայր, սանդուղ դէպի քաղաքակրթական կեանքը»**)։

Բանն այն է, որ ընտանիքն ամբողջապէս առած, իւր բաղմակողմանի յարաբերութիւններով դէպի ծնողները, զաւակները, եղբայրները, ընդոծինները՝ ներկայացնում է, ամեն տեսակ յարմար դիպուածներ անհատական և ընկերական ընդունակութիւնների զարգացման համար։ Ինչպէս որ մարդուն աշխարհք են անուանում փոքր դիրքով, այնպէս էլ ընտանիքը կարելի է անուանել հասարակութիւն՝ փոքր դիրքով. այնտեղ, նոյն Անջուլիի ասելուն պէս, կախումն ունենալն արտայայտում է զաւակների հպատակութեամբ իրենց ծնողներին, իսկ հաւասարութիւնն ու ազատութիւնն՝ եղբայրների ու քոյրերի միմեանց հետ ունեցած յարաբերութեամբ։

---

*) „Զօրեղները ծնում են զօրեղներ և առաքինիներ“։

**) La Pedagogia, lo Stato e la Famiglia, 82.

3) Ի՞նչ է ներկայացնում իրմով հայրը։

Անհրաժեշտ եմ համարում առաւել պարզ որոշել ծնողաց դերը մանուկների դաստիարակութեան գործում։ Ժանէյի կարծիքով. «Հօր վրայ պարտաւորութիւն է դրուած դաստիարակելու երեխային իւր հեղինակութեամբ. իսկ մայրը պարտաւոր է նոյն նպատակին հասնել իւր գորովով և քնքշութեամբ» *)։

Պարզ է, որ տարբերութիւնն այստեղ նպատակի մէջ չէ, այլ միջոցների։ Հայրը հանդիսանում է իբրև հեղինակութիւն, օրէնք, բանականութիւն. մայրը՝ սէր, ազատութիւն, սիրտ։ Մէկը դաստիարակում է լուրջ դատողութեամբ, միւսը՝ քնքոյշ մտերմութեամբ։

Ի հարկէ, այս անսպասման չէ ասուած, և թող ինձ չը մեղադրեն՝ թէ միակողմանի եմ դատում, իբր թէ ես հերքում եմ հօր ունենալիք քնքշութիւնն ու մօր լրջութիւնը մանուկների դաստիարակութեան գործում։ Այս բացատրութեամբ մենք կարող ենք շարունակել։

Մի քանի մանկավարժներ սխալմամբ կարծում են, որ մանկան սկզբնական դաստիարակութիւնը բացառապէս մօր գործն է, և թէ հայրը չը պէտք է խառնուի, մինչև մանկան դպրոցական տարիքը։ Ես կարծում եմ, որ մանկութեան առաջին շրջանն անցնելուց յետոյ, հօր մասնակցութիւնը նոյնքան կարևոր է, որքան և մօրը։ Դիտակցութեան առաջին նշոյլներից արդէն մանուկները պէտք է սովորեն կատարել իրենց պարտաւորութիւնը ոչ թէ նրա համար, որ նա հաճելի է և պարգևներ կը տայ, այլ նրա համար, որ նա պարտաւորութիւն է։ Եւ ահա այս է հօր դերը։

Յաճախ փչացնում են մանուկների խիղճը նրանով,

---

*) La Famille.

որ ստիպում են նրանց հնազանդուիլ զանազան խոստումներով և խաբէութեամբ, մոռանալով, որ անմտութիւն է պահանջել երեխայից պարտաւորութեան կատարման նուրբ հասկացողութիւն զանազան խոստումների շնորհիւ։

Երբեմն նա և խստութիւնը մանուկներին կատարել տալու այն, ինչ որ նրանք չեն կամենում, այլ պարտաւոր են, ամենևին չի կարելի խստասրտութիւն համարել, այլ շատ փոքառու ընտանեաց հօր խոհեմութեան գործ։

Այդ առթիւ մանկան թափած արցունքներն ու կրած չարչարանքները ժամանակով կը պատրաստեն մի մարդ, որ ընդունակ կը լինի կենսական կռուին։

Այս բանը կարող է խիստ երևալ, բայց չէ՞ որ ես էլ գրում եմ այնպիսի սերնդի համար, որ պէտք է մարտնչի շուայլութեան դէմ։ Այս պատճառաւ էլ ամենևին հաւանական չէ այն կարծիքը, իբր թէ չափազանց խստութեամբ ծնողներն անպատճառ բթացնում և զայրացնում են մանուկին։ Խստութիւնը չի կարող զայրացնել, եթէ նա հիմնաւոր է և թելադրուած անկեղծ բարեաց ցանկութեամբ։ Մանուկն առաւել լաւ, քան մեզ թւում է, կարող է զանազանել խելացի խստութիւնը ցնորամիտ խստութիւնից. հէնց վերջինս է ծնեցնում նրանում ատելութիւն, մինչդեռ առաջինին նա յօժարութեամբ հպատակում է։ Եթէ մանուկն սկսեց սովորել դասը, որովհետև հայրը գրաւել էր նրան խաղալիկներով, ապա նոյն իսկ ուսումը շուտով կարող է ձանձրացնել նրան. բայց եթէ գիրքը ձեռք կառնի դասը սովորելու դիտմամբ, նա ուրախութիւն կը զգայ այն գիտակցութիւնից, որ գոհացրեց ուսուցչին և կը ցիշի որ հայրը նրան սիրելուցն էր պատուիրում դասը սովորել։ Սաստիկ սխալւում են ծնողներն երևակայելով, որ ներողամտութեամբ ձեռք կը բերեն մանկանց սէրը։ Բոլորովին ընդհակառակն։ Աւելորդ ներողամտութիւնը խլացնում է մանկանց մէջ հնազանդութեան բնազդումը, ծնողների վրայ

կը բարկանան նրանք, հէնց որ կը նկատեն, թէ արդէն դադարել են նրանց գլուխը շոյել։

Ես չեմ ասում, իբր թէ մանուկները պէտք է վախենան հայրական հայացքից։ Այդ՝ ծայրայեղութիւն է։ Հայրը հանդիսանում է իբրև կենդանի հեղինակութիւն և դատողութիւն, բայց ոչ թէ քմահաճութիւն և ցնորամտութիւն։ Ժպիտն ու փաղաքշանքը նպաստում են հայրական իշխանութեանը դաստիարակութեան գործում։ Ես աւելի հեռուն եմ գնում. անկարգութեան համար մանուկներին պատժելիս անգամ, հայրը պէտք է զգացնել տայ նրանց իւր տրրտմութիւնը։ Ցաւալի է եթէ այդ դիպուածում ինքը չի տանջւում։ Այն ժամանակ նշանակում է պատիժը սրտանց է եղել և ոչ թէ սիրալիր դաստիարակչական միջոց։ Մանուկները միտն են պահում այս, և փոքր առ փոքր ընտելանում են միայն համբերելուն և ոչ թէ ուղղուելուն։ Հօր երեսին արտայայտուած տրտմութիւնը, երբ նա պատժում է, արդէն իւր հայեացքով կարող է մանուկներին ուղիղ ճանապարհը դարձնել։

Հայր լինելը՝ գժուար առաքելական ծառայութիւն է, առ որն ոչ ամենեքեան ի բնէ հակումն ունին։ Ճանաչում եմ ես մի քանի հայրեր, որոնք չը գիտեմ իրենց բնաւորութեան թուլութեամբ է, թէ անմտութեամբ, մանուկներին բոլորովին մօրն են յանձնում և ապա պահանջում նրանից խիստ պատասխանատուութիւն։ Ողորմելի է այս եղանակը. չէ՞ որ միայնակ մայրը չի կարող կրթել. հայրական աչքը անդադար պէտք է հսկէ մանուկներին։ Հայրը մանուկներին իւր գլխից հեռացնելով, միայն ժամանակը չէ կորցնում։ Լաւ դաստիարակուած որդին անհամեմատ առաւել լաւ է, քան տարեկան եկամտի աւելանալը տասը, քսան, յիսուն հազար մանէթով։ Դաստիարակութիւնն անհատնելի գանձ է և տալիս է հազարին՝ հազար։ Այս անհասկանալի է այն ընտանեաց հայրերի համար, որոնք այն աստիճան

գրաւում են զաւակներին օրինաւոր ժառանգութիւն թողնելու մտքով, որ նոյն իսկ զաւակներին թողնում են առանց դաստիարակութեան։ Տգիտութիւնն ամեն տեսակ պարտքերից առաւել վատ է։ Դաստիարակութիւնը պակասեցնում է պարտքերը, տգիտութիւնն աւելացնում։ Դաստիարակուած աղքատը կարող է աշխատանքով հարստանալ, տգէտ հարուստը վաղ թէ ուշ աղքատութեան մէջ կընկնի։

Նկարագրելով հօր դերը, մի քանի խօսք էլ կասեմ մօր դերի մասին։

4) Ի՞ՆՉ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԻՐՄՈՎ ՄԱՅՐԸ։

«Մենք, կանայքս, ապրում ենք միայն սրտով, այն... բայց մեզ համար սէրը՝ խաղալիկ չէ... լոկ ազատ ժամերի զուարճութիւն չէ մեր զբաղմունքներից յետոյ»։ Այս խօսքերով Մասսիմօ դ'Ազէլիօն Լաւգոմիայի շրթունքներով արտայայտում է նրա սէրը Լամբէրտի հետ („Nicoló de Lapi" հեղինակ. մէջ) և այս խօսքերով նկարագրուած է կինը։ Նա ամբողջապէս սրտումն է. սրտին է ենթարկուած մնացեալ բոլորը։ Նա սաւառնում է դէպի սէրը մինչ տանջանքներն անգամ։ Ես երբէք չեմ մոռանալ մի գեղեցիկ կնոջ խօսքերը, որ ասաց ինձ ազնիւ գրգռման րոպէին. «Նրա համար էլ ես զայրանում եմ, որ կանցնին այս իմ սիրելի տանջանքները, այն ժամանակ չէ՞ որ ես կը մնամ առանց իմ հաւատարիմ ընկերուհիների։ Կինը չի ապրում առանց սիրոյ, մինչև անգամ նրա ատելութիւնն էլ ծագում է սիրուց։

Սրտի այս գերակշռութիւնը երգիծաբաններից ոմանք ծաղրի առարկայ են դարձնում։ «Իսկ ինչ ինձ է վերաբերում, ասում է մի կին *), ապա ես փառք եմ տալիս Աս-

*) Ellis. Educazione del cuore, Cap. II, pag. 25.

տրծուն, որ մարդկային ազգի կէսը այսպէս լաւ է ստեղծել. քանի՞ որ երկրիս վրայ կը կարօտին մխիթարութեան և ցաւերի թեթևութեան, անպատճառ կինը կը լինի մարդու մխիթարողը և նրա վշտերի ամոքողը»։

Ապա ուրեմն սիրտը մի գանձ է, որ մայրը գանձում է յօգուտ ընտանեաց դաստիարակութեան։ Ո՛ւր հայրը չի կարող հասնել, մայրը միջոց կը գտնի։ Եթէ հայրն իւր բանականութեամբ միայն սահմանում է պարտաւորութիւնների շրջանը, մայրը պէտք է, այսպէս ասել, բռնի մանկան ձեռքից, ղեկավարէ նրան, բանայ նրա աչերն ու զգացմունքները և առիթ տայ սիրելու այդ պարտաւորութիւնները։ Մանուկին անպատճառ հարկաւոր է ընտանեաց մէջ առանձին հովանաւորող։ Բայց առաւել լաւ ո՞ւմ մօտ կը պատսպարուի, եթէ ոչ նրա՝ որ տուել է նրան կեանք և սնուցել նրան։ Մայրական գորովը, որ շռայլում է կարծես աննպատակ, զօրացնում է այն, ինչի վրայ զուր ջախջախում է սառն դատողութիւնը։ Երբեմն իմաստութիւնը խորհուրդ է տալիս թմրեցնել զգացումները, որպէս զի յաղթանակ շնորհէր բանականութեան։ Բանաստեղծն ասել է, որ ճշմարտութիւնը, գեղեցիկ հագուստի մէջ պատուաւոր է, իւր չքնաղութեամբ համոզեց ամենաքարասրտներին անգամ»։

«Աւելորդ է շատ փիլիսոփայութիւն անել, ասում է Ժանէն, այն միջոցների մասին, թէ ինչպէս առաւել յարմար կը լինէր կազմակերպել մարդուն։ Թող կեղծ ստոյիկեան դիմակի տակ վտանգի չենթարկենք գեղեցկի այն զուգադրութիւնը, ուր մասնակցում են ոչ միայն առողջ դատողութիւնը, այլ և զգացումները, սովորութիւնը, նմանողութիւնը և ի վերջոյ այն ազնիւ ոյժերը, որոնցով խելօք մայրն ազդում է մեղրամոմի պէս կուսական և կակուղ ոգուն»։

5) ՏՈԿՈՒՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ։

Այժմ առաւել հեռու գնանք։ Դաստիարակութիւնը հեշտ գործ չէ, և չի սահմանափակւում ամիսներով, տարիներով անգամ։ Նշանակում է, պահանջւում է տոկունութեան և համբերութեան անհուն պաշար, մանաւանդ սիրտը կրթելիս, որը, տիկին Էլլիզի ասելուն պէս, արժէ առ նուազն, այնքան տոկունութեան և համբերութեան, որքան և խելքի կրթութիւնը։ Նայեցէք բնութեանը. նա ամեն բանում խստութեամբ հետևում է երկրաչափական ճիշդ կարգին, ինչպէս մկնկային թելիկների կազմակերպութեան, նոյնպէս և շոգ երկիրների արմաւենու հսկայական զարգացման միջոցին։

Ծնողներն, երկուսը միասին, պէտք է տոկուն համբերութիւն ունենան, և ոչ միայնակ մայրը, որ շատ կը ցանկայէին մի քանի չափազանց զգածու մանկավարժներ։ Յիրաւի, համբերութեան մեծ պաշար է հարկաւոր մօրը մանկան կեանքի առաջին տարիներում, երբ նա նոյն իսկ բաղդի բերմամբ առաւել մօտ է գտնւում նրան և առիթ ունի որսալու բնազդաբար զարգացող հոգու ամենամանրակրկիտ շարժումները։ Ջուր տեղը չէ բնութիւնը վարձատրել կնոջը համբերութեան, անձնուիրութեան ամենափոքր մանրամասնութեանց դիտողութեամբ և լիակատար նախապզուշութեան երջանիկ ընդունակութեամբ։ Բայց մանկան պահպանութիւնը հօր կողմից պակաս համբերութիւն չէ պահանջում։ Դեռ այդ բաւական չէ, եթէ հայրը այստեղ ու այնտեղ ձայնը կը բարձրացնի։ Խելօք մարդու աչքին շատ ողորմելի են թւում այն ընտանեաց հայրերը, որոնք սիրում են ամեն մի հասարակ դատարկ բանի համար մանուկների գլխին երկար և տաղտկալի քարոզներ կարդալ, երևակայելով, որ ահա հէնց իսկոյն մանուկները կը մոռանան նրանց ասածը։

Այդպիսի եղանակով դիւրութեամբ կարելի է մանուկներին բթացնել և նրանցում խորամանկութիւն զարգացնել, որովհետև նրանք աջ ու ձախ կը նայեն միշտ, և շարունակ անորոշ դրութեան մէջ կը լինին։ Այսպիսով նրանց մէջ կը զարգանայ ստելու և շողոքորթելու սովորութիւնը, և այդպիսով բնաւորութիւնը կը սկսի այլանդակուիլ դեռ իւր բողբոջի մէջ։

6) ԱՄՓՈՓՈՒՄՆ։

Ամփոփ գաղափար տալով որքան հնար էր այն միջոցների մասին, որոնցով պիտի օգտուին դաստիարակութեան գործում հայրն ու մայրը, կարելի է այն առաքինութիւնների համառօտ նկարագիրն անել, որ պէտք է ձեռն բերել և այն ախտերի մասին խորհրդածել, որոնց դէմ պէտք է մաքառել, որ հնար ունենայինք մանուկների բնաւորութիւնը կազմակերպել։ Ես բարոյականութեան մանրամասն վարդապետութեան մասին չեմ խօսիլ, այլ կը բաւականանամ պարզապէս մատնանիշ անելով այն առաքինութիւններն ու ախտերը, որոնք անմիջապէս վերաբերում են ընտրածս նիւթին։

ԳԼՈՒԽ Բ.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքացիական առաքինութիւնները եթէ չեն արմատանում և չեն հիմնւում մասնաւոր և ընտանեկան առաքինութիւնների վրայ, դառնում են թատերական բեմի առաքինութիւններ: Ո՛վ անկեղծ սէր չունի դէպ՝ իւր հարազատ զաւակը, նա զուր է երազում առ մարդկութիւնն ունեցած սիրոյ մասին:

Ժիլ Սիմոն:

Մանկան հոգին ու մարմինը սկսում են դաստիարակուիլ նոյն իսկ ծննդեան օրից սկսած: Դժուար է ուղղել գործը, եթէ արդէն ծծուած է վատ կաթը վատ վարքի հետ միասին: Զ. Բուլէօ:

1) ԲՆԱԿԱՆ ՀԱԿՈՒՄՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ:

Ծնողաց առաջին հոգսը պէտք է լինի մանկանց բընական հակումների հետաքննին ուսումնասիրութիւնը: Մայրը իւր սրբազան պարտաւորութիւնը պէտք է համարի ուսումնասիրել այդ հակումները մանկան առաջին տարիներում, վասն զի նա առաւել միջոց ունի ըմբռնել դրանց՝ դիտելով մանուկների անգիտակցական զարգացումը խաղերի միջոցին: Նա միայն կը բարելաւի իւր ապագան, ով ժամա-

նակին այն հաստատ ճանապարհին կը կանգնի, ուր կոչում է նրան բնութիւնը։ «Ուսուցմամբ, տիկին Էլլիզի ասելով, անկարելի է բնական հակումների պակասութեան առաջն առնել, մինչդեռ երբեմն ամենաչնչին նեցուկը բաւական կը լինէր, որ անհատը կանգնէր ճշմարիտ ճանապարհին, իսկ այնուհետև ինքն առաջ կերթայ մի աստիճանից միւսը, վերջապէս այն կատարելութեան կը հասնի, որպիսին անհնարին կը լինէր այլ տեսակ բնական հակումներ ունեցող մարդու համար» *)։

Աւաղ այն ծնողներին, որոնք բռնութեամբ տնօրինում են իրենց զաւակների վիճակը, զոհելով նրանց ապագան կեղծ ընտանեկան փառասիրութեան, անձնական շահերին, կրքերին, քմահաճութեանց։ Թող նրանք երկնչին իրենց զաւակների արհամարհանքից, մարդոց նախատինքից և Աստուծոյ արդար դատաստանից։

Աստուած միայն գիտէ, թէ քանի հանճարներ ոչընչացել են լոկ միայն այն պատճառաւ, որ ծնողներն իրենց անհոգութեամբ չեն ցոյց տուել որդուց այն ճանապարհը, որը նոյն իսկ բնութիւնը մատնանիշ է անում իւրաքանչիւր մարդուն։ Դիւրին է ասել, թէ անյողդողդ կամքն ամեն ինչ կանէ։ Բնութիւնը միշտ իւրն է պահանջում. այս պատճառաւ առողջ բանականութիւնը ստիպում է արգելք չը լինել բնութեան ընթացքին, այլ աջակցել նրան կատարելագործելով։ Նոյն ինքն Սմայլսը, կամքի ոյժի այս անվեհեր ախոյեանը, ստիպուած է խոստովանել, որ առանց մտքի և սրտի բնական շնորհների, ամենալաւ ուղղութիւն ստացած աշխատանաց ջանքերն անգամ չեն կարող արտադրել Զէքսպիր, Դանտէ, Նիւտոն, Միքէլ-Անջէլօ, Բէէտհովէն։

Իբրև օրինակելի հայր, որ գիտէ դիտել և գնահատել

*) Oper. cit. cap. II.

մանուկների ընդունակութիւնները, հանդիսանում է Ուատտի հայրը։ Կենսագիրների ասելով, Յակոբ Ուատտը ի մանկութենէ սիրում էր զանազան հաշիւներ ու նկարներ անել մատիտով թղթի վրայ կամ կաւիճով յատակի վրայ, առանձին սէր ցոյց տալով դէպ՝ երկրաչափութիւնը։ Մի անգամ նրանց տուն հիւր եկաւ նրա հօր բարեկամը և նկատելով որ փոքրիկ Ուատտը ինչ որ խզբզում է վառարանի վրայ, ասաց. «Ինչու սրան ուսումնարան չէք տալիս, որ այստեղ դատարկ բաներով է զբաղւում»։ «Բան չը կայ, ապա նայեցէք թէ ինչ է անում», պատասխանեց հայրը։ Իրօք, մանուկը, որ դեռ վեցերորդ տարումն էր, զուր տեղը չէր զբաղուած երկրաչափական խնդիրներ լուծելով։ Միւս անգամ նրա հօրաքոյրը, հիւր գալով նրանց տուն, յանդիմանեց երեխային նրա անգործութեան համար։ «Ես դեռ չեմ տեսել այսպիսի անգործ։ Ա՛ռ գիրքդ և կարդա։ Ամբողջ ժամ է, որ ոչ ոքի հետ ոչ մի խօսք չի խօսացել. հէնց միայն կը բարձրացնի կաթսայի խուփը, և գոլորշիի վրայ կը բռնի կամ թասը կամ գդալը։ Տես, տես. քէֆը գալիս է, ինչպէս այնտեղից կաթիլները մէկ մէկ կաթկաթում են։ Ամօթ չէ՞ ժամանակ կորցնել այդպիսի դատարկ բաների վրայ»։ Պարզամիտ կինն ինքն էլ չը գիտէր, թէ ինչ էր ասում։ Կաթսայի վրայ խաղացող մանուկ—Ուատտը վերջը դարձաւ շոգեշարժ մեքենայի հնարողը։ Ծնողները նրան ազատութիւն էին տալիս, նշմարելով նրանում հանճար, որ աճում և զարգանում էր ինքն իրան։

2) ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Այժմ համախմբենք այն գլխաւոր առաքինութիւնները, որ պիտի ներշնչեն ծնողները մանուկներին՝ բնաւորութիւնը կազմակերպելիս։ Իմ սեպուհ պարտաւորութիւնս եմ համարում նկատել, որ չեմ հետևում նորաձևութեան և

կրկնում եմ. „initium sapientiæ timor Domini“. (Սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեառն)։ Կրօնը՝ քաղաքակրթեալ հասարակութեան հիմքն է, անհաւատութիւնը՝ քայքայման տարր։ Կրօն չը դաւանող ազգը արմատով փչացած է և բնաւորութեան տէր մարդոց պակասութեան փոքր պատճառ չէ նա և անաստուածութիւնն ու կրօնական անտարբերութիւնը։

Ապա ուրեմն ուսուցէք մանուկներին ազատ և համարձակօրէն դաւանել իրենց հաւատը, բացարձակապէս պաշտպանել այն՝ խօսքով և գործով և արհամարհել նրանց, որոնք անամօթ անպարկեշտութեամբ են վերաբերւում դէպի նա։ Կրօնական անխտրութիւնը բնաւորութեան ոյժի կերպարանք ունի, բայց իրօք որքան որ նա փոքրոգութեան նշան է, նոյնքան և սնափառութեան։ Ի զուր տկար մարդը Աստուծոյ դէմ կերթայ, բարձի թողի առնելով պատմական փաստերը։ Յիսուս Քրիստոս, բաց յայնմանէ, որ Աստուած է և ընդ նմին և մարդ այնպիսի կատարեալ բնաւորութեամբ, որպիսին միայն հնարաւոր է երկրիս վրայ, այս բանն ապացուցեց իւր տաժանելի չարչարանքով և խաչելութեամբ, օրինակ տալով մարդոց, թէ ինչպէս պէտք է պաշտպանել ճշմարտութիւնը։

Նոյնպէս զգուշացէք շփոթելու կրօնասիրութիւնը կեղծ—բարեպաշտութեան՝ այս մի առանձին տեսակ անհաւատութեան հետ։ Կեղծ բարեպաշտութիւնն ու անաստուածութիւնը տարբեր միջոցներով մի նպատակի են ձգտում և միմիայն քայքայում կրօնը։ Փարիսեցին փայտէ գլուխ ունի և քարէ սիրտ։ Աստծուն նա պատկերացնում է իւր հասկացողութեամբ։ Այդ այն Աստուածն ու այն կրօնը չէ, որոյ առաջ սովորեցնում էք ձեր զաւակներին ծունր խոնարհիլ։

Մանուկներին ուսուցէք միշտ ճշմարիտը խօսել, և ինքեանքդ սկսեցէք տալ նրանց առաջին օրինակը։ Իրօք

այդպէս չէ լինում։ Մանուկների պարզամիտ հարցերին պատասխանում են կցկտուր, կամ անհեռատես երկմտութեամբ։ Կարծում են թէ խաբելով կ'ազատուին, բայց հակառակն է դուրս գալիս։ Մանկան գլուխը դատարկութիւն է զգում, նրա սիրտն է մտնում կասկածը, խեղաթիւրում է խիղճը։ Մարդկային բնութեան առաւել խորունկ ուսումնասիրութիւնը կը համոզէր ծնողներին, որ հարկաւոր է մանուկներին միշտ ճշմարիտն ասել։ Մի զլանաք գովելու և վարձատրելու, երբ որ մանուկները ճշմարտութիւն են խօսում, նա՛ մանաւանդ երբ իրանք խոստովանում են իրենց գործած սխալները։

Կշտամբեցէք նրանց, և երբ հարկն է, օրինաւոր կերպով պատժեցէք, հէնց որ միայն նրանք կսկսեն ստել կամ դիտմամբ յեղաշրջել ճշմարտութիւնը։ Այդպէս վարուելով, մանուկը կը սովորի խօսել ճշմարտութիւնը, որ բնաւորութեան հիմքն է կազմում։ Ջանացէք ներշնչելու նրանց պատուոյ զգացմունք, իսկ այս բանի համար ինքեանքդ երբէք մի՛ շեղուէք ձեր խոստմունքներից և ազնիւ խօսքից։ Ուսուցէք նրանց մտածելով և խելացի խօսել, և իրենց կարծիքի վրայ հաստատ մնալ, և ո՛չ թէ պտոյտներ անել լարախաղացի նման։ Եւ սրա առաջին օրինակը դուք տուէք։ Մի՛ լինիք առատ խոստմունքներ անելիս, բայց մի՛ անգամ խոստանալով, աշխատեցէք հաւատարիմ մնալ։ Ընտանեկան կեանքում սովորաբար այդպէս չէ լինում, և մանուկները, ծնողաց օրինակին հետևելով, սովորում են դրժել խոստմանը և բանի տեղ չը դնել պատիւը։

Մանուկներին պարապ մի պահէք, ըստ հին առածի թէ՝ պարապութիւնն է մայր ամենայն չարեաց։ Զբաղեցրէք նրանց ազատ ժամերին որ և է բանով թէ տանը և թէ ուսումնարանում։ Եւ եթէ կուզէք լսել իմ խորհուրդը՝ զբաղեցրէք նրանց ազատ ժամերին մարմնամարզական վարժութիւններով։ Մանտէգացցան ապացուցանում է, որ

մարմնամարզութիւնը մանուկների համար ամենընտիր ֆիզիքական և բարոյական դեղն է, առողջութեան համար աղ ու հաց, և մեծ արդեամբ հեռացնում է առնականութեան ժամանակամիջոցը, դիւթական զօրութեամբ փարատելով նեարդային յայտնի յուզմունքների մառախուղը, որոնք մթնացնում են կեանքի առաջին գարնան հիանալի հորիզօնը։ Դօքտօր Զրէբէրը *) ցոյց կը տայ ձեզ մարմնամարզութեան համապատասխան եղանակները թէ տանը և թէ ուսումնարանում։ Այս մասին մենք առաւել մանրամասն կը խօսենք մի այլ տեղում։

Թող մանուկները սովորեն, նայելով ձեզ, չափաւորութիւն բաների, շարժուածների, հագուստի. չափաւորութիւնը՝ ամենասուրբ առաքինութիւնն է մասնաւոր և հասարակաց կեանքի մէջ։ Թող չափաւորութիւն պահպանեն ուտելում և խմելում, որպէս զի չընտելանան համադամ կերակուրներին և որկրամոլութեանն։ Ժուժկալութիւնը կազդուրում է մարմինը, ազատելով առողջութեան ամենավտանգաւոր ախտից՝ որկրամոլութիւնից։ Ընդ սմին ի նկատի ունեցէք բացի ֆիզիքականից, նա և բարոյական օգուտը. այս պատճառաւ այնպէս կարգաւորեցէք գործը, որ մանուկներն ընտելանային որ և է բանից զրկելու իրենց, որպէս զի աղքատին բաժին հանեն։ Այնուհետև դուք երկու բարիք արած կը լինիք. կընտելացնէք մանուկներին ժուժկալութեան և կը սերմանէք նրանց մէջ սիրոյ սուրբ զգացմունք դէպի տառապեալները։

Զարթեցրէք մանկանց մէջ անչաղթելի արհամարհանք

---

*) Դօքտօր Զրէբէրի „Տնային մարմնամարզութիւնը“, թարգմանութեամբ հանգուցեալ Գաբրիէլ արքեպիսկոպոս Այվազեանի տպագրուած է Նոր-Նախիջևանում 1877 թ. իսկ նրա երկրորդ լրացրած տպագրութիւնը հրատարակել է Ներսէս Սիմէոնեանը Թիֆլիզում 1881 թ. գ. 40 կ.

դէպի շողոքորթութիւնն ու բամբասանքը։ Նախ և առաջ մի թոյլ տաք նրանց շողոքորթելու ձեզ, իբր թէ յայտնում են իրենց ձևական քնքշութիւններն ու փայփայանքը։ Այս բանը շատ յաճախ դուր է գալիս ծնողներին, մանաւանդ մայրերին։ Այսօր նրանք ձեզ են շողոքորթում, վաղը ուրիշներին, որպէս զի արժանանան այն բանին, որ նոյն իսկ իրենց սեպհական կարծիքով, անարժան են։ Մի թոյլ տաք նրանց վէճեր յարուցանելու եղբայրների, քոյրերի և առ հասարակ տնեցւոց հետ։ Ամենևին մի թոյլ տաք գալ ձեզ մօտ գանգատուելով եղբայրների, քոյրերի կամ ընկերների վրայ, ինչպէս այս սովորաբար պատահում է, ողջ միս է, իրօք նրանք անպատուած են թէ ոչ. այսպէս՝ կարող է զարգանալ քսութեան խորշելի սովորութիւնը։

Ընտելացրէք մանուկներին խնայողութեան։ Աշխատանքն ու խնայողութիւնը կազմում են հարստութեան և բարոյականութեան աղբիւրը։ Մի թոյլ տաք վատնելու քաղցրաւէնիների կամ որ և է դատարկ չնչին բաների վրայ մանր դրամները, որոնք հաւաքւում են տօների պարգևներից. կարգեցէք տանը փոքրիկ դրամարկղներ և ինքեանքդ եղէք նոյնպէս պարտաճանաչ խնայողը։ Երբ տարուայ վերջը մանուկներն ակներև կը տեսնեն խնայողութեան արդիւնքը և սոկոսի աճումը, այն ժամանակ նրանք կիւրացնեն հեռատեսութիւնը, այս առաքինութեանց առաքինութիւնը, և միանգամայն աղքատութեան և յանցանքների խարազանը։

Ընտելացրէք մանուկներին վայելուչ պահել իրանց և հանդերձների ու մարմնի մաքրութիւն պահպանել։ Արտաքին կարգապահութիւնը վկայում է ներքինի մասին։ Ձքեղութիւնն ու պճնասիրութիւնը պակասութիւններ են, բայց վայելչականութիւնը՝ հազուագիւտ յատկութիւն։

Երկնչելով ձանձրացնելու ընթերցողին, մենք չենք դառնալ բազմաթիւ ընտիր յատկութիւնների քննութեանը,

թողնելով այդ հոգատար ծնողների առողջ դատողութեանն ու բարեխոհութեան։

3) ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԿՇՌՈՂ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Չեմ կարող չը նկատել այն հանգամանքը, որ մի քանի ծնողներ, մանաւանդ մայրեր, ինքեանք անգիտակցաբար մնասում են մանկանց դաստիարակութեանն իրենց սովորութեամբ չափազանց բաց սիրտ լինելով նրանց հետ։ Այս ոչ թէ որ և է օգուտ չունի, այլ և մնասում է բնաւորութեան լրջութեանը։ Կանանց բնական պակասութիւններից մէկն էլ՝ չափազանց շատախօսութիւնն է։ Ըստ իւր սովորական թուլութեան, կինը մեծ մասամբ ապրում է արտաքին աշխարհով և խօսում է անդադար, ուշադրութիւն չը դարձնելով հետևանքների մասին։ Առաւել վատ եթէ նա հոգւով բոլորովին բարի չէ, սիրում է ամենին դատափետել, ժլատ է այլոց մասին լաւ կարծիք յայտնելիս և ենթակայ է համակրական և հակակրական ազդեցութիւններին։ Մանուկներն իրենց բնածին նմանողութեամբ կը փոխարինեն այդ։ Ո՞վ կը յանդգնի նրանց համոզել, որ վատ են անում, որ իրենց համար օրինակ են առնում իրենց մօրը։ Բայց ժամանակով հասակն առնելով, սրանք ամենաանտանելի մարդիկ կը լինին։

Երկրորդ թերութիւնը՝ մանուկներին ամենուրեք իրենց հետ տանելու սովորութիւնն է։ Ըստ երևութին, այս չնչին բան է, բայց իրօք մեծ ուշադրութեան արժանի։ Մանուկներին սկսում է դուր գալ աղմկալից կեանքը և նրանք ուրախ են տնից փախչելու։ Նիկոլայ Ցօմմազէօ հանճարեղ և մանրաքննին մանկավարժը, նկատեց այս թերութիւնը և խստիւ դատապարտեց։ Ի՞նչ կարիք կայ առաւօտ երեկոյ մանուկներին իրենց հետ քաղաք տանել, որ տես-

նեն թէ այնտեղ ինչ են անում։ Եթէ նրանք առողջապահական բոլոր պայմաններն ունին, այնուհետև մնում է միայն զարգացնել նրանցում սէր՝ դէպի ընտանեկան յարկը և տանը նստելու և մի որ և է գործով զբաղուելու սովորութիւնը։

Պակաս դատապարտելի չէ նա և ծնողաց անշնորհ վարմունքը, երբ նրանք նոյն իսկ մանկանց առաջ պարծենում են նրանց վայելչատեսութեամբ, ճարպիկութեամբ, յայտնի, վաղահաս տաղանդներով ու ձիրքերով և այլն։ Այդպիսի ծնողները, Տօմմազէօյի ասելով, անթիւ ու անհամար վնաս են հասցնում դաստիարակութեան նպատակներին. մանուկներն սկսում են իրենց վրայ մեծ համարումն ունենալ, խրոխտալ ընկերների առաջ, որ ի վերջոյ պէտք է պարծենկոտութեան և գոռոզութեան փոխուի։

Ամփոփելով ասածներս, կաւելացնեմ, որ մեծ յանդիմանութեան արժանի են այն մայրերը, որոնք չեն աջակցում հօրը մանուկների հետ լուրջ վարուելիս։ Ընտանեկան շրջանում բազմիցս պատահում է, որ մայրը իւր թոյլ բնաւորութեամբ զիջանում է մանուկների արտասուացը և սկըսում նրանց փայփայել և պաշտպանել՝ մինչդեռ նրանք իրօք արժանի էին պատժի. և այս պատճառաւ, մօր շնորհիւ, թուլանում է մանուկների մէջ առ հայրն ունեցած յարգանաց զգացմունքը։ Ահ՛ որ ընտանիքումն է դրւում հեղինակութիւն յարգելու հիմունքը. և եթէ մանուկներն ընտելանան լսել ծնողներին, այնուհետև նրանք լաւ նախապատրաստուած կը լինին յարգելու դպրոցի և օրէնքի հեղինակութիւնը։

Մանրատեսակ Պողոսեան
Սերեբրեանց
Ազարան

ԳԼՈՒԽ Գ.

ԴԱՐՁԵԱԼ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ամենայն երկչոտութիւն՝ ստրկութիւն է։
Իպսէնեան ասած։

Աշխարհս իւր կոչումն է համարում ճնշել և արմատախիլ անել եռանդը։ Ընտանեկան յարկն ու ըստ կարելւոյն դպրոցը պէտք է հակառակը գործեն։ Միով բանիւ, դաստիարակութիւնն առ հասարակ պէտք է առաւել յառաջ մղէր, և ոչ թէ ճնշէր եռանդը, ինչպէս սովորաբար լինում է մեզանում։ Էլլիս։

Չէ՛ յաղթանակում, ով չի տանջւում։
Իպսէնեան ասած։

Մանկան համար ամենանշանաւոր շրջանը՝ պատանեկութիւնն է, երբ սկսւում է կազմակերպուիլ նրա անհատականութիւնը և նրա խելքը ձեռն է բերում ինքնագիտակցութիւն։ Ռիբոթ։

1) ԱՆՎԵՀԵՐՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ։

Անվեհերութեանն պէտք է ընտելացնել մանկան գիտակցութեան առաջին նշոյլներից արդէն։ Եւ այս դըժուար չէ, եթէ որ հետևենք նոյն իսկ նրա բնութեան։ Մանուկն ի բնէ համարձակ է և առաջ է ընկնում գլխիցը ձեռք վերցրած։ Նայեցէք նրա վրայ խաղի ժամանակ. նա զուր տեղը չի քաջանում, արգելքները նրա անհասկա-

նալի են. այս ամեն բանից երևում է, թէ կարծես նա իւր իրաւունքներն է ստանձնում։ Ուսումնասիրեցէք մանուկին նրա կեանքի բոլոր պատահական գործողութիւնների և արարքների ժամանակ և կը համոզուիք, որ նա անվեհեր է։ Դաստիարակը պարտաւոր է ի նկատի ունենալ այս բընական հակումը և փոխանակ թուլացնելու՝ զարգացնել և կատարելագործել այդ հակումը։

Բայց այս վերին աստիճանի նշանաւոր հանգամանքի վրայ կարծես թէ չեն դարձնում կարևոր ուշադրութիւն. և ահա ձեռնարկում են բոլոր միջոցները, որ մանուկներին երկչոտ և թուլակամ դարձնեն։ Եռ այս ես կը քննեմ ընտանեկան դաստիարակութեան եղանակի մէջ նկատուած քանի մի թերութիւններ, հրաժարուելով քննութեան առնելու մի առ մի բոլորը՝ գրքոյկիս սղութեան պատճառաւ։

2) ԱՆՄԻՏ ԽՍՏՈՒԹԻՒՆԻՑ ՑԱՌԱՋԱՑԱԾ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Մանուկներին դաստիարակելիս, սովորաբար օգտակար են համարում դիմել կոպիտ, խիստ և ահարկու միջոցների։ Այս սխալանքներից էլ վատ է, այս յանցանք է։ Ծեծն ու կշտամբանքը, նա մանաւանդ անտեղի և ի սրտէ արուած, ուղղելու փոխանակ, միայն ճնշում են մանկան բընական վստահութիւնը։ Նայեցէք մանկան վրայ այն րոպէին, երբ նրա հետ անարդար վարուեցան։ Դէմքը գունատուում է, ձեռքերը չը գիտեն ինչ անեն, ծնկները ծալուում են, աչքերը փայլփլում, երբեմն հանդարտուում, արիւնով լցուում և արցունքները կաթիլ կաթիլ հոսում գունատ այտերից. նա չէ խօսում, կարծես քարացել է և մինչև անգամ չէ համարձակուում հեկեկալ։ Նրա հոգին յուզուած է անսովոր երկիւղից. նա զգաց մարդոց անարդարութիւնն ու խստասրտութիւնը։ Անհաւատարմութեան սերմը ըստ ամենայնի ընկնում է այդպիսի մանկան սրտում։ Տէր մի՛ արասցէ, թէ խստասիրտ վարուողութիւնից նա

ընկճուի. նա կորաւ անդառնալի։ Ահա այս պատճառաւ Ֆենելօնն աղաչում է դաստիարակներին. «Երբէք, առանց ծայրայեղ անհրաժեշտութեան, մի՛ ցոյց տաք բարկացկոտ դէմքի շարժումն մանուկներին վախեցնելու համար։ Դուք կը փակէք նրանց սիրտը և արմատախիլ կանէք բացսրտութիւնն ու անկեղծութիւնը, առանց որոյ ո՛ր և է օրինաւոր արդիւնք մի՛ սպասէք դաստիարակութիւնից» *)։ Մանկավարժութիւնը մեզանում թէ և դեռ մանուկ դրութեան մէջն է, այնուամենայնիւ նա ուսուցանում է մեզ առաւել խորը ուսումնասիրել մանկան հոգու զարգացման օրէնքները։ Այդ գիտութեան շնորհիւ իմանում ենք, որ մանուկներին զարհուրեցնելը, մանկական յանցանքները սրտին առնելը, ծեծը՝ աններելի յանցանքներ են. հէնց այս պատճառաւ մենք անընդունակ ենք դառնում մանուկներ դաստիարակելու և նրանց ուղղակի վնաս ենք հասցնում։ Առ այս, Ֆենելօնն աւելացնում է. «Թէկուզ էլ դուք ստիպէիք մանուկներին խիստ միջոցներով ճշդութեամբ կատարել տալու ձեր բոլոր կանոնները, բայց և այնպէս դեռ էլի նպատակին չէք հասնիլ։ Կը սկսուեն միայն լարուած յարաբերութիւններ, երեսպաշտութիւն և ուրիշ ոչինչ։ Դուք խեղդելով մանկան վստահութիւնը, կը խլէք նրանից ամեն տեսակ սէր առ բարին»։ Նպատակայարմար դաստիարակութեամբ, կասեմ Հ. Բալբօ-ի հետ միասին, ախտերը ոչնչանում են ատելութեան զգացմունքով, իսկ առաքինութիւնները ներշնչւում օրինակով»։

Երբեմն հարկ է լինում յարմար միջոցի սպասել, իսկ առ ժամանակ չը տեսնելու տալ մանկանց յանցանքները։ Անկարելի է մանուկներին բարկանալով ուղղել։ Եթէ դուք, ինքներդ յուզուելով, հանդարտեցնում էք նրանց, ապա նրանց կը թուի, որ դուք ի զուր և սրտանց էք գործում.

---

*) De l'éducation des filles.

սրանով դուք կորցնում էք հեղինակութիւնը։ Եթէ հանդարտեցնում էք նրանց, երբ նրանք յուզուած դրութեան մէջ են գտնուում, այն ժամանակ նրանք անկարող կը լինին խուսափիլ յանցանքից և ուղղուիլ։ Մանուկների համար առաւել է պահանջուում սառնասրտութիւն, քան թէ հասակաւորների։ Հմուտ դաստիարակը կամ դաստիարակչուհին պէտք է առաջ տանի մանուկներին այնպիսի շնորհով, որ նրանք ոչ միայն բացարձակ խոստովանէին իրենց յանցանքը, այլ մինչև անգամ ինքեանք խնդրէին մեծերին ցոյց տալու իրենց պակասութիւնները, լաւանալու ցանկութիւն յայտնելով։ Համաձայն եմ, որ դիւրութեամբ չի ձեռք բերուում այս, բայց անկարելի բան չը կայ։ Եւ ես, այնուամենայնիւ պնդում եմ, որ անարդար և խիստ վարուղութիւնը ճնշում է մանուկներին և ոչ թէ նրանց անվեհերութիւն ներշնչում։

3) ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՎԱՐԺԱՐԱՆ։

Բայց ես չեմ ասում, որ անվեհերութիւնը յաջորդական ներողամտութեամբ պէտք է ներշնչուէր։ Այս դիպուածում տեղի ունեցած ծայրայեղութեանց հետևանքները ես արդէն թուել եմ. կրկնելն աւելորդ է։ Այժմ պէտք է ուշք դարձնել զրկանաց վարժարանի վրայ, որն առաւել լաւ է անվեհերութիւն կրթում, եթէ խելացի կերպով է առաջ տարուում։ Ոսկին մաքրուում է կրակով, մարդկային հոգին կարգի է բերուում մարտութեամբ։ Եթէ մանուկը յաւիտեանս մնալու լինէր մօր գրկում, յաւիտեանս նստէր տանը փակուած, այնուհետև ցաւալի կը լինէր նրան վշտացնելն անգամ, հակառակելով երբեմն նրա ցանկութեանց։ Բայց չէ՞ որ իրօք անպատճառ հարկ կը լինի տնային խանձարուրից անցնելու մարդկային հասարակութեան ահռելի անտառները, որտեղ պէտք կը լինի պաշտպանել իւր իրաւունքները տոկուն և անվեհեր ոգուով։ Ցաւալի է, եթէ

մարդս մանկութիւնից չի սովորել կրելու չարչարանքներ, և արիութեամբ մաքառելու արգելքների դէմ։ Բաղդի հարուածներից ոգևորութիւնը կորցնելով, հետզհետէ նա կամ մաղձոտ մարդատեաց կը դառնայ, կամ անձնատուր կը լինի կատարեալ յուսահատութեան։ Ես չեմ երկնչում գովաբանելու բարին այնտեղ, ուր որ նա գտնւում է։ Եւ մի լաւ կողմն եմ գտնում չիսուսականների մէջ (ճիզուիտներ)։ Ո՛մը յայտնի չէ նրանց առասպելական տոկունութիւնը գոյութեան կուռում։ Եւ այս բոլորը նրանից է, որ նրանք ճարպիկութեամբ կարողացան դէպի մի կէտ նպատակի ուղղել եռանդի այն անհուն պաշարը, որ ի մանկութենէ կուտակուել էր խոչընդոտների վարժարանի շնորհիւ։ Տեղի սղութիւնը չի ներում ինձ առաւել հանգամանօրէն քննելու մանուկներին խոչընդոտների վարժարանի միջոցով կրթելու հնարները, գոյութեան կռուի համար նախապատրաստելու նրանց։

Ծնողներն ու դաստիարակները թող չը մոռանան, որ երբեմն երեխային խաղալիկներից, սիրած քաղցրաւենիքից, նոր հագուստից, գիւղ գնալուց կամ որ և է բաւականութիւնից զրկելով, բաւականին կը նպաստեն նրա բնաւորութեան ամրապնդելուն, որ՝ ի նկատի ունենալով կեանքի մէջ սպասելի բաղդի մեծ փոփոխութիւնները, եթէ միայն այդ միջոցները գործ են դրւում խելացի կերպով, ընդ նմին ոչ ինչ զայրոյթ չը պատճառելով։

4) ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԿԻՒՂՆԵՐ։

Դառնանք մի ուրիշ հարցի, որ որքան նշանաւոր է, նոյնքան էլ բարձի թողի է առնուած, այն է՝ մանկական սկզբնական երկիւղներին։ Ես խօսում եմ անձնական փորձիս վրայ հիմնուած։ Իտալական ընտանիքում մանկան առաջին քայլերը շրջապատուած են հազարաւոր սարսափներով և զարհուրելի երազներով։ Այս ամենը շատ անգամ մայրերի մեղն է լինում, երբեմն ըստ մեծի մասին դայեակների ու

սպասաւորների։ Մեզնից իւրաքանչիւրս այս բանը փորձած կը լինի։ Ես այժմս էլ տհաճութեամբ եմ յիշում, թէ ինչպէս ինձ վախեցնում էին յանկարծական երևոյթներով, մի միայն որ ստիպեն ինձ հանդարտ նստելու։ Հրէշներ, վհուկներ, ուրուականներ, անտառային ու տնային ամեն տեսակ դևեր ու ոգիներ՝ ահա հասարակ ամբոխի այն կրթական միջոցները, որոնց մոլորութեանցը ենթակայ է խեղճ մանուկը։ Լէօպարդիի ասելով. «Այդքան անագնիւ միջոցներ գործ դնող դայեակներն ու աղախիններն իրենց սանիկներին սանձահարելու նպատակով, սաստիկ մեղանչում են հասարակութեան դէմ և յանցաւոր են մարդկային ընկերութեանը պատահող բազմաթիւ եղեռնագործութեանց համար. նրանք կորզում են մանկան սրտից անվեհերութիւնը, որ կազմում է այն բնաւոր ձիրքերից մէկը, որ միայնակ ընդունակ է նուազեցնել կեանքի դժբաղդութիւնները...։ Ցիրաւի, դժբաղդ է երկչոտ մարդը. ամենափոքր իրական վտանգը վրդովում է նրան և շփոթում։ Ապա ուրեմն, նրանք, որ իրենց սանիկներին անվեհերութիւն ներշնչելու փոխարէն, նրանցում երևցող անվեհերութեան ամենափոքր նշոյլներն անգամ արմատախիլ են անում, դառնում են կեանքի մէջ նրանց պատահող ապագայ դժբաղդութեանց ամենագլխաւոր պատճառը» *)։ Յովսէփ Ֆլաւստին իւր մասին հետևեալն է պատմում. «Այն հազարաւոր բարիքներից, որոնց համար երախտապարտ եմ հօրս, չեմ կարող մոռանալ միայն մէկը։ Նա չէր թոյլ տալիս ծառաներին զբաղեցնել ինձ սովորական առասպելներով և անտառային դևերի ու քաջքերի նկարագրութեամբ, որոնք որքան էլ հետաքրքրական են, նոյնքան և մեռցնում են մանուկների մէջ անվեհերութիւնը։ Նա սիրում էր, որ ես ման գալի մութ սենեկում, որ չը խանգարէին ինձ աթոռ-

*) Errori popolari. Cap. VIII.

ների ու սեղանների վրայ մագլցել, որ այդ միջոցին ահարկու ձայներ չարձակէին, որոնցից մանուկն առաւել շուտ կարող է ընկնել։ Նա ուզում էր, որ ես վախկոտ չը լինէի, և ես այնպէս եռանդագին չարութիւններ էի անում, որ կոտրում էի գլուխս, չանկռում էի ձեռքերս, վայր էի ընկնում, բայց չէի լալիս, բարձրանում էի պատերով ու տանիքներով որպէս սկիւռը կամ թռչունը» *)։

Սպարտացիք հասարակաց սեղանի վրայ ընթրելուց յետոյ, երբ իրենց տները պիտի ցրուէին, երիտասարդ թէ ծերունի երբէք լապտերներ չէին վերցնում հետները մութ գիշերներն անգամ, որպէս զի հասակաւորները ձեռն բերէին մթութեան մէջ թշնամուն ճանաչելու ընդունակութիւն, իսկ մանուկներն առ ոչինչ համարէին երկիւղն ու բնական խոչընդոտները։

5) ՕՐԻՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ։

Նախընթաց երկու յօդուածներում առաջ բերած բոլոր կանոնները մեռած տառ կը մնան, եթէ ծնողներն իրենց կրթական գործունէութիւնը չեն ամրապնդիլ ընտիր օրինակներով։ Ըստ իտալական առածին, թէ. «Աբեղան քարոզում էր չը գողանալ, մինչդեռ ինքը գողացած սագը փեշի տակն ունէր»։

Այս առածը դիւրաւ կարելի է յարմարացնել դաստիարակներին։ Ծնողները մանուկների առաջ հանդիսանում են իբրև սկզբնական ակներև օրինակներ, որոնց նմանում են, առանց հաւատիանալու՝ թէ լաւ են նրանք թէ վատ։ Այդպիսով, տիկին Էլլիսի ասելուն պէս, օրինակը բարձրից ցած է իջնում. և այս պատճառաւ էլ մեծ եղբայրների, քոյրերի և ազգականների սովորութիւններն ու ձևերը դիւրութեամբ են իւրացնում մանուկները, ծծի երեխաներից սկսած։ Ամենասուրբ խորհրդների բարոյական ոյժն

*) G. Frassi. Vita di Giuseppe Giusti.

անհետանում է, երբ խօսքին չէ համապատասխանում գործը։ Եթէ, օրինակի համար, հայրը լուրջ դէմքով ստիպում է որդուն դասերը պատրաստել, իսկ ինքը պճնում է պարահանդէս կամ թատրոն գնալու. եթէ նա խորհուրդ է տալիս եղբայրներին կամ ընկերներին սիրել, իսկ ինքն անդադար կռւում է իւր կնոջ հետ. եթէ նա ստիպում է հագնուիլ պարզ, իսկ ինքը զարդարւում է ամենանոր տարազով, եթէ նա պատժում է որդուն անվայել բառերի համար, իսկ իրեն բերանից անպակաս են աններելի սրամտութիւններ, խնամքով ժողովուած կշտամբանքներ և այլ այսպիսի լկտի խօսքեր, ապա որտեղից պէտք է կազմուի քնքոյշ և անմեղ մանկան մէջ բնաւորութիւնը։

Օրինակը թէ և համր, բայց խօսքից առաւել ճարտար վարժարան է։ Սպարտացիք երիտասարդների մէջ ատելութիւն զարթեցնելու համար դէպ՝ արբեցութիւնը, ճեմարան էին բերում արբած ստրուկ։ Սմայլսը զարմանալի պարզութեամբ է նկարագրում օրինակի նշանակութիւնը։ «Մանկութիւնը մի հայելի է, որ ցոլացնում է ապագայում այն առարկաները, որոնք դրւում են նրա առաջ ներկայումս»։ Այն ընտանեաց մանուկներն, ուր թագաւորում է կարգ, բարոյականութիւն, քաղաքավարութիւն, պատուասիրութիւն, հայրենասիրութիւն, կրօն՝ աննկատելի կերպով դառնում են քաղաքավարի, ազնիւ, պատուասէր, հայրենասէր, կրօնասէր։ Մանուկների մէջ նկատող վատ սովորութիւնները սովորաբար լինում են ծնողների վատ օրինակի հասարակ ցոլացումն։ Ձինացիք մի շատ լաւ օրէնք ունին, որով ծնողները պատասխանատու են մանուկների վատ վարքի համար։ Ինչու մենք էլ չը փոխառնենք այդ օրէնքը։ Աւարտելով մեր խօսքը հօրն ու մօր պարտաւորութեանց մասին, կարող ենք անցնել այլ տեսակ պարտաւորութիւններին, որոնք վերաբերում են վարժարանին։

ԳԼՈՒԽ Դ.

ՎԱՐԺԱՐԱՆ։

Ազատել մարդուն տգիտութեան լծից՝ ահա դաստիարակութեան նպատակը...։ Բաւական չէ ժողովրդին գրել-կարդալ ուսուցանել. հարկաւոր է նոյնպէս տալ նրան բարոյագիտական և գիտնական գրքեր նրան հասկանալի լեզուով գրուած, որոնք կարող լինէին զարգացնել նրան, որքան այդ կարելի է սպասել գրքից։ Տ. ՀՈՎՀԱՆԷՍ։

1) ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ։

Վարժարանն ընտանիքը հասարակութեան հետ միաւորող օղակն է. նրանումն են հանդիպում և հիւսւում ընտանեաց և պետութեան ազդեցութիւնները։ Ինչ սկսում է տունը, այն շարունակում է վարժարանը. իսկ հասարակութիւնն ու օրէնքները կատարելագործում են նոյնը։ Վարժարանը՝ բնաւորութեան կազմակերպութեան երկրորդ աստիճանն է։ Եթէ նա ի նկատի չունի այս ի թիւս իւր այլ նպատակների, ապա ուրեմն կասկած չը կայ, որ նա չի կարող համապատասխանել օրինաց ձգտումներին և հասարակութեան բաղձանքներին։

Վարժարանի միջոցով գիտութիւնն ամենայն ջանք գործ է դնում ազատուելու իւր մահացու թշնամուց՝ տգիտութիւնից. վերջինս անհամեմատ առաւել ուժեղ է, քան

թէ սովորաբար կարծում են։ «Մենք գիտութիւնը դաւանում ենք ոյժ, բայց նոյնը չենք ասում տգիտութեան մասին. մինչդեռ վերջինս առաւել զօրեղ է եղել աշխարհումս, քան թէ առաջինը» *)։ Տգիտութիւնը բռնած ունի աշխարհս իւր ձեռքում որպէս մի արքայ, և ամեն ինչ տնօրինում է՝ որպէս բռնակալ. նա գինում է մարդասպանի աջը, ներշընչում ամբոխին անիրագործելի ձեռնարկութիւններ, պահպանում դաւազանը բռնակալների ձեռքին, լցնում բանտերը, հալածում առաքինի և իմաստուն մարդոց, օգնում եղեռնագործներին. նա տանջանացն է ենթարկում Գալիլէյին և տաճարներ կառուցանում Պետրոս Արետինացուն **)։

2) ՍՐՏԻ ԿՐԹՈՒԹԻՒՆ։

Բայց որպէս զի վարժարանը կարողանար յաղթել տգիտութեանը, նա պէտք է խելքի զարգացման հետ միասին դաստիարակէ նաև բարոյական ընդունակութիւնները։ Մարդասէր Լամբրուսկինիի ասելով. «Կատարեալ դաստիարակութիւնը պէտք է ներկայացնի մի աւարտուած գործ, որով հանդիսանում է կատարեալ մարդը։ Բայց գուցէ խելքն է կազմում մարդու էութիւնը։ Խելքը՝ մեծ ոյժ է, բայց արդեօք ինչ է սիրտը։ Թէ մէկը և թէ միւսը կցուած են իրար հետ գործարանական կապով։ Առանձին առանձին առնուած նրանք ներկայացնում են կղզիացած, տարրական, անբերրի և ապարդիւն ոյժեր» ***)։ Իտալիայում վարժարանը թէև մտաւոր կողմից նշանաւոր արդիւնքների է հասնում,

---

*) S. Smiles, Risparmio. Cap. IV. pag. 63.

**) Պետրոս Արետինացին իտալացի երևելի երգիծաբան էր, որը իւր սուր գրիչը միայն իւր օգտին էր ծառայեցնում և ոչ թէ ճշմարտութեան, երբ պարսաւում էր կամ գովում ականաւոր անձանց։

***) Dell' Istruzione, pag. 259.

բայց անխնամ է թողնում սրտի կրթութիւնը. և այս բանը տուժում է հասարակութիւնը։ «Կրթուած մարդը կարող է կրթուած աւազակ դառնալ, և այնքան առաւել հմուտ, որքան առաւել կրթուած կը լինի»։ Այսպէս է խօսում Սմայլսը, բայց չէ՞ որ նա անգլիացի է և ապրում է այնպիսի մի երկրում, ուր վարժարանն այնքան շատ միջոցներ է նուիրում սրտի կրթութեանը, որ Վիլլարին անգլիական վարժարան մտնելիս, ակամայ կրկնեց Մովսէսի խօսքերը Քորեբի վրայ. «Հանիր կօշիկներդ՝ որովհետև այդ տեղը, ուր դու կանգնած ես՝ սուրբ է» *)։

Բայց ինչ ասենք Իտալիոյ մասին, ուր վարժարանը զբաղուած է մի միայն խելքի կրթութեամբ, իսկ սրտին համարեա թէ ոչինչ չէ տալիս։ Նա զոհանում է միայն նրանով, որ միլիօնաւոր անձինք տանջւում են այբուբենով։ Բայց միթէ ամբոխին գրել կարդալ և համարել սովորեցնելով, կարելի է Իտալիան երկրային դրախտ դարձնել։ Ինչ օգուտ գիտութիւնից, երբ նա կցորդուած չէ առաքինութեանը։

Ապա ուրեմն, որպէս զի վարժարանը կարողանար կրթել սիրտը, որ կազմում է նրա ուղղակի նպատակը, պէտք է խիստ ներդաշնակութիւն պահպանի ճշմարտութեան և բարութեան, գիտութեան և բարոյականութեան, մտաւոր և բարոյական ընդունակութեանց մէջ։ Այս ներդաշնակութիւնից, իբրև սաղմից, կը սկսուի մարդու զարգացումը և վարժարանը մեզ կընծայէ և խելօք մարդիկ, և ընտիր բնաւորութեան տէր ազնիւ քաղաքացիներ։

Լոկ տարրական մանկավարժութեան մասին գաղափար ունեցող ուսուցիչը նոյն իսկ իդէալիստների ամենավերացական տեսութեանց մէջ սրտի կրթութեան համար բաւականաչափ պաշար կը գտնէր։ Հին, տաղտուկ ճարտասանութիւնից անգամ, միայն նրա ընտիր կողմն առնելով,

---

*) Istruzione elementare in Inghiltera, pag. 301.

կարելի է կրթութեան նպատակների համար բաւական օգուտ քաղել։

Սոյն գաղափարն առանձին իմն հմտութեամբ լուսաբանեց Պետրոս Ֆիօրդանօն։ Նա գիտութեանց ու արուեստների հիմք ընդունեց ճշմարտութիւնը՝ իբրև գեղեցկի, բարոյականութեան ու գեղարուեստի պատճառ։ Նրա ասելով. «Ամեն մարդ, լաւ մտածելով կը համոզուի, որ յանցանքները միշտ և հանապազ ստութեան հետևանք են լինում։ Հպարտը կը նշմարէ իւր կեղծ դրութիւնը, վասն զի իրեն առաւել բարձր է դասում իրական մակերևոյթից։ Հեռի է ճշմարտութիւնից նա և մարդելոյզը, որովհետև իրեն ստոր է համարում իրական արժողութիւնից։ Կեղծ է նա և անմիտ յանձնապաստանի դրութիւնը, որովհետև նա կամ չը գիտէ վտանգը, կամ սխալմամբ իւր ոյժերը բաւարար է համարում նրա առաջն առնելու համար։ Կեղծ է և վախկոտի դրութիւնը, որովհետև նա վտանգ է տեսնում այնտեղ, ուր վտանգ չը կայ, կամ չի հասկանում, թէ նրա ոյժը կը պատէր յաղթել վտանգին։ Եթէ հետաքննին կերպով ուսումնասիրենք կեանքը, կը տեսնենք, որ առաքինութիւնն է մարդուամենահաստատուն համոզմունքը թէ իւր և թէ ուրիշների մասին, իսկ արատը՝ շեղումն է ճշմարտութիւնից»։

Ապա ուրեմն, եթէ ճշմարտութիւնը սկիզբն ու վաղճանն է բոլոր գեղեցկի՝ բարոյական և գեղագիտական աշխարհում, ուրեմն գրականութեան ուսումնասիրութիւնը կարող է նպաստել բարոյական կրթութեան։

Ի՞նչ է մարինիզմը*). գեղարուեստական կատարեալ կեղծիք, որ տիպարներով արտայայտում է բարոյական այլանդակութիւն։ Ի՞նչ է Արկադիան **)։ Նոյնպէս գրական և

*) Մարինիզմ անուանւում է այն վսեմ ոճը, որով յայտնի է իտալական բանաստեղծ Մարինին († 1625)։

**) Արկադիան՝ Յունաստանի գաւառներից մինն էր, որ յայտնի էր իւր բարուց և կեանքի պարզութեամբ։

բարոյական մտապատկերների կեղծութեան մի տեսակը։ Այս ուրեմն իւրաքանչիւրն անկասկած կարող է իմանալ գրականութեան և բարոյականութեան մէջ եղած սերտ կապը և այն օգուտը, որպիսին կարելի կը լինի քաղել նրանցից սրտի կրթութեան համար։

3) ԱՄԵՐԻՔԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ։

Խօսքս դեռ չեմ աւարտել։ Ես կը ցանկայի Իտալիայ դպրոցներն էլ այնպէս կազմակերպել, ինչպէս Անգլիայի և Միացեալ-Նահանգների դպրոցներն են։ Ես կը ցանկայի և մեզանում մտցնել այն դասերը, որոց Հիպպօն անուանում է «lecons des choses», որով բարոյագիտութիւնը զննաբար է աւանդւում։ Ահա ինչպէս է նկարագրում Հիպպօն այդպիսի դասերից մինը, որ առիթ է ունեցել լսելու Միացեալ-Նահանգների ուսումնարանները հետազօտելիս։ «Բրուկլայնի մի օրինակելի դպրոցում ես ներկայ էի բարոյագիտութեան դասին։ Ուսուցիչը նպատակ էր դրել հասկացնելու մանուկներին կարգապահութեան անհրաժեշտութիւնը։ Նա բերեց բաժակ, բաժակակալ, գդալ, մաղաշ, մաղաշակալ, մոմ և մոմակալ։ Այս ամենը նա խառնիխուռն թափեց սեղանի վրայ։ Ապա կանչելով մի երեխայ, նա առաջարկեց նրան դասաւորելու առարկաներն, որպէս հարկը է։ Երեխան ամեն ինչ կարգի բերեց. բաժակը դրեց բաժակակալի վրայ, գդալը աջ կողմը, մոմը մոմակալում ամրացրեց, մաղաշը մաղաշակալի վրայ դրեց։ Առաջ սեղանի երեսը բռնուած էր ամբողջապէս, այժմ լայն տեղ բացուեց, ամեն ինչ իւր տեղն էր և համաչափ։ Անկարգութեան և կարգապահութեան այս հակիրճ պատկերը շուտ աչքի ընկաւ. այդ դիպուածներից մանուկները դիւրութեամբ կարող էին ըմբռնել մէկի և միւսի տարբերութիւնը,

ի հարկէ, նախապատուութիւնը կարգապահութեան տալով»*)։

Բարոյագիտութեան մի ուրիշ դաս S. John's servants shoul-ի դպրոցում նկարագրել է Պասկալ Վիլլարին, որ յատկապէս ուղարկուած էր Անգլիա դպրոցական գործն ուսումնասիրելու։ «Պ. Գասսէլը, այսպէս է նկարագրում Վիլլարին, նախ թափեց սեղանի վրայ շորի կտորտանք, ոսկորներ, խոհանոցի աղբ և այլն։ Նկատելով մանուկների ընդհանուր զարմանքը, նա սկսեց դասը, համեմելով նոյնը զանազան կատակներով. «Այսպէս ուրեմն, մենք այսօր կը զբաղուինք այս աղբով. Ի՞նչ, դուք հօ, ինչ ասել կուզի, այս բոլորը դէն կածէիք. բայց գիտէ՞ք արդեօք, որ այս աղբով բեռնաւորուում են ահագին նաւեր, և դրա համար հազարներ են վճարում։ Արդիւնաբերելով սոյն այս փալաս-փուլասը, կերակրուում են հազարաւոր ընտանիքներ, և մի քանիսը նրանցից մինչև անգամ միլլիոններ են վաստակել»։ Այս ասելով ուսուցիչը բաց արեց մաքուր թղթի մի մեծ թերթ։ «Այս չը պէ՞տք է դէն ձգել։ Բայց չէ՞ որ այս թերթն էլ շինուած է սոյն տեսակ փալասներից»։ Ապա նա մանրամասն պատմեց թէ ինչպէս են շինում թուղթը։ Այդ կերպով շարունակելով դասը, նա բացատրեց, թէ ինչպիսի օգուտ կարելի է քաղել ոսկորներից, սմբակներից և ուրիշ հազարաւոր առարկաներից, որոնք իբրև աղբ դուրս են ձգուում։ Իւր բացատրութիւնը նա ամփոփեց հետևեալ խօսքերով. «Այս բոլոր փալաս-փուլասը, աղբը ու աւելորդ բաներն օգուտ են տալիս նրան, ով գիտէ նրանցից օգտուիլ. հենց այնպէս էլ ծառաների մեղադրանքները հարստութիւն են պալիս նրան, ով գիտէ ծառաները» **)։

Ակներև է, թէ շնորհալի և հմուտ ուսուցիչը որքան հետաքրքրական կարող է դարձնել բարոյագիտութեան ուսումը։

---

*) C. Hippeau, L'Instruction publique aux Etats-Unis. Cap. V.

**) L'Istruzione elementare nell' Inghiltera e nella Scozia.

Չը կարծէք, թէ այսպէս միայն տարրական դպրոցներումն են ուսուցանում։ Նոյն և նման եղանակը տիրապետում է ամենուրեք. այդպէս՝ անգլիական վարժարանը նոյն Վիլլարիի ասելով, իրեն նպատակ է դրել բընաւորութիւն կրթելը, և մեծ յաջողութեամբ հասնում է նպատակին *)։

Իտալիան, որ օտարազգիներից այնքան բաղմաթիւ աւելորդ բաներ է փոխարինում, չի կարելի ասել, որ մտածէր փոխ առնելու անգլիացիներից նրանց դպրոցական եղանակը։ Մեզանում աշխատում են լոկ ուսումնականներ պատրաստել և ոչ թէ կեանքի համար պիտանացու մարդիկ։ Մեր երիտասարդները քսան տարեկան հասակում դուրս են գալիս դպրոցից գլուխը լցրած ամեն տեսակ ուսմունքով, բայց սիրտը դատարկ, եթէ աւելի վատը չասենք. դուրս են գալիս առանց կեանքի մասին փոքր ի շատէ լուրջ գաղափար ունենալու, չը գիտնալով խոհեմութեամբ ձեռք զարկել գործին, վասն զի միայն մտածել են սովորել և ոչ թէ գործել։

Մինչդեռ վարժարանում երիտասարդներն այնպէս պէտք է իւրացնէին գիտութիւնները, որ կարող լինէին կեանքի համար գործ դնել։ Իւրաքանչիւրը պէտք է գրէ այն, ինչ հասկանում է և զգում։ Իւրաքանչիւր երիտասարդ պէտք է ունենայ մի չիշատակարան, ուր որ նա արձանագրէր իւր մտքերը, զգացմունքները, կեանքի զանազան դիպուածներն ու տպաւորութիւնները. այդ չիշատակարանի՝ իբրև հայելու մէջ պիտի ցոլանային մատաղահաս տարիները. պէտք է որ նա պատմութեան և աշխարհագրութեան միջոցով ուսումնասիրէր իրական կեանքը, ժողովրդական սովորութիւնները, մարդու և բնութեան փոխադարձ ազդեցութիւնը, անցեալ սերունդների ախտերն ու առաքինու-

*) La scuola Secondaria in Germania e in Italia.

թիւնները, որ նա գիտութիւնները արժանաւորութեամբ ապրելու միջոց համարէր։

Բայց այս բոլորի համար մեր վարժարանը, հասկանալի է, պէտք է փոխէ իւր ուղղութիւնն ու կրթէ բընաւորութեան տէր երիտասարդութիւն, ինչպէս անցեալում անում էր Յունաց ճեմարանը։

4) Մի ՅԱՆԿՈՒԹԻՒՆ։

Թող ներուի ինձ այստեղ արտայայտելու նուիրական ցանկութիւնս։ Վաղուց ես փայփայում եմ այն միտքը, թէ մեր տարրական և միջնակարգ դպրոցներում մի այնպիսի գիրք պէտք է մտցնել, ուր պատկերացրած լինէին մեծ մարդոց բնաւորութիւնները, որոնցով այնքան հարուստ է Իտալիան։ Իտալիան չունի տակաւին իւր Պլուտարքոսը։ Բայց հանդէս կը դար և նա, եթէ կառավարութիւնը մրցանակ նշանակէր նիւթի վերաբերեալ ամենաընտիր աշխատութեան համար։ Չէ՞ որ մրցանակներ են նշանակւում զանազան բնաբաններով հեղինակութեանց համար։ Պէտք չէ, որ Իտալիան զուրկ մնար բնաւորութեան տէր իտալացիների լիակատար համեմատական կենսագրութիւնն ունենալուց։ Մեծ մարդոց օրինակը նմանողութիւն է յառաջացնում։ Առաքինութեանց յաղթանակի նկարագիրը մոլութեանց դէմ վառում, բորբոքում է երիտասարդի հոգին ու յղացնում նրա մէջ ազնիւ ձգտումներ։

Վիկտոր Ալֆիէրին, երբ դեռ քսան տարեկան էր և ազմկալից, անհոգ կեանք էր վարում, պատահմամբ ձեռք առաւ Պլուտարքոսը. նա այնպէս գրաւուեցաւ նրանով, որ ըստ իւր անկեղծ խոստովանութեան, նա հոգեզմայլութեամբ լափում էր այն՝ օրերով նրա կարդալուն յանձնատուր եղած։ Զատ հատուածներ նա մի քանի անգամ էր կարդում, նա մանաւանդ Տիմոլէօնի, Կեսարի, Պելոպիդա-

սի, Բրուտոսի, Կատօնի մասին. այդ միջոցներին չէր կարելի ճանաչել նրան. մերթ հեկեկում էր, մերթ բարկանում, այնպէս որ շատերը նրան խելագար էին համարում։ «Լսելով այս աննման մարդոց մեծ սխրագործութիւններն, ես ինքս ինձ յանդիմանում էի, ես լալիս էի վշտանալով և զայրանալով, երբ միայն մտածում էի, որ ծնուել եմ Պիեմոնտում, այնպիսի մի ժամանակ և այնպիսի կառավարութեան միջոցին, երբ անհնարին էր զգալ և մտածել որ և է վսեմ առարկայի մասին» *)։

Ի հարկէ, ամեն երիտասարդի վրայ միակերպ տպաւորութիւն չի գործել բնաւորութեան տէր մարդոց մեծ սխրագործութեանց ընթերցանութիւնը, այնուամենայնիւ բոլոր երիտասարդները քիչ թէ շատ կ'ազնուանան լոկ միայն վսեմ պատկերները դիտելով։

Իտալական վարժարաններն հեղեղուած են ունայնամիտ գրքոյկներով, ուր ժողովուած են գիտութեանց փշրանքների սակաւ մատչելի կցկտուր տեղեկութիւններ, այն մեծամիտ ձգտմամբ, որ մանկական ուղեղը լցնեն զանազան գիտութեամբ, որոնք այդպէս մատակարարուած անպէտք են և որոնք վերջում դեռ էլի կը մոռացուին. մինչդեռ պարտաւորութիւններն անընդհատ կատարել տալու սովորութիւնն առաւել օգտակար կը լիներ։ Գրում են և քաղուածօրէն յօրինում ո՞ գիտէ թէ ինչ, ամեն տեսակ գիտութիւններին նմանող ուրուականներ։ Բայց մի՞թէ չի գտնուիլ արդեօք Իտալիայում մի հանճարեղ և շնորհալի անձն, որ հայրենեաց անցեալով ոգևորուած, գրէր մի գիրք հետևեալ վերտառութեամբ. «Բ ն ա ւ ո ր ո ւ թ ե ա ն դ ա ս տ ի ա ր ա կ»։

---

*) V. Alfieri. Vita.

ԳԼՈՒԽ Ե.

ԴԱՐՁԵԼ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Բարութիւն անելու սովորութիւնը ձեռք բերելու, վատ հակումներին դիմադրել կարողանալու համար... պահանջւում է յարատև և տոկուն կարգապահութիւն. և բաւական է միայն կարգապահութիւնն իւրացնել, և այնուհետև պարտաւորութիւն կատարելը սովորութիւն կը դառնայ։ Ս. Սմայլս։

Մարդիկ արիութիւն են արտայայտում և առաքինութիւն գործում առաւել սիրոյ զգացմունքից դրդուած, քան երկիւղի. առաւել շուտ իրենց քրտանց համար արդեամբ վայելած հաճելի վարձատրութեան շնորհիւ, քան սպառնալիքների։ Ա. Ֆէնելոնէ։

Վարժարանները բազմացնելու հետ ի միասին պէտք էր նախապատրաստել ընդունակ ուսուցիչներ, որոնց մեծ պակասութիւն կայ։ Այդ նշմարւում է ստացած արդիւնքներից։

Ն. Տօմմասէօ։

1) ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ։

Կարգապահութիւնը գլխաւոր պայմանն է, որի վրայ յենւում է վարժարանը։ Այստեղ մանուկն այլ ևս չի տեսնում ծնողներին, գտնւում է օտար մթնոլորդում, օտար-

ների հսկողութեան ներքոյ և իրեն հաւասար ընկերների մէջ։ Վարժարանն՝ առաջին քայլն է դէպ՝ ընկերական (հասարակական) կեանքը, որին պէտք է օժանդակէ և պահպանէ դպրոցական լաւ կարգապահութիւնը։ Վարժարանից պահանջուած պայմաններն անգամ եթէ կազմ և պատրաստ լինին, այնու ամենայնիւ նա չի կարող յաջող արդիւնքներ տալ, եթէ միայն բացակայ է կարգապահութիւնը։ «Կան մարդիկ, ասում է Լա-Ֆարինան, որոնք կարծում են թէ կարգապահութիւնը միայն զինուորներին է հարկաւոր, բայց այն՝ չեն հասկանում, թէ կարգապահութեան բացակայութիւնը, որպէս զինուորական կեցութեան, նոյնպէս և քաղաքացիական կեցութեան մէջ, միակերպ կը նպաստէ պետութեան կործանմանը»։ Այս բանը մենք վերաբերում ենք և դպրոցին։

«Անգլիական կամ գերմանական վարժարան մտնելիս, տեսնում ես, ինչպէս այնտեղ մանուկները նստած են վայելուչ, հանդարտ, ուրախ դէմքերով, անլուռ, լուրջ, որսալով ուսուցչի իւրաքանչիւր խօսքը և մատիտը ձեռքին պատրաստ. ոչ մի բառ, ոչ մի ժպիտ, տաղտկութեան կամ անուշադրութեան ամենափոքրիկ նշոյլ անգամ չի երևում, կարծես բոլորը մի կարևոր խորհրդով են զբաղուած»։ «Ամեն անգամ, երբ ես ներկայ էի լինում դասին, շարունակում է Վիլլարին գերմանական վարժարանի մասին խօսելիս, ինձ թւում էր, թէ ես տաճարումն եմ նստած։ Ես չը նկատեցի անհամբերութեան կամ տաղտկութեան ստուերն անգամ, և ամենախիստ կարգապահութիւնը պահպանում էր առանց որ և է խստութեան, որովհետև ոչ ոքի մրտքովն անգամ չէր անցնիլ, որ դասի ժամանակ կարելի կը լինի մտածել որ և է կողմնակի բանի վրայ» *)։

Այդ մասամբ կախումն ունի կլիմայից, ասում են իտա-

*) L'Istruzione secondaria in Germania e in Italia.

լացիք։ Համաձայն եմ, որ բնութիւնը սաստիկ է ներգործում հակումների և սովորութեանց վրայ, բայց ինձ թըւում է թէ հազիւ արդարացի լինէր անգլիական կամ գերմանական դպրոցի այդպիսի դրաւիչ դրութիւնը չը վերագրել օրինակելի կարգապահութեան ազդեցութեանը։ Մանուկը նախ և առաջ ամենուրեք նոյն մանուկն է. և ես կարծում եմ, որ Ջէքսպիրի հայրենակիցների ու Սադօվայի հերոսների երակներում հոսող արիւնը պակաս չի եռ գալիս, քան իտալացունը։ Ի հարկէ, այնտեղ առաւել դիւրին է կարգապահութիւն մտցնել, քան Իտալիայում։

Իտալիոյ կառավարութիւնը պէտք է առաւել մանրամասն հաշիւ պահանջէր դպրոցական վարչութիւններից։ Ինչպէս տարրական, նոյնպէս և միջնակարգ վարժարանների վարչութիւնները ծայրայեղ ճշգութեամբ հետևում են ծրագիրներին ու դասատուութեան եղանակներին, և բոլորովին անտես առնում երիտասարդների վարք ու բարքը դպրոցներում և գիշերօթիկ վարժարաններում։ Գովասանական թերթերն ու պարգևները սովորաբար լաւ սովորողներին են տրւում, և չը տեսնելու են տալիս այդ բաղդաւորների վատ բարքը. իսկ համեստ և ջանասէր, բայց ոչ փայլուն ձիրքեր ունեցող մանուկներին իսպառ մոռանում են։ Նոյնպէս էլ մի առանձին հոգս չեն քաշում բարոյականութեան և բնաւորութեան զարգացման մասին։ Բազմամեայ դիտողութիւնն ու փորձը համոզում է մեզ, որ իտալական վարժարանում շատ խելք ու գիտութիւն կայ, բայց քիչ առաքինութիւն և սիրտ։

2) ՊԱՐԳԵՒՆԵՐ ԵՒ ՊԱՏԻԺՆԵՐ։

Պարգևներն ու պատիժները կազմում են լաւ կարգապահութեան սեպհականութիւն։ Պարգևն եթէ ընտրութեամբ է տրւում, խրախուսում է աշակերտներին, յառաջ

է կոչում նրանցում գերազանցութեան գաղափարը, և դրդում ընկերներին դէպ՝ ազնիւ մրցումն։ Այլապէս չէ՞ ներգործում նա և պատիժը, երբ նա թէ արդարացի է, և թէ պատշաճ. այս դիպուածում ճանապարհից շեղուած աշակերտն ուղղւում է և միւս՝ ամենընտիր աշակերտներն անգամ զգուշանում են. վասն զի իւրաքանչիւրին անհրաժեշտ է աջալրջութեամբ վերաբերուիլ դէպ՝ իւր անձը։ «Պարգևներն ու պատիժները, Հէգարէ Բալբօ-ի ասելով, երկու ոյժեր են, որոնք կառավարում են աշխարհս, պետութիւնը, հասարակութիւնն ու ընտանիքը»։ Առաջ բերած խօսքերն առաւել վարժարանին են վերաբերում, ուր գործ ունին մանուկների հետ, որոնց հարկաւոր են արտաքին գրգիռներ կազմակերպելու սովորութիւն պարտաւորութիւնը կատարելու պարտաւորութեան համար։ Սակայն լաւ և արիաջան դաստիարակն առաւել շուտ կը դիմի պարգևին, քան պատիժներին. թէ ինչու, պարզ է։ Մարդկային բնութիւնն այնպէս է կազմուած, որ յառաջ մղուելով վարձատրութեամբ, առաւել շուտ բարութիւն կը գործէ, բայց երկնչելով պատժից, այնպէս շուտ չի խուսափիլ չարից։ Թէ և պատիժը երբեմնապէս և հարկաւոր է լինում, բայց չի կարող իդէալ համարուիլ։ Եւ նոյն իսկ վարձատրութիւններն ու պատիժները գործ դնելիս, դաստիարակը լաւ պէտք է նայէ երկուսին, որ վարձատրուածը ջերմեռանդութեան փոխանակ փառասիրութեան մէջ չընկնի, իսկ պատժուածը ուղղուելու փոխանակ, անտարբերութեան չը դատապարտուի։ Մատաղ հոգու մէջ լաւ և վատ կրքերն այնքան աշխոյժ են և այնքան խառնաշփոթ, որ ցանկանալով արմատացնել մէկը, մենք անգիտակցաբար կարող ենք արմատացնել նրա բոլորովին հակառակը։ Ահա թէ ինչու Ֆիլանջիէրին խորհուրդ է տալիս մեծ զգուշութեամբ բաշխել պարգևները, խստիւ զանազանելով արժանաւոր պարգևները կարծեցեալներից։ «Մենք,

ասում է նա, մեծ հրճուանքով կը զարդարենք մանկան ճակատը գեղեցկահիւս պսակով, բայց չենք պճնազարդիլ նրան ամենընտիր ծաղկեայ պատմուճանով, որպէս զի ընկերների առաջ խրոխտալու սնափառութիւնը չը զարթնէր նրա մէջ. չափից դուրս չենք տալ նա և անուշահամ մրրգեղէններ ու խորտիկներ, որպէս զի չը տրամադրենք դէպ՝ որկրամոլութիւն. չենք ազատիլ նա և ուրիշների հետ միասին կատարելիք ընդհանուր զբաղմունքներից, որ չը ծրնեցնենք նրանում յարգանք դէպ՝ անհոգութիւնն ու ծուլութիւնը» *)։

Բայց և վարձատրելիս էլ պէտք է որ խոհեմութեամբ վարուինք։ «Թող դաստիարակը, շարունակում է Ֆիլանջիէրին, նախ և առաջ արժանավայել ծառայութիւն համարի այն լաւ արարքներն, որոնք արտայայտում են ոգու ազնուութիւն և մտքի վսեմութիւն»։

Լաւ դաստիարակը սիրելիներ չունի։ Անարժանութեամբ բաշխուած վարձատրութիւնը բացի այն որ վրդովում է մնացեալ մանուկներին, նա և բաղդաւորի աչքումն էլ կորցնում է յարգը, իբրև կեղծիք, և ստորացնում նրան նոյն իսկ իւր խղճի առաջ։ Ուրիշ բան է արժանավայել պարգևը. նա յիրաւի տարբերում է լաւը վատից և մանկութեան ամենաքաղցր յիշատակներից մինն է դառնում։ Երեւելի մարաջախտ Վիլլէրսը հպարտութեամբ ասում էր, թէ ինչպէս իւր կեանքում երկու բան նրան ճշմարիտ հրճուանք էր պատճառել. մէկը՝ արդեամբ վայելած պարգևը վարժարանում, և երկրորդ՝ մի փառաւոր յաղթութիւն պատերազմի դաշտում։

Իսկ ինչ ասեմ պատժի գործադրութեան մասին։ Թէ և մարդկային բնութիւնն այնպէս է կազմուած, որ յայտնի դիպուածներում բարութեան հասնելու համար հարկաւոր է

*) Scienza della Legislazione.

պատժի դիմել, սակայն ես հրաւիրում եմ դաստիարակին դէպ՝ արդարասիրութիւն և անաչառութիւն։ Պատիժը պէտք է հրաւիրի կարգ խանգարողին չափաւորութեան սահմանը և վսեմացնի նրա ոգին։ Կան պատժի այնպիսի ձևեր, որոնք չեն վիրաւորում մարդկային արժանապատուութիւնը։ Ընդ նմին և նոյն իսկ խոհեմ մանկավարժութեամբ ներշնչուած օրէնքներն արտաքսեցին վարժարանից ծեծը, արգելելով ուսուցչին մանուկների վրայ ձեռք բարձրացնելու։ Բայց սրանով էլ դեռ չի կարելի բաւականանալ։ Օրէնքով թոյլատրած պատիժներից ուսուցիչը պէտք է ընտրի այնպիսիներն, որոնք առաւելապէս զարթեցնում են մանկանց մէջ պատուոյ և սեպհական արժանաւորութեան զգացումը։ Կարելի է գործն այնպէս առաջ տանել, որ մի առ ժամանակ դադարեցնենք աշակերտի հետ խօսակցութիւնը, ընկերական շրջանից, դասի ժամանակ դասարանից հեռացնենք՝ և աշակերտը ծանօթ անծանօթին կը յորդորի չանել իւր գործածը։ Եթէ որ չեն օգնիլ այս բարոյական միջոցները, այնուհետև ստիպուած պէտք է լինինք, անյողդողդ սրտով արմատախիլ անել որոմը, որպէս զի չը վնասէ քնքոյշ բոյսերին։

Ուսուցիչը նախ և առաջ պարտաւոր է ցոյց տալ, որ միայն աշակերտին սիրելուցն է պատժի դիմում. թող ակներև ցոյց տայ նա, որ նոյն իսկ իրան առաւել ցաւ է և առաւել ամօթ պատիժ տալով, քան յանցաւորին, և որ միայն աշակերտի ուղղուելով, ինքը կարող է մխիթարուիլ։ Թող զգուշանայ մաղձոտութիւնից. դաստիարակը պէտք է իւր սանիկների հայրը լինի։ Եւ, ինչպէս որ բարի ծնողներն առաւել սիրում են ողորմելի, մոլորուած կամ պակասաւոր մանուկներին, որոնց ուղիղ ճանապարհ բերելու դիտմամբ առանձնակի գովեստներ են շռայլում, հէնց այնպէս էլ դաստիարակն առանձնապէս պէտք է զբաղուի անուղղայ մանուկներով։ Բայց թող նա չունենայ ստորա-

քարշ աչառութեան նշոյլն անգամ։ Մարդուս ներքին բնութիւնը դիտող իւրաքանչիւր անձն լաւ գիտէ, թէ ինչպէս կարող է վատանալ մանուկը, երբ մտածէ, որ զուր և անարդար է պատժուել։

Այսպէս ուրեմն, պարգևներն ու պատիժները՝ դաստիարակութեան երկու հզօր զէնքերն են, եթէ միայն արդեամբ կօգտուեն նրանցով։ Բայց նոյն իսկ այս զէնքով իսպառ կարելի է վնասել բնութեանն ու սրտի կրթութեան գործին, եթէ դժբաղդաբար նրանք անկանոն գործադրուին։

3) ՈՒՍՈՒՑԻՉ։

Դպրոցական կարգապահութեան պահպանութիւնը կախուած է ուսուցչից. զուր տեղը չեն կոչում նրան վարժարանի թագաւոր։ Եթէ ուսուցիչը լաւ է, լաւ են և՛ աշակերտները և ընդհակառակն։ Այս նկատողութիւնն արդարացի է ոչ այնքան մտաւոր, որքան բարոյական կրթութեան վերաբերութեամբ։ Բայց պէտք է խոստովանենք, որ լաւ ուսուցիչներ մենք շատ չունինք։ Ո՛չ ամենեքեան, որոնք բազմած են ուսուցչական ամբիոնի վրայ և օժտուած են մրցանակագիրներով, արժանի են իրենց պաշտօնին։ Գուցէ նրանք կարողանան լաւ ուսուցանել, բայց ոչ դաստիարակել։ Կառավարութիւնը, գաւառները, քաղաքներն ու գիւղերն ուսուցիչ ընտրելիս, սովորաբար երկար բարակ չեն մտածում։ Այժմ Իտալիայում վարժարանը կարծես մի տեսակ անկելանոց է դառել, որ ապաստան է տալիս ամեն մի ապիկար ուսուցչի. ով ոչ մի բանի պիտանի չէ, նա՝ վարժապետ է դառնում. թէ և այս կարծիքը կարող է ծանր կշտամբանք համարուիլ, բայց մասամբ էլ իրաւ է։ Այո, հարկաւոր էր առաւել շատ հոգալ երիտասարդների բարոյութեան մասին։ Փիլիպպոս Մակեդոնացին ամբողջ

Յունաստանը մանն եկաւ, նախ քան թէ Արիստոտելին ուսուցիչ կը կարգէր Աղէքսանդրի համար։ Փիլիպպոսի գովելի օրինակը խրատական պիտի լինի կառավարութեանը, գաւառներին ու քաղաքներին։ Ջէնոֆէզին պահանջում էր դաստիարակից ոչ միայն խելք, այլ և մեղմ բարք, վարուողութիւն, լաւ արտասանութիւն, որպէս զի քնքոյշ բոյսը կատարելագործելու և զարգանալու փոխարէն՝ չը մնասուի» *)։

Յաճախ ասում են, որ Իտալիայում աշակերտներն առ հասարակ չեն յարգում ուսուցիչներին։ Այս պէտք էր այսպէս ասել. չեն յարգում այնպիսի ուսուցիչներին, որոնք չը գիտեն կատարել իրենց պարտաւորութիւնները։ Ես գիտեմ, որ հմուտ և կրթուած ուսուցիչը միշտ սէր և յարգանք է վայելում։ Աշակերտները մեղաւոր չեն, երբ նրանց յանձնում են թերուս, անընդունակ, թոյլ բնաւորութեան տէր անձանց, որոնք, Նիկոլայ Տոմմազէօի ասելով, նայում են իրենց պաշտօնի վրայ, որպէս մի արհեստի, և դեռ նրա հոտն անգամ չառած, արդէն յոյսեր են տածում, թէ քանի տարուց յետոյ նրանց թոշակ կը տրուի և որքան կարելի է, շատ **)։

Իտալիան անհամբեր սպասում է լուսաւորութեան այն նախարարին, որ մաքրէր վարժարաններն այդպիսի «աւելով հաւաքուած» եղկելի մանկավարժներից, որպէս զի քնքոյշ սրտերում չը սերմանուէին անբարոյականութեան և գայթակղութեան սերմերը, որոնք հետևանք են նրանց օրինակի՝ և մանաւանդ շատ յաճախ՝ խօսքի։

Ճշմարիտ վարժարանը մղում է բարոյական, մտաւոր, տնտեսական և քաղաքական յառաջխաղացութեան գործը, և միայն նրանով կը վճռուի ընկերական կնճռոտ խնդիրը. միայն թէ այս բանի համար կարևոր է նախ և առաջ

---

*) Discorso sopra. Ilvera fine delle scienzee delle lettere.

**) Dell' Educazione. vol. I, pag. 385.

պատրաստել ազնիւ, հմուտ ուսուցիչներ. հակառակ դիպուածում՝ վարժարանը կը դառնայ տգիտութեան և բարբարոսութեան շտեմարան։

4) ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ։

Արդէն հասկանալի է դառնում այժմ ուսուցչանոցի կարիքը։ Բոլոր լուսաւորեալ պետութիւնները զբաղուած են այս խնդրով, որովհետև տարրական դպրոցներից ժողովուրդը մեծ բարիք է սպասում։ Նրանք են կրթում ժողովրդի դաստիարակներին։ Պրոֆէսսոր Անդրէաս Անջուլիի ասելով. «Ուսուցչական դպրոցը պէտք է հիմնաւորապէս ծանօթացնի ապագայ ուսուցչին ընդհանուր կրթողական գիտութեանց և ապա տեսական ու գործնական մանկավարժութեան հետ» *)։ Իտալիայում ուսուցչական դպրոցը դեռ ևս բոլորովին չի համապատասխանում օրէնսդրի նպատակներին, չի կարգաւորուել ինչպէս հարկն է, և գրեթէ ոչընչով չի տարբերուում ուրիշ միջնակարգ դպրոցներից։ Այս ասելով, մենք խորհուրդ չենք տալիս նրանց անօգտակարութեան համար փակելու եղած դպրոցները։ Այդ շատ վրստահ քայլ կը լինէր։ Բայց, մեր կարծիքով, դպրոցները պէտք է յեղափոխել և ընդլայնել։ Ես լիովին համաձայն եմ պրոֆէսսոր Անջուլիի կարծեաց, այսքանը միայն յարակցելով, որ ուսուցչական դպրոցը նախ ուսուցչի մէջ պէտք է զարգացնի այն առաքինութիւններն, որպիսիք յետոյ ինքը ուսուցիչը պէտք է զարգացնէ ու հաստատէ իւր սանիկների մէջ։ Տարրական դպրոցների ծրագիրներում այժմս էլ նշանակուած է բարոյագիտութեան դասատուութիւնը, բայց ինչպէս երևում է, նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ չոր ու ցամաք կանոնների հաւաքածու, որոնցից, գուցէ որ և է դի-

*) La Pedagogia, la Stato e la Famiglia. pag. 67.

պուաձով, մտքի մէջ մի որ և է հետք մնայ։ Բարոյագիտութիւնը պէտք է առաւել գործնականապէս դաս տային, քան տեսականապէս։ Քաղաքացիական և բարոյական առաքինութիւնները պէտք է կենդանի օրինակներով ուսումնասիրուէին և ոչ թէ վերացական չոր ու ցամաք կանոններով։ Կարճ ասած՝ օրինակելի ուսուցչական դպրոցն առաւել շատ պէտք է զբաղուի սրտի կրթութեամբ, քան թէ ուրիշ դպրոցները, որպէս զի նրա սանիկներն ապագայում ժողովրդի մէջ ցրուելով, կարող լինէին ազատել ամբոխը տգիտութեան, սնահաւատութեան ու նախնական բրտութեան շղթաներից։

5) ՎԱՐԺԱՐԱՆ, ԸՆՏԱՆԻՔ, ՀԱՆՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ։

Հայց և ամենագերազանց ուսուցիչներն անգամ ոչինչ չեն կարող անել, եթէ ընտանիքը, ընդհանուր գործում, չի կատարիլ իւր ստանձնած պաշտօնը։ Արդէն վերն ասուեցաւ, որ վարժարանում փոխադարձաբար հիւսւում են՝ ընտանիքի և պետութեան առաւել ընդարձակ դերերը։ Սովորաբար նկատում են միայն վերջինս, կարծես թէ ամեն ինչ կախումն ունենար կառավարութիւնից։ Ի հարկ է, մեծ է պետութեան ազդեցութիւնը վարժարանի վրայ, բայց անմտութիւն կը լինէր ենթադրել, որ մի միայն պետութիւնը կարող էր վճռել դպրոցական խնդիրը։ «Ինչպիսի էլ որ լինին օրէնքներն» ասում է Տօմմազէօն, և ինչպիսի էլ որ լինէր կառավարչական եղանակը՝ թող լինէին մէկը կամ մի՛ւսը լաւ կամ վատ, այնու ամենայնիւ միշտ անյաջողութիւն կունենան, եթէ ընտանիքը չի աջակցիլ նրանց նպատակներին»։

Վարժարանում, որպէս հայելու մէջ, ցոլանում են ընտանեկան դաստիարակութեան բոլոր լաւ ու վատ կողմերը։

Եթէ շնորհունակ մանուկները չեն ուսանում, ու-

սուցչի յանդիմանութիւնը լսելով, աչքերը չեն կորացնում. աւելի ու աւելի վատանում են, երբ նրանց քաջալերում են. կամակորւում են և պատժից յետոյ դարձեալ անուղղայ են մնում. դասարանից արտաքսուելով, յարմար առիթ են գտնում քաղաքի փողոցներով թափառել և սրբՃարաններում գլանակ ծխելով, հասակաւորների նման ճոռոմաբանում. հարցաքննութեանը վատ պատասխանելիս, ծամածռւում, ուսները վեր քաշում կամ խեթ աչքով նայում։ Ո՜հ, այդ դիպուածում ես կատարեալ վստահութեամբ կարող եմ ասել, որ հայրն ու մայրն անտէր, անհոգ են թողնում նրանց տանը և չեն հետևում ու հսկում դուրսը. չեն հաւաստիանում ուսուցչից նրանց վարուց մասին և գուցէ երբեմն էլ իրանց անձնական օրինակով փութացնում են այս գժբաղդների կորուստը։ «Հարկ չը կայ, կասեմ Տօմմազէօյի խօսքերով, նոր օրէնքներ, նոր մեթօդներ, առաւել համապատասխան կարգ ու կանոններ սահմանելու մասին մտածել, քանի որ չեն հոգում ընտանեաց դրութիւնը բարւոքելու։ Կարելի է արդեօք լաւ պտուղներ սպասել ծառից, երբ չեն հոգում նրա արմատների պահպանութեան համար։ Մեզանում առանց երկար բարակ մտածելու, ամեն բանի մէջ մեղադրում են ուսուցիչներին։ Մի շտապէք դատավճիռ կարդալու. ուշի ուշով քննելով գործը, գուցէ կարողանաք թերութեանց բուն պատճառը ոչ միայն ուսուցիչների կամ վարժարանների մէջ գտնել, այլ և ծնողների՝ ու գլխաւորապէս ընտանեկան անկարգութեանց մէջ։

Թոյլ տուէք այժմ իմ կարծիքս յայտնելու, թէկուզ և համարեցէք ինձ յետադէմ մարդ։ Իմ կարծիքով, երբ որ ընտանիքը չը գիտէ լցուցանել իւր կոչումը, մնում է դիմել հանրակեցութեան։ Կը նկատեմ, որ այն դպրոցներում, որոնց կից են գիշերօթիկ վարժարանները, գիշերօթիկները թէ առաւել լաւ են ուսանում և թէ իրանց առաւել վայելուչ են պահում։ Ինձ անյայտ չէ և այն ամենը, ինչ որ

կարելի է ասել հանրակեցութեան դէմ, բայց և այնպէս ընտանեաց ներկայ անբարեկարգ դրութիւնը ստիպում է ինձ հանրակեցութեան կողմն հակուիլ։

Կազմակերպեցէք հանրակեցութիւնը ժամանակակից առողջապահութեան բոլոր կանոններին համաձայն, գործի գլուխ կարգեցէք այնպիսի անձինք, որոնք արդէն ապացուցել են իրենց ընտանեկան առաքինութիւնները, որոնք փորձով գիտեն, թէ դաստիարակութեան հիմունքը սէրն է և ոչ թէ բռնութիւնը, և այս կերպով ստացած արդիւնքից կը տեսնէք, որ հանրակեցութիւնը չի լինիլ բանտ, որտեղից երիտասարդները դուրս են գալիս զուրկ ամենափոքր սիրոյ և համակրութեան զգացմունքից առ ընտանիքն ու հայրենիքը, չեն լինիլ այլ ևս շողոքորթներ, ընկերատեացներ, ցնորամիտներ և ուրիշ այնպիսիք, որ ասելն անգամ չարժէ։

Հանրակեցութիւնը՝ եթէ լաւ կառավարուի, պահպանում է ամեն բանի մէջ կարգ, կարգապահութիւն, ազնըւութիւն ու պարտաճանաչութիւն, ազատում է մանուկին ընտանեաց անդամների երես տալուց, իսկ եթէ ծնողները թոյլ են, այնուհետև հանրակեցութիւնը պահպանում է մանուկներին կամայականութիւնից ու ապականուած կեանքի զանազանակերպ գայթակղութիւններից։ Ներկայումս սովորութիւն են շինել դատափետելու գիշերօթիկ վարժարանների կեանքը, և նրանց վերագրում են շատ չեղած բաներ, որ լոկ միակողմանի հայեացքների հետևանք է։ Առաւել լաւ է համաձայնենք, որ հանրակեցութիւնն ամենևին չարիք չէ, այլ առաւել շուտ՝ «փ ր կ ա ր ա ր մ ի ջ ո ց» *)։

---

*) Angiulli, Opera cit.

ԳԼՈՒԽ Զ.

ԱՐՀԵՍՏԳԻՏԱԿԱՆ (ՏԵԽՆԻԿԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹԻՒՆ

Ինձ թւում է, որ մենք պէտք է յարմարացնենք մեր ուսմունքները մեր ներկայ բարքերի դրութեանը, և ուսումնասիրենք այն խնդիրներն, որոնց պահանջունի հասարակութիւնը։ Ֆլէօրի։

Հազիւ վերջ ի վերջոյ հասկացան, թէ՝ մանկավարժական մեծ յեղափոխութիւններն են կազմում քաղաքական կեանքի իսկական վերանորոգման անհրաժեշտ կարևոր պայմանը։

Ե. Մօրպուրգօ։

1) ԱՐՀԵՍՏԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ։

Վարժարանի մասին արած ընդհանուր խորհրդածութիւնից յետոյ, թող ներուի ինձ փոքր ինչ շեղուիլ խնդրից և զբաղուիլ արհեստագիտական կրթութեան հարցով, որ հէնց միայն նոր է ծնունդ առել մեզանում և որից մեծ ակընկալութիւն ունինք ապագայ սերունդի համար։ Հաստատ կարող եմ ասել, որ արհեստագիտական կրթութեան տարածումն բաւականին կը նպաստի իտալացիների մէջ գործնական խելք ու բնաւորութիւն զարգացնելուն, որի խնդիրն է՝ Մօրպուրգօյի ասելով. «գիտութիւնն ու աշխատանքը հաշտեցնել իրար հետ» *)։

Ուսուցման որ և է նոր եղանակի ներմուծումը երբէք

*) L'Istruzione tecnica in Italia.

պատահական չէ լինում։ Արհեստագիտական կրթութեան կարիքն զգացում է ժամանակակից քաղաքակրթեալ ազգերի կենսական պահանջներով։ Եթէ լուրջ հայեացք ձգենք արհեստագիտական կրթութեան վրայ, առանց հին նախապաշարմունքների ու կանխակալ կարծիքների, կը տեսնենք, որ նա օգնութիւն է հասնում հասարակութեան նոր տարրին, որ աճում է միւսներից առաւել արագ, լի յուսով և եռանդուն կեանքով գրաւելու իւր համար աշխարհումս վայելուչ դիրք։ Այդ տարրը՝ բանւոր դասակարգն է, որ ներկայումս, եթէ չեմ սխալւում, բռնում է 89 թուականի յեղափոխութեան բուրժուազիայի նման մի դիրք։

Աւելորդ չի լինիլ յիշել իրողութիւնների պատմական ընթացքը։ Բուրժուազիան՝ բազմամեայ ընդհատումից յետոյ բարեհոգի Լուդովիկոս XVI-ի յառաջ կոչած գլխաւոր նահանգներում գերազանցում էր թուով և ուժով ազնուականներից և եկեղեցականներից, որոնք, մինչ այդ ժամանակ՝ գրաւած ունէին ողջ ասպարէզը։ Այս բուրժուազիան իւր չափաւոր պահանջներին բաւականութիւն չը գտնելով, ստեղծեց ազգային ժողով և վրդոված արքայական ազդեցութեամբ, որ չէր հասկանում ժամանակի ոգին և փորձ էր փորձում զէնքի ուժով ամրապնդելու իւր իշխանութիւնը՝ հիմնայատակ արաւ Բաստիլիան և ծայրայեղութիւնից ծայրայեղութեան անցնելով՝ հասաւ արքայի սպանութեան գործին 21 Յունուարի 1793 թ. մինչև տէրրորը (սարսափը), որ հերոսներ հոչակեց Դանտօնին, Ռոբէսպիէրին ու Մարատին։

Այժմս ոչ թէ բուրժուազիան, այլ բանւորների մի ահագին դասակարգ, կենդրոնացած գործատներում, գործարաններում և ամեն տեսակ արհեստանոցներում աղաղակ է բառնում և պատսպարուելով օրէնքների պատուարով, բացագանչում է. «Եւ ես իրաւունք ունիմ, ես պահանջում եմ, որ ճանաչէք իմ իրաւունքս։

Թող չարհամարհենք այս հառաչանքը, որովհետև նա իրաւացի է և կատարելապէս հիմնաւոր. այլ ընդհակառակն, հոգս քաշենք նրա մասին և օրէնքներից իմաստութիւն ուսանինք։ Ասենք բանւորներին. «Ձեր սրբազան իրաւունքները մեզ անյայտ չեն, բայց և դուք էլ գիտցէք ձեր պարտաւորութիւնները. այլապէս ձեր իրաւունքները կը դառնան բռնութիւն և երկպառակութիւն։ Նուաճեցէք թէկուզ ամբողջ տիեզերքը, բայց այդ նուաճումն արդարացրէք ձեր խելքով, արդարասիրութեամբ և աշխատանքով։

Ահա մենք ձեզ օգնութեան ենք գալիս, և հնարներ գտնում ձեր յաղթանակի համար։ Մենք հիմնում ենք ձեզ համար ժողովրդական ուսումնարաններ, դարձնում ենք ուսումը պարտաւորական, և որպէս զի ձեր մանուկներին կիսաճամբին չը թողնենք՝ տարրական դպրոցների հետ միասին հիմնում ենք արհեստագիտական դպրոցներ. իսկ առաւել մեծ կատարելագործութեան հասցնելու համար արհեստագիտական ճեմարան և հարիւրաւոր ուրիշ մասնագիտական դպրոցներ, ուր կարելի է ձեռն բերել առաւել ընդարձակ տեղեկութիւններ առևտուրի, արդիւնագործութեան, երկրագործութեան և այլ սրանց նման ուսմունքների վերաբերեալ։ Ի վերջոյ, հիմնում ենք համալսարաններ ձեզնից իւրաքանչիւրի համար, ով կը ցանկանայ և կը կարողանայ բարձրագոյն կրթութիւն ստանալ։ Ձեզ մնում է միայն գոհութեամբ սրտի մուտ գործել այդ իմաստութեան տաճարները։ Այդտեղերից դուք դուրս կը գաք իբրև բարի քաղաքացի և կրթուած բանուոր, և այնուհետև կը շարունակէք ձեր նուաճումները։ Պատմութիւնն իւր էջերում կը գրոշմի նա և ձեր անունները, ինչպէս որ արձանագրել է Ֆրանկլինի, Ուատի, Ֆուլտոնի, Ստեֆենսոնի, Արկրայտի և աշխատանքի հազարաւոր ուրիշ հերոսների անունները։

Ես կարծում եմ, որ խոհեմ օրէնսդիրը յետ չի մնալ հասարակական շարժումից, այլ ուսումնասիրելով, կը պաշտպանի և անվտանգ ճանապարհով յառաջ կը մղի դէպի գլխաւոր նպատակը։

Ահա այն օրէնքներն, որոնք բղխելով ժողովրդի խըղճից, փութացնում են յառաջդիմութեան գործը և արմատով խեղդում յեղափոխութիւններն, որոնք որքան էլ որ արդարացի լինէին, այնուամենայնիւ տխուր հետևանքներ են ունենում։

Թող չը կարծեն թէ սրանով շեղում եմ բնաբանից։ Այս բոլոր խորհրդածութիւններն յանգում են այն եզրակացութեան, որ արդիւնագործական մասնագիտական կըրթութիւնն ուղղակի ծնունդ է առնում մեր ժամանակի պայմաններից։ Այժմ իրաւանց հաւասարութեան ընդհանուր գիտակցութիւնը դրդում է իւրաքանչիւրին որոնելու, որպէս իւր անկապտելի իրաւունք, կրթութեան այնպիսի աստիճան, որ առաւել լաւ է համապատասխանում նրա կարողութեանը։ Մօրպուրգօյի ասելով. «Մեր ժամանակի բնաւորութիւնը, որ հանդէս է գալիս ամենանշանաւոր պատերազմներում և մարդկութեան ամենաղնիւ ձգտումներում, իբրև անհրաժեշտ կարևորութիւն, իրաւանց հաւասարութեան գիտակցութեան մէջ է կայանում։ Արժանավայել փառքն ու յաղթանակները նախապատրաստում են խաղաղ աշխատանքով։ Հարստութիւնը ոչ թէ զէնքով է ձեռք բերւում, այլ աշխատանքով և այն էլ՝ ծանր աշխատանքով։ Կարողութիւնը պապերից մնացած որ և է պատահական ժառանգութիւն չէ, ոչ էլ բռնաւորական արտօնութեանց արդիւնք, այլ ուղղակի կազմում է իւրաքանչիւր քաղաքացու իրաւունքներից։ Ազատամտութիւնը ներկայ հասարակութեան «հաւատոյ հանգանակն է»։ Նրա համար կռուելումն է կայանում նրա հաւատը, և պետութիւնն իւր նպատակին հասած չէր լինիլ, եթէ որ

դպրոցների խաղաղ աշխատանքն ուղղէր դէպ՝ այս կէտը *)։

Այժմ ամենաբարձրագոյն պաշտօնները մատչելի են հասարակութեան ամեն դասակարգի անձանց, թէ հարըստին և թէ աղքատին, միայն թէ նրանք համապատասխանէին մի քանի պայմաններին։

Այժմ իւրաքանչիւրը, իւր երևելի ծագումից կամ հարըստութիւնից անկախ, կարող է դառնալ՝ ընտրող, երդուեալ հաւատարմատար, դատաւոր, քաղաքական կամ զաւառական խորհուրդների և ծերակուտի անդամ, պատգամաւոր, զօրագլուխ և մինչև անգամ նախարար։

Այժմ ազնուութիւնն ու գիտութիւնը փոխարինում են նախկին արտօնութիւնները, որոնք երբեմն բաժանում էին ժողովուրդը երկու դասակարգ, որոնցից մէկը քմահաճ պարոն էր, իսկ միւսը հլու հպատակ։

Այսպէս ուրեմն, եթէ ներկայումս օրէնքը, կասենք Ֆ. Պոմպէի խօսքով, արդօնէր ժողովրդական դասակարգերին նրաւոռնները, ընդ նմին նա և դրէր նրանց վրայ պարտաւորութիւնները, որոնց նրանք համար պահանջում է համապատասխան նախապատրաստութիւն **)։

2) ԴԱՍԱԿԱՆ (ԿԼԱՍՍԻՔԱԿԱՆ) ԵՒ ԱՐՀԵՍՏԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ։

Դառնալով մեր առարկային, խօսենք միջին դասակարգի կրթութեան մասին։ Անկարելի է բաւականանալ մի միայն դասական գիմնազիոններով։ Դպրոցական «նոր հրահանգի» համաձայն՝ հիմնուեցան արհեստգիտական դպրոցներ, ճեմարաններ ու մասնագիտական դասընթացներ։

Մեծամասնութիւնը համոզուած է, որ դասական գիմ-

---

*) Opera citata.

*) Etudes sur l'éducation professionnelle en Françe.

նպիսններում մանուկները չեն կարող այնպիսի կրթութիւն ստանալ, որպիսին պահանջում է կեանքի համար։ Այս միտքը շնորհալի հմտութեամբ լուսաբանել է Սէն-Մարկ-դը Ժիրարդէնը, արհեստագիտական կրթութեան այս եռանդուն ախոյեանը։

«Հէնց միայն, ասում է նա, իրերի ընթացքը կը կազմակերպի նոր հասարակութիւն, իսկոյն զգացում է նոր տեսակ կրթութեան պահանջ։ Կրթութեան եղանակը միշտ համապատասխան է լինում հասարակութեան բնաւորութեանը։ Այդպիսով, եթէ հասարակութիւնը կրօնասէր է, ապա նա պահանջում է աստուածաբանական կրթութիւն։ Տասն և հինգերորդ դարում հասարակութիւնն աշխարհասէր ու ազատամիտ է դառնում։ Ֆրանսիական յեղափոխութեամբ կազմակերպւում է նոր հասարակութիւն առևտրական, արդիւնագործական սկզբունքների վրայ և պահանջում է համապատասխան կրթութիւն։ Իսկ մեր ժամանակից կրթութեան եղանակը հեղեղուած է աւելորդ մասնագիտութեամբ, միակողմանիութեամբ։ Նա կարող է բանասէրներ և պրոֆէսսորներ պատրաստել, առանց խմորուած լինելու տասն և հինգ և տասն և վեց դարերի չոր ու ցամաք և խորհրդաւոր ուղղութեամբ, մինչդեռ ամեն կողմից պահանջում են վաճառականներ, արհեստաւորներ, երկրագործներ։ Բայց լոյսի պէս պարզ է, որ մեր կրթութեան եղանակը չի կարող գոհացնել այդ պահանջներին։

Ամենքը կարօտում են այժմ այնպիսի կրթութեան, որ կարողանար մեր համալսարանական և տարրական կրթութեան միջին տեղը բռնել։ Ահա ինչ է ասում ընտանեաց հայրերի ստուար մեծամասնութիւնը. «Մեր որդիքն ամենևին չեն պատրաստւում ուսումնականներ լինելու համար, մենք չենք ուզում նրանց ոչ բանաստեղծներ դարձնել, ոչ բանասէրներ։ Բանաստեղծութիւնն ու գրականութիւնը՝ առաւել կարողութիւն ունեցող մարդոց զբաղմունքն

է։ Չենք ցանկանում նոյնպէս, որ փաստաբան դառնան, առանց սրանց էլ փաստաբաններ շատ կան։ Մենք ցանկանում ենք, որ մեր գաւակները լինին լաւ վաճառականներ, լաւ բանուորներ, լաւ երկրագործներ։ Ինչու համար են, մի հարցնող լինի, լատիներէն և յունարէն լեզուները. ոչ ապաքէն որ վերջ ի վերջոյ մոռացուին։ Մենք ամենքս հօ չենք կարող մատենագիրներ ու մեկենասներ դառնալ։ Մարդկանց մեծ մասը չի մտնում ուսումնական կոչման ասպարէզը։ Բայց նա ինչ է ստանում ձեր դպրոցներից։ Կատարեալ ոչինչ, կամ ոչ մի պիտանի բան։ Իմ որդուս հարկաւոր է արշինով ճոթ չափել, իսկ դուք նրան ուսուցանում էք լատինական ոտանաւորների յանգերը համարել։ Նա պէտք է ագարակատէր դառնայ, բայց նա լաւ գիտնալով Հորացիոսի ոտանաւորների յանգաւորութիւնը, չը գիտէ թէ ինչ է օրավարը։ Նա անգիր գիտէ Վիրգիլիոսի «Հովուականները», և չէ իմանում, թէ ինչ է արօրը։ Արդեօք ծաղրալի չէ՞ այս ամենը»։ Իւր յօդուածը Ժիրարդէն աւարտում է հետևեալ խօսքերով. «Դասական կրթութիւնն իւր բոլոր գրականական արժանաւորութեամբ հանդերձ՝ կարեւոր է գուցէ մի քանիսներին, բայց ոչ բոլորին» *)։

Այսպէս ուրեմն, դասական կրթութիւնը չի հարուածւում սկզբունքով. նա, Կուզէնի ասելով, պահպանում է մարդկութեան մտաւոր կեանքի ամենաթանկագին նշխարները, բայց միայն, Գլադստոնի կարծիքով, չը պէտք է նրանով շատ գրաւուիլ և այնպիսի մարդոց վզովը կապել, որոնցից ժամանակով կեանքը կը պահանջէ մասնագիտական ուսմունքներ. նա և առողջ դատողութիւնն էլ ստիպում է նրանց մի փոքր սահմանափակել ընդհանուր կրթութեան

---

*) „L'Education classique, toute littéraire, comme elle est, est bonne pour quelques-uns; elle est detestable quand elle est donneé à tous“։

շրջանը։ Ի վերջոյ, Սէն-Մարկ-դը Ժիրարդէնը տալիս է հարցի ճիշդ վճիռը. «Խօսքը ոչ թէ դասական կրթութիւնը փոխելու մասին է, այլ թէ դասական կրթութեան հետ միասին դրուէր և մասնագիտական (պրոֆէսսիոնալական) կրթութիւնը» *)։

Պատմութիւնն ապացուցանում է, որ արհեստագիտական կրթութիւնը ժողովրդի ազատութեան նշան է։ Ժողովուրդը ստրկութիւնից յետոյ, մեռելներից յարութիւն առնելով, համարձակ նստում է նաւակը, կամ ցրւում դաշտերը գանձ որոնելու. քանդում է լեռները, մաքառում է ալիքների դէմ, յօրինում է շոգեշարժ մեքենան, էլէքտրական հեռագիրը, և լի յուսով ընկնում է ամենավստահ ձեռնարկութեանց գիրկը։ Ժողովուրդը ստրկօրէն թմրում է օրէ ցօր, չը գիտակցելով իւր գոյութիւնը, որովհետև նա հայրենիք չունի. իսկ եթէ մի որ և է բան էլ ունի, այդ նրա երևակայութիւնն է, ուր հայրենիք էր որոնում իւր համար բանաստեղծ Արիոստոն, կամ երկինք՝ ուր սաւառնում էր հռչակաւոր կոյր Արչէտրին։ Երբ որ Իտալիան ձեռն բերեց իրեն համար ազատութեան նման մի բան՝ հասարակական ինքնուրոյնութիւն, այն ժամանակ միայն փառաւորուեցաւ նա ծովագնացութեամբ, շնորհիւ իւր վաճառականաքաղաքների՝ Վենետկի, Գենուայի, Պիզայի, Ամալֆիի, Սորէնտոյի և այլոց։

Ստիւարտ Միլլի կարծիքով. «Դասական մատենագիրների արդիւնքներում մարդս առաւել բարձր պատուանդանի վրայ է կանգնած. նրանց նկարագրած անձանց մէջ առաւել քիչ փափկութիւն կայ, առաւել շատ հայրենասիրութիւն. առաւել քիչ զգայականութիւն, առաւել շատ

---

*) Il ne s'agit pas de substsituer l'éducation classique; il s'agit seulement mettre à côté de l'éducation classique l'éducation professionelle.

անձնիշխանութիւն, առաւել քիչ հասարակ առաքինութիւններ, առաւել շատ անհատական կատարելութեան օրինակներ. առաւել քիչ բնազդական արժանաւորութիւն, առաւել շատ գիտակցական վեհութիւն, առաւել շատ այնպիսի տարրեր, որոնք ընդունակ են երևակայութիւնը գրգռելու և մարդկային բնութեան կարողութեան մասին վսեմ գաղափար ներշնչելու։ Թէ այս, և թէ ուրիշ շատ կողմեր կազմում են դասական կրթութեան ճշմարիտ արժանիքը, որի համար և մենք ընծայում ենք նրան արժանավայել պատիւը։

Բայց և այնպէս, դասական կրթութեանը նախապատուութիւն տալով և նրա առաւելութիւնը հռչակելով ի վնաս արհեստգիտական կրթութեան, իբր թէ վերջինս անարժան զբաղմունք է գիտութեան ընտրեալների համար՝ կը լինէր արտասովոր և միակողմանի ծայրայեղութիւն։

Ոմանք ասում են, թէ արհեստգիտական կրթութիւնը, իբր թէ, ընդունակ չէ ազնուացնել ոգին, կազմակերպել բնաւորութիւնը, որովհետև չունի այնպիսի հերոսներ, որպիսին հանդէս է բերում դասական կրթութիւնը։

Այո, արհեստգիտութիւնը (տեխնոլոգիան) չունի տակաւին իւր Հոմերոսն ու Վիրգիլիոսը, որպէս Յունասատանն ու Հռոմը, որոնց հերոսներին դրանք հռչակել են։ Բայց արհեստգիտութիւնն էլ ունի իւր հերոսները։ Այս հերոսներն, իրաւ է, չեն խրոխտում պատերազմական սպառազինութեամբ, բայց փոխարէնը՝ խաղաղ առանձնասենեակում, լապտերի աղօտ լոյսի առաջ, կամ արհեստանոցի խորքում, նրանք արդէն այնպիսի գիւտեր են արել, որոնց շնորհիւ փոխուեցաւ երկրիս երեսը և մարդկութեան համար անթիւ ու անչափ գանձեր բացուեցան։ Ահա այդ հերոսները՝ Ուատտ, Ստեֆենսոն, Արկրայտ, Փուլտոն, Կրամպոն, Դէվի և հազարաւոր ուրիշները։ Նրանք սպասում են միայն իրենց Հոմերոսին ու Վիրգիլիոսին։ Կը գայ, ասում եմ, օր,

երբ բանաստեղծութիւնն ու գեղարուեստները կը սկսեն առանձին եռանդով արձանագրել այն մեծ մարդոց անմահ գործերը, որոնք իրենց կեանքը զոհեցին ոչ թէ նուաճումներին, կամ ազգեր շղթայելուն, այլ բնութեան տարրերի և ոյժերի նուաճմանը, որ սրանց յօգուտ մարդկութեան գործադրեն։

Այստեղ աւելորդ չի լինիլ յիշել Ստրաֆորէլլի պատմած մի դէպքը։ Ֆրէդրտ Փուլյտոնը 1804 թուին առաջարկեց Նապոլէօն I-ին, զօրքը ծովով տեղափոխելու համար, Բուլօնից Անգլիա շոգենաւ շինելու։ Սկզբում կայսրը, կարծես թէ, համակրեց ձեռնարկութեանը և հրամայեց անյապաղ փորձ փորձել։ Փորձը ոչ բոլորովին յաջողուեցաւ։ Այնուհետև Նապոլէօնը բոլորովին կորցրեց առ ձեռնարկութիւնն ունեցած հաւատը, և այն աստիճան զայրացաւ, որ արգելեց «Գիտութեան ճեմարանին» որ և է բանակցութիւն սկսել այս առարկայի մասին. նա սկսեց արհամարհանքով վերաբերուիլ դէպի Փուլյտոնը և՝ երբ մասնաժողովի նախագահ Լուդովիկ Կոստան ուզում էր խօսել յօգուտ Փուլյտոնի, Նապոլէօնը կոպտութեամբ ընդհատեց նրա հէնց առաջին խօսքն՝ ասելով. «Բոլոր եւրոպական քաղաքներում, (իբր թէ) գտնւում են անթիւ բախտախնդիրներ և խաբեբաներ, որոնք անդադար առաջարկում են կառավարութեանը իրենց կարծեցեալ գիւտերը։ Այդ բոլորը սուտ է։ Դրանք բոլորն էլ խաբեբաներ ու խարդախներ են, նրանց բոլոր ջանքն այն է, թէ ինչպէս կարողանան մարդուց կոպէկ կորզել։ Այդ ամերիկացին էլ դոյն տեսակներից է։ Չ'արժէ մինչև անգամ խօսել այդ մասին»։ Բայց, շարունակում է Ստրաֆորէլլը, այդ ամերիկացին, որ Նապոլէօնից խաբեբայ յորջորջուեցաւ, մարդկութեանն առաւել մեծ ծառայութիւններ մատոյց, քան թէ նոյն ինքն մեծ տիրապետողը։ Զոգենաւերի համեստ հնարողը բացեց մարդոց համար հանրօգուտ գործունէութեան նոր դարաշրջան, մինչդեռ փառասէր տիրա-

պետողն, ընդհակառակն, ստիպեց Եւրոպային պատերազմական բարբարոսութեան ճանապարհով մի քայլ յետ գնալ։ «Ի՞նչ կը լինէր, եթէ կօրսիկացի եկուորը լսէր Պէնսիլվանիայի խաբեբային. այն ժամանակ, գուցէ, Ս. Հելինէի կղզին չէր լինիլ նրա վերջին ապաստանարանը»։

3) ԱՐՀԵՍՏԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ։

Արհեստագիտական դպրոցներն Իտալիայում առաւել ուշ հանդէս եկան, քան թէ ուրիշ երկիրներում և նոյնպէս տարբեր պատճառներով։ Մօրպուրգօն՝ արհեստագիտական կրթութեան այս մոլեռանդ երկրպագուն, մի քանի բառերով ամփոփում է վերջնոյս ամբողջ պատմութիւնը։ «Ուրիշ պետութեանց մէջ արհեստագիտական կրթութեան առաջին զարկը տուեց՝ կամ նոյն իսկ ամբոխի մէջ եղած խլրտումը, կամ ազգաբնակութեան մտածող դասի եռանդուն բանակռիւը, ինչպէս որ Գերմանիայումն էր. կամ կառավարչական կուսակցութեան մրցումը հին դասակարգերի հետ՝ հասարակութիւնը խաղաղացնելու նպատակով, որպէս երևաց այս Ֆրանսիայում։ Կամ կրօնական հակաճառութեանց ու քաղաքական երկպառակութեանց առթիւ յառաջացած յուզումները՝ տնտեսական արդիւնաբերութեան արագ աճեցողութեան կից, որպէս պատահեց Անգլիայում...։ Ընդհակառակն, մեզանում արհեստագիտական դպրոցների ծագումը ոչ կրթութեան եղանակին վերաբերեալ բանակռիւներով է նախապատրաստուած, ոչ կրօնական կամ քաղաքական կուսակցութեանց պայքարով, ոչ էլ նախկին հաստատութեանց մնացորդներով։ Դրանց փոխարէն՝ Իտալիոյ երբեմնական համաշխարհային տնտեսական մրցման առաջնակարգ դրութեան յիշատակներն ու ազգային միութիւնը, ի մեծ զարմանս աշխարհի, յառաջ կոչեց քաղաքական փայլուն անցեալը՝ ժամանակակից տնտեսական յետամնացութեանը համապատասխանեցնելու անհրաժեշտ պահանջը, երկրի

տնտեսական ոյժերի զարգացման շնորհիւ։ Ահա Իտալիոյ արհեստագիտական դպրոցների հանդէս գալու շարժառիթները, որոնք տեղի ունեցան քաղաքացիների միահամուռ պահանջմամբ, կառավարութեան եռանդուն պաշտպանութեամբ և տեղական ինքնավարութեան ներկայացուցիչների աջակցութեամբ» *)։

Արհեստագիտական դպրոցներն հանդէս եկան մեզանում բնական ճանապարհով, առանց աղմուկի։ Քսան տարի սրանից առաջ Իտալիայում հազիւ նրանց անունն էին իմանում, իսկ կենդրոնական ու հարաւային նահանգներում նրանց հետքն անգամ չը կար։ Մեր պապերն, որպէս ասել եմ ես իմ գրքոյկներիցս մէկում, **) սիրում էին սխոլաստիք իմաստակութիւններ, և թռչունի պէս անհոգ ու ազատ ապրելով, իրենց զաւակներին բացառապէս տալիս էին դասական կրթութիւն։ Հին կօլէջներումն ու սեմինարներում, ուր մենք ուսանում էինք, արդեօք շատ բան էր աւանդւում ֆիզիքական աշխարհի մասին, ուր մեզ վիճակուած է ապրել։ Քաղաքական երկբայելի սահմանադրութիւնը պահանջում էր անջատել խելքը իրականութիւնից, որպէս զի չարամիտ յաւակնութիւն չունենայինք Եւրոպայի հետ միասին յառաջ ընթանալու։ Այն ժամանակ փափագում էին ուսեալ երիտասարդներից՝ փաստաբաններ, բժիշկներ, նօտարներ, քահանաներ, վարդապետներ պատրաստել, և ուրիշ ոչինչ։ Հայրը, տեսնելով, թէ ինչպէս որդին կցկտուր լատիներէնով ոտանաւորներ էր թոթովում, սքանչանում էր նրա ուսումնականութեամբ։

Անցաւ հին ժամանակը, և նոր հաստատութիւններն, առանց որ և է աղմուկի, իրենք իրենց ծագումն առան։

---

*) E. Morpurgo, op. cit.

**) A. Gabrieli, Dialcune condizioni per lo sviluppo del commercio e delle industrie.

Իտալիան հաստատուն հաւատով ձեռնարկեց արհեստագիտական կրթութեան՝ մի այնպիսի նորութեան, որը թէ և դեռ օլիմպիական դափնիք չէ պարգևել իւր ախոյեաններին, բայց և այնպէս բաւականաչափ նպաստում է ազգային բարօրութեան և իտալացու բնաւորութեան առաւել դրական զարգացմանը։ Քսան տարուայ ընթացքում չը մնաց թերակղզում և հարևան կղզիներում տեղ՝ ուր չը հաստատուէր որ և է արհեստագիտական մասնագիտական դպրոց՝ կամ՝ վաճառականութեան, կամ երկրագործութեան, կամ արուեստների, կամ արհեստների համար. հանդէս եկան արհեստագիտական, անտառապահական, ծովային, լեռնային և այլ սրանց նման ճեմարաններ։ Արհեստագիտական դպրոցների կամովին, ինքնաբերաբար ծագման իրողութիւնն առաւել լաւ հաստատւում է կառավարութեան, գաւառական և համայնական ինքնավարութեան միահամուռ և եռանդուն գործունէութեամբ՝ վաւերացնելու մատաղահաս արհեստագիտական դպրոցների ինքնավարութիւնն ու ապագան։ Դրանցից պակաս օժանդակութիւն չեն ցոյց տալիս նա և մասնաւոր ընկերութիւնները, զանազան բարեգործական հաստատութիւնները՝ որքան ներում են իրենց միջոցները։ Եւ այստեղ պարծենալով մեր գաւառով, ես, ընթերցողի թոյլտուութեամբ, կը տամ արժանավայել յարգը Բարի-ի առևտրական վարչութեանը։ Նա բացառապէս սեպհական միջոցներով և իւր սեպհական նախաձեռնութեամբ առևտրական գործի կատարելագործութեան համար հիմնարկեց նոր դպրոց։ Եթէ չի նուազիլ հիմնարկողների եռանդն ու օրէնքների կողմից հովանաւորութիւնը, ապա այս դրպրոցը սակաւ բարիք չի ընծայիլ մեր գաւառին, որ առևտուրի պատմութեան մէջ վերջին տեղը չէ բռնում։

Այն րոպէին, երբ գրում եմ այս տողերը, կատարուեցաւ Իտալիոյ մտածող դասի նուիրական ցանկութիւններից մինը, այն է՝ արհեստագիտական դպրոցների ու ճեմարանի

վարչութեանց միութեան գործը։ Միութիւնը՝ կեանքի էական օրէնքն է, և եթէ նա անհրաժեշտ է իւրաքանչիւր հասարակական հիմնարկութեան, նա առաւել ևս դրպրոցական կրթութեան կազմակերպութեանը, նա մանաւանդ, եթէ այդ կազմակերպութիւնը գտնւում է դեռ իւր զարգացման կիսաճամբին, որպէս Իտալիայումն է։

Արքայական հրովարտակի համաձայն՝ երկրագործութեան և վաճառականութեան նախարարութեանց գոյութեամբ, որի մէջ հաշւում էին նա և արհեստագիտական ու ծովային ճեմարանները, սրանցից թէ մէկը և թէ միւսը, բնական է, որ պէտք է անցնէին լուսաւորութեան նախարարութեան իրաւասութեանը։ Իրողութիւնը կատարուած է, և ահա Իտալիան, դպրոցական կազմակերպութեան այդպիսի միութիւնից, սրտատրոփ ահագին օգուտներ է սպասում։

Իտալիան, և մանաւանդ իտալական բանւորների մեծ գերդաստանը հաստատ հաւատացած է, որ լուսաւորութեան նախարարը հայրական խնամքով իւր հովանւոյն տակ կառնի մատաղ դպրոցները, որոնց, ըստ գեղեցիկ արտայայտութեան Մօրպուրգօյի՝ «Պէտք է համարել ազգային կեանքի ամենանշանաւոր գործիչների թւում՝ իրենց ընտրած նպատակով, առ որ նրանք ձգտում են. միջոցներով, որոնցմով նրանք օժտում են երկիրը, և այն համակրութեամբ՝ որպիսին նրանք զարթեցնում են ազգի մէջ» *)։

Մի՞թէ ես սխալւում եմ, կարծելով, թէ արհեստագիտական կրթութիւնը մեծ զարկ է տալու Իտալիոյ տնտեսական և քաղաքական ոյժերի զարգացմանը։ Ո՛չ, իմ յոյսերիս համակից կը լինի Իտալիոյ իւրաքանչիւր մտախոհ անձն։ «Մի ժամանակ մենք օրինակ էինք տալիս աշխարհին, նկատում է Վիլլարին։ Ամեն քայլափոխում երևում

*) Opera citata.

էին մեր աշխատանաց արգասիքը, և այն ժամանակ, մինչ-դեռ տուն էինք բերում ոսկին, իտալական ճաշակն ու հանճարը տիրապետում էր ամեն հրապարակներում ու վաճառատեղիներում։ Այն՝ հարստութեան, փառքի ու ազգային տիրապետութեան ժամանակն էր։ Իսկ այժմս, պէտք է խոստովանել, մենք երկրորդ տեղն անցանք և այս բանը, դժբաղդաբար, ակներև կացուցին մեզ Լոնդոնի, Փարիզի, Վիեննայի և Ֆիլադէլֆիայի աշխարհահանդէսները. բայց այդ չէ սպասում մեզ ապագայում։ Դեռ ստրկութեան մէջ հեծելով, մենք համարում էինք իբր արուեստագէտ ժողովուրդ, և օտարազգիները բարեհաճ ժպիտով ծափահարում էին մեզ և «կեցցէ» գոչում։ Այժմ, ազատութիւն վայելելով, մենք պարտաւոր ենք արդիւնագործ և վաճառաշահ ժողովուրդ դառնալ, և այնպէս, որ ստիպենք նոյն իսկ օտարազգիներին ծափահարելու մեզ և «կեցցէ» գոչելու։ Ամենուրեք արհեստգիտական կրթութեան ծաւալելը հնար կը տայ այդպիսի փառքի արժանանալու և նոյնպէս առաւել ազգային բնաւորութեան դրական զարգացմանն հասնելու։ Արհեստգիտական դպրոցներն այժմ նման են այն բոյսերին, որոնք թէ և մատաղահաս են, բայց՝ շնորհիւ արգաւանդ հողի ու ջրի, հրաշալի պտուղներ են խոստանում։

ԳԼՈՒԽ Է.

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆԸ ԿՐԹՈՒՄ Է ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ։

Դեռ քաղաքացու արբուն հասակը չառած, որ պիտանի դարձնէր երիտասարդին զինուորագրութեան պարտքը կատարելուն, պէտք էր կրթել նրան մարմնամարզութեամբ, երբ մատաղ կազմուածքը կակուղ է և մարմնական ոյժը կազդուրելու համար կարօտ է մարմնամարզական կրթութեանց։ Հարկաւոր էր, կրկնում եմ, այս մատաղ հասակում ընտելացնել քաղաքացուն ամեն տեսակ մարմնամարզական կրթութիւններին, որ ապագայում ոչ միայն պիտանի զինուոր դառնար, այլ և առողջ բանուոր, պիտանի ճանապարհորդ, ի վերջոյ մի այնպիսի մարդ, որ ընդունակ լինէր կրելու վտանգները, որ գիտենար օգուտ քաղել նոյն իսկ չարիքից։

Տօմմազէօ։

1) ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆԸ ԿԱԶԴՈՒՐՈՒՄ Է ՄԱՐՄԻՆԸ ԵՒ ՈՒՂՂՈՒՄ ՇԱՐԺՈՒԱԾՆԵՐԸ։

«Ոյժի մէջն է պարունակւում ողջ կեանքը, ասում է Զիրօլամօ Բօկկարդօն. առանց ոյժի մարդս զոհ է գնում արտաքին աշխարհին, և չը նայելով իւր կոչմանը, դառնում է ստրուկ։ Ոյժն՝ արիութեան գլխաւոր աղբիւրն է։

Նրանումն է ազնիւ վճռականութեան և անվեհերութեան պատճառը»։ Իւր ոյժերի պակասութեան գիտակցութիւնը կը տանի ինքն ըստ ինքեան դէպի բարոյական արիութեան պակասութիւն, մինչդեռ, ընդհակառակն՝ կարևոր առողջութիւնը, ամուր մկնակային կազմուածքը, բնականաբար տրամադրում է դէպ՝ արիութիւն։

Ես այժմ չեմ խօսիլ խղճի դերի մասին իրեն բոլոր պարագաներով հանդերձ՝ փոքրոգութեան դէմ մաքառելիս, ոչ էլ մարդկութեան կատարելագործութեան ֆիզիքական միջոցների մասին։ Իմ նպատակն է ապացուցանելու մարմնամարզութեան օգուտը, նրա ունեցած, թէ և կողմնակի, ազդեցութիւնը բնաւորութեան կրթութեան վրայ։

Որ մարմնամարզութիւնն ոյժ ու ճարպիկութիւն է տալիս մարմնու անդամներին, որ նա արմատախիլ է անում շատ վտանգաւոր ախտեր, այս ամենը լոյսի պէս պարզ է։ Այս նորէն ապացուցանելը՝ ջուր ծեծել կը նշանակէր։

Ինչպէս կամիք՝ ընդունեցէք, բայց և այնպէս, ամուր կազմուածքի տէր մարդն առաւել թանկ արժէ փոքրոգի մարդուց, եթէ միայն ֆիզիքական ոյժը ենթարկուած է բարոյականին։ Նրա բաց ճակատը, հաստատուն քայլուածքը, ամուր վիզը, լայն կուրծքը, ջղոտ ձեռքերը՝ կարծես թէ վկայում են, որ այդպիսի մարդու համար չի պահանջւում արտաքուստ քաջալերութիւն, իսկ ինքն իրեն անպատուութեան չի մատնիլ։ Բայց որովհետև մարմնամարզութիւնը, կազդուրելով մարմինը, մարդու մէջ հաւատ է ծնեցնում դէպ՝ իւր ոյժերը, նշանակում է՝ սրանով նա կրթում է բնաւորութիւնը։

Այս դեռ բաւական չէ. առողջագէտներն ապացուցանում են, որ հասակաւորներից շատերը վատ բարոյականութեան տէր են լինում լոկ այն պատճառաւ միայն, որ մանկութեան ժամանակ նրանց չէին կազդուրել և չէին ուղղել նպատակայարմար մարմնամարզական կրթութիւններով։

Ապացուցուած է, որ մի քանի անասնական բնազդումներ, ըստ մեծի մասին, բուն են դնում տկար մարմնու մէջ. այդ դիպուածում մարդու մարմինը մարմնամարզութեամբ կազդուրելը, ողջ մին է, թէ ազատէին նրան սքողուած ախտից, որ մաշում է կազմուածքն այնպէս, ինչպէս ճիճուն ծառը։

Ե՛կ՝ ձեռք տանք իրար և մարմնամարզութեամբ պարապենք, ամենքս, առանց խտրութեան սեռի և հասակի։ Զարժուում է ամբողջ տիեզերքը և առանց շարժողութեան կեանքը կեանք չէ, այլ մահ։ Արի՛ք, շարժուենք, մինչդեռ ոյժներս կը պատի։ Մանտեգացցան իւր «Զարժողութիւն առողջապահութեան» գրքոյկի վերջը, որ ես մի քանի անգամ ծայրէ ի ծայր կարդացել եմ, մի ներբող է ընծայում մարմնամարզութեանը։ Ի վերջոյ, մարմնամարզութիւնն առողջութեան և ազատութեան պայմանն է։ Պիւռոսը զինուորական մարմնամարզութեամբ կազմակերպեց տարենացի մեղկ երիտասարդներից լաւ սպառազինուած զօրք, որոլ նա մի քանի անգամ խորտակեց հռովմէական լեգէօնները։ Ընդհակառակն՝ Արիստոդէմը՝ ցանկանալով վերջնականապէս իւր ձեռքն առնել Կումա քաղաքի իշխանութիւնը, արգելեց առանց այդ էլ մեղկ քաղաքացիներին մարմնամարզական խաղերը և պահանջում էր, որ երիտասարդութիւնը կատարեալ անպարկեշտութեամբ անձնատուր լինէր զգայական բաւականութեանց, որ մեղկ կանանց ընկերութեամբ՝ զեղխութեան ու շռայլութեան մէջ խորասուզուէր։ Բաւական է արդէն յիշել այն, որ Յունաց հասարակապետութիւններն արգելում էին ստրուկներին մարմնամարզութիւնը, այդ արտօնութիւնը մի՛ միայն ազատ քաղաքացիներին շնորհելով։ Բռնակալ կառավարութիւններն ատում և արգելում են մարմնամարզութիւնը, որովհետև երկնչում են ժողովրդի ֆիզիքական և բարոյական ոյժից։ Ազատամիտ կառավարութիւնները ընդհակառակն, պէտք է հակա-

ռակը գործեն, որովհետև ժողովրդի եռանդն է նրանց գոյութեան պայմանը։

2) ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆՆ ԻՏԱԼԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ։

Այժմս ընդհանուրից մասնաւորին գալով, չի կարելի չը նկատել, որ Իտալիայում մարմնամարզութիւնը չի հասել այն զարգացմանը, որպիսին վայել է ազատ պետութիւններին։ Այն ինչ, Իտալիան մարմնամարզութեան փառաւոր հնութեան յիշատակարաններ ունի, ոչ յօրինակ այլ ազգերի։ Իկկո Տապենտինացին, որ ապրում էր ՀԸ օլիմպիականին, բժշկական մարմնամարզութեան հիմնադիրն էր, և Պլատոնի գովասանացն արժանացաւ ոչ այնքան իւր ուսումնականութեան, որքան իւր ժուժկալութեան և տոկուն բնաւորութեան համար *)։ Նա և Անտոնիոս Գացիին Պադուայում, տասնուչորրորդ դարու վերջը, եւրոպացիներից առաջինն եղաւ, որ սկսեց յունարէն, լատիներէն և արաբերէն լեզուներով գրուած բժշկագիտական հեղինակութիւններից տեղեկութիւններ հաւաքել առողջապահութեան մասին. նա օգտւում էր հոգևոր մատենագիրների արդիւնքներից անգամ, քննական հայեացքով վերաբերուելով իւր ընտրած նիւթին։ Այս մարդը մարմնամարզութեանն ամենանշանաւոր դերն էր յատկացնում առողջութիւն պահպանելու և երկարակեցութեան գործում **)։ Մարմնամարզական ուսումնարաններ բացւում էին Վենետկում, Ֆլորէնցիայում, Նէապօլում, Գենուայում, Միլանում, Տուրինում, Բօլոնիայում, Պալերմօյում և Իտալիոյ միւս անկախ քաղաքներում։ «Թէ և վերջին ժամանակներս, Մանտեգացցայի ասելով, Իտալիայում բաւականին գործ է կատարուել

*) N. Tommaseo. L'educazione; vol. 1 pag. 56.
**) Mantegazza. Igiene del movimento, pag. 76.

յօգուտ մարմնամարզութեան, սակայն դեռ շատ բան է մնում ցանկալ։ Մինչ այն ժամը չի կարելի ասել, թէ մարմնամարզութիւնն իւր իրաւունքներն է ստանձնել, մինչև որ իւրաքանչիւր դպրոցում մարմնամարզութեան առանձին վարժապետ չի նշանակուիլ. մինչև որ իւրաքանչիւր քաղաքացի, լինի դա վաճառական, արհեստաւոր թէ նաւաստի,—չի աւարտիլ մկնակային մարզութիւնների դասընթացը»։

Անգլիական և գերմանական դպրոցներում մարմնամարզութիւնը վայելուչ տեղն ունի բռնած։ Այնտեղ նա պատկանում է գլխաւոր առարկաներին, և այն դպրոցը, ուր մարմնամարզութիւնը բարձի թողի է առնուած, վատ համարումն է ստանում։ Մինչդեռ մեզանում մարմնամարզութեամբ պարապում են անգործութիւնից ստիպուած։ Մարմնամարզութեան ուսուցիչներն Իտալիայում յարգանք չեն վայելում, իսկ նրանց աշխատանքն առաւել վատ է գնահատւում։ Պէտք է բարձրել մարմնամարզութեան ուսուցչի կացութիւնը, եթէ ցանկանում ենք ազնուացնել նրա աւանդած առարկան։ Յիշենք, որ Յունաստանում մարմնամարզապետը կրում էր Ծիրանի և ման էր գալիս իշխանական շքով, բարձրագոյն քրմապետի և բարձրաստիճան արքայական անձանց համահաւասար։ Յիշենք, թէ ինչպէս Անթէնք եղած ժամանակ Մարկոս Անտոնիոս կայսրը հանեց վրայից Ծիրանին, հագցրեց այն մարմնամարզապետին, և ապա հրապարակաւ սկսաւ կատարել նրա մարմնամարզական պատուէրները *)։

Այս ամենից յետոյ ինձ հաւանական է թւում, որ և մեզանում ազդային լուսաւորութեան նախարարը, զինուորական նախարարի օրինակին հետևելով, կը մտցնի մարմնամարզութիւնն իբրև պարտաւորեցուցիչ առարկայ բոլոր

*) Plutarco. Vita di Marco Antonio.

դպրոցներում, սկսելով ստորիններից և հասցնելով բարձրագոյնները։ Եւ զինուորական տեսչութեան ընդունուած կարգի համաձայն իւրաքանչիւր տարի հաշիւ կպահանջէ այս առարկայի մասին։

Լող տալը, ձիով ման դալը, զինաշարժութիւնը, որսորդութիւնը, վազ տալը, թռչկոտելը, մանկական խաղերն ու պարերը, խմբական երգեցողութիւնն ու գուցէ նաև սառուցի վրայ սահելը, վելոսիպեդը, բիլլիարդը, ահա թէ ինչ բաներ պէտք է մտնեն երիտասարդների դաստիարակութեան ծրագրում. այլապէս մենք չենք ունենալ առողջակազմ և զօրեղ բնաւորութեան տէր ժողովուրդ։

3) ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ։

Բաւական չէ, եթէ մարմնամարզութեամբ մինչայն տանը և ուսումնարանում պարապեն։ Մարմնամարզութիւնը պէտք է դառնայ ազգային հաստատութիւն։ Յոյները նուիրում էին այս հշմարիտ՝ ազնիւ պարապմունքին՝ ամենահանդիսաւոր լոպէները Օլիմպոսի, Նէմէի, Պիփիայի, Դելֆիի, Իսթմոսի հասարակական խաղերի ժամանակ։ Նոյնպէս և Հռոմում կազմում էին մարմնամարզական հանդէսներ Արէսի դաշտում և զինուորական բանակներում։ Միջին դարերում լինում էին ձիարշաւներ ու զինուորական խաղեր։ Բայց և ժամանակակից Զուիցերիայում սովորական են հրացանաձգութեան, զինաշարժութեան, զինախաղութեան, խմբական երգեցողութեան, պարերի և ուրիշ մարմնամարզական վարժութեանց համար նշանակած հասարակական հանդէսները։ Եւ հասարակ ազգային հանդէսների աշխոյժ բնաւորութեան դիրքը տրիթ է տալիս եզրակացնելու, որ և՝ մարմնամարզական հանդէսները շատ հաճելի են ժողովրդին։ «Ապա ուրեմն, ինչու մեզանումն էլ, կասեմ Բօկարդօյի հետ միաձայն, չը տալ մարմնամարզութեանն աւելի

կանոնաւորութիւն, որ նա աւելի կանոնաւորուի ու ամբոխին մատչելի դառնայ։ Եթէ որ Իտալիոյ քաղաքների բոլոր հասարակութիւններն օգտուէին իրենց լայնաձաւալ ինքնավարութեամբ և քաղաքի արուարձաններում մարմնամարզական հանդէսներ կազմէին, և ապա՝ որ և է մրցանակ նշանակէին վազելու, զինախաղութեան, ձիավարժութեան մէջ իրենց շնորհալի ընդունակութիւններն արտայայտողներին։ Եթէ ծովեզրեայ քաղաքներում դոյն տեսակ մրցանակներ բաշխուէին ընտիր լողնորդներին և ջրասոյզներին։ Միով բանիւ, եթէ մեզանում հոգային ժողովրդին կրթութիւն մատակարարելու և ընդ նմին զուարճութիւն տալու կազմակերպուած հասարակական խաղերով, որոնք շատ սովորական էին մեր փառաւոր նախորդների ժամանակ, այնուհետև չէր կարելի մի առ մի թուել, թէ որքան բարիք պիտի պարգևէին ազգային վերածնելութեան գործին» *)։

Այսպէս ուրեմն, հոգու կրթութիւնը սերտ կապ ունի մարմնու կրթութեան հետ։ Հոգին ու մարմինը պէտք է միասին կազդուրել։ Մինը՝ ճշմարտի, բարու և գեղեցկի հետ ծանօթացնելով, միւսը՝ զանազանակերպ շարժողութիւններին ընտելացնելով։ Իբրև այդպիսի դաստիարակութեան տիպար թող ծառայէ հին Յունաց ձեմարանը (գիմնազիա), ի հարկ է, նրա կատարելագործուած ձևն առնելով և ժամանակակից քաղաքակրթութեան յարմարացնելով։ Զէ՞ որ այնտեղ միահաւասար հոգս էին տանում հոգու և մարմնու զարգացման մասին, այնտեղից էին դուրս գալիս իմաստուն և եռանդուն քաղաքացիք, որոնք մուտ գործեցին գիտութեանց ամենաթագնուած խորքերը, որոնք հրաշքներ գործեցին Թերմօպիլում, Մարաթօնում և Սա-

---

*) G. Boccardo. Feste e Giuochi, pag. 371.

լամինում, համայն աշխարհքին իրենց անմոռանալի յիշատակը թողնելով։

Հռոմում կայացած իտալական վերջին մարմնամարզական վեհաժողովում, ուր արքայազունները և ինքն Վիկտոր-Էմմանուէլն անգամ մասնակցում էին պարգևատրութեան և գովասանական կարծիքներ տալուն մարմնամարզութեան վարժապետներին ու աշակերտներին, երևաց, որ և Իտալիայումն էլ ժողովուրդն սկսել է գնահատել ու համակրել մարմնամարզութեան։ Հասկանալի է, որ Իտալիան չի ցանկանում յետ մնալ միւս ազգերից այդպիսի ազնիւ զբաղմունքներ կազմակերպելու գործում։

ԳԼՈՒԽ Ը.

ՕՐԷՆՔ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Օրէնքները մարդոց բարի են դարձնում։
Լաւ օրէնքներից ստացւում է լաւ դաստիարակութիւն։ Ն. Մաքիաւելի։

Ինչպէս որ քաղաքի կառավարիչն է, նոյնպիսիք են և նրա ընակիչները։
Էպիքուրոս։

Եթէ կառավարութիւնը իւր կարգադրութիւններով ոչ ոքի օրինակ չէ տալիս պետական օրէնքները խստութեամբ կատարելու, ապա ուրեմն կարելի է պահանջել, որ ժողովուրդը յաչս տէրութեան օրինակատար լինէր։
Անոյշ հեղինակ։

1) ՕՐԷՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ։

Քաղաքակրթութեան և ազգային բնաւորութեան գլխաւոր արդիւնաբերող ոյժերից մէկն էլ օրէնքներն են։ Եւ այս հասկանալի կը լինի, եթէ ի նկատի առնենք նրանց նշանակութիւնը, իբրև քաղաքացիների հանրակեցութեան ղեկավարող տարը։

Մենք օրէնքի գաղափարը վերացական փիլիսոփայական սկզբունքների հայեցակէտից չենք որոշիլ, այլ նրանց կեանքի մէջ գործադրութեան կողմից։ Նոյն իսկ օրէնքները՝ այն շօշափելի ձևերն են, որոնց մէջ բովանդակւում

են քաղաքացիների իրաւունքները՝ նրանց գործադրելու պատուէրով հանդերձ։ Բայց մարդկանց իրաւունքների արտայայտելը և նրանց իրագործելու պահանջը ոչ այլ ինչ է, քան նոյն իսկ ճշմարտութեան գործադրութիւնը։ Պարզելով օրէնքների նշանակութիւնը, բոլորովին հասկանալի է դառնում նրանց դերը՝ պետանի քաղաքացիներ կրթելու և արմատացնելու նրանց մէջ արդարութեան զգացմունքը։ Այս միտքը հմտաբար արտայայտուած է Հօրացիոսի յայտնի դարձուածքի մէջ, ուր բառերս՝ justum et tenacum propositi viri *) ի մի են ձուլում՝ մի ամբողջական դաղափար արտայայտելով։

Ասում են, որ մարդիկ իրենց համար օրէնքներ են սահմանում իրենց քաղաքակրթութեան աստիճանի համաձայն։ Ճշմարիտ է։ Բայց նոյնքան էլ ճիշդ է և այն, որ օրէնքները պահպանում են քաղաքակրթական յառաջադիմութեան սերմերը, օգնում են նրանց աճելուն և բեղմնաւոր կացուցանում։ Սրանում մենք համոզւում ենք, առաւել խորը և ուշադրութեամբ թափանցելով մարդկային բնութեան խորքը։ Յայտնի բան է, որ մարդոց մտաւոր և բարոյական ընդունակութեանց մէջ նկատելի է հակիրճ տարբերութիւն։

Հանճարեղ մարդուն կրետինի (փոքրուղղի) հետ համեմատելով՝ անթիւ մանրամասն ստորաբաժանումներ ենք գտնում։ Ինչպէս որ մարդկային հասարակութեանց սկզբնական կազմակերպութեան միջոցին առաւել խելացի մարդիկ բռնանում էին հասարակ խուժանի վրայ, և ստիպում նրան իրենց կամքը կատարելու, այդպէս է և հասարակութեան ներկայ կազմակերպութեան ժամանակ, և միշտ էլ այդպէս կը լինի, այսինքն՝ առաւել ընտիր և առաւել զարգացած քաղաքացիք ուրիշներից գերադասուելով, կը գրաղուին օրէնքներ յօրինելով, նրանց ուղղագրելով, նրանց գործադրու-

*) Ճշմարտասէր և իւր խօսքին հաստատ մարդ։

թեանը հսկելով, և այսպէս նպաստելով ամբոխին բարելաւուիլ և դէպի ճշմարտութիւնը ձգտիլ։ Այս ձգտումն ամրացնում է ամբոխի բարոյական զարգացման աստիճանը, սերտ կապում է նրան ճշմարտութեան հետ, դրդում է պահպանել նրան ամենայն տեսակ զոհաբերութեան գնով, և ընդ նմին պահանջում, որ ուրիշներն էլ յարգանքով վերաբերուին դէպի ճշմարտութիւնը։ Այդպիսով, եթէ իրօք, օրէնքները կազմում են որ և է ժողովրդի քաղաքակրթութեան պատկերը, ապա ուրեմն օրէնքների բարելաւելը քաղաքակրթական յառաջադիմութեան համար նոր շարժառիթ է, որի հետ անխզելի կերպով կապուած է և բնաւորութեան յառաջադիմութիւնը։

Ասածներս ապացուցանելու համար կարելի էր բազմաթիւ օրինակներ առաջ բերել հին և նոր ազգերի կեանքից։ Ո՞վ չի հաւատալ, որ անգլիացիք ու գերմանացիք ունին ազգային զօրեղ բնաւորութիւն։ Իսկ ո՞վ կը սկսի հերքել, որ սա արդիւնք է նրանց քաղաքակրթութեան, իսկ այս վերջինս նրանց օրէնքների պտուղ։ Ո՞վ կը հերքի այն, որ սպարտացւոց ազգային հզօրութիւնը պարտական է Լիկուրգոսի օրէնքներին, աթենացւոցը՝ յառաջ է եկած Սօլոնի օրէնքներով։ Եվ որ շնորհիւ այս օրէնքների՝ յառաջ եկան երկու նշանաւոր ազգ, որոնք իրենց ազգային բնաւորութեան հզօրութեամբ այնպիսի հրաշքներ գործեցին, որ նրանց փառքը կը հնչի մինչ այն ժամանակ, մինչև որ մարդիկ անհետանան երկրի երեսից։

Նոյնպէս և Հռոմում, նոյն իսկ նրա ծագումն առնելուց, արդէն օրէնքների ոյժը ծանրանում է բազմացեղ մարդոց կոպիտ ամբոխի վրայ, և այնպէս, որ իմաստուն Նուման, առասպելական անձնաւորութիւն էր սա, թէ իսկական, մեզ համար մի և նոյն է, ստիպեց այս ամբոխին հաւատալու, որ իւր օրէնքները թելադրուած են նրան ի վերուստ, և շնորհիւ այս օրէնքների նա կարողացաւ իւր

երկիրը հերոսների ծննդավայր դարձնել։ Ո՞ւմը յայտնի չէ Կվիրիտեան օրինաց ԺԲ տախտակների ոյժը, բայց չէ՞ որ հէնց այս օրէնքները տածեցին այն ժամանակուայ հռովմայեցիների մէջ այն անյողդողդ համոզմունքը, որ նոյն իսկ բնութիւնն է նախասահմանել հռովմէական ժողովրդին տիրապետելու մնացեալ մարդկութեանը։

Դրանից պակաս չը նպաստեցին այն օրէնքները, որը մշակեցին հռոմայեցւոց ընտիր ազնաւորութիւնները հրապարակական բանախօսութեամբ դատարանում։ Այս օրէնքների ազդեցութեամբ հռովմայեցիների մէջ զարգացաւ այնպիսի զօրեղ կամք, որ նրանք կանգ չառան իրենց նուաճումներն անելիս, մինչև որ չը նուաճեցին ամբողջ աշխարհը։

Այս ազդեցութեան ամբողջ ոյժը կարելի է գնահատել այն ժամանակ, երբ Հռոմը առ ոչինչ էր համարում հին օրէնքները իւր անկման շրջանում։ Այն ժամանակուանից, երբ սկսուեց հասարակապետութեան հայրենի օրէնքների զարմանալի ներդաշնակութեան խախտումն՝ հազարաւոր տարբեր հրովարտակներով, որոնք ներմուծւում էին Կվիրիտեան Իրաւունքի մէջ զանազան կուսակցութեանց պատգամաւորների ձեռքով. երբ հռովմէական իրաւանց մէջ սկսան միջամտել օտար տարրեր, զանազան ազգերի նուաճելուց սկսած, այն ժամանակ սկսուեց Հռոմի անկումը. տատանուեցաւ նրա ոյժի վրայ ունեցած համոզումը, մոռացուեցաւ սեպհական հաստատութեանց արժանաւորութեամբ պանծալը, ապականուեցան բարքերը և կայսրութեան յաջորդ շրջաններումն արդէն պատրաստւում էր Հռոմի ցաւալի անկումը։

Բոլոր մեծ հանճարները, իւրաքանչիւր առանձին մարդու և հասարակութեանց բնութեան հանճարեղ իմաստասէրները կրկնում են օրէնքների ազդեցութեան մասին մեր յայտնած ճշմարտութիւնը, տարբերուելով գուցէ միայն

արտայայտութեան ձևովն։ Ո՛վ կը կարդայ Մօնտէսքիէօն, Վիկօ, Մաքիաւելի և ուրիշ որ և է երկրի նշանաւոր հրապարակախօսների գրուածները, նրա այս մասին ունեցած բոլոր կասկածները կը փարատուին։

Ցամփոփումն օրէնքների էութեան և նրանց ազդեցութեան ժողովրդի իրաւունքի և բնաւորութեան վրայ, յառաջ կը բերենք երևելի հռովմայեցի հռետորի մի քանի խօսքը։

«Մենք տեսանք, թէ ինչպէս մեր արժանապատուութիւնը կարօտ է օրէնքների պաշտպանութեան։ Որովհետև աղնիւ և եռանդագին աշխատանքը վարձատրւում է հարստութեամբ և բարի անունով, իսկ միւս կողմից անբարեխիղճ, անպիտան արարքների համար նշանակուած են՝ տուգանք, իրաւունքից զրկումն, բանտ, դան, աքսոր և մահուան պատիժ, ապա ուրեմն չի կարելի չը համաձայնել, որ սանձ է դրւում մարդոց կրքերի և շահախնդրութեան վրայ, և պաշտպանւում մեր սեպհականութիւնը ոչ անձնական ոյժերով, այլ օրէնքների հեղինակութեամբ և սպառնալիքներով։ Այդպիսով, օտարի սեպհականութեան ձեռք մեկնելն ու ցանկալը ապարդիւն է լինում» *)։

2) ՕՐԷՆՔԻ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ։

Մենք տեսանք, թէ ինչ զօրեղ ազդեցութիւն են գործում լաւ օրէնքները անհատական և ազգային բնաւորութեան կրթութեան վրայ։ Այդպէս, դաստիարակութիւնը լիովին չէ հասնում իւր նպատակին, և գուցէ, բոլորովին ապարդիւն է անցնում։ Օրէնքները ներգործում են այն չափով, ինչ չափով որ նրանք կատարւում

*) Cicerone. De oratore. L. 1. cap. 48.

են։ Այլապէս՝ «Օրէնքներ կան, կասեմ բանաստեղծի խօսքերով, բայց ով է կամենում դրանց համար մատը շարժել»։ Ուրիշ խօսքով՝ այլ ևս ինչ ոյժ կունենան օրէնքները, եթէ ոչ ոք չի դրդել կատարելու դրանց։ Եւ ամենավատ պետութեանց մէջ կան երբեմն լաւ օրէնքներ։ Բայց նրանց չեն հնազանդում և ատում են այն անձանց, որոնց վրայ պարտաւորութիւն կայ հսկելու օրէնքների կատարմանը։ Աղէքսանդր Մանձօնին, նկարագրելով իսպանական տիրապետութեան ժամանակուայ անկարգութիւններն, ասում է, որ այն ժամանակ օրէնքների պակասութիւն չը կար, նրանք մինչև անգամ հեղեղում էին երկիրը։ Ապա դառնալով օրէնքները չը կատարելու պատճառներին, նկատում է, որ այն անձնաւորութիւնները, որոնք պարտաւոր էին անմիջապէս կատարել օրէնքը, անվեհեր էին, որպէս հերոսներ, հնազանդ, որպէս աբեղաներ և անձնազոհութեան պատրաստ, որպէս մարտիրոսներ. սակայն միւս անձնաւորութիւնները, որոնք պիտի ղեկավարէին օրէնքները կատարելիս, գործին ձեռք զարկելիս, թողնում էին առաջինների անուշադիր։

Այս խօսքերը բովանդակում են մեղադրանք ամեն մի բռնակալ կառավարութեան դէմ, ինչպիսի ձև էլ որ չը ստանար նա, քանի որ գլխի եղական կամքը ճնշում է օրէնքին։

Իրերի այդպիսի դրութիւնն էր այն առիթներից մէկը, թէ ինչու ժամանակակից սահմանադրութեան մէջ կառավարութիւնը ստանում է այնպիսի կազմակերպութիւն, որ գործադրական իշխանութիւնը բաժանւում է օրէնսդրականից և պատասխանատու է ժողովրդի առաջ։ Այժմ նախարարից պահանջւում է հաշիւ ոչ միայն նրա անմիջական կարգադրութեանց մասին, այլ նա և նրա վերահսկողական իշխանութեան, և նրանից լիազօրութիւն ստացած աստիճանաւորների գործունէութեան մասին, վարչութեան ինչ ճիւղի մէջ էլ որ ծառայելիս լինէին

նրանք։ Օրէնքը ամենքի աչքի առաջն է, բայց մանաւանդ աւելի մօտ պիտի մերձենայ նա այն բարձրութեանց, որտեղից սովորաբար վայր է իջնում չարն ու բարին։

Այդպիսով, կառավարութիւնը (այս իմաստով մենք պատկերացնում ենք համախմբուած գործարանաւոր ոյժ, որին յանձնուած է բարձրագոյն վերահսկողութիւն պետութեան օրէնքների կատարմանը) պէտք է ոգևորի իւր գործողութիւնները բարոյականութեան սուրբ սկզբունքներով, որոնք ծառայում են իբրև հիմունք հասարակական բարօրութեան, և որոնք տալիս են մարդկային գործերին փառք և հաստատութիւն։

Մեզանում սիրում են կրկնել անգիր սերտած նախադասութիւնս, թէ այն ազգը, որը չի հնազանդւում օրէնքին, մօտ է անիշխանութեան։ Այս ճշմարիտ է, բայց միայն նոյն իսկ օրէնքները կարող են ծաղրի առարկայ դառնալ տէրութեան շնորհիւ, եթէ որ նա ղեկավարում է միայն կամայականութեամբ, որ անպատճառ ժողովրդին դէպ՝ ապականութիւն պիտի տանէ։

Արդարադատութեան հայելու *) վրայ գրուած է՝ «Օրէնքն ամենքի համար հաւասար է»։ Ի՞նչ լաւ կը լինէր, եթէ որ աստիճանաւորներն իւրաքանչիւր պաշտօնական ատեանում սրբութեամբ կատարէին այն, ինչ որ նշանակուած է այնտեղ։

Կարդացել եմ մի մատենագրի գրուածքը, որի անունն այժմ չեմ յիշում, թէ ժողովրդի ստրկութեան ժամանակ օրէնքները նման են սարդի ոստայնին, որի միջով հեշտութեամբ կանցնի բզեզը, բայց կը բռնուի մժեղը։ Կարող ենք մենք կատարեալ անդորրութեամբ մտաբերել քաջարի ՄանՃՕնիի խօսքերը. «Կենդանու համար առաւել վատ բան չը կայ, քան առանց եղունգների ու ատամների մը-

*) Зерцало, Le miroir de justice de tribunaux.

նալը»։ Ինձ մնում է միայն լռել և արտագրել մի քանի խօսք այն գրքից, որ լոյս է տեսել հասարակութեան ազատ կացութեան ժամանակ Մասսիմօ-դ'Ազելիօ-ի գրչի տակից։ Ես բառ առ բառ յառաջ եմ բերում այդ խօսքերը, քեզ համար, բարեշնորհ ընթերցող։

«Խօսենք անկեղծօրէն։

«Կրթւում է արդեօք ժողովուրդը մեր կառավարութեան, և մանաւանդ ազգային լուսաւորութեան նախարարութեան օրինակով (լուսաւորութիւնն, իսկապէս ասած, իւրաքանչիւր հեղինակութեան գործն է)»։

«Արդեօք կատարելապէս հաստատ են մնում մի բարոյական սկզբունքի՝ նախասպատրաստական խորհրդածութիւններ և պաշտօնական կարգադրութիւններ անելիս»։

«Ո՞ր կառավարութիւնը, որ կուսակցութիւնը, որ քաղաքական կուսակցութեան մասնաճիւղը, որ հասարակական հաստատութիւնը, միով բանիւ, որ հեղինակութիւնը կատարում է իւր սուրբ պարտականութիւնը յօրինակ նրանց, որոնց գլուխ է կարգուած ինքը»։

«Եկա՛ ուրեմն, եկ՝ հաստատենք ազգային լուսաւորութեան այնպիսի նախարարութիւն, որ կարողանար անուանուիլ օրինակելի և որի ամբողջ կազմակերպութիւնն՝ իւր կարգադրողական իշխանութեամբ հանդերձ, օրինակելի լիներ»։ (I miei Ricordi)։

Հարկաւոր է այլ ևս բան աւելացնել այսպիսի անկախ և ազնուաբար արտայայտած գաղափարին։

3) ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ԶՕՐԵՂ ԼԻՆԻ ԻՒՐ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

Կարծեմ աւելորդ է ասել, որ կառավարութիւնը պէտք է այնքան զօրեղ լինի, որ յարգանք տածէր առ ինքն և առ օրէնքները։ Եթէ ճշմարիտ է, որ առանց ազատութեան չի կարող լինել կարգ, այլ միայն ստրկու-

թիւն և մահ, ապա նոյնքան էլ ճիշդ է և այն, որ առանց ազատութեան չի կարող լինել կարգ, այլ անիշխանութիւն։ Մեղկ կառավարութիւնն ապշեցնում է գործադրող օրէնքներով և իրեն ստիպում է խիստ միջոցների դիմել, որոնք՝ չը նայելով իրենց նպատակայարմարութեան, դառնում են չարիք և սպառնում ազատութեան։ Այն կառավարութիւնը, որ հասարակական կարգը յայտնի կերպով խանգարելու ժամանակ, անձնական ապահովութիւնը ոտնակոխ անելիս, վարչութեան զանազան ճիւղերում կարգապահութիւնը խանգարուելիս՝ քնում է և ամենին ազատ կամք է տալիս իւր գիտցածն անելու. այն կառավարութիւնը, որ հաշտութիւն է կայացնում իւր պարտաւորութեանց հետ, գլուխ է խոնարհում և կեղծ բարեկամ դառնում ազատութեան իսկական թշնամիներին, այդպիսի կառավարութիւնը դաւաճանում է իւր կոչմանը և ապականում ազգային բնաւորութիւնը։ Բրուտոսը, մատաղ հասարակապետութիւնն ազատելու համար՝ առաւել լաւ համարեց մատնել իւր որդուցը դահճի սրին։ Թուլութիւնը նախապատրաստում է անիշխանութիւն, իսկ սրանից դէպի բռնակալութիւնը՝ մի քայլ է։

Ապա ուրեմն, թող կառավարութիւնն այնքան զօրեղ լինի, որ՝ առանց ծայրայեղ միջոցներին դիմելու, յարգանք տածել տայ դէպի օրէնքներն ու ազատ հաստատութիւնները, որոնք ստացուած են մի շարք սերունդների արիւն քրտնքով։

Եւ թող, նախ և առաջ, սկսի իւր պաշտօնեաներից, որոնք պէտք է օրէնքի ճիշդ գործադրութեան հայելին լինին, իսկ գործով այդպէս չեն. «Թող անչապաղ պաշտօնազուրկ լինին, ասում է Լա-Ֆարինան, այն անձինք, որոնք երկիւղից կամ թուլամորթութիւնից ստիպուած, յանցաւոր են իրենց պաշտօնական պարտաւորութիւնները կատարելիս. թող չը նշանակուին հասարակաց պաշտօնների անշնորհ և չարամիտ մարդիկ. թող վարչութեան մէջ պահպանուի այն-

պիսի անտեսութիւն և այնպիսի կարգապահութիւն, որպիսին պահանջում է բարեկազմ պետութեան համար։ Եւ կառավարութիւնը, եթէ այդ ձեռնարկած միջոցներով մի քանի չարամիտների տրտունջն ու նախանձը կը շարժէր, փոխարէնը կարժանանար ամբողջ ազգի շնորհակալութեանն ու օրհնութեանը»։

Այս խորհուրդները, ճշմարիտն ասելով, այժմ էլ պէտքական են, որովհետև մեր ժամանակն էլ նկատւում է պաշտօնեաների թուլամորթութիւնը, որոնք շատ ջերմեռանդ են ոռճիկ ստանալուն և ընդ նմին պակաս եռանդ չեն ցոյց տալիս իրենց պարտաւորութիւնները չը կատարելում։

Եւ եթէ ես գրէի քաղաքականութեան մասին մի գիրք, անպատճառ մի շարք ապացոյցներ կը բերէի, որ այդպէս անուանեալ ձեւապաշտ պաշտօնեաների բռնութիւնը խանգարում է ազատ հասարակութեանց զարգացումը, և այնպէս որ «ստորինները դեկավարում են վերիններին»։ (Parini, La Caduta).

Երբ որ կառավարութիւնը պահանջող և խիստ կը լինի իւր պաշտօնեաների վերաբերութեամբ, նա ապա լիակատար իրաւունք կունենայ խստութեամբ վերաբերուիլ նաև ամբոխին։ Այն ժամանակ միայն ամբոխը կը հաւատայ, որ պետութեան բարձր շրջաններում բազմած անձինք չեն կազմում մի առանձին դասակարգ (կաստա), որը չի ճանաչում իրենից վեր և իրենից ստոր ոչ մի օրէնք, այլ իրօք ծառայում են ժողովրդի շահերին, որը և դրա համար վճարում է դրանց ռոճիկ։ Այսպիսով, բարոյականութիւնը իւր ճանապարհով կը թափանցէ վերևից ներքև, իսկ օրինաց հեղինակութիւնը կը ստանայ վարկ։

Բայց թւում է, որ յանդիմանում են ինձ, թէ արդեօք չէ՞ք ցանկանում այդպիսով բնաւորութեան կրթութիւնը տէրութեան յանձնել...։ Սակայն, եթէ դու գիտե-

նայիր, սիրելի ընթերցող, թէ ինչպէս ինձ ցաւալի է տեսնել, որ մինչ այժմս էլ պահպանուում է կառավարչական խնամակալութեան դժբաղդ եղանակը։ Իմ կարծիքով, այն պետութեան մէջ առաւել ազատութիւն են վայելում և ընդ նմին արժանավայել ազատութիւն, ուր առաւել քիչ է զգացուում պետական օժանդակութեան կարևորութիւնը, որի համար կը ցանկայի, որ ներկայ սահմաններիցն էլ առաւել նեղ լինէր։ Թող ընդլայնուի քաղաքացու, քաղաքների և գիւղերի հասարակութեանց, դպրոցների, արդիւնագործութեան, վաճառականութեան, և այլն, և այլն, ինքնավարութիւնը։ Իսկ կառավարութեան տեսչութեանը միայն թողնուին այն խնդիրները, ուր անպայման կարևոր է նրա օժանդակութիւնը։ Լիակատար ազատութիւն և տէրութեան լիակատար անկախութիւն՝ ահա իմ իդէալը։

Սակայն իմ քննած հարցը չէ վերաբերում իսկապէս կառավարութեան միջամտութեան չափին, այս պատճառով հարկաւոր է եզրակացութեանը դիմել։

Եթէ ցանկանում էք ազգային բնաւորութիւնը կրթել՝ ապա յօրինեցէք լաւ օրէնքներ։ «Լաւ օրէնքներից ծնւում է լաւ դաստիարակութիւն», նկատում է Մաքիաւելին և շատ ճիշդ։

Եթէ ցանկանում էք օրէնքներից իրական օգուտ քաղել, ստիպեցէք ազնիւ, արդարասէր և առ ամենեսեան անաչառ լինել նրանց, որոնց վրայ պարտաւորութիւն է դրուած օրէնքների կատարմանը հսկելու։

Ի վերջոյ, եթէ ցանկանում էք, որ կառավարութիւնը ըստ օրինաց վարուէր, ապա թող բոլոր բարի քաղաքացիք օժանդակեն նրան. սահմանադրական պետութեան մէջ կառավարութիւնը ինչով պէտք է նպաստ և ոյժ ստանայ, եթէ ոչ իւր ժողովրդի օժանդակութեամբ և համակրութեամբ։

ԳԼՈՒԽ Թ.

ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Մարդկային կատարելութիւններից մէկն էլ անձնիշխանութեան զարգացումն է։
Հ. Սպենսէր։

Այս արդէն չափազանց է։ Իտալիայում ամեն ինչ անւում է կառավարութեան միջոցով, ամեն ինչ կառավարութեան համար և առանց կառավարութեան՝ ոչինչ։ Այս սարսափելի ախտ է։ Այդ պատճառաւ մարդս երբէք չի սովորիլ իրեն հաշիւ տալ իւր ոյժերի մասին, ունենալ ոգու անվեհերութիւն, և հաւատ առ իւր անձն։ Լէոսոնա։

Աշխատանքը մարդկային բարոյականութեան փրկարար միջոցներից մէկն է, անձնական անկախութեան, ուրեմն և սեպհական արժանաւորութեան ամենահաստատուն գրաւական. աշխատանքը գրաւում է մարդուն դէպի գործունէութիւն, իբր արտադրող ոյժի, և դէպի նախազգուշութիւն, իբր պաշարի համար պահուած ոյժի։ Ա. Ֆրանկ։

1) ԱՆՁՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ։

Այժմ դառնում եմ ձեզ, մատաղահաս իտալացիք։ Դուք առ միշտ չէք մնալու ընտանեաց և դպրոցի խանձարուրում։ Ցաւօք սրտի պէտք է ավտոսամ ձեզ, եթէ բոլոր

ժամանակը ձեզ շոյում էին և ձեզ շրջապատողների տգիտութեամբ, եսասիրութեամբ կամ անհոգութեամբ չը յաջողուեցաւ ձեզ իշխել ձեր անձի վրայ և գործադրել կեանքի մէջ այն կանոնները, որ ձեռք էիք բերել սկզբնական կրթութեան ժամանակ։ Վաղ թէ ուշ դուք ազատ կը լինիք, ձեռք կը բերէք սեպհական գործունէութեամբ ձեզ մատչելի, ըստ բնութեան, գիտութեան և օրինաց՝ որոշ իրաւունք և իշխանութիւն։ Ահա այդտեղ դուք մէն մէնակ կդզիացած կը զգաք ձեզ քաղաքացիների շրջանում։ Ձեզ այլ ևս չեն ազատիլ խորհուրդները և ծնողների ու ուսուցիչների բազուկը։ Դուք ինքեանքդ կը լինիք ձեզ համար ծնող և ուսուցիչ։ Այս այն ժամն է, երբ վճռւում է ձեր ապագան։

Բայց ասենք թէ ընտանիքն ու դպրոցն արին ձեզ համար այն բոլորը, ինչ որ նրանցից կախուած էր, և սերմանեցին ձեր հոգու մէջ ճշմարիտ գիտութեան և ճշմարիտ առաքինութեան սերմերը. թէ նրանք ամենամեծ խնամքով հոգ տարան ձեր առողջութեան կազդուրելուն։ Միով բանիւ, ամեն ինչ լաւ է նախապատրաստուած և ձեզ մընում է միայն սկսել գործը։ Այդպիսի հանգամանքներում, դուրս գալով հասարակաց կեանքի ազատ ասպարէզը, վարուեցէք որպէս հմուտ ճանապարհորդ, որ փորձում է ինքը՝ն իրան, ամեն ինչ արդեօք պատրաստ ունի կեանքի դժուար ճանապարհը անցնելու համար։ Մի գնաք խարխափելով, մի խաբուէք, հաշտութիւն մի՛ք կայացնիլ ձեր խղճի հետ։ Քննեցէք ձեզ սառնասրտութեամբ, առանց որ և է յուզման և դուք կը տեսնէք, թէ ինչ է ձեզ պակաս։ Կազդուրեցէք ձեզ և այն պաշարն առէք, որը ձեզ հարկաւոր է։ Բոլորովին կատարեալ չէք դուրս գալ ոչ ընտանիքից, ոչ դպրոցից։ Դեռ էլի բաղդ է, եթէ դուք լաւ ուղղութիւն էք ստացել։

Ի նկատի ունեցէք, որ խելքի վեհ և յաջորդական

զարդացմանը կարող է և չը համապատասխանել մարմնական զարդացումը։ Սակայն, թէկուզ էլ ձեզ տկար և թոյլ զգաք՝ մի վհատուիք։ Դեռ ժամանակը չի անցել առողջապահութեան և մարմնամարզութեան միջոցներ հայթհայթել կորցրած առողջութիւնը վերականգնելու և նոր ոյժեր ձեռք բերելու։

Եթէ ընդհակառակն, դուք կը զգաք, որ շատ ժամանակ էք կորցրել ֆիզիքական զարդացման համար ի վնաս մտաւորի, այստեղ էլ մի վհատուիք. ձեռք զարկելով ինքնակրթութեանը, կարելի է բոլոր պակասը լրացնել։ Եթէ այդ յաջողուեց Վիկտոր Ուֆիլէրիին, ապա ինչու չը պէտք է յաջողի և ձեզ։ Հարկաւոր է միայն կամենալ և լաւ կամենալ։ Դէորդ Լ. Կրէկը կարող է ձեզ ասել, որ ով գիտէ կարդալ և ձեռքի տակն ունի որ և է գիտութեան տարրական ձեռնարկ, նա ուսուցչի կարիք չունի *)։ Եւ Չէզարէ Բալբօյից կարող էք լսել հետեւեալը. «Ինչ որ ստիպուած էիք վեց-եօթը տարում սովորել՝ վեց-եօթը տարեկան հասակում, կարող էք սովորել շատ շատ երեք՝ չորս տարում տասն և չորս կամ տասն և հինգ տարեկան հասակում. իսկ եթէ նոյնը հարկաւոր լինէր ձեզ ուսանիլ քսան կամ քսան և մէկ տարեկան հասակում, հարկաւոր կը լինէր ընդամենը մի կամ երկու տարուայ դասընթաց» **)։ Այս բանը նրանով է բացատրւում, որ առաւել հասուն խելքն առաւել շուտ է պտուղ բերում, քան տհասը, թէև միահաւասար լինին աշխատում։

2) ԻՆՉՊԷՍ Է ԴԱՍՏԻԱՐԱԿԻՈՒՄ ԿԱՄՔԸ։

Բոլոր գաղտնիքը մի բառի մէջ է. «Կամենում եմ»։

*) Crark. Constanza vince ignoranza. Traduzione libera di P. Rotondi.

**) Pensieri ed Esempli, pag 147.

Ջիօբէրտիի կարծիքով, կամքը Ալֆիէրիին շնորհեց մեծ տաղանդ։ Կամքը հրաշքներ գործելու ընդունակ է։ Դեմօսթենէսը կակազ էր. նա կամեցաւ ուղղել լեզուի այդ թերութիւնը, և հասաւ իւր նպատակին։ Նիկօլա Սօունդերսօնը՝ ի ծնէ կոյր լինելով, կամեցաւ ուսանիլ յունարէն ու լատիներէն և ուսաւ։ Նա կամեցաւ ծանօթանալ մաթեմաթիքային և՝ իրօք, ուսումնասիրեց, և այնպէս լաւ, որ դասախօսութիւններ էր անում Կէմբրիջի համալսարանում. նա կամեցաւ աստղաբաշխ լինիլ և հիանալի կերպով հասաւ իւր նպատակին։ Նրա կենսագիրը գրում է. «Մի անգամ այգիում նրա հետ զբօսնելիս դիտողութիւններ էի անում արեգակի վրայ. և նա ցոյց էր տալիս իւրաքանչիւր ամպը, որ խանգարում էր մեր զբաղմունքներին, գրեթէ բառ առ բառ, ինչպէս և ես։ Բացի սրանից, նա կարողանում էր զանազանել օդի շարժման աստիճանը և այս շարժման նշոյլներով զգում էր, երբ մի որ և է առարկայ մերձենում էր նրա դէմքին. իսկ եթէ մթնոլորդը խաղաղ էր, ապա նա կարողանում էր բաւական հեռու տեղից զանազանել ծառերը»։ Այս բոլորից յետոյ, հարկ չը կայ օրինակների ետևից ընկնել։ Այսպիսի շատ օրինակներ կարելի է գտնել ամեն ազգի պատմութեան մէջ։

Բայց չը կարծէք, որ այս հրաշքներն առաջանում են իրենք իրենց դիւթական զօրութեամբ։ Քիչ է լոկ բառս «Կամենում եմ», այլ պէտք է համապատասխան միջոցներ գործ դնել, որ իրօք ցանկացածին հասնես. պէտք է դաստիարակել կամքը։ Սոյն դաստիարակութեան կանոնները, կարող եմ սեպհական փորձով ձեզ հաւաստիացնել, չեն աւանդւում ոչ տանը, և ոչ դպրոցում։ Դուք ինքներդ անձամբ կարող էք ուսումնասիրել այդ կանոնները։ Կամքը դաստիարակւում է ինքն իրեն։ Դպրոցը, եթէ ուզում էք

*) Ciorgio L. Craik. Op. cit.

իմանալ, միայն արտաքին ոյժ է, նա նպաստում է ձեզ կողմնակի կերպով։ Ամենալաւագոյն դպրոցը կարող է մի՛ միայն մի բան անել՝ պահպանել ձեր կամքն անվնաս։ Բայց դպրոցը բաւական չէ կամքի դաստիարակութեան համար։ Երբ որ դուք ինքներդ կասէք ձեզ, այսպէս կանեմ, որովհետև այսպէս է դուրեկան իմ ծնողներին և ուսուցիչներին, այո՛, թէ և դուք գիտակցաբար վճռէիք այդ անելու, ձեր կամքը լիովին բաւարարութիւն չէր ստանալ։ Բայց երբ որ կ'ասէք՝ կանեմ այս, որովհետև ինքս եմ կամենում, ապա աներկբայ է, որ դուք լիակատար բաւարարութիւն կը զգաք։ Բանն այն է, որ այն ժամանակ դուք կը զգաք, որ ձեր անձանց լիակատար տէրն էք, որ կատարում էք ձեր պարտաւորութիւնը ուղղակի ձեր կամքով։

Կամքի դաստիարակութիւնն էապէս չէ տարբերւում ֆիզիքական և բարոյական դաստիարակութիւնից։ Եղանակն այստեղ էլ նոյնն է։ Պէտք է յառաջ ընթանալ քըչից՝ շատը, հեշտից՝ դժուարը։ Ձեռքը մեծ ճանրութիւններ կրելուն ընտելացնելու համար, կը սկսէք փորձել փոքրիկ բեռներ կրելու, աստիճանաբար անցնելով դէպի մեծերը։ Ձեր յիշողութիւնն ընտելացնելու համար դասական մատենագիրներից երկար հատուածներ միտը պահելուն, դուք սկսեցէք միտը պահել փոքրիկ հատուածներ։ Խելքը յանկարծ չէ բանում իւր գաղտնի ոյժերը և երևակայութիւնը, միանգամից չէ ստեղծում գեղարուեստական պատկերներ։ Մինչև անգամ եթէ Ի. Բ. Վիկտորի խելքը և Միքէլ-Անջէլոյի երևակայութիւնն էլ ունենայիք, դարձեալ պէտք է անցնէիք նախապատրաստութեանց երկար ճանապարհը, նախ քան ձեռնարկէիք „Scienza Nuowa"-ին («Նոր գիտութիւն») և «Մովսէսին»։ Այլապէս չէ և կամքը. ստիպուած ենք լինում սկսել փոքրից, մինչև որ հասնենք մեծին։

Ես ձեզ մի դէպք կը պատմեմ իմ կեանքից։ Շատ տարի առաջ ես մի սովորութիւն ունէի զուր տեղը փողեր ծախ-

Ես ճանաչում էի մի վերին աստիճանի դիւրազգաց, բայց և ընդ նմին խոհեմ մարդ։ Չափազանց մեծ դիւրազգացութիւնից նրանում համակրութեան և ատելութեան զգացմունքներն այնքան զօրեղ էին, որ երբեմն բռնութեամբ ստիպում էին նրան շատ անարդարութիւններ գործել։ Նկատելով այս, նա որոշեց ազատուել այս թերութիւններից, իբր իւր թշնամիներից։ Եւ ահա նախ և առաջ նա սկսեց ամաչացնել իրեն՝ նոյն իսկ իւր աչքի առաջ՝ իւր թուլակամութեան համար։ Ապա, երբ նա հանդիպում էր իւր ի վաղուց հետէ ատելի անձնաւորութեանց, նա յաղթահարում էր իրեն և վարում նրանց հետ սիրով։ Այս բանից յետոյ նա անկեղծ ուրախութիւն էր զգում. նրան թւում էր, թէ յաղթուել է տարել։ Չափաւորելով իւր հակակրութիւնը դէպի մի քանիսը, նա ընդ նմին զսպում էր իրեն չափազանց համակրանք շռայլելու մի-սներին, և ի վերջոյ, հասաւ այնպիսի անձնիշխանութեան, որ իւր իսկ ասելով, նա կարողանում էր միատեսակ բարեհոգութեամբ վարուել ամենի հետ, և սառնասրտութեամբ դատել զանազան նիւթերի մասին։

Գիտեմ, որ այս առաւել դիւրին է ասել, քան թէ անել։ Բայց ուրիշ ճանապարհ չը կայ. մի միայն խիստ կարգապահութեամբ կարելի է կրթել բնաւորութիւնը։ Միայն խիստ համբերատարութիւնը կարող է ազատել մեզ ստոր կրքերից, անզուսպ եսասիրութիւնից, կարճ ասած՝ բոլոր ախտերից և փոխարէնը զարգացնել պարտաւորութեան զգացմունքը։ Վիկտոր Ալֆիերին, ցանկանալով պարապել որոշեալ ժամերին, պատուիրել էր ծառային, առանց այլ և այլութեան, կապտել իրեն բազկաթոռի վրայ և ապա չերևալ նշանակեալ ժամանակից առաջ, չը նայելով նրա աղաղակին։ Իսկ աշխարհային զուարճամոլ կեանքից ազատուելու համար՝ նա բոլորովին ածիլում էր իւր գլուխը։ «Զարմանալի» է, կասեն շատերը։ Այո, այսպիսի ճանապարհով են

Ես ճանաչում էի մի վերին աստիճանի դիւրազգաց, բայց և ընդ նմին խոհեմ մարդ։ Չափազանց մեծ դիւրազգացութիւնից նրանում համակրութեան և ատելութեան զգացմունքներն այնքան զօրեղ էին, որ երբեմն բռնութեամբ ստիպում էին նրան շատ անարդարութիւններ գործել։ Նկատելով այս, նա որոշեց ազատուիլ այս թերութիւններից, իբր իւր թշնամիներից։ Եւ ահա նախ և առաջ նա սկսեց ամաչացնել իրեն՝ նոյն իսկ իւր աչքի առաջ՝ իւր թուլակազմութեան համար։ Ապա, երբ նա հանդիպում էր իւր ի վաղուց հետէ ատելի անձնաւորութեանց, նա յաղթահարում էր իրեն և վարում նրանց հետ սիրով։ Այս բանից յետոյ նա անկեղծ ուրախութիւն էր զգում. նրան թւում էր, թէ յաղթութիւն է տարել։ Չափաւորելով իւր հակակրութիւնը դէպի մի քանիսը, նա ընդ նմին զսպում էր իրեն չափազանց համակրանք շռայլելու միւսներին, և ի վերջոյ, հասաւ այնպիսի անձնիշխանութեան, որ իւր իսկ ասելով, նա կարողանում էր միատեսակ բարեհոգութեամբ վարուիլ ամենի հետ, և սառնասրտութեամբ դատել զանազան նկրտերի մասին։

Գիտեմ, որ այս առաւել դիւրին է ասել, քան թէ անել։ Բայց ուրիշ ճանապարհ չը կայ. մի միայն խիստ կարգապահութեամբ կարելի է կրթել բնաւորութիւնը։ Միայն խիստ համբերատարութիւնը կարող է ազատել մեզ ստոր կրքերից, անզուսպ եսասիրութիւնից, կարճ ասած՝ բոլոր ախտերից և փոխարէնը զարգացնել պարտաւորութեան զգացմունքը։ Վիկտոր Ալֆիերին, ցանկանալով պարապել որոշեալ ժամերին, պատուիրել էր ծառային, առանց այլ և այլութեան, կապտել իրեն բազկաթոռի վրայ և ապա չերևալ նշանակեալ ժամանակից առաջ, չը նայելով նրա աղաղակին։ Իսկ աշխարհային զուարճամոլ կեանքից ազատուելու համար՝ նա բոլորովին ածիլում էր իւր գլուխը։ «Զարմանալի» է, կասեն շատերը։ Այո, այսպիսի ճանապարհով են

առաջանում մեծ մարդիկ։ Իրեն մանր բաներում զրկելու կարողութիւնը կազմում է մարդուս գործնական իմաստութիւնը. բայց շատերը չեն ըմբռնում այդ, որովհետև նրանք չեն աշխատում անձամբ ուսումնասիրել մարդկային բնութիւնը։

Ձեր բնաւորութիւնը կրթելիս՝ երբէք համբերութիւնը մի կորցնէք։ Համբերութիւնը մարդուս ամենագերազանց յատկութիւններից մէկն է, ինչպէս մասնաւոր, նոյնպէս և հասարակական կեանքի մէջ։ Մի լսէք Գուերացցիին. ինչ անենք՝ որ նա ասում է, իբր թէ համբերութիւնն անբան անասունի բաժինն է։ Ինձ մնում է միայն կրկնել այն, ինչ որ դուք կը գտնէք Սմայլսի «Բնաւորութեան» մէջ *)։ Մի անգամ Պիտտի ներկայութեամբ խօսք ընկաւ, թէ որպիսի յատկութիւններ առաւել հարկաւոր են պետութեան առաջին նախարարի համար։ Ոմանք ասում էին՝ «ճարտարախօսութիւն», միւսները՝ «ուսումնականութիւն», ուրիշները՝ «իմանալ աշխատանքի համար նշանակած ժամանակ որոշել»։ «Ո՛չ», մէջ մտաւ Պիտտը. «համբերութիւն»։ Գեղարուեստական բոլոր մեծ արդիւնքները, բոլոր յայտնագործութիւններն ու գիւտերը, բոլոր գիտութիւնները, տաժանակիր և համբերութեամբ կատարուած աշխատանքի արդիւնք են։

Մի՞թէ դուք չէք ցանկալ երկարատև համբերութեամբ կազմակերպել ձեր բնաւորութիւնը, երբ համբերութիւնն իւր ոյժով յաղթահարում է աշխարհիս բոլոր գեղարուեստներին և գիտութիւններին։

3) ԼԱՒ ԵՒ ՎԱՏ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ։

Դուրս գալով հասարակաց կեանքի ընդարձակ ասպա-

---

*) Այս վերին աստիճանի օգտաւէտ աշխատութիւնը պ. Փիլիպպոս Վարդանեանի թարգմանութեամբ լոյս տեսաւ Թիֆլիզում 1888 թ.։

ըէզը, դուք կը տեսնէք ձեր շուրջը բազմաթիւ մարդիկ, որոնք առաջարկում են ձեզ իրենց բարեկամութիւնը։ Զգոյշ կացէք, որ ձեր անփորձութեամբ չընկնէք նենգաւոր՝ խարդախ մարդոց ձեռքը, որոնք այնպէս ճարպիկութեամբ լարում են իրենց որոգայթները դիւրահաւատ մարդոց համար։ Նախ քան անձնատուր կը լինիք այն մարդուն, որ առաջարկում է ձեզ իւր բարեկամութիւնը, աշխատեցէք ի մօտոյ ճանաչել նրան, որպէս զի վերջը չը զղջաք։ Լաւ ընկերակցութիւնն ամեն տեսակ հարստութիւնից առաւել լաւ է։ Ճշմարիտ բարեկամը գանձ է։ Բայց նա դիւրութեամբ չի ճարւում։ Սակայն աւելի դիւրին է վատ ընկերների ձեռքն ընկնիլ, որոնք այնպէս են ներգործում հոգու վրայ, ինչպէս վարակուած օդը մարմնու վրայ. ըստ առակին թէ՝ «ում հետ ընկերանաս, նրա նմանը կը դառնաս»։

4) ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԱՌ ԻՒՐ ԱՆՁՆ։

Ունեցէք վստահութիւն առ ձեզ։ Այս բանում ընտանիքը շատ քիչ կօգնի ձեզ, դպրոցն առաւել ևս։ Միայն անձնիշխանութեանն է վիճակուած կատարելու միատեսակ վսեմ և կարևոր դերը՝ զարգացնել մարդու մէջ առ իւր ոյժերն ունենալու վստահութիւնը։ Մեր արեան մէջ է մըտել՝ ամեն բանի համար կառավարութեանը ձեռք մեկնելու սովորութիւնը։ Եւ այժմս էլ, և գուցէ դեռ էլի երկար ժամանակ կը մնայ այդ սովորութիւնը։ Սովորել են ստանալ կառավարութիւնից հաց և գան, թատրոն, եկեղեցի և բանտ, տօն և ամօթալի մահուան պատիժ։ Այս ամենն ընդունւում է միատեսակ բաւականութեամբ։ Բայց այժմ, ի սէրն Աստուծոյ, այլ ևս չը թոյլ տանք այս։ Դադարենք նեցուկներով ման գալուց։ Այսպէս, առանց մասնաւոր մարդոց եռանդագին գործունէութեան, բարիք չի յառաջանալ։ Ահա ինչ ասաց սրա վերաբերութեամբ Կիցօլինին, 3-դ գիւղատնտեսական վեհաժողովի նախագահը.

«Զատ մարդ սովորել է հաւատալ, որ կառավարութիւնն իշխանութիւն ունի երաշտի և անձրևի, լոյսի և խաւարի, քամու և սառնամանիքի վրայ—և այս պատճառաւ էլ իրաւացի թէ անիրաւացի, մեղադրում է կառավարութեանն ամեն մի հասարակ նեղութեան համար այս տաժանակիր և զրկանքներով լի կեանքում. այդպիսի արարածը գնում է կառավարութեանը կը վերապահի մեր զգեստների և կերակրի գին նշանակելու իրաւունքը, և նոյնպէս իրաւունք միջամտելու մեր ամեն մի հաշիւների մէջ, և պարտաւորութիւն յանձն առնելու հոգս տանել մեր մասնաւոր շահերի յաջողութեան վրայ...»։ Ուշադրութիւն դարձրէք, երիտասարդներ, սոյն բառերի բոլոր հեգնութեան վրայ։ Երբ որ կառավարութիւնը տուել է ձեզ գործունէութեան ազատութիւն և ապահովել է նոյնը համապատասխան օրէնքներով,—ապա ձեզ համար ամեն ինչ արել է։ Մնացածը կախուած է ձեզնից։ Ցուսացէք և վրստահ գնացէք յառաջ։ Քիչ երևակայեցէք, շատ գործ շինեցէք։ Այն ազգը, որ հաստատ է իւր գործերի սկզբնաւորութեանց մէջ և հաւատ է ընծայում իւր ոյժերին, անպատճառ իւր դրօշակը կը ծածանի ամբողջ աշխարհի վրայ։—Սրա օրինակը՝ Անգլիան է։

Աշխարհս նրա ձեռքին է, ով կարող է նրան նուաճել։ Եւ խղճալի են այն մարդիկ, որոնք ձեռները ծալած՝ նստած են ծովի ափին և յաջող հողմի են սպասում։

Երիտասարդ խտալացիք, ազատութիւնը բացել է ձեզ համար ընդարձակ ասպարէզ. որոշեցէք ձեզ համար պարզ և ձեր կարողութեանն համապատասխան նպատակ և վստահ յառաջ գնացէք։

Ես ողբում եմ այն երիտասարդներին, որոնք որոնում են պաշտօնական ծառայութիւն, ուրիշ ճանապարհով ապրելու միջոց չը գտնելով։ Առ կառավարչական թոշակներն ունեցած կիրքը դարձնում է ժողովրդին սորուկների խումբ

և ոչնչացնում է անձնական անկախութեան ոգին։ Հաւատացէք ինձ, իտալացի երիտասարդներ, որ պաշտօնավարութեամբ ձեռք բերած հացը շատ դառն է, և ով ուտում է այդ հացը, յաճախ նզովում է իւր բաղդը։

Երանի՜ նրան, ով կարող է ապրել անկախ աշխատանքով։

Ժենեռալ Նին Բիկսի-ին, որը մասնաւոր արդիւնագործութիւնը բարձրացնելու համար կազմեց ուղղակի հաղորդակցութեան նախագիծ Իտալիոյ և հեռաւոր արևելքի մէջ, իւր նամակում, ուղղած «L'internationale» (միջազգային) լրագրի խմբագրին 1870 թ. Մայիսին, ի միջի այլոց՝ գրում է հետևեալը. «Պէտք է մեզ արդարացնենք ծովի առաջ, որ ողողում է մեր ափերը 14,000 կիլոմէտր*) տարածութեամբ։ Պէտք է ծովը նետուիլ, նա շատերին է ապրուստ տալիս։ Պէտք է կանգնել այն ճանապարհին, որով ընթանում են առ այժմս, առանց մրցողների՝ անգլոամերիկացիք։ Նրանցից պէտք է մենք դաս առնենք, որովհետև նրանք են արդարացնում իրենց ազատութիւնը, որ կարողացան ոչ թէ ամուր պահպանել, այլ և դիտցան զինու զօրութեամբ ուրիշների յարգանքը գրաւել դէպի նա...։ Պէտք է շեշտել այն փաստը, որ Անգլիայում վիճակագրական դիւանը (բիւրօ) գտել է միայն 5% չաշխատող ազգաբնակութիւն։ Դոյն տեսակ դիւանը Միացեալ-Նահանգներում չը կարողացաւ հաշուել մէկ տոկոս անգամ անգործներ, այլ միայն 0,81%։ Զուիցերիոյ դաշնակցական դիւանը 1876 թ. հրատարակեց արհեստների վիճակագրութիւնը։ Երևում է, որ Եւրոպայում ոչ մի ազգ 7,7% անգործ մարդկանցից աւելի չունի, իսկ մեզանում, Իտալիայում, հաշուում է մինչ 36,4% մարդ՝ կամ առանց որ և է աշխատանքի, կամ առանց որոշ պարապման։

---

*) Կիլոմէտրը=1400 արշինի։

5) ՆԵՐԲՈՂ ԱՌ ԱՇԽԱՏԱՆՔՆ։

Ապա ուրեմն ել՝ աշխատանք արիութեամբ և հաստատուն հաւատով։ Եւ ազգային բարգաւաճման գեղաժպիտ առաւօտեան արշալոյսը կը ծագի նոյնպէս մեզ համար, ինչպէս որ ծագեց ուրիշ ազգերի համար։ Անիրաւացի է աշխատանքի վրայ՝ իբր անէծքի վրայ նայել։ Այլապէս, բոլոր տիեզերքին պէտք է այդպէս նայէինք, որովհետև տիեզերքը մարմնացնում է իւրմով աշխատանքը։

Աշխատանքն իմաստութիւն է, որովհետև մարդկային հանճարի բոլոր մեծ արդիւնքներն ի ներքուստ ներկայացնում են կազմակերպուած գաղափարների մի որոշ շարք, իսկ իրական կողմից՝ աշխատանքի պտուղ։

Աշխատանքը հարստութիւն ձեռք բերելու կանխիկ վճարելի գրականն է։ Հարստանում է միայն նա, ով աշխատում է, ով մտածում է վաղուան համար և խնայողութիւն է անում։

Աշխատանքը գոհութիւն է։ Ո՛չ մի գործով չը պարապող մարդը երբէք չի կարող կատարեալ երջանիկ կեանք վայելել։ Անդորր քունն է նրա բաժինը, ով կարող է ասել՝ այսօր ես աշխատեցի։ Հարցրէք գիտնականին, փիլիսոփային, հրապարակախօսին, արուեստագէտին, երբ նա դուրս է գալիս աշխատանքի առանձնասենեակից՝ ժամանակ անցուցանելու մերձաւոր բարեկամների շրջանում։ Հարցրէք բանւորին, որ՝ վերադառնալով արհեստանոցի ծանր աշխատանքից, գտնում է իւր տանը հանգստութիւն և մաքուր խղճով կարող է համբուրել իւր զաւակներին ու իւր կեանքի ընկերուհուն։ Եւ ընդհակառակն, նայեցէք անգործին, լինի նա հարուստ՝ թէ աղքատ, քաղաքացի՝ թէ ռամիկ, միևնոյն է. նրա դէմքի վրայ դրոշմուած է դժգոհութիւն և տհաճութիւն։

Աշխատանքը հայրենասիրութիւն է։ Ո՛վ իրեն հայրենասէր է անուանում, իսկ ինքն անգործութեամբ ժա-

մանակ անց կացնում, նա հայրենեաց դաւաճան է։ Ամենահասարակ բանւորի թափած մի կաթիլ քրտինքը, իւր ձեռքի աշխատանքով, առաւել թանկագին է, քան պանդոկի ճարտասանի ճառերի հեղեղը. որովհետև այն քրտնքի կաթիլում բովանդակւում է հայրենեաց երջանկութիւնը, իսկ վերջնոյս ճառերում՝ լրբութիւն և ապականութիւն։

Աշխատանքն ազատութիւն է. միայն աշխատող մարդն է սովորաբար կատարում իր պարտաւորութիւնը. ապա ուրեմն և լիովին արժանի է անկախ մարդու տիտղոսը ժառանգելու։

Աշխատանքով ոչնչանում է աղքատութիւնը։ «Տուէք հաց», ասում է ծուլութեամբ փչացած ամբոխը։ «Աշխատանք տուէք», աղաղակում է քաղաքակրթեալ ժողովուրդը։

Երիտասարդներ, ինձ թւում է, որ կը գայ ժամանակ մօտաւոր ապագայում, երբ Իտալիայում չի գտնուիլ այլ և այնպիսի մարդ, որը, աշխատելու կարողութիւն ունենալով, յանդգնէր ձեռք մեկնելու։ Մարդկային արժանապատուութեան դէմ է ձեռք մեկնելով աշխարհք չափել։ Ո՛վ ոյժ կունենայ աշխատելու, նա կապրի իւր միջոցներով. ում ոյժերը կը դաւաճանեն, նա ապաստան կը գտնի աղքատանոցներում և ապաստանարաններում, որ ստեղծում է միւս քաղաքացիների խնայողութիւնը, որոնց խնամքին է յանձնում հասարակական բարեգործութեան պարտքը իրենց թշուառացած հայրենակիցներին։

Աշխատանքը կը փրկի ամենին։ Աշխատանքին է թողնուած վճռելու ընկերական կնճռոտ խնդիրը։ Խեղճ, բայց կրթուած բանւորը քաջութիւն ունի ինքն իրան ասելու. «Անկախութեան կը հասնիմ ազնիւ աշխատանքով և խնայողութեամբ,—կամակարութեամբ չի աղաղակիլ. «սեպհականութիւնը՝ գողութիւն է. խլենք, ուրեմն, ում ձեռքին որ գտնւում է և հաւասար բաժանենք»։ Սակայն չը կարծէք, թէ ընկերական խնդիրը զուտ տնտե-

սական եմ համարում, ինչպէս այդ ոմանք կարծում են. ընդհակառակն, իմ կարծիքով, ընկերական խնդիրը՝ ուսումնական, բարոյական և կրօնական խնդիր է։ Ընդ նմին տնտեսական տարրը կազմում է նրա արտաքին թաղանդը, իսկ նրա ներքինը պայմանաւորւում է իմաստուն օրէնքներով և աշխատանքով։

Աշխատանքը (ըստ իւր տեսակի) երևելիութիւն է։ Հարստութիւնն, ինչքան էլ որ ինքն ըստ ինքեան շլացնող էր լինէր, զօրութիւն չունի փառաւորելու անզգոյծ ազնուականին, մինչդեռ ազնիւ աշխատանքն անմահացրել է բազմաթիւ ստորին ծագման տէր մարդոց։

Իտալիոյ պատմութիւնը շատ հարուստ է այդպիսի մարդկանցով։ Ես մատնանիշ կանեմ նրանց մի քանիսի վերայ, դասակարգելով նրանց ըստ պարապմանն։

Ճարտարապետներ. Արնոլֆ դի Լեապոն Ֆլորէնտացի գործարանատիրոջ որդի էր։ Ազքատ փորագրողից յառաջ եկաւ և հռչակաւոր Անդրէաս Օրգանյին։ Բրամանտէ-դէ-Ուրբինոն ծնուեցաւ ամենաչքաւոր ընտանիքի մէջ և դեռ մանկութեան ժամանակ, կտոր հացի համար, ստիպուած էր մի նկարչի մօտ ծառայելու։ Փայտահատի որդի էր հռչակաւոր ճարտարապետ և մեքենայագործ Բարտօլոմէօ Ֆէրրակչինոն, և շատ ուրիշները։

Նկարիչներ. Դժիօտտո - դի - Բոնդոնէ-դա-Վէսպանիանո, տոսկանական նկարչութեան հայրը, ծնուեցաւ գիւղացուց և մատաղ հասակում հովիւ էր։ Ամենախեղճ և աննշան նկարչի որդի էր Պաֆայէլ Սանչիոն։ Ընչին ներկարարից ծնուեցաւ Ֆիլիպպո-Լիբուստին («Փոքրիկ նկարիչ»)։

Կարակչիքը իրենց ազգաբանութիւնը հանում են հիւսնից։ Կոշկակարի որդի էր «Ս. Դժիրոլամի հաղորդութիւնը» պատկերի նկարողը. այդպիսի ծագումն ունէր նոյնպէս և Բոլոնացի Դոմինիկ Կամպիերին («Դոմինիկացի»), և շատ ուրիշները։

Քանդակագործներ. Ֆլորէնցիայի Ս. Յովհաննէս եկեղեցու նշանաւոր դռների վարպետ Լորէնցո Գիբէրտօ-ն ծնուեցաւ փորագրողից։ Ֆլորէնտացի Բարտօլոմէօ Բանդինէլլին հասարակ ժամագործի որդի էր։ Անտոնիո Կանովայի հայրը հասարակ քարտաշ էր Պոսսանիօյից։ Լորէնցո Բարտոլինին, որին Նապոլէօն Ա.-ը ծերակոյտի անդամի աստիճանին հասցրեց, դարբնի որդի էր, և շատ ուրիշները։

Զօրապետներ. Ուգուկիչիոնէ-դէլլա-Ֆաջիոլան դուրս եկաւ ամենաչքաւոր ընտանիքից, բայց հասաւ Լուկկայի և Պիզայի տէր կոչմանը։ Հռչակաւոր սպարապետ Մուցցիի Ատտէնդոլո Սֆորցա ծնուեցաւ գիւղացուց։ Նրա որդի Ֆրանցիսկոսը դարձաւ Միլանի դուքս։ Ֆրանչիսկո Բուսսոնէ-ն, վերջը Կօրմանեօլի կոմսը, որ երևելի մարդ էր՝ իբրև սպարապետ, իբրև բնաւորութեան կատարելատիպ, Մակլօդիայի յաղթողը, որ անմահացրել է իրան ոչ միայն կեանքով, այլ և անժամանակ մահով, գիւղացու որդի էր և մանկութեան ժամանակ հովիւ։ Այստեղ կարելի է յիշել և հազարաւոր ուրիշներին։

Մոդէստներ. Ջիովաննո Բօկկաչիոն վաճառականի որդի էր։ Լիւդովիկո Արիոստոն ծնուեցաւ ամենաչքաւոր, ռամիկ ծնողներից։ Ֆրա-Պաւէլ Սարպին նոյնպէս ծնուեցաւ խեղճ Վենետկեցի մանրավաճառից։ Իտալական պատմութեան հայր Անտոնիո Լիւդովիկո Մուրատորին հովուի որդի էր և ինքն էլ մանկութեան ժամանակ հօտաղ։ Բրեշիանացի Նիկոլա Տարտալիան, աշխատանքներին և զրկանքներին համբերող այս հրաշքը, ծնուեցաւ դեսպանատան հասարակ աստիճանաւորից։ Ձեզնից որին յայտնի չէ «Օրուայ» հեղինակի աղքատութիւնը։ Ձենք խօսում այլ ևս անցեալի և ժամանակակից բազմաթիւ իտալացի մատենագիրների մասին։

Ճանապարհորդներ. Ձեզ ամենին յայտնի է, որ տաղանդաւոր Պադուացի Ջիովանս Բատտիստի Բելցոնին ծնուե-

ցաւ վարսավիրայից և ինքն էլ այդ արհեստով էր պարապում։ Իսկ ով չը գիտէ, որ Քրիստափոր Կոլումբոսն աղքատ ոստայնանկի միակ զաւակն էր։

Գրիգոր Է պապը փայտահատի կացնից չը հասաւ արդեօք պապական խոյրին։ Իսկ Սիքստոս Ե չը փոխեց արդեօք խոզարածի դագանակը եկեղեցու գլխի կոնքեռի վրայ։

Բայց այսպիսով ես չեմ կարող վերջը հասնել, եթէ մի առ մի թուեմ այն բոլոր իտալացիների անունները, որոնք ծնուելով աղքատութեան և ստոր կացութեան մէջ, իրենց անջնջելի և անմոռանալի յիշատակն աւանդեցին յաջորդներին։

Երիտասարդ իտալացիք, ձեր ձեռքին է մեր հայրենեաց ապագան։ Մենք արինք հայրենեաց համար այն, ինչ որ իւրաքանչիւրիս ոյժը ներում էր. մեզ մնում է միայն յաւիտենական հանգիստը վայելել։ Ձեզնից է կախուած ապագայում հայրենեաց փառքը կամ անկումը։ Ապացուցէք աշխարհին, որ Իտալիան, ստեղծելով իրեն, հոգաց նաև պատրաստելու իտալացիներ։



ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԷՐ ՄԱՐԴՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ.

§ 1. Մարդս ստեղծուած է ոչ պատահական և ոչ էլ անասնական կեանքի համար։ Այլ է մարդու կոչումը՝ նը-պաստել հասարակական կեանքի բարւոքմանը իւր ձեռքի տակ եղած միջոցներով։

§ 2. Բանականութիւնն ու կամքը մարդուն երկու նը-շանաւոր ճշմարտութեանն են հասցնում։ Առաջին՝ թէ գոյութիւն ունի բոլորովին կատարեալ մարդու նախագաղա-փար (էդէալ) անձնական անհատականութիւնից անկախ։ Եւ երկրորդ՝ թէ անընկճելի ոյժը տանում է մեզ դէպ՝ այս իդէ-ալը, որին մերձենալումն է կայանում մեր երջանկութիւնը։

§ 3. Բնաւորութեան տէր մարդն ասում է ինքն իրան. կամենում եմ միայն այն, ինչ որ ճշմարիտ է և արդար, որ-պէս թելադրում է բանականութիւնը։ Կամենում եմ և սի-րում։ Ապա ուրեմն կը ձգտեմ հասնել նրան, ինչ որ ինձ թելադրում է բանականութիւնը, կամքն ու սէրը։

§ 4. Ո՛րքան էլ որ գերակշռող ոյժը չը ստիպէր ինձ դաւաճանել մաքուր բանականութեանն, այնու ամենայնիւ չեմ զլջանիլ այդ ոյժին և չեմ թոյլ տալ չարին ոտնակոխ անելու բարուն։

§ 5. Ո՛ր և է գործի ձեռնամուխ լինելուց առաջ, մա-նաւանդ՝ եթէ այդ կարևոր գործ է, ես պարտաւոր եմ լաւ կշռել նրա պատճառներն ու հետևանքները, որպէս զի վերջը չը ողբամ սխալանքներս և անպատրաստականու-թիւնս՝ վեհ նպատակին հասնելու համար։

§ 6. Ո՛վ չը գիտէ սկզբնական և վաղճանական կէտերը, նա չի կարող ընտրել ճշմարիտ՝ ուղիղ ճանապարհը։

§ 7. Երբ ես գիտեմ՝ թէ ինչ եմ կամենում և գիտեմ, որ այդ հնարաւոր է, ապա դիւրաւ կարելի է հասնել դրան՝ բնաւորութեան եռանդագին տոկունութեամբ։

§ 8. Ո՛վ իւր բոլոր ոյժերը լարում է նպատակին հասնելու համար և չի կանգ առնում, մինչև չը մերձենայ վերջին սեանը, նա կարող է իւր համար ասել, թէ բնաւորութիւն ունի։ Սակայն չեմ ձգտիլ վատ և ճշմարտութեանն հակառակ նպատակին հասնելու, վասն զի այն ժամանակ կատարեալ իրաւամբ կարող են ասել. ահա, այս էլ բնաւորութեան տէր մարդ, բայց՝ անբարոյական բնաւորութեամբ։

§ 9. Ո՛վ համաձայն իւր կամքի է վարւում, բայց ոչ ըստ պարտաճանաչութեան, նա դեռ ևս ճշմարտութեամբ չէ վարւում։ Ճշմարիտ բնաւորութիւնն արտայայտւում է պարտքը կատարելում, մինչև անգամ կամքի հակառակ, եթէ կամքը կրքերի ազդեցութեամբ հակառակում է պարտքին։

§ 10. Կամենում ես բնաւորութիւն ձեռք բերել, ուրեմն միշտ ուղիղ ճանապարհով գնա, ոչ մի կողմը մի՛ շեղուիր, գնա, ուր պարտքդ հրամայում է։

§ 11. Ո՛վ հանդէս կը բերի ինձ իմ իրաւունքները, և կը խօսի նրանց կարևոր նշանակութեան մասին, նրան ես կը պատասխանեմ. այդ ամենը ես ինքս էլ լաւ գիտեմ, բայց ինչու դու բոլորովին ձայն չես հանում իմ պարտաւորութիւնների մասին։

§ 12. Ո՛վ պարտաւորութիւնը անուանում է ստրկութիւն, նա ինքը կամ չունի ազատութիւն, կամ թէ, մինչև անգամ, ամենևին չէ հասկանում, թէ ինչ է ազատութիւնը։

§ 13. Բնաւորութիւն ձեռք բերելու համար բաւական չէ մի միայն հրճուիլ հերոսական սխրագործութեամբ, այլ հարկաւոր է գործին անցնել և կատարել անյողդողդ և ազնուութեամբ այն, ինչ որ ներում են բնութիւնն ու հասարակական կեանքի պայմանները, որի մէջ պտտւում ենք։ Հերոսներ շատ և շատ սակաւ են, իսկ մարդիկ բիւրաւոր, ուրեմն մի՞թէ անպատճառ պէտք է հերոս լինիլ, որ կարելի լինի ազնիւ և ընտիր բնաւորութիւն ունենալ։

§ 14. Միշտ և հանապազ ճշմարիտը կը խօսեմ։ Իսկ եթէ օրէնքը, առողջ դատողութիւնը կամ մի որ և է այլ կարևոր պատճառ արգելում է ինձ ճշմարտութիւնն արտայայտել, ապա առաւել լաւ է լռեմ, քան սուտ խօսեմ։

§ 15. Լեր ուղղամիտ մարդ և փոխարէնը կը վայելես ուրիշ մարդկանց յարգանքը, նա և չարագործներինն անգամ. ուղղամտութիւնը որքան խաղաղութեան զէնք է, նոյնքան էլ յաղթութեան։

§ 16. Ստախօսութիւնից առաւել ատում եմ երեսպաշտութիւնը. վերջինս առաւել վտանգաւոր է։ Ո՛վ ատում է, նա գիտէ թէ ինչ է ասում. բայց ով ներս է թափանցում մարդու հոգու խորքը երեսպաշտութեամբ, նա ձևանում է ազնիւ մարդ, իսկ իրօք՝ անպիտան է։

§ 17. Ստախօսի շրթունքները ծածկուած դագաղ են. եթէ բանանք նրա կափարիչը, այնպիսի գարշահոտութիւն կը տարածուի, որ մարդ կը կամենայ դեռինն անցնել։

§ 18. Զողոքորթը երկրիս սողունն է, որ խայթում է անցորդի գարշապարը, երբ նա գնում է իրեն համար անհոգ, ոչինչ չը կասկածելով։

§ 19. Ուրիշներին ստորացնելու կիրքը՝ ամենաստոր ախտն է։ Երկիցս նախատանաց արժանի է նա, ով իւր համար գովեստներ ընձեռելու դիտմամբ՝ վատաբանում է ուրիշին։

§ 20. Ազնիւ բնաւորութեան տէր մարդը ոչ թէ չի սկսիլ ում և է ամբաստանել, այլ ընդհակառակն, նա չի կարող առանց ցաւի և զայրոյթի համբերել, եթէ մինը կը սկսի ուրիշին նրա բացակայութեամբ ստորացնել, և եթէ հանգամանքները լաւ գիտէ, կատաղութեամբ յարձակւում է յանդուգնի վրայ։

§ 21. Որոշ սահմանուած հեղինակութիւնը պէտք է յարգել, որովհետև նրանով են մարմնանում օրէնքները և պաշտպանւում իւրաքանչիւրի և բոլորի ազատութիւնը՝ իւրաքանչիւրի և բոլորի բռնութեան դէմ։

§ 22. Ճափաւորութիւնը բոլոր առաքինութեանց զարդն է. նա գրաւում է յարգանք առ մարդն և ազատում նրան շատ վտանգներից։

§ 23. Եթէ մինն ինձ հարցնէր, թէ ինչպէս պէտք է ապրել յարգանք և անդորրութիւն վայելելու համար, ահա իմ խորհուրդը՝ «խոհեմ եղիր քո բոլոր արարքներիդ մէջ». խոհեմութիւնը բոլոր առաքինութեանց արքայութիւնն է և արիութեան նշան։

§ 24. Ցաղթութիւնը դափնիներով է պսակում ոչ թէ սկսողին, այլ ով իւր գործը մինչև վերջը կը հասցնի։

§ 25. Եթէ ես չեմ կամենում բնաւորութիւն չունեցող մարդու անունը վաստակել, ուրեմն պէտք է մինչև վերջը հասցնեմ իւրաքանչիւր գործ, որ ձեռնարկել եմ, չը զիջանելով ոչ բաղդի փոփոխութեանցը, ոչ բնութեան արգելքներին, ոչ մարդոց ելուզակութեանցը. առաւել լաւ է՝ թող պատուով տկարանամ, քան ձգեմ գործս անսրտութեամբ և անբնաւորութեամբ։

§ 26. Մի անգամ յանցանք գործելով, եթէ ես սկսեմ արդարանալ անձիս առաջ և խեղդել խղճիս ձայնը, ես կը կանգնեմ ստորութեանց ճանապարհին։

§ 27. Ոչ մի բան այնպէս չի թուլացնում բնաւորութեան ոյժը, որպէս սեպհական խղճի հետ հաշտութիւն կայացնելու սովորութիւնը։

§ 28։ Սէր առ հայրենիս, ահա իմ սրբութիւնը։ Բայց հայրենիքս կը սիրեմ միայն հայրենեացս՝ և ոչ թէ անձնական փառասիրութեանս համար։

§ 29. Բոլոր իմ դիտաւորութիւններն ու պարտաւորութիւնները կատարելու ժամանակ միշտ միատեսակ կանոններ կը պահպանեմ. ոչինչ այնպէս չի վնասում մարդոց, անպատուելով ընդ նմին յաւիտենական ճշմարտութիւնը, որպէս կրկնակի կշիռների և կրկնակի չափերի կանոնը։

§ 30. Եթէ մարդիկ գիտակցաբար հասկանային անաչառութեան ողջ օգուտը, թէ ինչպէս է նա մեծացնում սեպհական արժանաւորութիւնը և ինչպէս առ մեզ է գրաւում բոլոր ուղղութեան տէր մարդոց, ապա անաչառ կը դառնային և կը դադարէին մի միայն հաշուով ապրելուց։

§ 31. Նախատանաց արժանի են այն մարդիկ, որոնք ընտրութեանց ժամանակ իրենց կողմն աւելի մեծամասնութիւն գրաւելու դիտմամբ, ազդում են ժողովրդի կրքերի վրայ և գիտնալով՝ որ անպիտան են վարում, բայց և այնպէս դարձեալ քար են ձգում ազնիւ և անշահասէր մարդոց վրայ, որոնց յայտնած մտքերը հայրենեաց սիրոյ և ապատութեան մասին մի ժամանակ ազահութեամբ լսում էին։

§ 32. Համակրիր ոչ թէ նրան, ով միայն անգիր սերտած կրկնում է «ապգ» բառը, այլ նրան, ով որ ճշմարտութեան դէմ չը գնալով, ճշմարիտ օգտակար գործ է կատարում ազգի բարոյական և նիւթական կարիքների համար։

§ 33. Հարստութիւնը դեղեցիկ և ցանկալի բան է, բայց և այնպէս ազնիւ բնաւորութեան տէր մարդն առաւել շուտ կը ցանկայ յուսալ հասարակաց բարեգործութեան

վրայ և վճռուիլ աղքատանոցում մեռնել, քան թէ հարըստութեան ետևից ընկնելով՝ խորասուզուիլ ստորութեան տղմի մէջ։

§ 34. Գործնական առողջ դատողութեամբ օժտուած մարդը գոյութեան կռուի մէջ առաւել շուտ ելք կը գտնէ, քան թէ նա, որի գլուխը ծանրաբեռնուած է հանրագիտական տեղեկութիւնների անթիւ՝ անմարսելի պաշարով։

§ 35. Փորձը խիստ և դառն դպրոց է, բայց և սա միայն ընդունակ է հեռացնել աչքից բոլոր ցնորամիտ նշոյները և մարդոց խոհեմ և հեռատես դարձնել։

§ 36. Անվեհերութիւնը բնաւորութեան հիմնաքարն է։

§ 37. Եթէ ինձ, հանգամանքներից ստիպուած, վիճակուի քաղաքական կեանքի ասպարէզը դուրս գալ, ապա կը զինուիմ ինչպէս հարկն է և կը պաշտպանեմ իմ ընտրողներիս իրաւունքները ամեն տեսակ բռնութեան դէմ,— լինի նա բարձրագոյն շրջաններից թէ ամբոխից, միևնոյնն է։

§ 38. Անձնական կրքերը զսպելու արիութիւնը լայնաձաւալ բնութեան շնորհն է, որ ընդունակ է մեծամեծ սխրագործութեանց։ Մեր անձը զսպելու յաղթանակն անհամեմատ առաւել դժուարութեամբ է յաջողւում, քան թէ արտաքին բնութեան, բաղդի և այլ մարդոց դէմ։ Այն, ինչ որ մենք անուանում ենք բարոյական արիութիւն, անպայման հարկաւոր է ամենին, ով ուզում է ազնուութեամբ ապրել և բոլոր բարի մարդոց յարգանքը վայելել։

§ 39. Որքան որ յարգանաց արժանի է քաղաքական և բարոյական սխրագործութիւնը, նոյնքան էլ ընդհակառակն յանդիմանութեան արժանի է հասարակ քաջագործութիւնը, որ արտայայտում է միայն յանդուգն և ապա-

կանուած բարք։ Ո՛վ շփոթում է կռուարարութիւնը արիութեան հետ, նա չի տեսնում երկու բոլորովին իրար հակառակ, փոխադարձապէս իրար հակասող, առարկաների մէջ եղած տարբերութիւնը։

§ 40. Անվեհերութեան շնորհիւ մարդս կարող է հերոս դառնալ։ Իսկ կռուարարութիւնն անասելի ջանքերի շնորհիւ անգամ կարող է տալ միայն հերոսի տկար նմանութիւնը։

§ 41. Անպիտան է նա, ով դատում է մարդու բարոյական, քաղաքացիական և հասարակական գործունէութեան մասին միայն ուրիշների ասածով կամ իւր կարծիքով։

§ 42. Ինքն իրան չի յարգում նա, ով թեթևամտութեամբ աշխատում է ուրիշի յարգը վայր ձգել։

§ 43. Եթէ ես զաւակներ ունենամ, կաշխատեմ նրանց մտաւոր ընդունակութիւնների հետ 'ի միասին կրթել նա և բարոյական ընդունակութիւնները. չէ՞ որ լուսաւորեալ մարդն էլ կարող է լուսաւորեալ աւազակ դառնալ, եթէ ժամանակին չի սովորիլ առաքինի կեանք վարել։

§ 44. Տէր մի արասցէ, որ ես խառնուիմ որդւոցս կեանքի գործունէութեան ասպարէզ ընտրելու գործում։ Հայրը կարող է միայն խորհուրդ տալ զաւակներին այս կամ այն պարապմունքն ընտրելու, բայց ոչ թէ բռնութեամբ ստիպել, որ ընդունեն. այլապէս՝ նա կը յարուցանի որդւոց ատելութիւնը, հասարակութեան արհամարհանքը և Աստուծոյ անէծքը։

§ 45. Հօր և մօր առաջին պարտաւորութիւնն է՝ ամբողջապէս նուիրուել զաւակների դաստիարակութեանը. ամեն մի ուրիշ պարտաւորութիւն երկրորդական տեղ է բռնում։

§ 46. Անընդհատ խստութիւնը և անընդհատ ներողամտութիւնը ներկայացնում են հակադիր ախտեր, որոնցից բընաւորութեան կրթութեանն անասելի վտանգ է սպառնում։

§ 47. Ձաւակներիս տուած իմ բոլոր խրատներն ու խորհուրդները քամին կը տանի, եթէ ես ինձ համար կանոն չեմ դնիլ՝ միշտ հաստատել ասածներս համապատասխան օրինակներով։

§ 48. Տգիտութեան իշխանութիւնն առաւել լայնածաւալ է և ահարկու, քան թէ սովորաբար կարծում են։ Իսկ բնաւորութեան համար տգիտութիւնը անհաշտ թշնամի է. ապա ուրեմն կաշխատեմ, որքան ոյժերս կը ներեն, յաղթելու այդ թշնամուն։

§ 49. Որդուս ուսումնարան տալիս՝ ես կասեմ ուսուցչին. ուսուցէք նրան ոչ թէ միայն տգիտութիւնից ազատուիլ, այլ և պատրաստուիլ արիաբար մաքառել բոլոր թշնամական ոյժերի դէմ, երբ նա հասարակական կեանքի ասպարէզը կը մտնի։ Ուրիշ խօսքով. դարձրէք նրան բնաւորութեան տէր մարդ։

§ 50. Ինչ չափով որ կարող են վսեմացնել ոգին և կրթել բնաւորութիւնը ըստ պատշաճին գործ ածուող պարգևներն ու արդարացի պատիժները, նոյն չափով էլ, բայց բոլորովին հակառակ կողմը, կարող են ներգործել պարգևն ու պատիժը, եթէ նրանք ճշմարտութեան հակառակ են գործադրուած։

§ 51. Նախ քան որդուս ուսումնարան տալը, ես կաշխատեմ իմանալ, թէ ինչ խստութեամբ է պահպանուում այնտեղ կարգը։ Բանն այն է, որ վատ կարգապահութիւն ունեցող դպրոցից, երիտասարդները դեռ էլի դուրս կը գան որ և է ուսումով, բայց ոչ թէ բնաւորութեամբ, որ շատ կարևոր է ազնիւ քաղաքացու համար։

§ 52. Այդ բաւական չէ. մինչև անգամ ամենամեծ ընտրութիւն անելիս՝ կը զբաղուիմ լաւ ուսուցիչ որոնելով այն համոզմամբ, որ ուսուցիչը ինչքան էլ մեծ ուսումնական լինէր, երբէք չի զարթեցնիլ մանկանց մէջ ազնիւ զգացմունքներ, եթէ նա չի լինիլ ազնիւ և լաւ ուղղութեան տէր մարդ։

§ 53. Բնաւորութիւն ունեցող մարդը հնազանդւում է այն օրէնքներին, որոնցով կառավարւում է նրա հայրենիքը. իսկ եթէ նրանց համարում է անարդար, ապա նրանց յանդիմանելու համար օգտւում է միայն այն միջոցներով, որոնք թոյլ են տալիս նոյն այդ օրէնքները։

§ 54. Մարդուս ամենօգտակար ուսուցիչը նոյն ինքն մարդն է. աւարտելով ընտանեաց և դպրոցի դասընթացը, նա յանձնւում է ինքն իրան, որ քաղաքացիների հետ ապրելով կեանքում, ըստ ցուցման փորձի, մաքուր արտագրի այն, ինչ որ սեագրութեամբ սկսել էր։

§ 55. Կը խուսափիմ վատ ընկերակցութիւնից, ինչպէս թունաւոր միազմներով վարակուած տեղից, և կը փորձեմ գտնել մի կամ երկու բարեկամ, որոնք իրենց օրինակով կարողանային վսեմացնել իմ ոգին և կասեցնէին ինձ այնպիսի արարքներից, որոնք արատ պիտի բերէին պատուիս։

§ 56. Եթէ ես յարգանք չեմ ունենալ դէպ՝ ինքս ինձ և վստահութիւն իմ սեպհական ոյժերիս վրայ, ապա զուր է պարծենալ իմ բնաւորութեամբս։ Զէ՞ որ հէնց բնաւորութիւնն է այն նեցուկը, որի շնորհիւ մարդս երբէք չի շեղուիլ իւր պարտքը կատարելուց, թէկուզ նա ամենից թողնուած լինէր կամ բոլորովին ընկճուած. նրա համար բաւական է միայն իր խղճի խրախոյսը։

§ 57. Կը յարգեմ աշխատանքը, իբրև մարդուս տուած աստուածային ամենալաւ շնորհ։ Պողպատը՝ շարունակ գործ

ածուելով, փայլում է. իսկ անգործադրելի մնալով՝ ժանգոտում։ Նոյնն էլ մեր բնաւորութիւնն է. աշխատանքից նա նրբանում է, պարապութիւնից՝ բրտանում։

§ 58. Առաւել ընտիր խօսք չեմ գտնիլ, քան ինչ որ ասաց Բէնիամին Ֆրանկլինը. «Ո՛վ գիտէ աշխատել, երբէք սովից չի մեռնիլ»։ Սովը նստած է աշխատասէր մարդու դրանը, բայց չի համարձակւում ներս մտնել։

§ 59. Բնաւորութեան տէր մարդն երբէք գանգատաւոր չէ բաղդից. նա գիտէ, որ մարդուն քամբախտացնող բոլոր դժբաղդութեանց պատճառ, վերջ ի վերջոյ, լինում է նոյն ինքն մարդը։

§ 60. Զո՞ւր ժամավաճառ մի՛ լինիր. «Ժամանակն, ասում է նոյն Բէնիամին Ֆրանկլինը, նիւթ է, որից դու հիւսում ես քեզ համար կեանք». եթէ չես օգտուիլ այդ նիւթից, ապա և չես օգտուիլ նոյնպէս կեանքից։

§ 61. Բնաւորութեան ոյժի առաջ նսեմանում են աշխարհաշինութեան բոլոր մնացեալ ոյժերը. և եթէ մարդիկ ըմբռնէին այս ոյժի նշանակութիւնը, ապա ամեն միջոց գործ կը դնէին կրթելու իրենց բնաւորութիւնը։

Մանկանոց Դպրոցական Գրադարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ I

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ։ 1) Ի՞նչ արաւ Իտալիան։ 2) Ի՞նչ է մնում անելու։ 3) Հեղինակութեանս նախագիծը և ընդհանուր ստորաբաժանումները։ . . . . Ա—Ը

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ. 1) «Բնաւորութիւն» բառիս սովորական իմաստը։ 2) Բարոյական և անհատական բնաւորութեանց տարբերութիւնը։ 3) Բնաւորութեան տարրերը։ 4) Լաւ և վատ բնաւորութիւններ։ 5) Կեղծ բնաւորութիւններ։ 6) Խառնուածքի և բնաւորութեան տարբերութիւնը։ 15

ԳԼՈՒԽ Բ.

ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ. 1) Բնաւորութեան գաղափարին կից է պարտաւորութեան գաղափարը։ 2) Բնաւորութեան և պարտաւորութեան տարբերութիւնը։ 3) Իրաւունքներից զանցանիլը և պարտաւորութեանց զանց առնելը։ 4) Պարտաւորութիւնն է համաշխարհային օրէնք։ 5) Պարտաւորութիւնն ազատութիւն է։ 6) Ե՛կ՝ գործենք, ինչ կարող ենք։ 7) Պարտաւորութիւններ, որոնք ընդհանուր են բոլոր մարդոց։ 28

Էջ

ԳԼՈՒԽ Գ.

ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԷՐ ՄԱՐԴՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ. 1) Արդարասիրութիւն և ուղղամտութիւն։ 2) Կեղծաւորութիւն և ստախօսութիւն։ 3) Զողոքորթութիւն։ 4) Համբաւանք։ . . . 38

ԳԼՈՒԽ Դ.

ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԷՐ ՄԱՐԴՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ. 1) Թոյլ յարգենք հեղինակութիւնը։ 2) Չափաւորութիւն, խոհեմութիւն և տոկունութիւն։ 3) Խղճի հետ հաշտութիւն։ . . . 48

ԳԼՈՒԽ Ե.

ԴԱՐՁԵԱԼ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԷՐ ՄԱՐԴՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ. 1) Ճշմարիտ և կեղծ հայրենասիրութիւն։ 2) Անաչառութիւն։ 3) Ճըշմարիտ և կեղծ ժողովրդականութիւն։ 4) Ամբոխի աչքին թոզ փչելը։ 5) Ազնիւ աղքատութիւն։ 6) Գործնականութիւն։ 59

ԳԼՈՒԽ Զ.

ԱՐԻՈՒԹԻՒՆ. 1) Արիութեան ոյժը։ 2) Ֆիզիքական արիութիւն։ 3) Քաղաքացիական արիութիւն։ 4) Բարոյական արիութիւն։ 5) Յանդգնութիւն և արիութիւն։ 6) Հայեացք մեր անձանց վրայ։ 71

ԳԼՈՒԽ Է.

ԱՄՓՈՓՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ. 1) Բնաւորութեան ոյժը։ 2) Մի շարք վեհ բնաւորութեամբ իտալացիներ։ 3) Մի հատուած Մասսիմօ դ'Ազելիօյի։ 86

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ Ա.

ԸՆՏԱՆԻՔ. 1) Տունը կազմակերպում է մարդուն։ Բիրտ կողմը։ 2) Անհրաժեշտ կարևոր յատկութիւններ՝ ընտանեաց տէր դառնալ ցանկացողի համար։ 3) Ի՞նչ է ներկայացնում իւրմով հայրը։ 4) Ի՞նչ է ներկայացնում իւրմով մայրը։ 5) Տոկունութիւն և համբերութիւն։ 6) Ամփոփումն։ 91

ԳԼՈՒԽ Բ.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ. 1) Բնական հակումների սկզբնական ուսումնասիրութիւնը։ 2) Ընտանեկան պարտաւորութիւններ։ 3) Ընտանեկան դաստիարակութեան գերակշռող թերութիւնները։ 103

ԳԼՈՒԽ Գ.

ԴԱՐՁԵԼ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ. 1) Անվեհերութեան սկզբնական կրթութիւնը։ 2) Անմիտ խստութիւնից յառաջացած թերութիւններ։ 3) Խոչընդոտների վարժարան։ 4) Մանկական երկիւղներ։ 5) Օրինակի ազդեցութիւնը։ 112

ԳԼՈՒԽ Դ.

ՎԱՐԺԱՐԱՆ. 1) Վարժարանի նպատակը։ 2) Սրտի կրթութիւն։ 3) Ամերիքական և անգլիական վարժարան։ 4) Մի ցանկութիւն։ 120

ԳԼՈՒԽ Ե.

ԴԱՐՁԵԼ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ. 1) Դպրոցական կարգապահութիւն։ 2) Պարգևներ և պատիժներ։ 3) Ու--

Էջ

սուցիչ։ 4) Ուսուցչական վարժարան։ 5) Վարժարան, ընտանիք, հանրակեցութիւն։ 129

ԳԼՈՒԽ Զ.

ԱՐՀԵՍՏԳԻՏԱԿԱՆ (ՏԵԽՆԻԿԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹԻՒՆ. 1) Արհեստագիտական կրթութեան պատմական դերը։ 2) Դասական (կլասսիքական) և արհեստագիտական կրթութիւն։ 3) Արհեստագիտական կրթութիւնն Իտալիայում։ 141

ԳԼՈՒԽ Է.

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆԸ ԿՐԹՈՒՄ Է ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ. 1) Մարմնամարզութիւնը կազդուրում է մարմինը և ուղղում շարժուածները։ 2) Մարմնամարզութիւնն իտալական դպրոցներում։ 3) Մարմնամարզական հանդէսներ։ 156

ԳԼՈՒԽ Ը.

ՕՐԷՆՔ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ. 1) Օրէնքի ազդեցութիւնը բնաւորութեան կրթութեան վրայ։ 2) Օրէնքի և բարոյականութեան գործադրութիւնը պետութեան կողմից։ 3) Կառավարութիւնը բաւականաչափ զօրեղ պէտք է լինի իւր հեղինակութիւնը պահպանելու համար։ 164

ԳԼՈՒԽ Թ.

ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹԻՒՆ. 1) Անձնիշխանութիւն։ 2) Ինչպէս է դաստիարակւում կամքը։ 3) Լաւ և վատ ընկերակցութիւն։ 4) Վստահութիւն առ իւր անձն։ 5) Ներքոյ աշխատանքին։ 175

ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԻՐ ՄԱՐԴՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ . . . 191

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Սրբազան պարտաւորութիւն եմ համարում խորին շնորհակալութիւնս յայտնելու յարգելի բարեկամներիս — Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանին, Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանին, Գէորգ Եպիսկոպոս Սուրէնեանին, Արժ. Վահան քահանայ Յովհաննիսեան — Վաչէեանցին, Արժ. Բարդուղիմէոս քահանայ Բէկ-Գիւլեանցին, Մեծ. Օր. Գայիանէ Տէր-Խաչատրեանին, վեհաշն գնդապետ Աղեքսանդր Թումայեան Մէլիք-Հայկազեանին, պարոնայից՝ Աղէքսանդր Քիշմիշեանցին, Գէորգ Աքիմեանցին, Ն. Յարոյին, Ն. Քարամեանցին, Ա. Եղեկեանցին Մ. Ասիլեանցին, Ռ. Յովհաննիսեանցին, Պետրոս Խսախանեանցին, Յարութիւն Զոհրաբեանցին, Մեսրովբ Տէր-Զաքարեանցին, Ղեւոնդ Դանիէլեանցին, Մինաս Ազնաւուրեանցին, Պօղոս Տէր-Պողոսեանցին, Ղուկաս Քուշիկեանցին, որպէս եւ յարգելի բաժանորդներիս, որոնք ըստ չափու կարողութեան օգնեցին գրքոյկիս հրատարակութեանն։ Գ. Ջ.

ՅԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅՏԱՐԽԱՆ

Օրինակ։

Գերապատիւ Գէորգ Եպիսկոպոս Սուրէնեանց, Թեմական Առաջնորդ Հաշտարխանու 5
Արժ. Յովսէփ քահանայ Բունիաթեանց 1
Արժ. Մելքիսէդէկ աւագ քահանայ Քալանթարեան . . . . „
Արժ. Դաւիթ քահանայ Դաղաշեանց . . . . . „
Արժ. Գաբրիէլ քահանայ Բախրեանց . . . . . „
Արժ. Աբրահամ քահանայ Պօպովեանց . . . . . „
„ Դաւիթ Սարկաւագ Բէկնազարեանց . . . . . „
„ Սիմէօն Սարկաւագ Մնացականեանց . . . . . „
Պ. Գէորգ Օհանեան Խալաթեանց . . . . . „
Պ. Յովհաննէս Աղաբէկեան Դօղաղեանց . . . . . „
Պ. Գրիգոր Մկրտումեան Սարգսեանց . . . . . „
Պ. Մկրտիչ Յովհաննիսեան Նէանգուլեանց . . . . . „
Պ. Զաքարիա Մկրտումեան Զոհրաբեանց . . . . . „
Պ. Ղազարոս Դաւթեան Եղեանց 2
Պ. Սարգիս Գէորգեան Թելեթեանց 5
Պ. Սիմէօն Մովսիսեան Պօպովեանց 1

Օր.

Պ. Կարապետ Սիմէօնեան Սօբօլեանց 1
Պ. Աստուածատուր Աւալեան Աղամեանց . . . . . »
Պ. Բենիամին Յովհաննիսեան Մէլիքեանց . . . . . »
Պ. Մկրտիչ Ամբակումեան Բուրջալեանց . . . . . »
Պ. Յակոբ Հայրապետեան Գրանելշչիկեանց . . . . . »
Պ. Յակոբ Իմմանուէլեան Ալաջալեանց . . . . . »
Պ. Յովակիմ Գրիգորեան Կուզնեցեանց . . . . . »
Պ. Սարգիս Սէտիսեան Մելնիկեանց . . . . . »
Պ. Դանիէլ Յարութիւնեան Ֆրանգուլեանց 2
Պ. Խաչատուր Դանիէլեան Լալայեանց 1
Պ. Մարտիրոս Կարապետեան Կոստենցեանց . . . . . »
Պ. Գէորգ Մարտիրոսեան Բարդուխարեանց . . . . . »

ՔԻԶԻՆԵՒ

Գերապատիւ Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանց, Թեմական Առաջնորդ Բեսարաբիոյ 2

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆ

Պ. Պետրոս Խաչանեանց 1
Պ. Սիսակ Օհանեանց . . . . . »
Պ. Երանոս Բաղդասարեանց . . . . . »
Պ. Աղեքսանդր Խաղուլեանց . . . . . »
Պ. Սարգիս Տէր-Սարգսեանց . . . . . »
Պ. Յակոբ Եարվիլեանց . . . . . »
Պ. Կարապետ Պարզեանց . . . . . »

ԲԱԳՈՒ

Գերապատիւ Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց, Թեմական Առաջնորդ Զամախու վիճակի 2
Պ. Ներսէս Սարուխանեանց 1
Արժ. Գրիգոր քահանայ Գրիգորեանց . . . . . »
Արժ. Խորէն աւագ քահանայ Միրզաբէկեանց . . . . . »
Պ. Սամուէլ Դիլդարեանց . . . . . »
Պ. Հայրապետ Քոչարեանց . . . . . »
Բագուայ Հայոց „Մարդասիրական Ընկերութեան“ գրատուն »
Պ. Աղեքսանդր Բախչինեանց . . . . . »
Պ. Սահակ Աւետիսեան Առաքելեանց (Հադրութեցի) . . . . »
Պ. Սարգիս Մկրտչեան Տէր-Զաքարեանց (Մեղրեցի) . . . . »
Պ. Մկրտիչ Յովհաննիսեան Տէր-Յակոբեանց . . . . . »
Պ. Կարապետ Զաքարեան Մէլիքեանց . . . . . »
Պ. Ստեփան Մկրտչեան Բունիաթեանց . . . . . »
Պ. Աթաբէգ Հասան-Ջալալեանց . . . . . »
Պ. Նիկողայոս Սահակեան Ծատուրեանց (Քարահունջեցի) . . »
Պ. Պետրոս Յակոբեանց . . . . . »
Պ. Բարսեղ Ալոյեանց (Նուխեցի) . . . . . »
Պ. Աղեքսանդր Անարօնեանց (Զամախեցի) . . . . . »
Պ. Ներսէս Ջալալեանց (Ղուշեցի) . . . . . »
Պ. Յովհաննէս Աբրահամեանց (Երևանցի) . . . . . »
Պ. Հայկ Զմշկեանց . . . . . »
„ Ոմն . . . . . »

Օր.

ԵՐԵՒԱՆ

Արժ. Վահան քահանայ Յովհաննիսեան-Վաչէեանց 1
Օր. Վիրգինեա Ղամխարեանց. . . . . „
Պ. Արամ Ամիանասեանց . . . . . „
Պ. Մարկոս Դիլանեանց. . . . . „
Պ. Աղեքսանդր Դէմուրեանց . . . . . „
Պ. Միքայէլ Տէր-Զաքարեանց. . . . . „
Արժ. Յակոբ քահանայ Տէր-Գրիգորեանց. . . . . „
Պ. Քերովբէ Տէր-Դէորգեանց . . . . . „

ԱԽԱՅԽԱ

Պ. Գրիգոր Պուտուղեանց 2
Պ. Կարապետ Մալխասեանց . . . . . „
Բժիշկ Տրդատ Տէր-Միքայէլեանց . . . . . „
Պ. Գրիգոր Մովսիսեանց . . . . . „
Օր. Մարգարիտ Տէր-Միքայէլեանց . . . . . „
Պ. Առաքել Մելքոնեանց. . . . . „
Պ. Յարութիւն Քուրքչիպաշեանց. . . . . „
Պ. Մկրտիչ Ալիխանեանց . . . . . „
Պ. Սարգիս Մինասեանց . . . . . „
Պ. Ստեփան Գրիգորեան Վարդանեանց . . . . . „
Պ. Մարտիրոս Սողոմոնեանց . . . . . „
Պ. Դերենիկ Հայրապետեանց . . . . . „
Օր. Դալիանէ Տէր-Խաչատրեանց . . . . . „

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՕԼ

Գերապատիւ Գրիգորիս Եպիսկոպոս Ազուանեանց 2
Պ. Վաղարշակ Ծամակոչեանց. 1
Պ. Սիմէօն Խուլեցեանց. . . . . „
Պ. Արամ Բաղդասարեանց. . . . . „
Պ. Վաղարշակ Ստեփանեանց. . . . . „
Պ. Պօղոս Տէր-Պօղոսեանց . . . . . „
Արժ. Մարտիրոս քահանայ Տէր-Պօղոսեանց. . . . . „
Արժ. Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց. . . . . „

ՍՏԱՒՐՕՊՕԼ

Արժ. Բարդուղիմէոս քահանայ Բէկ-Գիւլեանց. 3
Արժ. Գէորգ քահանայ Զաքարեանց. 1
Պ. Աղէքսանդր Լազարեանց. . . . . „
Օր. Տիրուհի Գիւլնազարեանց . . . . . „
Պ. Գրիգոր Թուլմունճեանց. . . . . „
Դպիր Գրիգոր Եագուբեանց. . . . . „
Պ. Մովսէս Իզմիրեանց . . . . . „
Պ. Պետրոս Բագուրեանց. . . . . „
Պ. Եղիա Սողոմոնեանց . . . . . „
Սքբուհի Ղմաթեանց . . . . . „

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Պ. Արշակ Տէր-Միքայէլեանց 1
Պ. Յովհաննէս Մուսաբէկեանց . . . . . „
Պ. Յովհաննէս Խաչումեանց. . . . . „

Օր.

Պ. Յարութիւն Մայիլեան. 1
Պ. Լուսեղէն Զոնրաբեան. . . . . „
Պ. Գրիգոր Իփրանոսեան. . . . . „
Պ. Յովհաննէս Տէր-Միքայէլեան. . . . . „
Պ. Աբգար Մէլիք-Առաքելեանց . . . . . „
Պ. Մինաս Ազնաւուրեան. 2

ՓՕԹԻ

Վեհազն Գնդապետ Աղէքսանդր Թովմայեան Մէլիք-Հայկազեան 10

ԹԻՓԼԻՍ

Պ. Ղուկաս Քուչիկեանց 1
Պ. Յարութիւն Սողոմոնեանց . . . . . „
Պ. Մկրտիչ Ղեոնդեանց . . . . . „
Պ. Մարտիրոս Տէր-Յովհաննիսեանց 2
Պ. Բագրատ (Փիրուզ) Սուքիասեանց 1
Պ. Արշակ Մինասեանց . . . . . „
Պ. Յակովբ Պապովեանց . . . . . „
Պ. Պօղոս Նարալեանց . . . . . „
Պ. Թադէոս Աղախանեանց . . . . . „
Պ. Յակովբ Հասրաթեանց . . . . . „
Տիկին Հեղինէ Գէորգեանց (վերին-Ագուլեցի). . . . . „
Պ. Սիմէօն Ամիայեանց . . . . . „
Արժ. Յովսէփ քահանայ Արարատեանց. (Զամշուլդայից) . . . „
Պ. Կարապետ Խ. Սլիանեան. (Քուլթալիից) . . . . . „
Պ. Մարտիրոս Գրիգորեան Տէր-Աստուածատրեան. (Կերչից) . „
Պ. Ստեփաննոս Սաֆրազեանց (Զաքաթալից) . . . . . „
Պ. Հայրապետ Ս. Հայրապետեանց . . . . . „
Պ. Հայրապետ Գ. Հայրապետեանց . . . . . „
Պ. Զմաւոն Գասպարեանց . . . . . „
Պ. Նիկողայոս Տէր-Զաքարեանց . . . . . „
Պ. Զաքարիա Ներսիսեանց . . . . . „
Օր. Զուշանիկ Տէր-Յովսէփեանց . . . . . „
Պ. Արշակ Զորաբեանց . . . . . „
Պ. Արամ Առվանեանց . . . . . „
Պ. Ռուբէն Քերեշճեանց . . . . . „
Պ. Երուանդ Բունեաթեանց . . . . . „
Պ. Ռուբէն Բուխկեանց . . . . . „
Պ. Արամ Բուխկեանց . . . . . „
Պ. Հասրաթ Ջանազիզեանց . . . . . „
Պ. Ոսկան Տէր-Գէորգեան Յովհաննիսեանց (Երևանեցի) . . . „
Տիկին Աննա Փիրադեանց . . . . . „
Տիկին Մարիամ Խարազեանց . . . . . „
Պ. Յակովբ Տէր-Յակովբեանց . . . . . „